# ՍՈՒՐՏ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

№ 10 1897 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1897 № 10

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ


| | | երես | |
|---|---|---|---|
| 1 | ՇԱՆԹ . . . . . | 1313 | Վերժին (վէպ)։ |
| 2 | ՉԱՐԸԳԵԱՆ, ԱՐԱՄ. . . . . | 1351 | Ընկերիս (բանաստեղծութիւն)։ |
| 3 | ՄՈՊԱՍԱՆ . . . . . | 1353 | Խոստովանանք (պատմուած.ք)։ |
| 4 | ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. . . . | 1361 | Խորտակուած կեանք (վէպ. չարուն.)։ |
| 5 | ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ. . . . . | 1383 | Տրտունջ (բանաստեղծ.)։ |
| 6 | ԽՈՋԱ-ԷՅՆԱԹԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ. | 1384 | Դիւզական ցաւեր։ (Շար.)։ |
| 7 | ՎԱՆՑԵԱՆ, Գ. . . . . | 1394 | Հայեր բոշաներից։ |
| 8 | ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա.—ՀԷՐԿՆԷՐ | 1404 | Բանաստրական խնդիրը։ |
| 9 | ՖՐԷՆԿԷԼ—Ա. Ա. . . . . | 1415 | Աւաղակութիւնը Անդրկովկասում։ |
| 10 | Ա. Ա. . . . . | 1421 | Ց. Շահնազարեանի՝—«Նոր-Փորձ»։ |
| 11 | ԹԱՌԱՅԵԱՆՑ, Ս. . . . . | 1429 | Մ. Սմբատեանցի՝—Նկարագիր Շամախուէ թեմի։ |
| 12 | Ա. Ա. . . . . | 1436 | Վ. Լունկևիչ՝ քննադատութ. առջև։ |
| 13 | ՇԻՐՎԱՆԶԱԴԷ. . . . . | 1439 | Կովկասեան V դ պատկերահանդէս։ |
| 14 | ՄԱՐ. ՅԱՐ. . . . . | 1456 | Կռիւ աւազակների դէմ։ |
| 15 | ԽՄԲ. . . . . | 1458 | Զանազան լուրեր։ |


*Յայտարարութիւններ*

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1897

# ՄՈՒՐՃ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

№ 10 1897 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1897 № 10

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.
1897

Дозволено цензурою. Тифлисъ, 27-го ноября 1897 г.

X ՏԱՐԻ „ՄՈՒՐՃ“ ՏԱՐԻ X

# ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

# ԱՄՍԱԳՐԻ

## ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ։

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1898 թուականին կը հրատարակուի նոյն ծրագրով և նոյն դիրքով, որպէս և նախկին ինները տարիներում։

«ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալում էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

I. Յօդուածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին։
II. Վէպեր և պատմուածքներ՝ ինքնուրոյն և թարգմանական։
III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ, պոէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական։
IV. Նկարագրական-ճամբորդական։
V. Պատմական։
VI. Գիտական հանրամատչելի յօդուածներ։
VII. Յօդուածներ տնտեսական և սոցիալական խնդիրների մասին։
VIII. Գրական քննադատութիւն։
IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին։
X. Ժամանակակից Տեսութիւն։ Յօդուածներ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին։
XI. Գաւառական նամակներ։
XII. Թատրոնական քրոնիկ։

XIII. Արտասահմանեան քրոնիկ։
XIV. Քաղաքական տեսութիւն։
XV. Կարևորագոյն լուրեր ամենայ եղելութիւններից մեր և այլ ազգերի կեանքից։
XVI. Տեղեկատուներ և յայտարարութիւններ։

ՄՈՒՐՃ»-Ի ՎԻՊԱԿԱՆ բաժինը ներկայումս աւելի քան երբ և իցէ ապահովւած է յատուկ աշխատակիցներով։

---

«ՄՈՒՐՃ»-Ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ կը մնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդիմական-քննադատական։

«ՄՈՒՐՃ»-Ը ունի աշխատակիցների մի ստուար խումբ, որը կազմւած է ամենազրի իննամեայ կեանքով և որով ապահովւում են ամենազրի կարևորագոյն բաժինները։ Աշխատակիցների կազմը լրացւում է նորերով, որոնց նպաստները երբէք չեն պակասել «Մուրճ»-ին։

---

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ։ «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի։ Կարելի է գրւել նաև գործակալ-աշխատակիցների մօտ, ստանալով նոցանից անգորրագիր։ (Տես Մուրճի ծածքի եռևը)։

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռուբլի սկզբում, մնացածը մինչև յունիսի վերջը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունւում են ամբողջ տարով՝ տողը 1 ռ., կէս տարով՝ տողը 75 կոպէկ։

Դիմել Խմբագրատուն—Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“
Արտասահմանից—Tiflis. Rédaction „MOURTCH“։

---

# ՎԵՐԺԻՆ

## ՇԱՆԹԻ

(Շարունակութիւն [1])

### Ե

Վերժին հեռաւոր շաբաթը ամենէն յարմար վայրկեանը կը փընտրուէր առաջին՝ փոթորիկը ըստ կարելոյն դիւրին անցընելու համար։

Առտու մը վերջապէս, երբ մօրը հետ առանձին էր, խօսք բացաւ։ Իր պարապութիւնը, ձանձրոյթը պատուակելով՝ ակնարկեց, որ դպրոցի մը մէջ դասեր տալ կը մտածէ։

Մայրը, որ աղջկայ տարօրինակութիւններուն վարժուած էր, այդ բոլորը դատարկ քմայրիզ համարելով՝ նախ կարևորութիւն անգամ չի տուաւ։

Երբ Վերժին նոյնը լուրջ կերպով սկսաւ պնդել՝ կինը առաջ տեսակ մը անհանգստութիւն, և վերջը ուղղակի վախ զգաց. աղջկան յամառութիւնը գիտէր։

—Այդ անխելք բանը ուրկէ գլուխդ մտաւ. բացականչեց դըժգոհ։ Այդ էր պակաս. Պզտիկեաններուն աղջիկը դպրոցի վարժուհի. լսողը ինչ կ'ըսէ. խենթ խօսքերու գլուխ չունիմ։

Ու ձգեց հեռացաւ։

Բայց աղջիկը մօրը շուրջը կը դառնար։

---

[1]) Տես Մուրճ 1897 թ. № 9։

Եւ յաջորդ օրերը քանի մը անգամ նոյն խօսակցութիւնը կրկնուեցաւ՝ հետզհետէ աւելի սրելով ու որոշելով։

Մայրը այլ ևս զայրացաւ։

—Ինծի նայէ, Վերժին, հերիք է. այդ վարժուհիի խօսքը այս տան մէջ ալ պիտի չի կրկնուի. քանի ես ողջ եմ՝ այդ լինելու բան չէ. երբ ես մեռնիմ՝ ըրէ ինչ որ կ'ուզես։

Սակայն այս ալ չօգնեց։

Նոյն իրիկունը Վերժին նորէն խօսք ձգեց, նորէն երկար բարակ կրկնեց արդէն քանի մը անգամ ըսածները՝ գործին ազնիւութիւնը, իր ոգևորութիւնը, իրեն համար զբաղմունքի մը անհրաժեշտութիւնը մօրը հասկցնել ջանալով, և վերջապէս յայտնեց, որ ինքը վճռած է իր ըսածը ընելու ինչ ալ որ լինի։

Մայրը առանց ընդհատելու մինչև վերջը լսեց. և յանկարծ փոխանակ պատասխանի դառն կերպով սկսաւ լալ։

Վերժին դողաց. կուրծքը ուռեցաւ. և լեցուած աչքերով քայլ մը ըրաւ մօրը վիզը նետուելու, բայց իսկոյն զսպեց ինքզինքը, կանգ առաւ ակընթարթ մը վարանոտ, արագ վազեց իր սենեակը, ներսէն դուռը կողպեց, նետուեցաւ բազկաթոռին մէջ, ու ձեռքերը դէմքին սկսաւ ինքն ալ ջղաձգօրէն լալ։

«Վա՛խ, մայրիկս, վա՛խ». կը կրկնէր անդադար հեծկլտուքին մէջէն։

Դէպի մայրը խոնարհուող արևի նարինջի ճառագայթներէն փունջ մը զոյգ ու գոց վարագոյրներու նեղ ճեղքէն ներս սպրդելով՝ աղջկայ վզին ու մազերուն վրայ կը խաղար. և անոր այտերէն կուրծքը գլորուող արցունքի կաթիլներուն յակինթի գոյնը փոխ կու տար։

Այդ օրէն մայրը նոյն խնդրի մասին աղջկանը հետ երբէք խօսքի չբռնուեցաւ. մութ ակնարկներ միայն երբեմն կը նետուէին։

«Քու գիտնալիք բանն է», «մօրդ հարցընելու պէտք չունիս», «մայրդ քեզի համար եղած-չեղած», և ուրիշ այս սեռի նախադասութիւններ, որոնց աղջիկը ոչինչ չէր պատասխաներ։

Ադոր հակառակ ճիշդ այդ խօսակցութեան իրիկունը մայրը տղուն մէկ կողմ կանչեց, պատմեց եղածը ու պատուիրեց, որ քրոջը խելքէն դուրս հանէ այդ «խենթ դաղափարը»։

Վերժին ցարդ եղբօրը ոչինչ յայտնած չէր։ Մայրն ալ ոչինչ ըսած չէր՝ ինդրին յանկարծ լուրջ կերպարանք տալէ վախնալով։ Այնպէս որ բժիշկը բոլորովին զարմացաւ մօրը խօսքերէն։

«Նոր հովեր». մտածեց ինքնին։

Եւ մօրը առաջին բացակայութենէն օգտըւելով՝ դարձաւ քրոջը։

—Վերժին, լսեցի, որ վարժուհի պիտի դառնաս եղեր. կը շնորհաւորեմ։ Հայոց ազգի մանուկները քեզի կ'ըսպասեն անհամբեր. շտապելու է, շտապելու. ժամանակ կորսընցընելու չի գար։ Քեզի պէս կրթըւած ու զարգացած աղջիկներն ալ, որ ազգի կրթութեանը և մայրերնին լացընելու չի ծառային, այլ ևս մեր ազգը ի՞նչպէս առաջ կ'երթայ։

Վերժին զգաց, որ իր մէջը յանկարծ բան մը տակնուվրայ եղաւ. զայրոյթի, կատաղութեան, արհամարանքի բուռն հոսանք մը դէպի իր եղբայրը։

Աչքերը փայլեցին. ու սեղմըւած ակոսներուն մէջէն —

—Ամօթ քեզի, Յակոբ, ամօթ. պոռաց։ Համալսարան աւարտած, Եւրոպա մեծցած մարդ պիտի լինիս. և փոխանակ ինծի ձեռք տալու՝ ելեր ես կը ծաղրես. և ինչու. անոր համար, որ տան մէկ անկիւնը անպէտք նստելէն ձանձրացեր եմ. ադոր համար կը հեգնիս, հա. և կը հեգնես աղջիկ մը, քոյրդ... քա՛ջ ես շատ։

Ու զայրոյթէն աչքերը լեցան։

Բժիշկը անախորժ ու տարօրինակ զգացում մը ունեցաւ. և այդ զգացումը իր անտարբեր տոնին մէջ խեղդել ուզելով՝ պատասխանեց.

—Աղէկ, հին պատմութիւնները նորէն չըսկսենք։ Խելքիդ փչեր է վարժուհի դառնաս. ձեռքէդ բռնողը ո՞վ է. սակայն բնաւ մտածեր ես ըրած քայլիդ արժէքին վրայ։

—Արժէք. ի՞նչ ըսել կ'ուզես։

—Հիմա դուն իրաւ համոզուած ես, որ մարդու տալ պիտի կարողանաս. և ի՞նչ է այդ օգուտը. վայրկեան մը ընդունիմ, որ երկու տղու երեք կտոր բան սորուեցուցիր. է, այդ արդիւնքը քու այս իրարանցումդ արժէ՞. չգիտեմ ինչով ես ոգևորուեր։

—Է՛, վազ անցիր. այդ քու սառնարիւն փիլիսոփայութեանդ հասկընալու բանը չէ։

—Դիցուք։ Բայց կարծեմ իմ հասկընալու բանս է, որ դպրոցի անսովոր աշխատանքը քու արդէն առանց այն ալ զգայուն ջիղերդ պիտի գրգռէ, արեան սակաւութիւն առաջացընէ, ու պակսեցընէ մարսողական գեղձերու արտադրութիւնը, որոնց կարող է միանալ և շնչառական անկարգութիւններ, քանի որ...

—Է՛, ադոնք ալ իմ խելքս հասնելու բաներ չեն. ադկէ ալ վազ անցիր։

—Ադէկ. բայց կայ կէտ մը, որուն քու խելքդ ալ շատ լաւ պիտի հասնի, իմս ալ։

—Այսինքն։

—Այսինքն ենթադրելով որ սկսեցիր, ենթադրելով որ սկսածդ բանի մը նման է, ենթադրելով որ նոյնիսկ յաջողութիւն ունեցար. բայց չէ՞ որ դարձեալ անխորհուրդ է այդ գործին ձեռնարկելդ, քանի որ ամենաշատը մէկ-երկու տարիէն դադրեցընես պիտի։

—Ինչու։

—Որովհետև կին ես։ Ինծի նայէ, Վերժին, այլ ևս երեխայ չես. և վերջապէս ի՞նչ անհասկանալի բան է, որ աղջիկ մը օր մը ուշ կամ կանուխ ամուսնանայ պիտի։

—Ենթադրենք թէ. պատասխանեց Վերժին թեթև մը շիկնելով։ Մի թէ այդ արդեօք է ինծի միևնոյն ժամանակ իմ գործս ունենալու։

—Ա՛խ, այդ գիրքերէ սորուած դարձուածները։ Ի հարկէ արգելք է. աչքի առաջ ունեցիր, որ ամուսնութեան դաղափարին հետ կապուած է ամուսնի մը գոյութիւնը, տանտիրուհի դառնալու անհրաժեշտութիւնը և մայր լինելու հիւանդութիւնները, պարտաւորութիւնները։

Աղջիկը պահ մը գլուխը կախեց։

—Այն ատեն չեմ ամուսնանար. պատասխանեց վճռաբար։

—Պարզապ խօսք. հեգնեց եղբայրը։

—Ինչու. դուն շուտով քառասուն տարեկան պիտի լինիս ու դեռ ամուրի ես. այդ՞ «պարապ խօսք» է։

—Իմ խնդիրս ուրիշ է. պատասխանեց բժիշկը քմծիծաղ։ Ես տղայ եմ։

—Միշտ նոյն երգը. է, ի՞նչ ընենք. բացականչեց Վերժին զայրացկոտ։ Ես ալ աղջիկ եմ։

—Խնդիրն ալ այդ է. հաստատեց եղբայրը յաղթական ժպիտը շրթունքին։ Ի՞նչ ընենք, սիրելիս, որ մարդիկ աւելի ուժով են փրթեր և դարերու ընթացքին իրենց համար աւելի ազատութիւններ են սեփականեր, քան կինը. մէկ-երկու դար վերջը եթէ ծնած լինէիր, գուցէ այն ատեն իրաւունք ունենայիր ես ալ աղջիկ եմ պոռալու երեսիս. հիմա դեռ քիչ մը կանուխ է։ Բայց այս փիլիսոփայութիւններէն դուրս, ըսէ, խնդրեմ, ինչու պիտի չամուսնանաս, վարժուհի մնալու համար. է, միթէ աւելի լաւ չէ՞ ուրիշներու տղաքը կրթելու տեղ, իր սեփական զաւակները դաստիարակել։

Աղջիկը նախ քիչ մը մտածկոտ կանգ առաւ. վերջը արագ ու անփոյթ շեշտով մը վրայ տրաւ.

—Ա՛, թող հիմա. այդ հեռաւոր բաներուն խելքս չի հասնիր. թող լինի ապագային՝ ինչ որ լինելու է։ Իսկ հիմա ես պարապ եմ. ու շարժման մէջ լինելու, յուզման մէջ լինելու պահանջը ունիմ. այս կը հասկընամ դուն. բժիշկ ես ոչ-բարով։

—Սակայն, աղուոր, չի մոռնաս, որ վարժուհի լինելն ալ կարծածիդ պէս դիւրին բան չէ. Շէքսպիր ու Բայրոն կարդացած լինելը հերիք չէ. լուրջ ու մասնագիտական պատրաստութիւն կ'ուզէ։

—Գիտեմ. պատասխանեց աղջիկը յամառ շեշտով մը։ Կ'աշխատիմ։

—Կ'աշխատիս. որո՞ւ համար. որպէսզի ամէն կողմէն քեզի դառնացընեն. չգիտես, որ հոս այդ արհեստը ամենէն արհամարուածներէն է։

—Արհամարուած ոգէներու համար. իսկ մ'ինք, որ գիտենք թէ ինչ մեծ ու բարձր գործ է սերնդի հոգեկան զարգացմանը ինքզինքը նուիրել...

—Է՛, այդ ամերիկուհիներուդ երգերը շատ սիրուն են միայն Ամերիկայի համար. հոն միլիոններ կը ծախսուի ու ահագին կազմակերպութիւն ունի գործը. իսկ հոս. գիտես ի՞նչ անպիտան, անկարգ, այս ու այն էֆէնդիի քէֆէն կախուած բան է թէ կրթութիւնը, թէ դպրոցները, թէ սիստեմը, թէ ամսականը, թէ ծրագիրը. ամէն բան. և այդ քմահաճոյքի քաօսին մէջ դուն կը կարծես գործ պիտի տեսնես։

—Իմ երթալիք դպրոցը այդ խառնակ տեսակէն չէ։ Երիտասարդ, նոր և պատրաստուած մարդիկ են ամենքը, և պարոն Արշակի ալ մօտիկ ընկերները։

—Վա՜յ. ուրեմն պարոն Արշակի հետ արդէն կարգադրո՞ւեր ես գործը։

Աղջիկը նորէն շառագունեցաւ։

—Այո՛. անցեալ օր իրեն հետ խօսեցայ այդ առթիւ։

—Ը՛հը՛ը՛մ. ըրաւ բժիշկը գլուխը շարժելով։

—Բայց, խնդրեմ, մօրս բան մի՛ ըսեր. պիտի կարծէ, թէ ինծի դրդողը պարոն Արշակն է եղեր. և խեղճ տղան մօրս բերանը կ՚իյնայ։

—Խեղճ տղան. ձայնը երկընցուց բժիշկը քմծիծաղ։ Բայց ինչ պիտի ըսես, եթէ շիտակը խօսելով ես ալ այդ կարծիքի եմ։

—Դուն ալ։ Սակայն գիտցած եղիր, որ ամենէն առաջ ան եղաւ ինծի բացատրողը, թէ որքան դժուարութիւններ կան գործին մէջ, և թէ ինչպէս դուն, մայրս ու ամենքդ ինծի պիտի դիմադրէք. ան էր, որ ինծի խորհուրդ տուաւ գործը լաւ կշռել, մտածել, որ վերջը չի զղջամ։

—Այդ կը նշանակէ, որ իր չորս կողմը ճանչցող տղայ է։ Բայց և այնպէս ես համոզուած եմ, որ այս գործին դրդիչը ուղղակի կամ շեղակի ինքն է։

—Ինչպէս թէ. հարցուց աղջիկը զրդռւած։

—Քեզի վերջին հարց մը ալ. միայն շիտակ պատասխանէ. ըսաւ բժիշկը շեշտ քրոջը աչքերուն մէջ նայելով։ Քեզի դէպի այդ դիտաւորութիւնդ քաշողը ճշմարիտ որ վարժուհի լինելու ցանկութիւնն է, թէ...

—Թէ ինչ. հարցուց աղջիկը զգալով որ ամբողջ արիւնը դէմքը կը զարնէր։

Բժիշկը թեթև մը ժպտեցաւ. ու անտարբեր եղանակով մը կցեց.

—Թէ... այնպէս, որ և է ուրիշ պատճառ։ Բայց աղէկ. վերջ տանք. ըրէ ինչպէս որ սիրտդ կ՚ուզէ. ես իմ ըսելիքս ըսի։

Ու ոտքի ելաւ երթալու։

Վերժին ալ վեր ցատկեց, փարեցաւ եղբօրը թևը, ու անոր աչքերուն մէջ նայելով՝ քծնանքով յարեց.

—Յակոբ, մայրիկին ազդէ, քու խօսքդ ուրիշ է. իզուր տեղը ինքզինքը կը չարչարէ ու ինծի ալ։ Հա, եղբայրս, խօսք տուր։ Ես գիտեմ, որ ինքդ քու մէջդ համոզուած ես դիտաւորութեանս ազնիւ լինելուն. ինչու ուրեմն աւելորդ տեղը ինծի կը տանջես. եղբայրս, անգին եղբայրս...

Բժիշկը նայեցաւ իր թեւին գալարած քրոջը դէմքին. այդ դէմքին վրայ արտասովոր սիրուն արտայայտութիւն մը կար. յուզման ու ոգեւորութեան հմայիչ արտայայտութիւնը։

—Աղէկ, աղէկ. մրմնջեց շրթունքներուն մէջէն գրէթէ տնգիտակցօրէն. զգուշութեամբ թեւը քրոջը գրկէն ազատեց, առաւ կրկնոցը, դրաւ գլխարկը ու շտապ ելաւ փողոց։

Գլուխը կախած կ'երթար. քրոջ այն արտայայտիչ դէմքը միշտ աչքերուն դիմաց. ու կը մոռնար. ակամայ ինքզինքը անոր հետ կը համեմատէր։

«Զէ. ժառանգական օրէնքը այս անգամ ալ շիտակ է. ան հայրս է ելեր, ես՝ մայրս. եղբայացուց վերջապէս, ու զարկաւ իր հիւանդներէն մէկուն տան դուռը։

## Զ

Պզտիկաններուն հայրը գաւառական առողջ դատողութեան, գործունեայ ու ձեռներէց մարդ մըն էր։ Փոքրէն սկսելով կարճ ատենուան մէջ յաջողած էր նիւթական կարողութիւն ու հասարակական դիրք ձեռք բերելու։

Ուսումէ զուրկ, բայց ուսման ուժը գնահատող՝ ուզած էր իր զաւակներուն ընդարձակ կրթութիւն տալ։

Երբ Յակոբ Ֆրանսական վարժարանի մը մէջ իր միջնակարգ կրթութիւնը Պոլիս աւարտեց, հայրը անմիջապէս ուղարկեց Պարիզ բժշկութիւն սովորելու։

Ազատ, անփորձ, հարուստ, Պարիզի հոսանքին մէջ ինկած. ալ ինչ քաջագործութիւններ ըսես չէին պատմեր ընկերակից ուսանողները անոր մասին։ Բայց ընդունակ տղայ յամենայն դէպս յաջողեցաւ չորս-հինգ տարի վերջը իր վկայականը ստանալու։ Սակայն փոխանակ տուն դառնալու՝ մնաւ հոն հիւանդանոց մը իբրև բժշկի օգնական։ Տարիքը լեցած, շրջապատին վարժուած, մեծ ու

ազատ քաղաքի առաջին գլուխ պատոցընող հաճոյքներէն կշտացած, և իր ուսուցչապետ բժշկի ազդեցութեանը ենթակայ՝ սկսաւ լուրջ կերպով զբաղուել։ Հետևանքը մն եղաւ, որ երկու-երեք տարի աւելի ուշ, երբ Պոլիս վերադարձաւ, ոչ միայն իր գործին լաւ տեղեակ բժիշկ մը էր, այլ և ընդհանրապէս լայն զարդացման տէր մարդ մը։

Ան դուցէ դեռ երկար Ֆրանսա մնար, եթէ հօր մահը ու ընտանեկան քանի մը կարգադրելու խնդիրներ իր դարձը չի հարկադրէին։

Պոլիս սկիզբը շատ խորթ թուեցաւ իրեն. ինքզինքը բոլորովին կտրուած կ՚ըզգար իր շրջապատողներէն. իր սովորութիւններն ալ տարբեր էին. իր ապրելու, մտածելու, զգալու եղանակն ալ տարբեր. և «քան «ասիական» էր դեռ իր շուրջը պատող հասարակութիւնը։ Նախ տեսակ մը բարձրէն ու արհամարանքով սկսաւ նայիլ. վերջը խղճալ սկսաւ. երբեմն նոյն իսկ սկսաւ զայրոյթ տածել իր շարունակ լսած տգէտ ու ողորմելի հայեացքներուն դէմ, ապրելու այդ միակերպ ու չնչին եղանակին դէմ։ Բայց թոյլ բնաւորութեան ու իր հանգիստը չափազանց սիրող՝ մտքէն անգամ չանցուց այդ հասարակութեան բարձրացմանը համար բան մը ընելու։ Նուտով ձեռք վերցուց և ընթերցումէ. բացի պարիզեան մէկ-երկու օրաթերթերէ գրեթէ ոչինչ չէր կարդար։ Արդէն հետզհետէ աճող պուաթիկը իր ամբողջ զբաղումը կլանած էր. իսկ ազատ մնացած ժամանակը՝ բնականէն քիչ մը ծուլութիւնը սիրող իր ջիղերուն համար՝ հազիւ հերիք էր հանգստանալու։ Երբ տունն էր կը փուէր սովորաբար բազկաթոռի մը դիրկը, ոտքերը կը դնէր դիմացի աթոռին վրայ, ու կը թաղուէր իր ծխախոտի մուխին ու մտածումներուն մէջ։

Բժիշկի վերադարձին Վերժին տասներկու-տասներեք տարեկան աղջիկ էր։ Եւ հօրը մահէն ի վեր քանի մը ամիս մայրը դադրեցուցեր էր աղջիկը դպրոց ուղարկելէ, և այլևս ուղարկելու ալ միտք չունէր, մինչ Վերժին կը ցանկար անպատճառ ամերիկեան գիշերօթիկ վարժարանը մտնէ, մանաւորապէս դրդուած իր քանի մը նախկին ընկերուհիներէն, որոնք հիմա հոն էին արդէն և առաստպելի գոյներով կը նկարէին այդ կեանքը։ Մայրը սկզբները ընդդիմացաւ. տանը մենակ էր մնալու. բայց վերջը սոխպուեցաւ զիջե-

լու անոր անվերջ լացերուն ու թախանձանքներուն, մանաւանդ, երբ Յակոբ ալ գալուն իր քրոջ կողմը անցաւ։

Վերժին շատ շուտով վարժըւեցաւ իր դիշերօթիկի նոր կեանքին։

Խելացի ու համարձակ՝ սկսաւ ամենքի ուշքը դրաւել դպրոցին մէջ. ընկերուհիներուն մէջ կարգադրողի դերն էր իր վրան. ամէն աշակերտական ձեռնարկներու մէջ միշտ կամ պարագլուխներէն էր կամ հնարիչը, որով և իր «միսս» ուսուցչուհիներու մշտական գլխու ցաւը. բայց և այնպէս բոլորն ալ կը համակրէին այդ աչքաբաց աղջիկը, որ իր աշխատութիւններուն մէջն ալ մի՛շտ առաջիններէն էր։

Ինքը շատ լաւ կ՚ըզգար իր դիրքը թէ դէպի ընկերուհիները, թէ դէպի վարժուհիները. և այդ գիտակցութիւնը իր ամբողջ վարմունքին վեհանձն հպարտութիւն մը դրոշմած էր, որ շատ կը վայլէր իր դէմքին։

«Հայ իշխանուհին». կը ժպտէր դպրոցի տեսչուհին՝ իր սենեակի պատուհանէն Վերժինը դիտելով, երբ ան վեցեակ մը ընկերուհիներով շրջապատուած պարտէզը ածուներուն մէջ կը թափառէր, փեթըռտած ծաղիկ մը մատներուն մէջ խաղցընելով։

Տարիները կը սահէին անկասելի կերպով։ Վերժին ամէն շաբաթ իրիկուն, այլ և բոլոր տօներուն տուն կ՚երթար գիշերը։ Թէ տունը և թէ դպրոցը բաւական ազատ ժամանակ ունէր ընթերցանութեան. կը կարդար անյագ բոլոր ձեռքը ինկածը։

Բայց այդ ընթերցումը մասնաւոր ուժ և ուղղութիւն ըստացաւ, երբ Վերժինի աւարտելէն երկու տարիի չափ առաջ դպրոց եկաւ նոր ուսուցչուհի մը՝ միսս Փեթըրս։

Քսանըհինգի մօտիկ, նիհար, երկարահասակ, միշտ պարզ ու սևեր հագած աղջիկ մըն էր, Ամերիկայէն դեռ նոր եկած, որուն պատմութեան ու գրականութեան դասերը յանձնուեցան։ Ամենքը իսկոյն սիրեցին ոգևորող, քնքուշ ու բոլորի հետ վերին աստիճանի պարզ ու ընկերաբար վարող այդ նոր դէմքը։ Նորեկը շատ շուտով ուշադրութիւն դարձուց և՛ Վերժինի վրայ, որ իր ընկերակիցներէն աչքի իյնալու չափ առաջ էր անցած։ Վերժին ի հարկէ այդ նկատեց, ու կրկին ջանքով աշխատեցաւ իր նոր համա-

կրողը գոհացընելու. և հետևանքը եղաւ, որ գրական ու պատմական խնդիրներով սկսաւ մասնաւորապէս հետաքրքրուիլ։

Վերժին շարունակ անոր խորհուրդին կը դիմէր, անոր գրքերէն կը խնդրէր կարդալու, իր մասնաւոր աշխատութիւնները կուտար անոր աչքէ անցընելու։ Հետզհետէ աւելի շուտ-շուտ սկսաւ այցելել անոր սենեակը այս ու այն պատճառներով, և հետզհետէ այս այցելութիւնները աւելի ու աւելի երկար տևել սկսան։ Պարտէզը, դուրսը շրջագայութիւններու ատեն աւելի յաճախ իրարու թև երևիլ սկսան։ Վերժին քիչ-քիչ բացուեցաւ բոլորովին իր այդ հասուն ու բարի ընկերոջը. և այդ ընկեր-ուսուցիչը իր կողմէն բացուեցաւ այդ թարմ ու խելացի աղջկան։

Միս Փեթըրս դժբաղդ մըն էր։ Աղքատ հօր մը սիրելին. մայրը մանկութենէ կորսնցուցած։ Միջնակարգ ուսումով չի բաւականանալով՝ աղջիկը անցած էր և համալսարան կէս մը հօրը և կէս մը իր սեփական աշխատութեան գնով։ Ծածուկ գրկանքներու, լարուած աշխատանքի օրերն էր այդ, բայց աննման օրեր։ Նոյն համալսարանը հանդիպած էր ուսանողի մը. և իսկոյն յարեր էին իրարու։ Յաճախ տղան իրիկունները կու գար իր փոքրիկ սենեակը միասին կարդալու. կարդալ. ա, այն գիշերները։ Տղան կենդանաբան-բնախօս էր և մեծ վստահութիւն ունէր իր ապագային, և Փեթըրս ինչ ծածուկ և ամբչկոտ հպարտութեամբ մը կը մտածէր, որ օր մը ինքը պրոֆեսսորի մը կինը դառնալու էր։ Բայց բոլորը ցընդեցաւ. Մեծ ովկիանոսի հարաւային կղզիներուն վրայ գիտական հետազօտութեան մը ատեն նշանածը մեռաւ դեղին տենդէ։ Ալ ամէն ինչ սև էր Միսին. մեռաւ՝ շուտով և հայրը։ Երկար բոլորովին բեկուած էր իր վշտին մէջ. դպրոցի մը մէջ դասեր էր առեր վրան, ու կերպ մը կապրէր. իսկ ժամանակին հետ, երբ քիչ մը ուշքի եկաւ՝ մտածեց ելնել ուրիշ աշխարհ մը երթայ։ Այդ միջոցին էր, որ ամերիկեան ընկերութեան դիմել խորհուրդ տուին իր բարեկամները։ Հեռաւոր արևելքի մէջ լոյս ու գիտութիւն տանելու, գոնէ քաղաքակրթութեան տարածմանը նը։ իրելու դաղափարը սրտին մօտիկ եկաւ. և այդ նոր առաքելութեամբ ոգևորուած՝ պայմանները կարգադրեց, առաւ իր երկու անդուկ գիրքերը ու դէպի Պոլիս։

Տարի մը չանցած Վերժին ու վարժուհին ալ իրարմէ անբաժան դարձան։ Այդ շփման, և անոր առաջնորդութեամբ տարուած ընթերցանութեան ազդեցութեան տակ էր, որ Վերժին սկսաւ քննական աչքով նայել մեր կին հասարակութեան անգործ, քաշուած կծկըծուած դրութեան վրայ, և որևէ կերպով պէտքի գալու, ինքն ալ նպատակի մը ծառայելու ցանկութիւնը իր մէջը ծլեցաւ։ Սկսաւ հայկական կեանքովը հետաքրքրըլիլ. տանը կը հետևէր հայերէն թերթերուն, հասարակական հարցերուն. ուշադրութեամբ կը կարդար մեր նոր գրականութիւնը՝ շարունակ գիրքեր խնդրելով իր ծանօթ դպրոցական տղաներէ, որոնք աղջկան հաճոյանալու համար իրար գլուխ կը պատռէին։ Աղջկան, որուն գեղեցկութիւնն ու հպարտութիւնը շատերու հայեացքը այրեր էր։

Աղջկան մէջն ալ սէրը արդէն շատունց սկսել էր հասուննալ։ Գիշերային գաղտուկ, առանց պատճառի լացեր, զարնելու, սեղմելու, կոտրելու յանկարծական բուռն թափեր, խենթ ու անզուսպ ուրախութեան պոռթկումներ մէջէմէջ կը կրկնըւէին պարբերաբար։ Ցաճախ իր այս ու այն ընկերուհիին հետ ծառի մը տակ քաշուած կէս կարմրելով, կէս յանդուգն կը խօսէին «կեանքի գաղտնիքներուն», «առնականութեան», «սիրոյ յուզումներուն» վրայ, կամ միասին ապագայ սիրոյ երազներ կը հիւսէին. մինչդեռ իրական երազներէն երբեմն կ'արթընար նորաբոյս ընչացքի մը երևակայական շշափումէն։ Բայց և այնպէս շատ քիչ կարևորութիւն կու տար ընդհանրապէս իր շուրջը դարձող երիտասարդներուն. ա, որքան փոքր էին անոնք իր հոգիին համար։ Ինքը իդէալ մը ունէր գլխուն մէջ. կորովի բնաւորութեան, կենդանի գործունէութեան, զարգացած, զըւարթ ու լուրջ երիտասարդի մը տիպարը. Միս Փեթըրսի նկարած նշանաձին եղբայրը։

Զգացումի ու մտքի այս կազմով՝ տասնրութ-տասնըվեցին տարեկան աղջիկ մը՝ Վերժին դպրոցը աւարտեց։ Ճերմակ զգեստներուն մէջ ստացաւ իր վկայականը. և իր Փեթըրսին շուտ-շուտ այցելել խոստանալով՝ մօրն ու եղբօրը հետ հեռացաւ իր սիրած դպրոցին սեմէն։

Եւ ահա ճիշտ տարի մըն էր, որ տունն էր։

Սկիզբը շատ ծանր եղաւ դպրոցի աղմկոտ կեանքէն վերջը ըն-

տանիքի այդ լուռ ու միայնակ անդորրութիւնը. միակերպ ու պարզապէս։ Բան մը ընելու պահանջը սաստկացաւ. կը զայրանար մօրն ու եղբօրը դէմ. մանր ու անվերջ կռիւներ տան մէջ անպակաս էին. ինքն ալ չէր գիտեր իսկապէս ինչու. այնպէս, պարզապէս ձանձրոյթէն. սկսաւ չափազանց քմահաճ դառնալ ու դիւրագրգիռ։ Զուր ինքըզինքը կարգալու տրուաւ. ժամանակ մըն ալ տարուեցաւ երգեցողութեամբ. ամբողջ օրեր դաշնակին առջևը երգելու կը նստէր։ Քանի մը անգամ, մասնաւորապէս Տիրանի հետ ծանօթանալէն վերջը, փորձեց նոյն իսկ գրելու. բան դուրս չեկաւ. անգլիերէնէ թարգմանել ուզեց, Սքոթէն. անկէ ալ հաճոյք չառաւ. աւելի շարժուն, աւելի կենդանի, աւելի յափշտակիչ զբաղմունքի մը կը տենչար։ Իսկ Արշակին հանդիպելէն իվեր, ինքն ալ որոշ չէր գիտակցեր ինչպէս, այդ տենչը յանկարծ սուր ու վճռական շեշտ մը ստացաւ իր մէջը։

Ահա այդ դրդիչ ներքին խայթի և ողի խօսակցութիւններու ու յօդուածի իրարու հիւսուած տպաւորութիւններուն տակն էր, որ վերջապէս կանգ առաւ վարժուհի դառնալու եզրակացութեան վրայ։

Մինչ այս նոր ծանօթներու յարաբերութիւնը արագ կերպով կ'աճէր։

Արշակի առաջին այցէն հազիւ երեք շաբաթուն չափ անցած էր, բայց այդ միջոցին արդէն անգամ մը քրոջը, անգամ մըն ալ Տիրանին հետ նորէն եղած էր Պոտիկեաններուն. անոնք ալ քոյր ու եղբայր եկած էին Արշակենց դէմ-այց. հեղ մը բոլորը միասին հանդիպեր էին Տիրանի տունը. անգամ մըն ալ խմբովին գացեր էին Սան-Ստեֆանոյի ճամբուն վրայ ինկած այգի մը զբօսնելու. և զբօսնած էին հիանալի։

Երիտասարդներու այդ խմբումները մի՛շտ ուրախ, պարզ ու աշխուժ շեշտ մը ունէր իր մէջը։ Ամենքը կը խօսէին իրենց գլխուն փչածը, կը կատակէին, կը նըւագէին, քննադատելու կ'ելնէին. վէճ, երգ, աղմուկ։ Եւ բոլորի սիրան ալ հաճոյք մը, գոհացում մը կ'ըզգար այդ շփումէն, որ սովորական այցելութիւններու ոչ կեղծիքները, ոչ տափակութիւնները և ոչ ալ պատշաճութեան ձևականութիւններն ունէր։

Երկու աղջիկները սրտագին համակրանքով իրարու դէմ էին եկած։

«Ա՛, որչափ ուրախ եմ ձեզի հետ ծանօթանալուս». կ'ըսէր Վերժին երեխայի նման Մանկիկի հետ գրկըւելով։

Բժիշկը կէս-կատակ, կէս-լուրջ մէջէմէջ կը հեգնէր Արշակի ապագայով ոգևորուիլը, անոր ձգտումներուն և յոյսերուն թռիչքը, անոր խօսուածքին վստահութիւնը. կամ գեղարուեստական հարցի մը վրայ վէճի կը բռնըւէր Տիրանի հետ, որը գրգռել շատ կը սիրէր, և որուն սակայն սրտանց կը համակրէր։ «Է՛, դեռ տղայ է». կ'ըսէր հոր մը ներողամիտ շեշտովը, երբ տունը խօսք դառնար անոր մասին։

Արշակ փոխադարձաբար կը յարձակուէր բժիշկի աւելի կամ նըւազ անտարբերութիւն բուրող հայեացքներուն վրայ. ընկերական արդի կազմի կեղծիքներուն ու ձևապաշտութեան վրայ կը յարձակուէր. կը դատապարտէր մեր հասարակական «ողորմելի» գործունէութիւնը և «կրէական» դանդաղկոտութիւնը, ինչպէս ինքը կ'ըսէր. և այս բոլորը թեթև հումորով մը համեմած, որ բժշկին շատ դուր կու գար։

—Չէ, մենք իրար հասկընանք պիտի. կ'ըսէր ան մտերմօրէն Արշակի ուսը ծեծելով։ Միայն, բարեկամս, քիչ մը դեռ շատ ամէն բան պայծառ ու դիւրին տեսնող էք. և մէկ ալ ընկերական հարցերու վրայ իզուր տեղը շատ սիրտ կը հատցընէք. այն տեսակ խնդիրներու, որոնք ոչ ձեր ձեռքէն, ոչ ալ ձեր կամքէն կախումն ունին, որոնք իրենց բնական ընթացքով առաջ պիտի երթան, ինչպէս որ մինչև հիմա առաջ են եկել. Դոն-Քիխոտի պէս հողմաղացի վրայ յարձակուելէն ինչ կ'ելնէ. բայց ի հարկէ տարիքի խնդիր է այդ։

—Սակայն, պարոն բժիշկ, մ'թթէ կարող էք հերքել, որ մեր ընկերական զարգացումը մեր մտաւոր զարգացման հետ ձեռք-ձեռքի կ'երթայ, որ մեր բոլոր անդիտակից ու բնազդօրէն կատարած գործերը քիչ-քիչ գիտակցական գործունէութեան կը վերածուին. մի՞թէ գիտակցական, դիտուած-դատուած գործը անգիտակցի զարգացած վիճակը չէ՞. և բնական զարգացման ընթացքը մի՞թէ այդ չէ։

—Ի հարկէ, որ այդ խօսքերը շատ սիրուն են, ինչ ըսել կ'ուզէ։

Եւ Արշակ աւելի կը տաքնար։

Վերժին ուշադիր կը հետևէր վէճերուն. և ինքը՝ մասնակից

կամ ոչ՝ մի՛շտ Արշակի կողմն էր։ Իրեն այնպէս կը թուէր, որ տղան կը պատասխանէր այն, ինչ ինքը պատասխանել կ'ուզէր, միայն աւելի սուր, աւելի որոշ տերմիններով։ Տղու կարծիքները իր սրտին անչափ մօտիկ էին. կարծես այդ բոլորը նոյն կերպով ինքը մտածած էր. գուցէ քիչ մը աւելի մութ ու ամպոտ։

Եւ տղան ի հարկէ այդ կը նկատէր՝ դգւոզ զգացումի մը անուշ ջերմութեան մէջէն։

Մէկ-երկու անգամ պահ մը առանձին էին մնացեր ինքն ու աղջիկը։ Եւ այդ վայրկեաններուն պահանջ մը կը թառէր անոնց վրայ՝ աւելի մտերմօրէն, աւելի սրտակից միմեանց հետ խօսելու։

—Ա՛, եթէ գիտնաք որչափ կը ցանկայի՝ անգամ մը ձեզի հետ նորէն երկար-բարակ խօսակցէինք առանձին. բացականչեց Վերժին այդ տեսակ ակընթարթի մը մէջ՝ իր զգացումները զսպելու անկարող. և այնպիսի բնական ու միամիտ պարզութիւն մը կար իր ձայնին մէջ, որ Արշակ հաճոյքէն սարսռաց։

—Իսկ ես գուցէ ձեզմէ աւելի։

—Այն ատեն իրիկուն մը մեզի եկէք մինակ. վրայ բերաւ աղջիկը վճռաբար։ Մթնելէն մէկ-երկու ժամ առաջ. եղբայրս միշտ տունը չէ այդ միջոցին, իսկ մայրս զբաղուած։

Եւ յանկարծ իր այդ սրտէն բղխած խօսքերուն նոր անդրադառնալով՝ կարմրեցաւ, հայեացքը գետին ձգեց, ու շշշընչելով աւելցուց.

—Ո՞վ գիտէ՝ հիմա ինչ պիտի մտածէք իմ մասին։

—Ինչ ալ որ մտածեմ, օրիորդ, վստահ եղէք, որ գլխուս մէջի ամենագեղեցիկ մտածումնքը կը լինի այդ։

## Է

Կիրակի էր։

Ճաշէն վերջը ամբողջ խումբը ժողվուած էր Արշակենց տունը։

Թէև սեպտեմբերի կէսերը, բայց ճնշող տաք մըն էր. և ամենքն ալ հիւրասենեակին մէջ ցրուած ինկեր էին մեղկօրէն աթոռներուն վրայ։

Ու խօսակցութիւնը կը սայթաքէր։

Անկիւն մը աղջիկները իրարու քով նստած՝ գրքի մը մասին

կը խօսէին, երբ Վերժին յանկարծ Տիրանին դարձաւ, որ իր դէմը դաշնամուրին յենած կը լսէր։

—Հապա, պարոն բանաստեղծ, կրնաք երևակայեր, թէ այս առաւու ինչ կը կարդայի։

—Քնարակաձն է, վիպականն, թէ...

—Ո՛չ այն, ոչ միւսը. է, դժուար թէ գտնէք. Կանտի հոգեբանական մէկ գործը. հապա։

Ու ժպտեցաւ։

Արշակ, որ քիչ մը անդին սոֆային մէջ փռուած՝ լուռ կը մտածէր, աշխուժ շարժումով մը օրիորդին դարձաւ.

—Կանտ...

—Այո՛, եղբօրս պահարանը եղած գրքերուն մէջ հանդիպեցայ այսօր. մարդ ամեն հողմ շարունակ այդ անուններուն կը հանդիպի. անգամ մը ուզեցի տեսնեմ՝ ինչ բան է։

—Կանտ. կրկնեց Արշակ կարծես իր մտածումներուն մէջէն։

Եւ իսկոյն զայրացկոտ հրամայական շեշտով մը աւելցուց.

—Անդին նետեցէք այդ գիրքը, օրիորդ. մեղք է ճշմարիտ թէ ձեր ժամանակին, թէ ձեր գլխուն, և թէ...

—Արշակ, Արշակ... ընդհատեց Մաննիկ եղբօրը թափը յանդիմանական եղանակով մը։

Իսկ Տիրան նորէն անախորժ զգացում մը ունեցաւ ընկերոջը այդ սանձարձակ տոնէն։

—Ներեցէք ինծի, օրիորդ. կցեց Արշակ հանդարտած ձայնով։ Բայց որ կուզէք Կանտ կարդաք. բարի ախորժակ։

—Ճշմարիտ չեմ հասկընար. դուք ալ ճիշտ եղբայրս դարձաք. ինչ որ ուրիշները գովեն՝ անոր համար արժէք չունի. ինչ որ ուրիշները բանի տեղ չեն դներ՝ ան ամենէն աւելի կարևորութիւն կու տայ։

—Շնորհակալութիւնս վկայականիդ փոխարէն. ըսաւ բժիշկը քրոջը խոնարհութիւն մը ընելով։

—Եթէ ձեր եղբօր ու իմ մէջ նմանութիւն լինէր, անոր գրքերուն մէջ Կանտը չէիք գտներ. պատասխանեց Արշակ կտրուկ։

Բժիշկը նախ բարձրաձայն սկսաւ խնդալ, ու վերջը աւելցուց.

—Բարեկամս, մեղադրելէ առաջ դատապարտեալը կը լսեն։

նա, անշուշտ գիտէք, որ ուսանողութեան ժամանակ շրջան մը կայ, երբ մարդ գիրք գնելու հիւանդութենէն կը բռնուի։ Աժան էր ու շատ ալ փառաւոր կազմ ունէր. ըսի զրաղարանի զարդ կը լինի։

—Ը՛հ՛մ. այդ ձեր քաղաքին պատիւ կը բերէ. ըսաւ Տիրան երկմիտ կերպով։

—Սակայն չէ՞ որ ամենքը կը կրկնեն, թէ աշխարհքի ամենանշանաւոր փիլիսոփաներէն է. առարկեց աղջիկը վարանոտ։ Ի՞նչպէս կարելի է այդպէս արհամարանքով վերաբերուիլ։

—Արհամարանք. որո՞ւ դէմ. բացականչեց Արշակ։ Ես քաղաքակրթութեան զարդացմանը նպաստող ամենաչնչին ուժն անգամ արհամարելու անընդունակ չեմ. ուր մնաց Կանտի պէս հսկայական ուղեղ մը։

—Ուրեմն...

—Ուրեմն... երկու բան իրարմէ զանազանելու է։ Մի՞թէ հնար է տարակուսել, որ Կանտ ու իր հետն ալ բոլոր նախորդ շրջաններու մտածողները ահագին աշխատանք ու զարկ են ուած գիտութիւններու նորադոյն զարդացմանը։ Բայց միևնոյն ժամանակ, իմ համոզումովս, պարզ ժամավաճառութիւն է հիմա անոնցմէ մէկը բանալ ու կարդալ ուզելը. ի հարկէ բացի մասնագէտներէն. կ՚ուզէ այդ Շոպէնհաուէր կոչուի, կ՚ուզէ Լիսարէ, Բէն, Հերբարդ, Սպինոզա. վերջապէս յիշեցէք որչափ որ կշիռքով ծանր անուններ կան ձեր մտքին մէջ։

—Բայց «ինչուն» դեռ չըսիր. նկատեց Վերժին։

—Որովհետև... որովհետև Նասրէդդին-Հոճայի այծեղջիւրին պատմութիւնը երևի լսած կը լինիք։

Այդ որովհետևիդ խօսք չի կայ. ծիծաղեցաւ Մաննիկ։

—Երբ իր բարեկամները կ՚ստիպէին Հոճան, որ այծեղջիւր ուտէ,—մերժեց, առարկելով թէ՝ կաթիլ մը մեղրի համար չի կրնար դէզ մը փայտ ծամեր։

—Ը՛հը. գլուխը շարժեց բժիշկը ժպտուն։

—Այդպէս ալ հիմայ. անցած պատմական շրջաններու ուսումնասիրութիւններուն մեծագոյն մասը կամ սխալ է, կամ ծուռ, կամ ծանր. և այդ դէզը մենք հիմա տարիներով ծամ ծամենք պիտի

մէջէն սուր նկատողութիւն մը, ճիշտ բացատրութիւն մը, գրաւիչ երես մը, վերջապէս կաթիլ մը մեղր ծծելու համար. արժէ։

—Ուրեմն այդ բոլորը ապարդիւն անդին նետենք. հարցուց Տիրան անդիմադրելի առարկութիւն մը ընողի հեղինակաւոր տոնով։

—Ինչու, սիրելիս, դարերու այդ երկերուն մէջ ինչ որ ճիշտ է և ստուգած արդէն առնուած է մեր արդի ժամանակակից գիտութեան մէջ։ Ի՞նչ են մեր գիտութիւնները, ըսէ խնդրեմ. նախորդ սերունդներու աշխատութեան պիտանի մասին և մեր նոր հետազօտութիւններուն սխեմի ենթարկուած գումարը. չէ՞։

—Նոր գիտութիւնները իրենց կարգին. Միայն ինչու կը հակառակիս, որ անցած խոշոր փիլիսոփաներուն մօտէն ծանօթանաք. առարկեց Տիրան՝ ընկերոջը արշաւանքին դէմ կերպ մը աղջիկը պաշտպանած լինելու համար, քան վիճելու տրամադիր։

—Բայց գիտես, որչափ ժամանակ ու աշխատանք է հարկաւոր մինչև որ մարդ արդի գիտութիւններու իրարու հիւսուած ու տարածուած ցանցին գոնէ ամենահասկանալի օղակները հիմնապէս ու լուրջ ուսումնասիրել կարողանայ. բնութեան, կեանքի ու մարդկային գործունէութիւններուն վրայ ժամանակակից գիտական ազատ հայեացք կազմել կարողանայ։

Պատասխանեց Արշակ ծանր ու հատիկ-հատիկ. և յանկարծ արագ վրայ տրաւ.

—Ժամանակ չի կայ, հոգիս, ժամանակ չի կայ. խնդիրն ալ արդէն այդ է. բայց ո՞վ է հարցնողը. դպրոցական ամբողջ տարիները լեցուցեր են բացարձակապէս անպէտք գրաբարներով, կրօններով, քերականութիւններով. ամէն կողմ տմտռ, թիւ, անուն ու ու անցեալի հեքիաթներ. իսկ բնութիւնը, իսկ մեր ընկերական կեանքը, իսկ ներկան։

Ու տաքացած ցատկեց ոտքի։

Վերժին ինքն ալ բնազդական շարժում մը ըրաւ, առանց աչքերը աղու դէմքէն բաժնելու։

—Է՛, կը չափազանցես. ըսաւ Տիրան պաղ։ Մինթէ դպրոցներու մէջ գիտութիւններ, գրականութիւն—այդ բոլորը չի կայ։

—Գիտեմ, գիտեմ այդ կարկտան, թափթըփուկ տեղեկութիւն-

ները։ Եւ ահա այդ ողորմելի «միջնակարգ» ըսուած կրթութեան պաշարով երիտասարդութիւնը կ'սկսի «խոշոր փիլիսոփաներուն մօտէն ծանօթանալու». և հետևանքը. հետևանքը այն որ ամէն կարգի սխալ ու ճիշտ դիտողութիւններ, մեռած ու հոգեւարք դատողութիւններ խուռն հոսանքով կը խուժեն իր ուղեղէն ներս՝ ինքը մաղել չի կրնար, ու գաղափարներուն մէջ կ'առաջանայ բարելոնեան խառնաշփոթութիւն մը. և մինչդեռ մէկ կողմէն իր մեծամտութիւնը կ'աճի, միւս կողմէն իսկապէս կը խմորուի այն իմաստակը, որոնցմով կը վխտան բոլոր ազգերուն հասարակութիւնները։

Ու արագ խօսելէն շնչատ խոր շունչ մը առաւ։

—Քիչ մը հանգիստ խօսեցէք. շշընչեց Վերժին՝ հոգածու ու յափշտակուած նայուածքով մը։

Տիրան, որ աղջկան ոչ մէկ շարժումը աչքէն բաց չէր թողներ, ակամայ շրթունքը խածաւ. ու կրծքին տակ սուր խայթի մը վերսին ծակելը զգաց։

Մինչ ընկերը ոգեւորուած ու տեսակ մը հեգնոտ ձայնով կը շարունակէր.

—Իսկ մե՛ր ժողովրդին մէջ, անխտիր թէ հոս, թէ Կովկաս, նոյն իսկ «բարձրագոյն զարգացման տէր» համարուողներէն շատ շատերը այդ տեսակ դէմքեր են գրեթէ. և այս «գրեթէն» շիտակը աւելի քաղաքավարութեան համար է, որ կ'ընեմ։ Բաւական է հետևիլ լրագիրներու դատարկ տակառի պէս դղրդող, անբովանդակ ու մեծախօս առաջնորդողներուն, կամ վերացական-փիլիսոփայական դատողութիւններով շպարուած պոռոտ յօդուածներուն։ Արտասահմանն ալ ամառնային ճամբորդութիւններուս ժամանակ բաւական տեսայ այդ տիպի եղբայրներէն. իրաւ է, որ բերանդ բանաս իսկոյն Միլլ, Մալթուս, Հէկէլ, Մոնտէսքիէօ կը ծեփեն դունչիդ. բայց մարդ բնաւ դժուարութիւն չունի ապացուցանելու համար, որ այդ փիլիսոփաներով բեռնաւորուած գլուխները ոչ իրենց մարմինն ու հոգին կը հասկընան, ոչ ալ նոյն իսկ իրենց Քոնտերն ու Կանտերը։

Ու նորէն շունչ առաւ։

Դէմքը թեթև մը շիկներ էր. ու աչքերը կը ցոլային։

—Ժամանակ է, ժամանակ հին գրքերը ծալելու ու մասնադէտներու դործին մէջ քիթ չի խոթելու. իսկ ընդհանուր զար-

գացման համար միայն ու միայն ժամանակակից դիտութիւնները. չէ՞, օրիորդ։

—Աղէկ, հանգստացէք. ըսաւ աղջիկը շարժումով մը ոտքի ելնելով։ Ձեզի կը խոստանամ ալ ձեռքս չառնեմ եղբօրս Կանտը. գոհ էք։

—Ո՛չ ալ Կանտի եղբայրները. հանգստացիք. ժպտեցաւ Վերժին՝ խանդակաթ աչքերով տղու դէմքին փարած։

Բժիշկի գեր այտին իր սովորական անփոյթ ու թոռմած ժպիտը խաղաց։

Մինչ Տիրան դաշնամուրի անկիւնը սեղմուած՝ իր գլխուն մէջ յորձանք տալող զգացումներուն տէր լինելու կը ջանար։ Սակայն զգալով որ երկար ինքզինքը կառավարելու անկարող պիտի լինի, քիչ մը վերջը յարմար վայրկեանի մը յանկարծ ժամացոյցը նայեցաւ, ու շտապով ցատկեց ոտքի.

—Սակայն ես բոլորովին մոռցայ, որ այսօր տունը մարդու խօսք եմ տուած։ Ներեցէք ինծի. ցտեսութիւն։

Ու սկսաւ շտապ ներկայ եղողներու ձեռքը թոթուել։

—Ո՞վ է այդ. եթէ ծանօթ է՝ մանչը ղրկենք՝ ըսենք թող հոս գայ. կ՚ըսէր Մաննիկ տղու այդ անսովոր մեկնումէն դժգոհ։

—Ա՛խ, ոչ, խնդրեմ։ մէկ երկու մանր գործեր ունիմ կարգադրելու։

—Է՛, ինչ գործի ատեն է հիմա. նկատեց Արշակ անտարբեր. ու դարձաւ բժշկին, որ իրեն բան մը կը հարցընէր։

Եւ Տիրան սանդուղներէն իջնելու ատեն լսեց վերէն բժիշկի, Արշակի ու Վերժինի իրարու հիւսուած ձայները, որոնք խնդրի մը վրայ ուշք դարձընող անգամ չի կար. միայն ընկերոջը քոյրն էր, որ դեռ տղուն պահելու համոզել ջանալով՝ մինչև տան դուռը անոր ընկերացաւ։

Տիրան երբ փողոցը ինքզինքը առանձին զգաց՝ ազատ շունչ մը առաւ։

Արդէն քանի մը ատենէ ի վեր ան սկսեր էր նկատել, որ այդ խմբումները հետզհետէ ճնշող տպաւորութիւն կ՚ընէին իր վրան. մանաւանդ վերջին երկու անգամները։ Թէև ինքն ալ, ի հարկէ, մասնակից վէճերուն, երաժշտութեան ու ազմուկին՝ ընդհանուր

հոսանքով կ'երթար. սակայն ներքուստ, ըսես, որդ մը սպրդեր էր կուրծքը ու գաղտուկ կը կրծէր։

Վերժին հիմա աւելի լուրջ ու մտածկոտ կը թըւէր իր աչքին. տեսակ մը կեդրոնացած. իր հայեացքէն չէր վրիպեր անոր Արշակին ուղղած փոքրիկ ժպիտ մը, նայուածք մը, շարժում մը. ինքնին այնքան՝ չնչին ու բնական արտայայտութեան ձեւեր, որ ուրիշ ժամանակ բնաւ ուշք պիտի չդարձընէր, հիմա ինքն ալ չէր հասկընար ինչու՝ իր աչքին կարեւորութիւն կ'ըստանային. պարապ տեղը զըւարթանալու, կատակելու, կարեւորութիւն չի տալու կը ճգնէր. իզուր. ընկերոջն ու աղջկան ներկայութենէն միշտ ներքին ճմլումով մը ու զըսպըւած անհանգստութեամբ մը կը հեռանար։

«Սակայն ծիծաղելի է այս ճշմարիտ. կը նախանձիմ. և ուրկէ. Արշակէն». մտածեց անգամ մը որոշ կերպով, երբ գլուխը կախ տուն կը վերադառնար։

«Ապուշ». աւելցուց իսկոյն։

Եւ այս փոքրիկ մենախօսութիւնը ծիծաղով մը վերջակիտեց՝ ամէն տեսակ «ցիմար մտքեր» գլխէն դուրս վանելով։ Բայց և այնպէս այդ բոլորէն վերջն ալ կրկին տարտամ, խայթող զգացում մը կը խլրտէր իր ուղեղին ծալքերուն մէջ։

Եւ հեղ մը յանկարծ մտքէն անցան, թէ ինչ լաւ կը լինէր, եթէ Արշակ շուտով նորէն իր համալսարանը վերադառնար։ Բայց կայծի մը պէս իր մտածումներուն մէջէն շողացող այդ գաղափարը սաստիկ իր ինքնասիրութեանը զարկաւ։

«Ուրեմն ես ոչինչ չեմ արժէր իմ ներքին ու արտաքին յատկութիւններովս. մտածեց։ Ե՛ս, որ այնչափ հպարտ եմ աղջկան առջև ինքըզինքիս վրայ. մինչդեռ այսպէս դիւրին է եղեր ինծի մէկ կողմ հրելը երկրորդի մը ներկայութեան. այն աստիճան, որ ընկերոջս անմիջական մեկնումը կը ցանկամ դիրքս պահել կարողանալու համար. դիրքս, ուրիշներու հեռանալէն ինծի բաց մնացած դիրքս. ա՛, ինչ գծուծ...»։

Աղջկան զգացումներու մասին վերջապէս որոշ բան մը գիտնալը իրեն պահանջ դարձաւ։

Եւ ահա Կանտի տեսարանը։

Տիրան շտապեց տուն, մտաւ շիտակ պարտէզ, ու անկիւն մը թուփի մը տակ վար ինկաւ։

Ի՞նչ կը մտածէր։

Աչքերը անթարթ ծառերու կանանչին յառած, ոստերուն ցանցին մէջէն կը դիտէր ընկերոջը խօսուածքը, թոնը, աղջկան յափշտակուած դիմագծերը, անոր դէպի տղան ձգտող բնազդական շարժումները, այլայլումը, խնամքը, քնքշութիւնը։

Այսքանը ալ իրեն պարզ էր, որ ընկերը սկսած էր Վերժինի վրայ ազդելու, շլացընելու։ Եւ զարմանալու ի՞նչ կար. Եւրոպայէն նոր եկած, ուսանողի անունով, ազատախօս, տաքարիւն, խոշոր-խոշոր փրգող։

Տիրան ի հարկէ վայրկեան մը անգամ տարակուսիլ չէր ուզեր, որ ընկերը այդպէս ոգևորողը անոր սեփական գաղափարներն էին, սեփական հայեացքները. և որ այդ միջոցին դիմացինի Վերժին, Մաննիկ կամ մէկ ուրիշը լինելը կատարելապէս միևնոյնն էր անոր համար։ Բայց և այնպէս չէ՞ որ աղջիկը իր կողմէն կարող էր այդ բոլորին այլ կերպ մեկնութիւն տալ։

Ո՛չ, ինքը այլ ևս չէր կրնար այսօրուան նման տեսարաններու հանդէպ գանըւիլ. պէտք էր ընկերը զգուշացընել. և վճռեց իր զգացումներու մասին բան մը ակնարկէ Արշակին։

Բայց ի՞նչ և ի՞նչպէս։ Ըսէ՞, որ այդ աղջկան հետ մի՛ խօսիր, մի՛ խնդար, որովհետև ինքը կը նախանձի. ակնարկէ՞, թէ հեռու կեցիր, մի՛ գրաւիր աղջիկը, որովհետև ինքը գրաւել կ'ուզէ. կարճ խօսքով—մուրա՛լ...

Ա՛, երբէ՞ք։

Եւ Տիրան նոյն իսկ այդ տեսակ միտք մը գլխէն անցած լինելուն զայրացած՝ ուժգին շարժումով մը դարձաւ կռնակին վրայ, գլուխը ձգեց խոտերուն մէջ, ու նայուածքը բևեռեց երկընքի կապոյտ մէկ ծըւէնին, որ կանանչներու լոյսով ողողուն շրջանակի մը մէջէն իր աչքերուն դէմ կը մերկանար։

Տխուր, դժգոհ ու մտացիր։

## Ը

Յաջորդ օրերը Տիրան սկսաւ քիչ մը այլ կերպ դատել։

«Է՛, ինչ ընենք—կը մտածէր—միթէ քիչ՞ մը կան, որ մեզի կը գրաւեն իրենց այս կամ այն յատկութեամբը. ատկէ ինչ կ'ելնէ։ Իրաւ որ տարօրինակ եմ, երբ այդ բոլորին այս աստիճան կարևորութիւն տալ։ Միթէ չի կրնան կանացի դէմքեր, որոնք այս վայրկեանիս կարող են ինծի ահագին սքանչացում պատճառել որ և է իրենց առաւելութեամբը. ինչ վնաս։ Զէ, երևի չափազանց խանդոտ եմ. այդ արդէն ցիմար բան է»։

Ու ինքզինքը զբաղման տալ կ'ուզէր։

Վէպի ու պատկերներու քանի մը նիւթեր ունէր գլխուն մէջ, որ պէտք էր կարգի բերել։ Զուր քանի մը անգամ նստեցաւ ու փորձեց. ուղածին պէս կեդրոնանալ չէր կրնար. տեսակ մը ցրուածութիւն կար վրան ու ծուլութիւն։

Այսօր նորէն ամբողջ օրը տունն էր եղած։

Քիչ մը կարդացեր էր, աւելի թղթատեր, քիչ մը իր հին տետրակները աչքէ անցուցեր, և երեկոյեան դէմ ձանձրացած նստեր էր պատշգամը ու ծովը կը դիտէր, երբ հեռուն Մարմարայէն Ոսփոր մտնող շոգենաւի մը՝ ուժասպառ մարդու մը ցաւատանջ ճիչը յիշեցընող՝ սուր սոյլը յանկարծ ոտանաւորի մը գաղափարը ծնեցուց տղու ուղեղին մէջ։

Մտաւ սենեակ, անցաւ դրասեղանին առջևը, քաշեց երես մը թուղթ ու սկսաւ գրել։ Սակայն հաղիւ հինգ-վեց տող, ու կանգ առաւ. յանգերը չէին ուզեր հնազանդիլ։

Արմուկը կրթընցուց սեղանին, գրչին կոթը բերանը, ցրուած պատուհանէն դուրս կը նայէր ոտանաւորին նիւթն ալ, գրածն ալ ինքզինքն ալ բոլորովին մոռցած։

Երկար նստած էր այդպէս անշարժ, առանց որոշ բան մը մտածելու, երբ նախասենեակը ոտքի ձայներ լսեցան և վրայ ըրած դուռը կռնակի վրայ բացուեցաւ։

—Վայ, վախնամ ճանճդ եկեր է. դէ, ուրեմն ցտեսութիւն. բացականչեց Արշակ սեմէն, ու ետ դառնալու շարժում մը ըրաւ։

—Եկուր, եկուր. պոռաց Տիրան ոտքի ցատկելով։

—Բայց խանգարեմ պիտի։

—Է՛, ոչ. փորձեցի գրեմ՝ բան դուրս չեկաւ։ Ներս մտիր. աղէկ որ եկար. այսօր ամբողջ օրը պարապ էի։

—Աւելի լաւ. «պարապութիւն է մայր բանաստեղծութեան». չէ՞։

—Մանչը. ո՛չ։ Գուցէ ծծմայրը։

—Թող լինի ծծմայրը։ Գրածդ ի՞նչ է. ըսած վէպդ. դեռ չեփեցաւ։

—Ա՛խ, ո՛չ. է, լեկեր եմ. ո՛չ մի բանի տրամադրութիւն չունիմ։

—Ես ալ ճիշտ քեզի պէս. տեսակ մը ցրուած եմ, աշխատելու տրամադրութիւնս կորած. բայց թուլցած չեմ։ Այսօր ամբողջ օրը տոքի վրայ էի. եղայ դպրոցը, խմբագրատանը, Ղալաթիա ընկերներէս մէկ-երկուքի քովը։ Տեսակ մը շարժըւելու, տպաւորութիւններ կրելու պապակը կայ մէջս. մէջս բան մը կարծես կ'եռայ. ու ելայ քեզի եկայ։

—Շատ լաւ ըրիր։

—Գիտէս, Տիրան, Վերժինը կ'ուզէ վարժուհի դառնայ։

Տիրան ցընցըւեցաւ. ընկերոջը բերնէն այդպէս յանկարծ առանց կապի այդ անակընկալ լուրը առնելով. սակայն ինքզինքը ժողուեց.

—Մի՞թէ. բայց ուրկէ ուր. ո՞վ ըսաւ։

—Է՛, այդ հին պատմութիւն է. ասկէ մէկ-երկու շաբաթուան չափ առաջ ինքը յայտնած էր ինծի. բայց ես քեզի ոչինչ չըսի. նախ ինքը խնդրած էր, որ առայժմ ո՛չ ոքի չի յայտնեմ, սակայն անկեղծ խօսելով՝ ի հարկէ այդ ինծի արգելք չէր. միայն, գիտէս, կարծես տեսակ մը հաճոյք կ'ըզգամ իմ ու այդ աղջկան մէջ գաղտնիք մը լինելու գիտակցութենէն։ Սակայն այսօր անսովոր հոգեկան վիճակ մը կայ վրաս. սոսկալի պահանջ մը ունիմ ըսելու, խօսելու, պատմելու, մէջս եղածը դուրս տալու։ Ի՞նչ կըսես, Տիրան. գիտէս, այդ աղջիկը հազուագիւտ դէմք մըն է մեր հասարակութեան մէջ. հիանալի ուժ մը. ահագին գործ կրնայ տեսներ։ Քու կարծիքդ ի՞նչ է։

Տիրան, որ այս խոնտովանանքի միջոցին քանի մը անգամ գոյն առեր ու տըւեր էր, ինքն ալ զարմացաւ իր վրայ, երբ Արշակին հարցին արտաքուստ կատարեալ անտարբեր տոնով մը պատասխանեց.

—Նորութիւն չէ. ես այդ արդէն աղջիկը քեզի ներկայացուցած օրս ըսի։ Միայն անկեղծ խօսելով՝ բնաւ չէի ցանկար, որ

վարժուհի դառնար. վարժուհի լինելը այդ աղջկան գործը չէ. ոչ իր կազմը, ոչ պատրաստութիւնը։

—Ինչու համար չէ. միթէ հոս եղող վարժուհիներէն քիչ պատրաստութիւն ունի. և վերջապէս կը վարժուի. ոչ մէկ գործ մէկէնիմէկ չլինիր։ Սակայն այս բոլորը մէկ կողմ. քեզի ոյ ըսաւ, թէ Վերժինը հիմա վարժուհի դարձաւ։

—Չէ՞ որ քիչ մը առաջ դուն աւետեցիր այնպէս ոգևորուած. պատասխանեց Տիրան վառ ծածկուած երգիծանքով մը։

—«Կուզէ լինել». ոչ թէ «եղաւ»։ Ինծի ոգևորողը անոր վարժուհի դառնալը չէ, այլ իր ցանկութիւնը անկախ լինելու, ինքը իր գործը ունենալու, հասարակութեան մէջ որոշ դեր մը խաղալու։ Ինծի ամենէն աւելի գրաւողը իր օրիժինալութիւնն է, իր տարբերութիւնը ուրիշներէն. որ ինքն ալ նոյն շաբլոն աղջիկներէն մէկը չէ, որոնցմով լեցուն է մեր շուրջը. որ ինքը իր մտածումները, իր համոզումները, իր անուրջներն ու ձգտումներն ունի. և որ ամենաէականն է՝ իր ձգտումներուն համեմատ գործել կուզէ նոյն իսկ իր շրջապատի, իր ընտանիքի դրած արգելքներուն հակառակ։

Վայրկեան մը լռեց, սենեակի երկայնքով անգամ մը գնաց եկաւ, ու ընկերոջը դէմը կենալով՝ տաք-տաք շարունակեց.

—Ի՞նչ ընենք, սիրելիս, մեր արդի հասարակական պայմանները այնպէս են, որ աղջիկ մը երբ քիչ-շատ ընկերական դեր մը խաղալու ձգտի՝ իր առաջին միտքը վարժուհի դառնալը կը լինի։ Հոս ինծի համար նշանակութիւն ունեցողը գործունէութեան մը ձգտումն է ու ինքը իր տէրը դառնալու ջանքերը։ Ճենապակի ծաղկամանի մը պէս ան մէկ անկիւնը անպէտք չնստիլ, ու ամուսնի չսպասել, այլ գործ տեսնել ու անկախ լինել. ահա կնոջ ճշմարիտ ազատագրութիւնը։ Իսկ թէ վարժուհի կը լինի, բժիշկ, գործակատար, արհեստաւոր, թէ նկարիչ—այդ արդէն երկրորդական հարց է. դեռ ժամանակ ունինք ադոր մասին մտածելու. այդ կախուած է իր մասնաւոր ընդունակութիւններէն ու հակումէն. իսկ ես, եթէ շիտակը կուզես, ամենէն առաջ ուրիշ բան կը ցանկայի։

—Ի՞նչ։

—Որ նախ սիստեմատիկ-գիտական լայն զարգացում ստանար։

ինծի համար իսկական գործունէութեան և իսկական յաջողութեան միակ հիմքը այդ է։

—Ինչպէս կ'երևի այդ աղջկան գործը բոլորովին սրտիդ ես առեր. ընդմիջեց Տիրան ձայնով մը, ուր բաց վէրքին վրայ շօշափում մը կրած հիւանդին շեշտը կար, ու հեգնութեան մը թափթըփուկը։

—Ես քեզմէ գաղտնիք չունիմ. և վերջապէս ինչ կայ ծածկելու։ Տիրան, ինծի կը թըւի, թէ ես այդ աղջիկը կը սիրեմ։ Առաջին տեսած օրէս մէջս զգացում մը խաղաց, որ հիմա ամբողջ հոգիս բռնած է։ Այդ աղջկայ մասին մտածել, ամէն կերպ անոր օգնել, հասցընել իր արժանի բարձրութեան, զոհել անոր համար ուժերուս լաւագոյն մասը, զոհ ու երջանիկ ընել—ահա ինչ կ'եռայ գլխուս մէջ։

Լռեց ու սկսաւ մտածել։

Տիրան սոսկալի ճնշում մը կ'ըզդար կրծքին տակ. լալու, պոռալու անհեթեթ փափագ մը։ Զգել ու դուրս փախչել կ'ուզէր. դուրս լեռը, դաշտերը, ուր առանձին պիտի լինէր, ուր Արշակը իր դէմը պիտի չլինէր։

Եւ այդ զգացումներու կեղեքման տակ ճմլըւած՝ արձանի պէս քարացեր մնացեր էր, երբ Արշակ մօտեցաւ անոր, ու մտերմօրէն ձեռքը բռնելով՝ շարունակեց.

—Տիրան, հոգիս, դուն բանաստեղծ ես. ինծի աղէկ պիտի հասկընաս. գիտէս ինչ տարօրինակ ու խտխտեցընող են այս զգացումները, որ հիմա մէջս յորձանք կու տան. ըսէ, հոգիս այս սէրն է, չէ՞, ճշմարիտ սէրը։

Տիրան սկսաւ յանկարծ ծիծաղիլ, ծիծաղիլ բարձրաձայն, բոլոր ուժովը. վայրենի, չոր ու անսանձ ծիծաղ մը։

Արշակ զարմացած ետ քաշուեցաւ. ու տեսակ մը վիրաւորուեցաւ։

—Ինչու՞ կը խնդաս. հոս ծիծաղելու ինչ կայ։

Տիրան ինքզինքը զսպելու ջանքեր ըրաւ. լռեց վերջապէս. ու թեթև դողացող ձայնով մը կցեց.

—Միամտութիւնդ ինծի տարօրինակ եկաւ, ուրիշ ոչինչ։ Բայց ընթրիքի ժամանակ է. ուրիշ ատեն կը խօսինք. անցած օր քոյրդ ինծի կը հանդիմանէր, որ իրիկունները միշտ քեզի երկար քովս

կը պահեմ ու տունը ընթրիքի սպասցընել կու տամ. ելիր գնա։

—Երթամ։ Իսկ դուն անշուշտ այս ամէնը չէիր երևակայէր, չէ՞, երբ ինծի գրեթէ բռնի աղջկան կը ներկայացընէիր։ Երբ կը մոռանամ. ո՛չ. անկեղծ խօսելով՝ բոլորը բոլորը քեզի եմ պարտական. ա՛, հոգիս...

Ու նետուեցաւ ընկերոջը վիզը, շրթունքներէն պինդ մը համբուրեց ու դուրս սլացաւ։

Տիրան կեցած տեղը ակընթարթ մը անշարժ մնաց. մէկ ալ բուռն հեծկլտուք մը դուրս պոռտկաց կոկորդէն, և թև ու կրծքով քովի սեղանին վրայ ինկաւ։

Արցունքները առատ կը հոսէին դէմքին տակը մնացած թուղթին վրայ՝ կէսը գրուած կէսը թերի ոտանաւորին գրերը աղարտելով։

Երբ առաջին ուժգընութիւնը անցաւ, տղան կամաց մը գլուխը բարձրացուց, յենեց ձեռքին ու դառնութեամբ սկսաւ մտածել.

«Նստեր կու լամ. ինչո՞ւ. միթէ այս նըւաստացում չէ՞. արժէ՞ լալ աղջկան մը համար, որ ինծի հանդիպելուն պէս՝ ինծի հետ սկսաւ կոքէթութիւն ընելու, ու ընկերոջս գալուն պէս՝ անոր վիզը նետուեցաւ...»։

«Կոքէթութիւն. ո՛չ. չեմ ուզեր անիրաւ լինել. այդ աղջիկը գուցէ երբէք ինծմով հետաքրքրըւած չէ եղեր, կամ գուցէ շատ շատ իմ գրածներովս միայն։ Իսկ ես հոս ամբողջ օրեր իրմով ոգեւորուիմ, իրմով յուզուիմ ու երազեմ։ Ոչինչ. յանցանքը իմ միամտութեանս է, որ ամէն բան ուրիշ գոյնով կը ներկայացընէ աչքերուս.—թէ ընկերոջս ազատ վարմունքը, թէ աղջկան ինծի ցոյց տրուած համակրանքը. աղէկ. ես սխալս սրբագրել ալ գիտեմ»։

Ու արհամարհոտ շարժումով մը ելաւ լըւացուելու։

Միայն ո՛չ մէկ կերպ ուզեղէն դուրս գալ չէր ուզեր այն գաղափարը, թէ ինքը առանց այլևայլութեան մէկ կողմ էր նետուած ընկերոջը գալուն պէս։

Զուր ինքըզինքը համոզիլ կ'ուզէր, որ վերջապէս ամենքէն փոխադարձութիւն պահանջել կարելի չէ. չէ՞ որ դեռ ինքը ամենաթեթև ակնարկութիւն մը անգամ ըրած չէ աղջկան իր զգացումներու մասին. գուցէ նոյն իսկ աղջիկը իր անփոյթ արտաքինէն

խրատնեցաւ. և վերջապէս թէ՛ վիրաւորանք, քանի որ ո՛չ աղջիկը, ո՛չ ընկերը, ո՛չ ոք ոչինչ չգիտէ այդ բոլորէն։

Բայց այս դատողութիւնները շատ քիչ կ'օգնէին իր վիրաւորուած ինքնասիրութեանը։ Թող լինի պատահական, թող լինի անգիտակից կամ ծածուկ, սակայն յամենայն դէպս այդ հարուած մը էր աղջկայ կողմէն իր հպարտութեանը, իր եսի անդիմադրելիութեան վրայ ունեցած մեծամտութեանը։

Ու Տիրան այդ զգացումը խեղդել չէր կրնար։

## Թ

Շաբաթ մը էր Արշակ ամէն հեղ աղջկայ որոշած ժամին անոր հետ առանձին տեսակցելու երթալ կ'ուզէր, և ամէն հեղ ալ ճիշտ նոյն միջոցին կը խանգարէին. կամ հիւր, կամ կատարելիք գործ մը, կամ ընկերներ։

Տղան սկսաւ անհամբեր դառնալ, մանաւանդ որ վերջին կիրակիէն իվեր երեք օր է աղջիկը ամենևին տեսած չէր։

Նախորդ գիշերը ընթրիքէն վերջը եկած էր դուրս շրջելու. և սովորութեան հակառակ առանց քոյրը միասին առնելու։

Պահանջ մը կ'ըզգար Պզտիկեաններու տան կողմը անցնելու. և դեռ ինքն իրեն հաշիւ չտրուած, թէ հոն ի՞նչ ունէր ընելու, արդէն քայլերը այն կողմ էին ուղղուած։

Երկինքի մէկ կողմը նետուած էր նորածին բարակ լուսինը. կոտրած ապարանջանի մը մէկ կտորին պէս, որուն շուրջը թափթըփած էին իր ջարդուած ադամանդին բեկորները։

Մութ էր։

Եւ այդ մութին մէջէն դեռ փողոցի ծայրէն նշմարեց, որ Պզտիկեաններու հիւրասենեակը լոյս կար։ Երբ բաւական մօտեցեր էր՝ դաշնամուրի մէկ-երկու զարկ լսեցաւ վերէն, և հնչեց Վերժինի ախորժելի ձայնը, որ Քարմէնէն Միքայէլի արին կ'երգէր։

Տղան կանգ առաւ տան դիմացի պատին տակ, հայեացքը շեշտած հիւրասենեակի բաց լուսամուտներուն։

Ներսի լուսաւորութիւնը շատ թոյլ էր ու դողդոջուն. դաշնամուրի մոմերուն լոյսը։

«Մինակ է». մտածեց Արշակ. և այդ միտքէն փափուկ հաճոյք մը զգաց։

Եւ իսկոյն պատկերացաւ իր աչքերուն դէմ մոմերուն զոյգ լոյսին մէջէն Վերժինի յափշտակիչ դիմագծերը, ոգեւորւած աչքերը, ձայնին հետ բարձր ուռչող ու իջնող լանջը։

Իսկ ձայնը կ'երգէր մերթ սուր, մերթ նըւաղուն. և՛ տենչանք, և՛ կսկիծ. երիտասարդութեան յաւիտենական երգը. սէր։

Դրացի բացուող դուռ մը Արշակը սթափեցուց. սոխպուեցաւ քալելու. եռեւէն կու գայինն։ Ձայնը հետզհետէ թուլցաւ. ալ ոչինչ չէր լսեր. փողոցին ծայրը նորէն ետ դարձաւ։

Երգը դադրած էր արդէն. բայց դաշնամուրը դեռ կը նըւագէր. ինչ էր նւագածը՝ Արշակ չկրցաւ որոշել, միայն կ'ըզգար, որ լսած իւրաքանչիւր տոնը իր սրտին կը զարնէր։ Զղայնին այն դրութիւններէն մէկուն մէջն էր, երբ մեր դանդին տակ հասած ամէն մէկ տպաւորութիւն իսկոյն կը բազմապատկըւի, գալարափողին մէջ ինկած ձայնի կտորի մը պէս։

«Դիցուհի մը—մտածեց տղան—որուն նուրբ ու վարդերանգ մատներուն արարչական հպումէն այդ զգւող ներդաշնակութեան յաւերժահարսները կը ծնին. քնքուշ, եթերէ էակներ, իրենց արարչուհին պէս գրաւիչ ու դիւթող, որոնք շրջան բոլորած պատ կը դառնան անոր շուրջը նորատեղծ կեանքի մը բովանդակ հրճւանքին թափովը, ու ազատ-ազատ կը սլանան բաց պատուհանէն դուրս օդի ալիքներուն մէջ խայտալով...»։

Իր գծած պատկերին մէջ թաղուած՝ սկսաւ քալել։

«Ի՛նչ սիրուն նիւթ ֆանտաստիկ նկար մը յօրինելու. մե՛զք որ նկարիչ չեմ. կամ հիանալի բանաստեղծութիւն մը. եկո՛ւր փորձեմ գրելու»։

Եւ վայրկեան մը լրջօրէն սկսաւ մտածել. եռքը ժպտեցաւ.

«Ահա՛ ով է բանաստեղծութեան մայրը». հծծեց կամաց մը ակռաներուն մէջէն՝ իր գիւտէն ինքն ալ ոգեւորւած. և վաղը անպատճառ այդ բանաստեղծութեան մայրը մօտիկէն տեսնելու վճիռը տալով՝ տուն շտապեց։

Եւ իրա։ Յաջորդ օրը աղջկայ ըսած ատենները Արշակ սիկին ու օրիորդ Պզտիկեաններու առաջնորդութեամբ մտաւ անոնց հիւրասենեակը։

Վերժին ճիշտ էր. եղբայրը տունը չէր. իսկ տիկինը քանի մը վայրկեան վերջը հիւրը յանձնեց աղջկանը ու վար իջաւ։

Հազիւ էին առանձին մնացեր, որ Վերժին երիտասարդին դարձաւ.

—Ես հաստատ գիտէի, պարո՛ն Արշակ, որ այսօր մեզի պիտի գայիք։

—Մի՛թէ. բայց ուրկէ՞։

—Ա՛յնպէս. նախազգացում։ Զէ՞ք հաւատար. ընկերուհիներէս մէկը եկաւ ինծի առնելու մօտակայ պարտէզ մը պտոյտի երթալու համար. գործ պատրաստեցի ու չի գացի։

—Այդ ինծի անհուն կը շողոքորդէ, օրիորդ Վերժին. միայն կը ցաւիմ, որ իմպատճառով ի զուր ձեր զարմուհենէն զրկուեր էք։

—Ա՛, ինչպէս ձեր բերնին չեն յարմարիր այդ կեղծ քաղաքավարական խօսքերը. բացականչեց աղջիկը.

Աթոռը աւելի մօտեցուց տղուն, և մտերիմ շեշտով մը աւելցուց.

—Պարապ բաներ չխօսինք. ըսէք, խնդրեմ, գացի՞ք դպրոց, ինչ խօսեցիք իմ մասին ձեր ընկերներուն հետ։

—Ոչի՞նչ։

—Ոչի՞նչ... ըրաւ աղջիկը կոտրած ձանով մը։

Արշակ ժպտեցաւ։

—Կը զարմանամ շիտակը. ինչո՞ւ այդպէս շարունակ կը յետաձգէք. որքան շուտ, այնքան լաւ։ Ա՛խ, ըսէք խնդրեմ, ե՞րբ էք վերջապէս մտադիր խօսելու։

—Ըստ երևոյթին՝ երբէ՞ք։

Աղջիկը զարմացած տղուն նայեցաւ։

—Գիտէ՞ք, օրիորդ, հիմա ես քիչ մը ուրիշ կերպ կը մտածեմ։ Ինծի կը թուի, թէ այդ գործին համար ձեզի կը պակսի դեռ յայն ու հիմնական պատրաստութիւն։

—Ինչպէ՞ս թէ. հարցուց աղջիկը տեսակ մը վշտացած։ Զէ՞ որ դուք ինքներդ կ՚ըսէիք թէ... և վերջապէս մի՞թէ ուրիշները շատ աւելի մեծ պատրաստութեամբ են գործի սկսեր։

—Ա՛, ձգեցէք «ուրիշները» իրենց տեղը հանգիստ. խնդիրն ալ այդ է. ես չեմ՝ ուզեր, որ դուք «ուրիշներուն» նման լինիք։ Ես

կը ցանկայի, որ դուք ամէն դործ սկսելէ առաջ նախ ձեր զարդացումը լրացնէիք, ընդլայնէիք և անկախ ու առողջ հիմքի վրայ դնէիք։

—Սակայն մտածեցէք, ես հոս ուր կրնամ այդ ձեր ըսած ընդարձակ մտաւոր պատրաստութիւնը ձեռք բերեր. կը կարծէք հոս ձեր Եւրոպան է. պատասխանեց աղջիկը դառնութեամբ։

—Եթէ հոս Եւրոպա չէ, գացէք հոն ուր Եւրոպա է. ըսաւ տղան կարուկ։

Աղջիկը երգիծանքով ժպտեցաւ։

—Ինչու կը խնդաք, օրիորդ. ես լուրջ կը խօսիմ։ Կ'երթաք քանի մը տարի համալսարան նախ ձեր ընդհանուր կրթութիւնը կանոնաւոր կերպով ամբողջացընելու. վերջն ալ մասնագիտօրէն կ'ուսումնասիրէք ձեր սրտին այն ժամանակ ամենէն մօտ եղող աշխատանքը, օրինակ ձեր մանկավարժութիւնը. կը ծանօթանաք մօտիկէն եւրոպական քաղաքակրթութեան, կ'ապրիք միւս ժողովուրդներու կեանքովը, կը շրջիք ու կը տեսնէք աւելի զարգացած ազգերու արհեստին ու արուեստին արտադրութիւնները, ընկերական կազմը, ոգին։ Մէկ խօսքով կազատուիք այս մեր նեղ կեանքի հորիզոնէն ու կը իւրացնէք ինչ որ միայն օտարները մեզի տալ կրնան. և այդ զէնքով ու ինքնագլուխ գործելու կարողութեամբը օժըտուած կու գաք նոր գործի ձեռնարկելու։

Արմուկը բազկաթոռի թեւին յենած, ու երեսն ալ ափին մէջ՝ Վերժին առանց շարժում մը ընելու շեշտակի տղու աչքերուն կը նայէր։

—Եւ պարզ է, որ այն ատեն ձեր ձեռնարկած գործն ալ բոլորովին տարբեր հետևանքներ կ'ստանայ։ Այն ատեն դուք կը յաջողիք ոչ միայն ինքզինքնիդ իբրև անհատ մը մեր հասարակութեան նուիրելու, այլ դուք կրնաք և ձեզի պէս շատ մը ուրիշ երիտասարդ ուժեր առաջացընել. ոչ թէ հատ մը, այլ կը լինի ամբողջ գումար մը ոգևորուած, գործին նուիրուած, նոր ուղղութեան աղջիկներու։ Եւ վերջապէս օրինակը վարակիչ է. ձեր քայլը կրնայ և հետևողներ ունենալ. ժամանակ է, որ մեր կանայք ալ բարձրագոյն կրթութեան հասնելու ձգտին. գիտէք՝ Կովկասէն արդէն քանի՛ հայուհիներ կան արտասահման։ Ա՛, աղջիկ ու տղայ

ձեռք ձեռքի այդ բոլորովին նոր ու հզօր հոսանք մըն է հասարակութեան մէջ, քան անոնցմէ մէկը առանձին։

Պահ մը շունչ առաւ. ոգեւորուած խօսքէն դէմքը հուր էր առեր ու աչքերը կը վառէին։

Վերժինի աչքերն ալ կը վառէին։

—Բաղդը ձեզի բոլոր յարմարութիւնները տուեր է, օրիորդ Վերժին. շարունակեց տղան նոյն ջերմ շեշտովը. և դուք պարտական էք օգտուելու։ Մտացի և ընդունակ աղջիկ էք. ունիք ձեռներէցութիւն. ձեր ամսական անհրաժեշտ ծախքերը ձեր ընտանիքը շատ դիւրութեամբ կրնայ հոգալ. ես յոյս ունիմ պարոն բժիշկը ինքն համոզելու. ուրիշ ի՞նչ է պակաս. անմի՛ջապէս ճանապարհ ելնել. հոս անգամ դիւրութիւն ունիք. կ'երթանք միասին. ինքս անձամբ կը հասցընեմ ձեզի Զուրիցերիա, օրինակ Ցիւրիխ։ Տասնանհինգ օր կարող եմ ձեզ մօտ մնալ անծանօթ կեանքի առաջին դժուարութիւններուն դէմ ձեզի օգնելու համար, մինչև որ ձեր նոր շրջանին մէջ ինքզինքնուդ տէրը դառնաք։ Եւ վերջապէս շատ ալ ձեզմէ հեռու չեմ. այս ամեռ լինելու եմ Միւնխէն. կանչելնուդ պէս կը հասնիմ։ Է՛, այս սիրուն յատակագծիս ի՞նչ կ'ըսէք։

Վերջացուց տղան աղջկայ բազկաթոռին մօտենալով։

Վերժին մտածկոտ ծանր շարժումով մը դէմքը ափէն հեռացուց ու կամաց մը գլուխը կրթընցուց բազկաթոռի թիկունքին։ Եւ առանց աչքերը տղու հայեացքէն զատելու՝ արտաքուստ բացարձակ հանգիստ շեշտով մը ըսաւ.

—Անցած ամառ գնչու կին մը ինծի դուշակեց, որ ես չափազանց բաղդաւոր եմ լինելու. այն ժամանակ ի հարկէ մեծ կարևորութիւն չի տուի. բայց հիմա հետզհետէ կարծես սկսեր եմ հաւատալու։ Դիտէ՞ք, պարոն Արշակ...

Ու խօսքը կէս ձգեց. ակընթարթ մը յափշտակուած նայեցաւ տղուն, յանկարծ մէկ ոստիւնով ցատկեց վեր.

—Տըւէք, տըւէք ձեր ձեռքը.

Խլեց անոր ձեռքը, պինդ մը սեղմեց իր զոյգ թաթիկներուն մէջ. իսկոյն թողուց, քայլ մը ետ գնաց. ու ներքին զսպուած յուզումէն աչքերը լեցան։

Արշակ նստեցաւ մօտի քանապէին վրայ, ու դողդոջուն ժպտող ձայնով մը փսփսաց.

—Եկէք, նստեցէք, ու խօսինք նորէն միասին։

Աղջիկը աթոռ մը առնել կ'ուզէր։

—Ո՛չ, հոս, քովս, քանապէին վրայ. ըսաւ Արշակ մատով իր մօտը ցոյց տալով։

Վերժին առանց վարանելու նստաւեցաւ քանապէին մէջ, գլուխը թեք կերպով կրթընցուց փափուկ թիկունքին. ու չարաճճի ժպիտ մը աթոռակցին նետելով—

—Գոհ էք. հարցուց։ Դէ, խօսեցէք տեսնեմ։

Բայց երկուքն ալ լուռ էին. և երկար։

Թանձր վարագոյրները ախորժելի կէս-մութ մը կը փրռէին սենեակին մէջ։

Եւ այնպէս անհուշ էր երկուքին ալ այդ կէս-մութը, այդ լռութիւնը, այդ մենակութիւնը, քով-քովի, աչք-աչքի։

—Ուրեմն գնչուհին ըսաւ, որ դուք բաղդաւոր էք լինելու. խօսեցաւ վերջապէս Արշակ։

Աղջիկը նախ ցընցուեցաւ այդ հարցէն. և վերջը գլխով դրական նշան մը ըրաւ, միևնոյն ժամանակ աչքերը ուժգին քթթելով ու շրթունքները թեթև մը կծկելով։

—Է՛, այդ գիւաը ընելու համար անպատճառ գնչուհի լինելու կարիք չի կայ։ Եթէ ինծի ալ հարցընէիք՝ նոյն պատասխանը պիտի ստանայիք, թէև ես ոչ թուղթ բանալ գիտեմ, ոչ ալ ձեռքի գծերը կարդալ։

—Մինթէ. իրաւ. բայց ինչ հիման վրայ. իսկ ես ձեռքի գծերը կարդալ գիտեմ. չէք հաւատար. ըսաւ աղջիկը իրարու ետևէ թեթև պչրանքով մը։

—Վա՛յ. հապա կարդացէք տեսնեմ։

Ու ձեռքը աղջկան պարզեց։

Վերժին առաւ տղուն ձեռքը, քիչ մը ափին մէջ դիտեց, վերջը խանդակաթ ակնարկը նորէն տղու դէմքին ձգեց. ու ժպտեցաւ միայն։

—Նա՛. ինչ կ'ըսեն ձեռքիս գծերը։

—Կ'ըսեն որ... կ'ըսեն որ... ոչ, ոչ, չեմ՝ ըսեր. անկարելի է։

Եւ սկսաւ կրծքին խորքէն բարձրաձայն քրքջալ։

Արշակ յանկարծ ձեռքը դարձուց, բռնեց աղջկան դաստակը, և բոլոր ուժովը սեղմած՝ իրեն կը քաշէր։

Վերժինի ծիծաղը վայրկենաբար կտրեցաւ. դող մը անցաւ ամբողջ մարմնէն, ու անսովոր կերպով լրջացած հայեացքը սահեցաւ ինկաւ գետին։

Այնպէս միամիտ, այնպէս ամօթխած յուզում մը կար այդ յանկարծական փոփոխութեան մէջ, որ Արշակ կարծես բանէ մը ամչցած՝ անմիջապէս աղջկան դաստակը ձգեց։

Ու տիրող լռութիւնը խզելու, այդ միջադէպը կերպ մը փակագծելու ջանքով՝ նորէն համալսարանի խնդիրը մէջ գլորեց. սակայն զուր։ Այդ դաստակի թեթև ճմլումը երկուքի յարաբերութիւնն մի անգամ ընդմիշտ փոխուեր էր։ Երկուքն ալ, առանց գիտնալու ինչու, չէին համարձակեր իրարու աչքի մէջ նայելու. երկուքի ձեռքերն ալ տեսակ մը յուզած էին. ու խօսուածքը արուեստական։

Կարծես յանցանք մը գործած լինէին։

Եւ գործած էին. մաանելու յանցանքը։

Այն ալ ինքզինքը մաանելու։

## Ժ

Մաննիկ ու Արշակ փոքրիկ սեղանատունը դէմ-դէմի նստած կը նախաճաշէին, երբ աղջիկը մէկէնիմէկ հարցուց եղբօրը.

—Տիրանը ինչու այս վերջին օրերը այդպէս փոխուեր է. աչքիս բոլորովին ուրիշ կերպ կ'երևի։

—Ի՞նչպէս։

—Այնպէս. տեսակ մը մտածկոտ, տխուր կարծես. ինծի կը թուի թէ սիրահարուած է այդ տղան։

—Չէ ինչ։

—Ճշմարիտ։

—Պարապ խօսք. որո՞ւ վրայ պիտի սիրահարուէր։

—Ա՛յ, օրինակ, Վերժինի։

Արշակ բոլոր մարմնովը ցընցուեցաւ, թեթև մը դժգունեցաւ, ու հարցական աչքերով նայեցաւ քրոջը։

—Ինչո՞ւ զարմացար. շարունակեց Մաննիկ։ Ես արդէն շատուն նշմարած եմ, որ այդ երկուքին մէջ բաներ մը կայ. Տիրանի նայուածքները, ժպիտները այնքան ալ սովորական չեն։

—Իսկ Վերժինն. հարցուց տղան շունչը բռնած։

—Վերժինը չգիտեմ։ Մեր առջևը գոնէ ինքզինքը շատ աղէկ կը պահէ. սակայն անշուշտ մէջերնին բան մը լինելու է. անգամ մը Տիրանը խօսեցուր։

—Ինչո՞ւ համար, ինչ պէտք կայ. քեզի ինչ. ինչ նշանակութիւն է այդ. վրայ տը՛ւաւ Արշակ խստութեամբ։

Քոյրը բան մը առարկել կ՚ուզէր, որ տղան ընդհատեց, ելաւ ոտքի, ու հանդարտ հեղինակաւոր շեշտով մը աւելցուց.

—Ուրիշի զգացումներուն մէջ քիթ խոթելը սիրուն բան չէ. և վերջապէս ուրկէ գիտես, որ՝ այդ բոլորը արդէն յայտնի չէ ինծի. ամէն դատարկ բանի վրայ չեն խօսիր։

Ու բարձրացաւ իր սենեակը «քիչ մը աշխատելու»։

Դուռը գոցեց, նստուեցաւ իր գրասեղանի առջևը աթոռին վրայ, ձեռքերով դէմքը գոցեց ու սկսաւ մտածել։

Իր աչքերուն առջևէն վարագոյրը ծանր-ծանր ետ կ՚երթար։

Մտաբերեց հետզհետէ իրենց ծանօթանալէն մինչև վերջին տեսակցութիւնը իրենց խմբին մէջ անցած-դարձածը. Տիրանի ոգևորութիւնը աղջիկով, երկուքի փոխադարձ սիրալիր վարմունքը. յիշեց շատ մը երկրորդական մանր դէպքեր, որոնք մինչև այդ վայրկեանը ոչ մի խորհուրդ չունէին և հիմա կարծես սկսան իմաստ հագնել. յիշեց Տիրանի վերջերը բռնած դիրքը և ճշմարիտ որ տխրութիւնը. ինչպէս՞ ինքը այդ մասին բնաւ չէր մտածած. մտաբերեց վերջապէս իր երկու օր առաջուան խօսակցութիւնը, երբ ընկերոջը իր զգացումներու մասին յայտնած էր. ու պատկերացաւ աչքերուն դէմ Տիրանի սեղմուած-ճնշուած դիրքը, դէմքը, և... և այն սոսկալի ծիծաղը։

Արշակի սիրտը սեղմուեցաւ. երևակայութիւնը սկսաւ գործել ու պատկերի թերի մնացած մասը լրացընել։ Կը մտածէր, թէ այս վերջին մէկ-երկու շաբաթուան մէջ ինչ սոսկալի տանջանք կրած պիտի լիներ տղան։ Ալ չէր տարակուսեր, որ այդ երկուքը իրարու

հետ կապեր ունէին, և որ ինքը այդպէս բրտութեամբ երկուքին մէջը կը նետուէր։

Սուր խայթ մը սիրտը ծակեց։

«Բայց Վերժինը —յանկարծ անդաւ մտքէն—հապա անոր բացարձակ համակրութիւնը դէպի ինծի. համակրութիւն... Ցիմար. աղջիկը բաց է ու պարզսիրտ. կը հետաքրքրըւի ինծմով, անկեղծօրէն կը խօսի, կը վիճէ հետս, կը ծիծաղի դէմքիս։ Եւ որովհետև աղջիկ մը ինծի զբաղեցնողը հարցերով կը հետաքրքրըւի, որովհետև կը վարուի հետս պարզ, առանց արտաքին քաղաքավարական ձևականութիւններու, և որովհետև, կարելի է, ընկերոջ մը կամ գաղափարակցի մը համակրանքը ունի դէպի ինծի, ահա ես արդէն բռընկեր եմ ու կ'երևակայեմ, որ յատիշտակուած է ինծմէ։ Ե՛ս, որ շարունակ կնոջ ազատ ու պարզ ապրելուն ու խօսելուն մասին կը ճամարտակեմ, ահա ես ալ դեռ ևս չեմ կրնար աղջկան մը անկեղծ յարաբերութիւնը ըմբռներ։ Բաւական է, որ սիրուն է, ինծի համակարծիք ու երեսիս կը ժպտի. և ես արդէն աշխարհիս ֆանֆարոնի մը աներեսութեամբ ինկած եմ իր ետևէն. ու աչքերս կապած ընկերոջս ձեռքէն խլել կ'ուզեմ, գողնալ...։ Եւ Ցիրան այս բոլորը կը տեսնէ, ինքս իրեն անցած օր ամէն բան ըսի. ոչ իսկ ակնարկութիւն մը ըրաւ իր մասին. ահա քեզի ընկերներ. ան ու ես»։

Ժամերով իր սենեակին մէջ կը դառնար, մինչև որ խնդիրը ամէն կողմէն մտածեց. և հանգստացաւ քիչ մը միայն այն ժամանակ, երբ իր ընելիքը վերջնականապէս վճռեր էր։

Երբ քիչ մը ետքը եկան ճաշի կանչեցին՝ Արշակ անփոյթ դէմքով մը վար իջաւ, և նոյն անտարբեր շեշտովը ուտելու միջոցին ըսաւ յանկարծ.

—Մայրս, կը մտածեմ երկու շաբաթուան չափ մօրաքրոջս երթամ Հալէպ. քանի անգամ է կ'ըսէ ու կ'ըսէ. անցածները կամուրջին վրայ նորէն Միհրանիկին հանդիպեցայ. կ'ըսէ որ մայրը վրաս խիստ նեղացեր է։

—Ա՛, չէ ինչ. մէջ նետուեցաւ Մաննիկ։ Ամբողջ տարին հոս չէ. հիմա ալ որ եկեր է՝ շաբաթներով կղզի պիտի երթայ եղեր։ Մօրաքրոջ երթալդ ի հարկէ պէտք է. գնա, գիշեր մը կեցիր ու եկար։

—Գիտեմ, Մաննիկ, իմ միտքս ուրիշ է։ Մինչև համալսարան վերադառնալս անպատճառ վերջացընելու գործ ունիմ ձեռքս. իսկ հոս լուրջ աշխատել կարելի չէ. Տիրանը շարունակ հետս է, միւս ընկերներս կը խանդարեն. ծանօթներ, բարեկամներ միւս կողմէն. վերջապէս տան մէջ ինծի դժուար է կեդրոնանալ. իսկ վերադարձիս քանի մը շաբաթ է մնացեր ընդամէնը. երթամ կղզի, շուտով մը գործս վերջացընեմ ու գամ։

—Պարապ խօսք. արդէն դուն այդպէս ես. խելքդ դուրսն է. է, ինչ կ'ուզես այն ըրէ։

—Ե՞րբ կ'ուզես երթաս. հարցուց մայրը։

—Նոյն իսկ այսօր. շուտ երթամ, որ շուտ ալ դառնամ։

Մաննիկ նորէն արտնջաց։

Բայց տղուն քոյրը հանգստացընելը վերջին թողնելով՝ ճաշէն անմիջապէս վերջը առաւ գլխարկը ու շիտակ Տիրանենց տունը։

Փողոցը տեսակ մը ճնշում կար մէջը ու մռայլոտ էր. բայց երբ Տիրանենց դուռը զարկաւ, անգամ մը թոթափուեցաւ, իրանին ուղիղ դիրք տալաւ, ու դէմքին ալ զբաղրթ արտայայտութիւն մը։

Դուռը բացուելուն պէս ցատկելով ներս նետուեցաւ, աղմուկով ու խնդալով բակը կեցած տիկինը բարեւեց, կատակ մը ըրաւ Տիրանի փոքր եղբօրը և նոյն աղմուկով վազեց սանդուղներէն վերուժով մը ետ հրեց սենեակին դուռը. ու կէս մը շնչատ սեմին վրայ կանգ առաւ։

Տիրան տանու անփոյթ հագուստներով նստած էր պատուհանին մօտիկ, ջուրթակը սեղմած ծնոտին տակ, և աչքերը լուսամուտին մէջ դրած ձայնատեարին յառած կը նրբագէր։

Դուրսի աղմուկը և դռան բացուիլը իր նուագը ընդհատեցին։

Արշակ սկսաւ բարձրաձայն ծիծաղել։

—Ի՞նչ է պատահել. հարցուց Տիրան զարմացած ու լուրջ դէմքով ընկերը դիտելով։

—Այդ ի՞նչ շնորհք է, այդ ի՞նչ ձև. պոռաց Արշակ։ Ճաշը դեռ կոկորդիդ գրկեր ես սիրուհիդ ու կը ճըղճըղացընես։ Մարդ, քիչ մը վազ անցիր քու ջուրթակէդ ու ոտանաւորներէդ. այսօր դուրսը հիանալի մեղմ օդ է. մարդու սիրտը կը բացուի. իսկ դուն երեւի

դեռ դուրս ելած չունիս բունէդ. մէկ հագուստիդ նայէ, մազերուդ, շնորհքիդ...

Ու նորէն սկսաւ խնդալ։

—Իմ սենեակս ալ զով է. պատասխանեց Տիրան կարճ ու չոր։

—Աղէկ. եթէ շատ ես հաւներ սենեակիդ՝ բարով վայելես. իսկ ես ոչ միայն տունը, այլ այս արուարձանն անգամ մնալ չեմ կրնար. բաց, բաց կ'ուզէ սիրտս. ազատ. կը հասկընամ։ Քանի մը օր երթամ պիտի կղզի մօրաքրոջս. Հալէպի եղած ես. հիանալի է. ես կշտացայ արդէն ձեր քաղաքէն ալ, ձեր քաղաքացիներէն ալ. երթամ քիչ մը բնութեան մէջ։

Տիրանի վրայ այս բոլորը տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընէր։

—Բարի ճանապարհ. ըսաւ վերջապէս։ Միայն շիտակը չեմ կրնար հասկընար, թէ քեզի ինչ է պատահեր. նախորդ օրը բռընկեր, ոգևորուեր էիր, թէ սիրահարեր ես, թէ չգիտեմ ինչ ես. այս օր ալ եկեր ես, թէ բնութիւն, ազատութիւն...

—Ի՞նչ սիրահարութիւն. ընդհատեց Արշակ հարցական դէմք մը շինելով։

—Անցած իրիկուն, որ կըսէիր։

—Վերժինը։

Եւ սկսաւ նորէն խնդալ բոլոր կրծքովը։

Տիրան ապշած ընկերոջը կը նայէր։

—Ուրեմն դուն արդէն համոզուեր ես. հա, հա, հա. խենթը ըսաւ, խելքն ալ հաւատաց. մէկ երեսս նայէ, է. վրաս սիրահարուածի շոշորդ կայ։ Զէ, սիրելիս, ես սիրոյ համար չեմ ստեղծըւած. ազատ, ազատ. այդպէս կապող, կաշկանդող բաներու հետ գլուխս չունիմ։

—Հապա անցած օրուան ոգևորութիւնդ։

—Ի՞նչ ոգևորութիւն. չգիտեմ. ո՞վ գիտէ ի՞նչ տրամադրութեան տակ եմ եղած։ Բայց, գիտես, գլուխս մէջ ինչ կ'եփի հիմա։ Արդէն քեզի ըսեր եմ, որ «Տիրող կարծիքներ» վերնագրին տակ շարք մը հասարակական սխալ ըմբռնումներ ու ընկերական տափակ հայեացքներ ենթարկելու եմ քննական վերլուծութեան։ Ծրագիր, նիւթ, եղանակ—ամէն բան պատրաստ է արդէն. զրել կ'ուզէ

միայն, և վերադարձիս գրած-լըմընցուցած կը լինիմ անշուշտ։ Ա՛, ինչ հաճոյք է սխալ ու ծուռ, բայց արմատացած դատողութիւններու, սովորութիւններու, նախապաշարումներու վրայ յարձակիլը. ծաղրել, պզըկտել, քայքայել. ու դէմը դնել հարցի իսկական վերլուծութիւնը, բնականը, գիտութեան ապացուցածը։ Մարդ կարծես տարօրինակ բանի մը իր ջիղերուն մէջէն վազելը կ՚ըզգայ այդ վայրկեանին. է, իզուր բան է, մարդկութիւնը առանց կռուի ապրել կարող չէ. ածխածինի ծնունդ՝ օրգանական նիւթին կեանքը կռիւն է։ Յաւերժութիւն. շարունակելի։ ծամէ մը մեկնիմ պիտի. հիմա ժամանակ չունիմ երկար խօսքի. ես արդէն եկայ միայն քեզի ըսելու, որ անգամ մը ելնես կղզի գաս. միասին սիրուն ժամանակ կ՚անցընենք։ Դէ, ցը՛։

Ու երգ մը մռըլտալով սրացաւ սանդուղներէն վար, գոցեց ուժով մը տան դուռը, ու փողոց։

Հաղիւ էր առանձին մնացեր, որ ջղայնի խոր յոգնութիւն մը զգաց։ Դէմքին մկանները թուլցան, ծանր խոր շունչ մը առաւ, նայեցաւ ժամացոյցը ու քայլերը արագացուց դէպի տուն։

Շտապէր պիտի առաջիկայ գնացքին անպատճառ հասնելու համար, եթէ կղզիին վերջընթեր շոգենաւը փախցընել չէր ուզեր։

(Շարունակելի)

# ԸՆԿԵՐԻՍ

---

## ԱՐԱՄ ՉԱՐԸԳԵԱՆԻ

---

Թող վերջին անգամ մեր սուրբ համբոյրը
Նուիրագործէ ուխտն անդաւաճան,
Որ մենք կնքեցինք անսուտ երդումով
Ազատ տաճարում անկաշառ ուսման։
Եւ խոր հաւատով դէպի ապագան,
Սիրոյ քարոզը մեր շրթունքներին,
Մտնենք կեանքի մէջ անվախ, համարձակ,
Միշտ հաւատարիմ մեր դրօշակին։
Թող որ մթագնի երկինքը պայծառ
Փշերով խեղդւած մեր ուղիի վերայ,
Եւ թող ահարկու, անթափանց խաւար
Արար աշխարհի վերայ ծանրանայ.
Դարձեալ անվհատ, մեզ յո՛յս-ը ընկեր,
Մենք շարունակենք սէ՛ր-ը քարոզել։
Թող ժայթքէ ամպրոպ որոտ կատաղած
Խօլ խաւարի մէջ շանթե՛ր շնչելով,
Ողջ տիեզերքը կուրծքը պատառած
Մեր օրհնան երգէ ահեղ ձայներով...
Իսկ մե՛նք սարսափած մեր վիզը երբէք
Տարերքի առջև չխոնարհեցնենք.
Այլ մեր կրծքերը սիրոյ յաղթութեան
Ազատ երգերով արձագանք թող տան։
Կամ կէսգիշերին խուլ անապատի

Հեռաւոր ծայրից երբ լսենք մեր մօտ
Հեկեկանքն ազգու... առանց արցունքի
Ինչպէս կռւում քաջ, ճշմարիտ զինուոր
Սուրբ գործին զոհած մօր լացն ու կոծը,
Մենք շարունակենք մեր պատերազմը։
Եւ երբ վաստակած մի խեղճ անկիւնում
Ընկած ենք՝ կարօտ... նոյն իսկ փշրանքի,—
Երբէք չանիծենք օրը սրբազան,
Երբ մենք այս ուղին ազատ ընտրեցինք։
Իսկ երբ նւաղած մեր աչքերն փակւում,
Գրկախառնւած վերջին համբոյրով,
Ա՛խ մենք մեռնում ենք—օ անգին ընկեր,
Փակենք մեր ուխտը՝ հպարտ մեռնելով։
Թէ մենք կ՚ունենանք մահւանից յետոյ
Մի-մի հողակոյտ ամենքին ձրի...
Կամ թէ արցունքներ կթրջեն նոցա...
Կամ անդերեզման կը մնանք ընդ միշտ,
Անյայտ անկիւնում մի շերտ հող դարձած
Թաղումից, շիրմից անգամ որբացած—
Դա միևնոյնն է, մենք այդ լաւ գիտենք։
Միայն մեզ հետ է, ուր որ էլ լինենք
Ա՛յն անխոցելի գիտակցութիւնը,
Որ մենք մեռել ենք ընկերի համար...
Մի ընկեր, որի արցունքը սրբել
Կեանքի կռւռ շղթան ցանկացանք փշրել։

1897 թ. 14 յունիս, Տիւբենգէն։

# ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

*ԳԻ ԴԸ ՄՈՊԱՍԱՆ՝Ի՝—Թարգմ. Վերգինէ Մ.*

Ամբողջ Վեզյէ-լը-Ռետեյլ քաղաքը ներկայ էր Բաղոն-Վերմենսէի թաղման և քաղաքային վարչութեան ներկայացուցչի արտասանած դամբանականի վերջին խօսքերը երկար ժամանակ հընչում էին բոլորի ականջին. «մի օրինաւոր մարդ ևս պակասեց աշխարհում»։

Այո, ամեն բան ակնյայտնի էր կացուցանում, որ նա օրինաւոր մարդ էր՝ նորա ամբողջ կեանքը, խօսքերը, վայելուչ կազմուածքը, քայլուածքը, մինչև անգամ միրուք պահելու ձևը և գլխարկի տարազը։ Նա երբէք չէր ասի մի այնպիսի խօսք, որը իւր մէջ խրատ չպարունակէր. ողորմութիւն տալիս երբէք չէր մոռանալ խորհուրդ էլ տալ։

Նա իւր մահից յետոյ թողել էր երկու զաւակ. մի տղայ, որ քաղաքային խորհուրդի անդամ էր և մի աղջիկ, որը ամուսնացած էր Պուարեյլ-դը-լա-Վուտ նոտարի հետ և քաղաքում վայելում էր ընդհանուրի յարգանքը։

Որդիքը սաստիկ վշտացան հօր մահուան պատճառով, որովհետև շատ սիրում էին նորան։ Թաղումից յետոյ երբ վերադարձան հանգուցեալի տունը՝ որդին, աղջիկը և փեսան երեքը միասին փակուեցին նորա առանձնասենեակում, որպէս զի բաց անեն նորա կտակը, որը, մարմինը հողին յանձնելուց յետոյ, պիտի բացուէր առանց կողմնակի վկաների, ինչպէս ցոյց էր տալիս այդ ծրարի մակագրութիւնը։

Պուարեյլ-դը-լա-Վուտը իւր ձեռքի սովորական շարժումով բաց արաւ ծրարը և, ակնոցները դնելով, սկսեց կարդալ իւր միօրինակ

ձայնով, որ կարծես նշանակված էր բացառապես պայմանագրեր կարդալու համար։

—Ջաւակներս, իմ թանկագին զաւակներս, ես գերեզմանի մէջ հանգիստ չեմ գտնի, եթէ չգրեմ այս խոստովանանքը, եթէ չխոստովանեմ իմ ծանր յանցանքը, որի յիշողութիւնը թունաւորել է իմ ամբողջ կեանքը։

Այո՛, ես յանցանք եմ գործել, մի զարհուրելի, կեղտոտ յանցանք։

Այն ժամանակ ես 26 տարեկան էի և նոր էի եկել Պարիզ փաստաբանութեամբ պարապելու։ Ես ապրում էի այնտեղ այնպէս, ինչպէս ապրում են գաւառներից եկած այն բոլոր երիտասարդները, որոնք մեծ մայրաքաղաքում չեն ունենում ոչ ծանօթներ, ոչ բարեկամներ, ոչ ազգականներ։

Այնտեղ ես մի սիրուհի գտայ։ Շատերը այդ բանի վրայ կը զարմանան։ Բայց ես պատկանում եմ այն մարդկանց թւին, որոնք չեն կարող միայնակ ապրել։ Դատարկ բնակարանում սարսափելի տխրութիւն է գալիս վրաս, մանաւանդ երեկոները։ Այդպիսի ժամանակ ինձ թւում է թէ ամբողջ աշխարհում միայնակ եմ, որ ամեն կողմից ինձ անորոշ, բայց զարհուրելի վտանգներ են սպառնում։ ԵՒ հարևանս, որ միայն մի պատնէշով է ինձանից բաժանուած, թւում է ինձ նոյնքան հեռու, որքան աստղերը երկնքում։ Այդպիսի րոպէներում ինձ տիրում է երկիւղի սարսուռը, և պատերի լռութիւնը սարսափ է բերում վրաս։ Օ՛, ինչպէս տխուր է սենեակի այդ անդորրութիւնը, որի մէջ մենակ ես ապրում։ Նա յափշտակում է ոչ միայն մարմինդ, այլ և հոգիդ, և ամենաչնչին շշուկը տան մէջ, յատակի կամ կահ-կարասիքի ճռընչիւնը ստիպում է մեզ ցնցւել, որովհետև մենք մեռայլ բնակարանում ոչ մի աղմուկի չենք սպասում։ Քանի-քանի անգամ ճնշող լռութիւնից կատաղութեան հասած՝ ես սկսել եմ ինձ ու ինձ խօսել, արտասանել եմ անկապ և անմիտ խօսքեր, միայն նորա համար, որ խանգարեմ լռութիւնը։ Բայց այն ժամանակն էլ իմ սեփական ձայնը ինձ օտար էր երևում և վախեցնում էր ինձ։ Եւ իսկապէս ինչ կայ աւելի զարհուրելի, քան դատարկ տան մէջ ինքն իրեն հետ խօսելը? Լսում ես մի օտար, անծանօթ ձայն, որ արտասանում է բառեր, առանց շարժառիթի որ և է մէկի կողմից, բառեր, որոնք ոչ ոքի չեն ուղղուած, դա-

տարկ տարածութեան մէջ, որտեղ չկայ ականջ, որ լսէր այդ խօսքերը և որտեղ նոքա այնպէս խուլ են հնչում, ինչպէս մի արձագանք, մեր սեփական մտքերի օտարոտի արձագանք։

Իմ սիրուհին մի ջահիլ աղջիկ էր. մէկը այն աղջիկներից, որոնք ապրում են այնպիսի արհեստով, որ ոչ մի ապահովութիւն չի տալիս իրանց։ Դա մի հեզահամբոյր, բարի արարած էր։ Նորա ծնողները ապրում էին Պուասիում, և նա երբեմն գնում էր նոցա մօտ մի քանի օրով։

Մօտ մի տարի ես ապրեցի նորա հետ շատ հանգիստ. և վճռել էի այդ կապը խզել, հէնց որ պատահէի մի այնպիսի աղջկայ, որը ինձ դուր դար և վճռէի ամուսնանալ հետը։ Ես մտածում էի իմ բաժանելուց յետոյ իմ կենակցիս նշանակել մի փոքրիկ կենսաթոշակ, որովհետև մեր հասարակութեան մէջ ընդունուած է աղքատ կանանց սէրը վարձատրել փողով, իսկ հարուստներինը՝ ընծաներով։ Բայց մի անգամ նա ինձ յայտնեց, որ ինքը յղի է։ Այդ լուրը ինձ կարծես շանթահար արաւ։ Իմ դրութիւնս սարսափելի կերպարանքով մի վայրկենում պատկերացաւ աչքիս։ Ահա ուրեմն այն շղթան, որը վիճակուած է քաշ տալ մինչև մահ, շղթան երեխայի կերպարանքով, որին հարկաւոր է դաստիարակել, պահպանել, ճանապարհի վերայ դնել, անյայտ մնալով նորանից և նորան թագցնելով աշխարհից։ Այո, այդ լուրը խորագոյն ցնցեց ինձ և իմ հոգու մէջ յղացաւ մի աղօտ ցանկութիւն, որ ես ինքս դեռ չէի կարողանում որոշ կերպով ձևակերպել։ Երանի թէ մի անակնկալ դիպուած ազատէր ինձ։ Քանի քանի այդպիսի փոքրիկ էակներ դեռ չծնուած մեռնում են։

Օ՛հ, ես չէի ցանկանում իմ ընկերուհու մահը։ Ես սիրում էի այդ խեղճ աղջկան։ Բայց ես անգիտակցաբար ցանկանում էի այն երեխայի մահը, որը ինձ վախեցնում էր։

Եւ նա ծնուեց։ Եւ ահա մի ամուրի մարդու անձուկ բնակարանում նոր ընտանիք՝ ապօրինի ընտանիք, ապօրինի զաւակ։ Նա էլ այնպէս էր, ինչպէս լինում են շատ երեխաներ, և ես նորան չէի սիրում։ Հայրերը, եթէ կուզէք իմանալ, կապւում են երեխաների հետ ասոյիճանաբար միայն։ Նոքա չունին մայրերի բնազդական բուռն սէրը դէպի երեխաները, նոցա զգացմունքը զարգանում

է սակաւ առ սակաւ՝ որքան ամրանում են հոգեկան կապերը, որոնք միացնում են կենակցող էակներին, այնքան աւելի զարգանում է այդ զգացմունքը։

Անցաւ էլի մի տարի։ Ես խուսափում էի անձուկ բնակարանից, ուր ամեն կողմում թափթփած էր սպիտակեղէն, խանձարուր, մանրիկ զուլպաներ. զանազան անկիւններում, բազկաթոռների վրայ քարշ արած հազար ու մի տեսակ բաներ։ Ես փախչում էի այնտեղից, որպէս զի երեխայի ձայնը չլսեմ, որը ամենաչնչին պատճառով ճչում էր. երբ լողացնում, փաթաթում էին նորան, պառկեցնում էին կամ վերցնում—նա անդադար գոռում էր։

Ես մի քանի ծանօթներ էի գտել և մի անգամ մի հասարակութեան մէջ ես պատահեցի նորան, որը յեռոյ դարձաւ ձեր մայրը։ Ես ջերմագին սիրեցի նորան, սկսեցի հետամուտ լինել, առաջարկութիւն արի և նա ընդունեց։

Բայց իմ ձեռքն ու ոտքը կապած էին։ Ունենալ երեխայ, և պսակուել մի աղջկայ հետ, որին պաշտում եմ? Թէ խոստովանուել բոլորը, հրաժարուել նորանից, ամբողջ կեանքի երջանկութիւնից, ամեն բանից? Նորա ծնողները խստաբարոյ մարդիկ էին և չէին տալ նորան ինձ, եթէ ամեն բան իմանային։

Ես մի ամբողջ ամիս բարոյական տանջանքներ էի կրում։ Ինձ մաշում էին հազար ու մի տեսակ մոտանջութիւններ. և ես զգում էի, թէ ինչպէս աճում մեծանում էր սրտումս ատելութիւնը դէպի երեխան, դէպի այդ ճչան, կենդանի փոքրիկ մսի կտորը, որ ընկած իմ ճանապարհիս վրայ, խորտակում էր կեանքս, որ դատապարտում էր ինձ մի ողորմելի կեցութեան, զուրկ այն անորոշ յոյսերից, որոնք երիտասարդութեանը մի առանձին գեղեցկութիւն են տալիս։

Մի անգամ ընկերուհուս մայրը հիւանդացաւ։ Եւ ես մնացի մենակ երեխայիս հետ։ Այդ դեկտեմբեր ամսին էր։ Սարսափելի սառնամանիք էր դուրսը։ Օ՛հ, այդ ինչ դիշեր էր։ Ընկերուհիս հէնց նոր էր գնացել։ Ես միայնակ ընթրեցի փոքրիկ սեղանատանը և ոտիս մատերի վրայ մտայ երեխայի սենեակը։

Ես նստեցի վառ բուխարու առաջ դրած բազկաթոռի մէջ։

Սաստիկ, սառը սուր քամին հեծում, խփում էր պատուհան-

ներին, և աստղերը փայլփլում էին մի այնպիսի առանձին փայլով, որպիսին լինում է միայն սառնամանիքի ժամանակ։

Եւ աղօտ, յանցաւոր ցանկութիւնը, որ ինձ ամբողջ ամիս է որ հանգիստ չէր տալիս, նորից զարթնեց իմ հոգում։ Նա միշտ առանձնացածս ժամերին տիրում էր ինձ, չարչարում, տանջում էր, ինչպէս անխոյս մոքերը տանջում են հիւանդ ուղեղը, ինչպէս վէրքը ուտում է մարմինը։ Նա պաշարում էր իմ գլուխը, սիրտը, ամբողջ մարմինս, ինչպէս գազան կլանում էր ինձ։ Ես փորձում էի հեռացնել այդ ցանկութիւնը, մաքառել նորա հետ, մաքրել հոգիս ուրիշ տպաւորութիւններով, նոր յոյսերով, ինչպէս որ բաց են անում պատուհանը, որպէս զի առաւօտեան թարմ օդը դուրս մղէ սենեակի փչացած մթնոլորտը։ Բայց ես մի բոպէ չէի կարողանում բաժանուել այդ մոքից։ Զգիտեմ, ինչպէս արտայայտեմ այդ տանջանքը! Նա գազանի նման յօշոտում էր սիրտս, և ես զգում էի նորա ատամների շփուելն, որ սարսափելի ֆիզիկական ցաւ էր յառաջացնում սրտիս մէջ։

Այո, իմ կեանքը վերջացաւ. դրութիւնս անելանելի էր։ Բայց ինչպէս հրաժարուէի հարսնացուիցս? Բայց չէ որ ես խենթի նման սիրում էի ձեր ազազայ մօրը, և անդիմադրելի արգելքը աւելի բորբոքում էր այդ կիրքը?

Զարհուրելի չարութիւն առաջացաւ իմ մէջ և սղմելով կոկորդս՝ խելագար դարձրեց ինձ։ Այդ գիշեր ես խելագարուած էի...

Երեխան քնած էր։ Ես վեր կացայ և նայեցի նորան. այո, այդ ծնունդը, այդ չնչին ճիճուն դատապարտում էր ինձ յաւիտենական տանջանքի։

Նա քնած էր վերմակում փաթաթուած՝ բերանը բաց՝ օրօրոցում, որը կպած էր անկողնիս, ուր ես անց էի կացրել շատ անքուն գիշերներ։

Ա՛խ, ինչպէս ես կարողացայ անել այդ բանը? Ինչ ոյժ էր ինձ դրդում? Ինչ չար ոգի էր տիրապետել ինձ? Փորձութիւնը վրայ հասաւ այնպէս յանկարծ, որ ես չկարողացայ երկար մտածել։ Յիշում եմ միայն, որ սիրտս սաստիկ բաբախում էր, յիշում եմ, որ լսում էի նորա խուլ զարկերը, նման մուրճի խուլ զարկե-

բին, որ լսում են պատի յետևից։ Միայն սրտի այդ զարկերը մնացին յիշողութեանս մէջ։

Իմ մտքերը խռնուում էին, աներևակայելի խաօս էր գլխիս մէջ. ես գտնուում էի այնպիսի դրութեան մէջ, երբ մարդ ճնշող մտքերի և հալուցինացիայի ազդեցութեան տակ կորցնում է իւր գործողութեան նկատմամբ նաև ընդունակութիւնը կամքը կառավարելու։

Ես զգուշութեամբ բաց արի վերմակը, որի մէջ փաթաթուած էր երեխան, և նա մնաց բոլորովին մերկ։ Նա չզարթնեց։ Յետոյ ես մօտեցայ պատուհանին և բոլորովին բաց արի։

Սառը օդի հոսանքը ներս մտաւ սենեակ այնպէս ուժգին, որ ես յետ դարձայ, և երկու մոմերի բոցը դողդողաց։

Ես մնացի պատուհանի մօտ և չհամարձակուեցի շուռ տալ գլուխս, որպէս զի տեսնեմ թէ ինչ է կատարուում իմ ետև. ճակատիս, երեսիս, ձեռքերիս վրայ ես զգում էի սենեակը թափանցող սառը օդի շփումն։

Դա շատ երկար տևեց։

Ես ոչ մի բանի մասին չէի մտածում. ոչինչ չէի գիտակցում. վերջապէս մանկան թոյլ հազը ցնցեց ինձ։ Դեռ հիմա էլ ամեն անգամ ցնցուում եմ, երբ մտաբերում եմ այդ։ Ուշքս կորցրած՝ ես արագութեամբ փակեցի պատուհանի երկու փեղկերն էլ և վրայ պրծայ երեխայի մօտ։

Նա դեռ քնած էր, մերկ, բերանը բաց։ Նորա ոտները սառն էին, ինչպէս սառոյց, և ես շտապեցի փաթաթել նոցա վերմակի մէջ։ Այդ ժամանակ իմ սիրտը փափկացաւ և ես սաստիկ խղճացի այդ անմեղ մանկանը, որին ուզում էի սպանել։ Ես երկար համբուրեցի նորա քնքոյշ մազերը և յետոյ նորից նստեցի բուխարու առաջ։ Զարհուրում էի ես, երբ մտածում էի արածիս վերայ։ Ինքս ինձ հարց էի տալիս. որտեղից են երևան գալիս այդ հոգեկան մրրիկները, որոնք պղտորում են մարդոց բոլոր գիտակցութիւնը, ինքնիշխանութիւնը, որոնք պղտորում են մարդու միտքը, և նա չէ հասկանում՝ թէ ինչ է անում, և ինչպէս նաւը փոթորկի ժամին՝ չէ տեսնում, թէ ուր է գնում։

Երեխան կրկին հազաց։ Այդ հազը պատառոտում էր սիրտս։

Ինչ կ'լինի, եթէ նա մեռնի! Տէր Աստուած, ինչ կանեմ ես այն ժամանակ! Ես ճրագը ձեռքիս մօտեցայ օրօրոցին և նայեցի երեխային. Նորա հանգիստ շնչառութիւնը հանգստացրեց ինձ։ Բայց նա դարձեալ սկսեց հազալ։ Ես զարհուրելով ետ քաշուեցի. կարծես մի սարսափելի տեսիլ ինձ ետ մղեց։ Ճրագը ձեռքիցս վայր ընկաւ։

Սթափուելով ես բարձրացրի մոմը և զգացի երեսիս վրայ սառը քրտինք, այն տանջող սառը քրտինքը, որը յաջորդում է սաստիկ հոգեկան ցնցումներին, ցնցումներ, որոնք այրում են ինչպէս կրակ, և սառցնում, ինչպէս սառոյց։ Կարծես այդ անասելի հոգեկան տանջանքները կաթիլ-կաթիլ ծորում են ոսկրի և գանգի ոսկրի միջից։

Մինչև առաւօտ ես կռացած կանգնած էի որդուս անկողնու մօտ և հանգստանում էի, երբ նա հանդարտ էր, և յուսահատւում՝ երբ նա սկսում էր հազալ։

Նա արթնացաւ՝ աչքերը կարմրած, ձայնը կտրուած և երեսը ուռած։

Երբ մեր աղախինը եկաւ, ես իսկոյն Նորան ուղարկեցի բժշկի յետևից։

Նա մի ժամից յետոյ եկաւ, տեսաւ երեխային և ասաց.

—Չէք մրսացրել արդեօք սորան?

Ես զառամեալ ծերունու նման դողդողացի և մրմնջացի.

—Ո՛չ, չեմ կարծում։

Յետոյ ես վախենալով հարցրի.

—Սրա ինչն է? Վտանգաւոր հօ չէ?

—Դեռ ոչինչ որոշ չեմ կարող ասել. ես այսօր երեկոյեան դարձեալ կը մտնեմ։

Եւ իրաւ, երեկոյեան նա եկաւ։ Համարեա ամբողջ օրը երեխան ինքնամոռացութեան մէջ էր գտնւում, և ժամանակ առ ժամանակ հազում էր։

Գիշերը երևաց թոքերի բորբոքում։

Հիւանդութիւնը տևեց 10 օր։ Ես չեմ կարող արտայայտել այն, ինչ որ ես կրեցի այդ անվերջ երկար ժամերում, որոնք բաժանում են առաւօտը երեկոյից, երեկոն առաւօտից։

Նա մեռաւ....

Եւ այդ բոպէից... այդ բոպէից ես հանգստութիւն չունէի. մի ժամ չէր անցնում, որ զարհուրելի յիշողութիւնը չտանջէր իմ ուղեղը, չկրծէր իմ սիրտը։

Ո՜հ, երանի թէ ես կարողանայի խելագարուել!

Պուարեյլ-դը-լա-Վուտը իւր սովորական ձևով ետ տարաւ ակնոցները։ Ծառանգները գունատուած, անշարժ լուռ նայեցին միմեանց։

Վերջապէս նոտարը ասաց.

—Այս թուղթը պէտք է ոչնչացնել։

Հանգուցեալի աղջիկն ու տղան գլխով համաձայնութեան նշան տուին։ Այն ժամանակ նոտարը ճրագը վառեց, այն թերթերը, որոնց վերայ գրած էր հանգուցեալի խոստովանանքը, զգուշութեամբ բաժանեց նրանցից, որոնք բովանդակում էին կտակը, և, մօտեցնելով բոցին, ձգեց բուխարին։

Եւ երեքը միասին հետևում էին, թէ ինչպէս անհետանում էին սպիտակ թերթերը և դառնում սև մոխրի կոյտեր։ Բայց նկատելով որ նրանց մէջ երևում են էլի միքանի տառեր, հանգուցեալի աղջիկը կոշիկի ծայրով տրորեց այրուած թղթի մնացորդը և խառնեց բուխարու մոխրի հետ։

Յետոյ նրանք երեքը միասին կանգնած դեռ նայում էին հանգչող բուխարու վրայ, կարծես վախենալով, որ այրուած գաղտնիքը դուրս կը թռչի բուխարուց։

---

# ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

## ՎԷՊ

---

*ԼԵՌՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ*

---

(Շարունակութիւն [1])

---

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

# ՀԻԱՍԹԱՓՈՒՄՆԵՐ

---

### VII

Այդ օրը Ոսկերչեանը ոչինչ հաստատ բան չկարողացաւ հանել։

Հետևեալ օրը գնաց ուղղակի «ժամանակի» խմբագրատունը։ Այնտեղ նորան բաւարարութիւն չտուին. դա մի խմբագրական գաղտնիք է, որ ուրիշներին հաղորդելու հարկ չէին համարում։

—Բացի այդ,—աւելացրեց խմբագիրը,—ինչ գործ ունիք դուք իսկապէս հեղինակի անուան հետ? Եթէ բան ունիք յօդուածի դէմ, ներկայացրէք պատասխանը. եթէ յարմար լինի, կը տպենք։

Ոսկերչեանը առարկեց հետևեալը.

—Քանի որ յօդուածագիրը դիպել է իմ անձնաւորութեանը, ուստի ինձ էլ անհրաժեշտ է ճանաչել այդ անձին։ Ինձ պէտք է յայտնի լինին իմ բարեկամները և իմ թշնամիները։

---

[1]) Տես «Մուրճ» 1897 թ. № 1, 2—3, 4, 5, 7—8, 9։

Խմբագիրը յամառութեամբ դաղտնի պահեց բեցենդենտի անունը, և Ոսկերչեանը, ճարը կտրած, դուրս եկաւ նորա մօտից, խոստանալով շուտով ներկայացնել նորան զրպարտութիւնների հերքումը։ Ինչ վերաբերում է Ծպոի թշնամուն, նա այդ մի կերպ պէտք է իմանայ։

Այնտեղից նա վերադարձաւ իւր բնակարանը։ Հիւրանոցի շէյցարը յայտնեց, որ նա նամակ ունի։

Նամակը հօրից էր։ Մերունին նկարագրում է իւր նիւթական դժւար կացութիւնը և խնդրում է որդուցը շուտով փող հասցնել իրան, եթէ կարող է։

Այդ գրութիւնը լաւ ժամանակին էր հասել։ Ոսկերչեանը իւր դեբիւտից բաւական խոշոր եկամուտ էր ստացել, թէև արդէն քառասուն և հինգ մանէթ մնացել էր նոր շորերի և նոր գրքերի վրայ։ Մնացել էր հարիւր քսան, որից հարկաւոր էր բաժին հանել Ծերունուն։ Վճռեց նախ ուղարկել մի երեսուն, մտածելով, որ գիւղում կեանքը շատ էժան է նստում, և այդքան փողով հայրը կարող է մի քանի ամիս անպակաս ապրել։ Բայց խիղճը իսկոյն բողոքեց։ «Ինչպէս, գոչեց նա, հայրս գրեթէ իւր բոլոր ունեցածը դրել է ինձ և իմ ուսման վրայ, և այժմ ես այսպէս պիտի հատուցանեմ նորան? Լաւ որդիական երախտիք է!...» Վճռեց հալալ կէս անել և, անմիջապէս պատրաստելով երկտող նամակը, դրամական ծրարը տարաւ պոստատուն և գցեց հոր հասցէով։

Երեկոյեան թէյի ժամանակ նա գնաց Զառիկեանների մօտ իւր գրած պատասխանը կարդալու։

Գարեգինը նստած էր իւր կաբինէտում սեղանի առաջ և զբաղւած էր մի ինչ գրաւոր աշխատանքով։ Դա մի կարճ ատենախօսութիւն էր, որ նա պիտի կարդար դպրոցի տարեկան հաշուետուութեան հետ ուսումնարանի տարեդարձի հանդիսին։

Օր. Աշխէնը տանը չէր։ Նա գնացել էր իւր պաշտօնակից վարժուհիներից մէկի մօտ, որպէս զի միասին սովորցնեն աշակերտուհիներին մի քանի ոտանաւորներ՝ տարեդարձի օրը արտասանելու համար։

—Դարձեալ եկայ քեզ խանգարելու, Գարեգին,—ասաց Արտաշէսը, սեղմելով բարեկամի ձեռքը։ Այդ ինչ ես գրում?

Գարեգինը բաւարարութիւն տուեց նորա հարցին և ասաց.

—Ի հարկէ, այդ օրը դու ևս ներկայ կը լինես մեր դպրոցում?

—Անպատճառ,—պատասխանեց Ոսկերչեանը և իսկոյն անցաւ իւր գործին։

Երբ նա վերջացրեց իւր ասելիքը և ապա կարդաց իւր պատասխանը «Ժամանակի» անյայտ բեցենզենտին, Գարեգինը նկատեց հետևեալը.

—Լրագրական բանակռիւը, իմ կարծիքով, օգտաւէտ բան է, բայց մի պայմանով, որ նա պատշաճ ձևով կատարուի։ Նա պիտի ունենայ, օրինակ, նոյն ձևը, ինչ ձևով կատարուում է վէճը երկու միմեանց յարգող բարեկամների մէջ, և պէտք է հիմնուած լինի ֆակտերի և գաղափարական հողի վրայ. այդպիսով խնդիրներ կարելի է պարզել։ Մինչդեռ բանակռիւը մեր ժամանակակից մամուլի մէջ ոչ մի բանի նման չէ։ Նա աւելի ապացոյց է այն տխրալի իրողութեան, որ մեր վարք ու բարքերը վայրենացել են, որովհետև նորա ֆակտերը շինծու, հնարովի են, նորա ատտառը—անձնաւորութիւնն է, նորա դրդիչը կիրքը։ Այդ տեսակ բանակռիւը, բացի մաքեր պղտորելուց և անուանարկութիւնից, ուրիշ ոչ մի օգուտ չէ բերում ոչ հեղինակին, ոչ հասարակութեանը։ Դա մի ցաւ է, որի դէմ պէտք է մաքառեն նոքա, որոնք խորապէս գիտակցում և զգում են այդ ցաւը։ Քո պատասխանը իւր ձևով շատ չէ տարբերւում քո հակառակորդի գրածից։ Նա ֆակտեր է հնարել, բարդել է սուտ ստի վրայ, լուտանք լուտանքի վրայ, իսկ դու, փոխանակ հերքելու, հայհոյում ես։ Փորձիր ջնջել այն ամենը, ինչ որ գործին չէ վերաբերում, և պահիր միայն այն, ինչ քեզ հարկաւոր է հերքելու համար, և տեսնենք, թէ ինչպէս աւելի յարմար է ապել. նախկին ձևով, թէ ինչպէս ես եմ ասում։

Գարեգինը թաթախեց գրիչը և սկսեց թեք ու հորիզոնական գծերով ջնջել Ոսկերչեանի գրութեան մեծ մասը, իւր կողմից աւելացրեց մի երկու բառ, նախադասութիւնները կապելու համար, և ապա կարդաց այն, ինչ որ մնացել էր կատարած աւերումից յետոյ։

—Հը, այսպէս լաւ չէ, Արտաշէս? Կարճ և ազդու։

—Լաւ է,—պատասխանեց Ոսկերչեանը,—բայց այսպիսով զբաղմունքը մնում է անպատիժ։

—Հաւատա՛ ինձ, որ Նորան աւելի կ'ամաչացնես այս փոքրիկ պատասխանով, քան եթէ մի քանի սիւնեակներ լցնէիր յիշողներով և անպատիւ խօսքերով։

Երբ Ոսկերչեանը կամենում էր հեռանալ Զառիկեանի մօտից, յանկարծ յիշեց իւր պարտքի մասին։ Վճարեց ու մեկնեց։

Այդտեղից նա գնաց դասի։ Աշակերտի հետ պարապմունքը վերջացրած, ուզում էր դուրս գալ, եկաւ տիկին Վարթուհեանը և տուեց Նորան քսան մանէթ—ամսավճարը։ Ոսկերչեանը շնորհակալութիւն առաւ և գնաց։ Որտեղ էր օրիորդը, որ մինչև անգամ ձայնն էլ չլսուեց? Էլ չի հետաքրքրուում Ոսկերչեանի անձով։ Ա՛խ, երանի կարելի լինէր ստուգել, որքան իրաւացի է Նորա կասկածը!... Գուցէ Նորա առաջին սէրն էլ նոյն ելքը պիտի ստանայ, ինչ որ ստացաւ Նորա փայփայած ցնորքներից մէկը, դեբիւտը? Ափսոս երազներ. Նորա սկսում են կորցնել իրանց հրապոյրը!

Ճանապարհին, մի նեղ փողոցով անցնելու ժամանակ, Նորա առաջ բուսաւ Զիչագեանը։ Սա ոտից ցգլուխ նորոգուել էր և կարգին մարդու էր նմանում։ Նորան խորհուրդ էր տուել նոր շորեր առնելու Զամբազեանը, որը շեշտել էր քանիցս, թէ կեանքում առաջ գնալու առաջին պայմանն է—լաւ հագնուելը։

—Արտաշէս? գոչեց Զիչագեանը, կանգ առնելով։

—Զիչագեան? ձայն տուեց Ոսկերչեանը։ Վա՛հ, ինչ ֆրանտն ես դարձել! Հազիւ քեզ ճանաչեցի։

—Հը, որտեղից որտեղ?

—Դասից տուն։ Իսկ դու?

—Ճաշարան՝ ընթրիք անելու. սաստիկ քաղցած եմ։ Ես գալ?

—Գնանք։

Ու երկու արուեստակիցները քայլերը ուղղեցին դէպի «Պուրլինո»։

Նոքա պատուիրեցին մի-մի բաժին անարկոտ և մի շիշ գինի ու նստեցին սեղանի մօտ, որը բռնել էր սենեակի ամբողջ երկարութիւնը։

Սեղանի ճակատին բազմած էր մի սպայ, երեսը մաքուր ածիլած և հաստ ու երկայն շէկ բեխերով. նա էլ շուտով վերջացրեց ընթրիքը և հեռացաւ, այնպէս որ սենեկում, բացի երկու դերասաններից, ուրիշ ոչ ոք չկար։

Նոքա սկսեցին զրոյց անել դէսից դէնից, մինչև որ օֆիցեանտը բերաւ պատուիրած կերակուրը և խմիչքը։

Ոսկերչեանը լցրեց բաժակները, իւրաքանչիւրը ձեռքն առաւ իւր բաժակը և իրար զարկելով, խմեցին։

Մի քանի թիքէ լուռ ու մունջ կերան, և ապա Ոսկերչեանը նորից գինի ածեց, մէջքը դէմ տուեց աթոռի թիկունքին և Զիչագեանի երեսին նայելով, խօսեց.

—Զիչագեան, ես քեզնից մի բան պիտի հարցնեմ։

—Հարցրու երկուսը.

—Եթէ դու գիտես, ինձ պէտք է յայտնես, թէ իմ ներկայացման ժամանակ, ով էր մեր ընկերներից բժիշկ ուղարկել ինձ համար և ինչ նպատակով էր այդ արել?

Զիչագեանը լուռ ժպտում էր։ Ոսկերչեանը շարունակեց.

—Իսկոյն երևում է աչքերիդ արտայայտութիւնից, որ այդ բանը քեզ յայտնի է։ Ասա ուրեմն։ Եթէ չասես, դու-վատ մարդ ես։

—Լաւ, ես կը յայտնեմ, բայց այն պայմանով, որ իբրև անցած գնացած բան, մոռացութեան տաս այդ և դորանից աղմուկ չհանես։

—Ես քեզ ազնիւ խօսք եմ տալիս։

Ու Զիչագեանը պատմեց իւր գիտցածը։ Ոսկերչեանը շատ չզարմացաւ։

—Ես կարող եմ երդուել, ինչով կամենաս,—ասաց նա,—որ հէնց Զամբազեանին էլ կասկածում էի։ Ահա ինչ միջոցների էին դիմել այդ պարոնները, իրանց ընկերոջը տապալելու համար! Ես վատ մարդիկ տեսել եմ, բայց դորա նմանը առաջին անգամն եմ տեսնում... Ուրեմն այդպէս, հա? Ուրեմն այդ նա էր?... Սրիկայ, կատարեալ սրիկայ!...

—Բայց, ի սէր Աստծոյ, այս մասին!...

—Միամիտ կաց. խօսքս խօսք է։

Նոքա ըմպեցին երկրորդ և քիչ յետոյ՝ երրորդ բաժակը։ Գինին թունդ էր և երկուսի վրայ էլ ազդել էր։ Գերազանց էր մանաւանդ Ոսկերչեանի տրամադրութիւնը։ Նա իրան շատ թեթև էր զգում։ Գլուխը ազատ էր ծանր մտածմունքից։ Նա սկսեց խօսել իւր անձի դէմ գրած բեցենզիայի և իւր պատասխանի մասին։ Կարդաց սևագրութիւնը և հարցրեց Զիչագեանի կարծիքը։

—Է՛հ, բան չունես? ասաց նա։ Արժէ միթէ գլուխ դնել?...

—Իսկ իմ պատիւը ով պիտի վերականգնի? պատասխանեց Ոսկերչեանը, ծծելով բաժակի վերջին կաթիլը և բաժակը ամուր խփելով սեղանին։

—Է՛հ, ինչ պատիւ, ինչ բան?... Մարդ պէտք է գործը բռնի հեռատեսութեամբ։

—Ճշմարիտ, ես քեզ չեմ հասկանում, վրայ բերեց Արտաշէսը համարեա բարկացած։

—Գիտես, ինչ կայ, Արտաշէս? պարզեց իւր միտքը նորա արուեստակիցը. մենք պէտք է աշխատենք հաշտ լինել խմբագրութիւնների հետ։ Թշնամութիւնը մեզ, բացի վնասից, օգուտ չի բերիլ։ Նոքա են ստեղծում հասարակաց կարծիք։ Եթէ լրագիրը մէկի մասին գրեց. «լաւ է», հասարակութիւնը կամ նորա մի մասը պիտի կրկնէ. «լաւ է»։ Եթէ գրեց. «վատ է», պիտի կրկնեն ամենքը. «վատ է»։

—Օհո! Զարմանքով բացականչեց Ոսկերչեանը։ Ուրեմն թոյլ տանք, ինչ կամենում են, գրեն մեր մասին? Ուրեմն լռենք, եթէ նոյնիսկ թքում են մեր երեսին?

—Ո՛չ, դու ինձ լաւ չհասկացար։ Ես ասում եմ, թէ մեր յաջողութեան համար, մեր այսպէս ասած, հասկանում ես էլի, մեր ապագայի համար ձեռնտու է մեզ այս կամ այն թերթի հետ բարեկամ լինել...

—Այդ լաւ խրատներ ես տալիս ինձ, Զիլչագեան!

—Ես ճիշտ եմ ասում։ Ուրիշ կերպ անկարելի է։ Գիտես, ես ինչպէս արի։ Ես նախ ծանօթացայ այն բոլոր անձանց հետ, որոնք սովորաբար բեցենզիաներ են գրում։ Մի որև է պատրուակով այցելեցի բոլոր խմբագրատները։ Հոգ պատրաստեցի ինձ համար և ապա միայն բեմ դուրս եկայ։

—Եւ դու պարծենում ես դորանով? Հարցրեց Ոսկերչեանը արհամարհանքով։

—Ես չեմ պարծենում, բայց ճշմարիտ բան եմ ասում։ Հասարակական գործիչը պէտք է կապեր ունենայ լրագիրների հետ։

—Եւ դու չես ամաչում, Զիլչագեան, այդ ասում ես?

—Ինչ արած, եղբայրս, կեանքը այդ է պահանջում։ Ուրիշ

կերպ դժուար է առաջ գնալ, հասկանում ես, մինչև անգամ անկարելի է!

—Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ ուսածդ դասի համար։ Բայց իմ բոլոր էութիւնը բողոքում է դորա դէմ! Այդպիսով դու ստիպուած կը լինես շատ հեռու գնալ և խորը խրուել ցեխի մէջ։ Դու պիտի շողոքորթես, քծնես, քարշ գաս գետնի վրայ, թէ ինչ է՝ յաջողութիւն և ապագայ!

Այս ոգով տաքացած խօսում էր Ոսկերչեանը, բայց Զիլչագեանը լաւ գիտէր, թէ ինքը ինչ էր ասում։ Ցարմարելու արուեստը նա գերազանց ուսել էր և նոյնիսկ զարմանում էր, որ իւր ընկերակիցը մի այդքան հասարակ բան չէր կարողանում հասկանալ։ Մինչև անգամ նա թոյլ տուեց իրան կշտամբել Ոսկերչեանին այն բանի համար, որ նա իրան հպարտ էր պահում խմբի հետ, մանաւանդ Զամբազեանի հետ, և աւելացրեց, թէ այդպիսի վերաբերմունքը դէպի ընկերները նորան կարող է վնասել։

—Ո՛չ, ո՛չ, Զիլչագեան! Բացականչեց Ոսկերչեանը։ Ես չգիտեմ յարմարելու արուեստը և չպիտի աշխատեմ իմանալ! Դա ստորացնում է մարդուն։ Ես չեմ կարող թագցնել իմ համոզմունքը, չեմ կարող կեղծել, չեմ կարող տանել անպատուութիւնը! Ասում ես, այդ վատ է ապագայի համար։ Վնաս չունի. թող վատ լինի! Ես չեմ կամենում այն յաջողութիւնը, որ ձեռք է բերուում ոչ ուղիղ ճանապարհով!

—Համբերութիւն է հարկաւոր, եղբայր, համբերութիւն! Ժամանակով մենք էլ բարձր կը պահենք մեր գլուխները...

Ոսկերչեանը ապշած նայում էր խօսակցի երեսին։ Նա իրան ստորացած զգաց, որ մի այնպիսի գծուծ մարդու հետ սեղանակից էր։ Զիլչագեանի անձնաւորութեան մէջ նա մարմնացած տեսաւ կեանքի ամենագծուծ կողմերը։ «Ահա նա, ինքը իրականութիւնը!» Մտածեց նա և, ընթրիքի փողը վճարելով, կամենում էր շուտ հեռանալ այդ ողորմելի արարածից։ Զիլչագեանը կանչեց նորա ետևից.

—Ոսկերչեան, սպասիր, ես էլ եմ գալիս։

—Ես շտապում եմ, պատասխանեց Ոսկերչեանը և անհետացաւ Զիլչագեանի աչքից։

## VIII

Հետևեալ օրը Ոսկերչեանը իւր պատասխանը տարաւ «Ժամանակի» խմբագրատունը։ Խմբագիրը ներկայ չէր, և գրութիւնը ընդունեց արծաթի մի պարոն, որին նա չէր ճանաչում։ Ոսկերչեանի հարցին, թէ երբ կը տպւի, պարոնը պատասխանեց, թէ այդ կախուած է խմբագրից։ Այդ պատասխանը սակայն երբէք դուրս չեկաւ լրագրի մէջ, Ոսկերչեանն էլ չհետաքրքրուեց դորանով, չմոռացաւ զրաքննիչի դիմել սոխպմամբ տպել տալու համար։

Բայց դորա փոխարէն նորա թշնամին յայտնուել էր. «Ժամանակի» խմբագրութեան մօտ անձերից մէկը այդ հաղորդել էր, իբրև գաղտնիք, մի այլ աշխատակցի, վերջինս, կրկին իբրև գաղտնիք, յայտնել էր այդ մասին Զառիկեանի ծանօթներից մէկին. սա էլ իբրև հետաքրքրական նորութիւն, յայտնել էր Գարեգինի քրոջը, որից լսեց այդ լուրը ինքը Ոսկերչեանը։

Սորա զարմանքին չափ չկար։ Նա ապշած էր, թէ այն ինչպէս եղաւ, որ այդ մարդը այդ ատիճան թշնամական զգացմունքով է համակուել դէպի նա։ Ինչով է առիթ տուել? Երբ է նորան մի վատութիւն արել?

Բայց նա նոյնչափ կատաղած էր։ Նա փնտռում էր նորան, ինչպէս փնտռում են գազանին, որը՝ մէկին վնաս տալուց յետոյ՝ թողնում փախչում է։ Նա վճռել էր պատիւ պահանջել նորանից, որտեղ էլ նորան հանդիպելու լինի։ Եւ ընդհարումը տեղի ունեցաւ Վանքի գաւթումը։

Վախճանուել էր հասարակական-գրական գործիչներից մէկը, որի մասին յայտարարուել էր բոլոր հայ լրագիրներում։ Նորա թաղման առիթով, գլխաւորապէս ինտելիգենտներից բաղկացած մի խուռն բազմութիւն էր ժողովուել եկեղեցու գաւիթը։

Տաճարի դրան առաջ կանգնած էին Զառիկեաններ՝ Գարեգինը և Աշխէնը և խօսք ու զրոյց էին անում Ազատեանի հետ հանգուցեալ գործիչի մասին։

Այդ ժամանակ մէկը սրնթաց անց կացաւ նոցա մօտով և ուղիղ—դէպի աւազանի կողմը։ Գարեգինը կանչեց Ոսկերչեանի ետեւից, բայց նա ետ չնայեց. կամ չլսեց կամ չուզեց պատասխանել։

Աւազանի մօտ կանգնած էին մի քանի երիտասարդ պարոններ, որոնց մէջ և Սեւումեանն էր։ Նոքա երեսները դարձրել էին դէպի գետի կողմը և խօսում էին։

Ցանկարծ Սեւումեանի ետևից մէկը ձայն տուեց.

—Պարոն Սեւումեան!

Սեւումեանը ետ նայեց և տեսաւ—Ոսկերչեանը։

Նա խոժորեց դէմքը, և հակառակորդները իրար հանդէպ արձանացան։

Ոսկերչեանը յուզուած էր, հազիւ կարողանում էր զսպել բարկութիւնը, շրթունքը դողում էր։ Սեւումեանը լուռ էր և սպասողական դիրք էր բռնել։

—Ես լսել եմ,—խօսեց Ոսկերչեանը զսպուած զայրոյթով,—ես լսել եմ... որ... որ «Ժամանակի» մէջ... իմ մասին գրուած... քննադատութեան հեղինակը... դուք էք։ Այդ ճիշտ է?

Այն ձայնը, որով նա խօսում էր, այն հայեացքը, որով նա նայում էր թ. Նամու երեսին, վերին աստիճան յանդուգն ու լկտի երևացին վերջինիս։ Իւր կատարեալ արհամարհանքը ցոյց տալու համար Սեւումեանը պատասխանեց շեշտով և հպարտութեամբ.

—Այո, պարոն, այդ հեղինակը—ես եմ!

—Դուք?... Ուրեմն դուք էք, որ ինձ զրպարտել էք?!...

—Սատկացնեմ այս մժղուկին, տեղը չէ? Գոչեց Սեւումեանը, ոլորելով պսպղուն բիբերը և նայելով մերթ թշնամու աչքերին, մերթ իւր ծանօթների երեսին։

Ոսկերչեանի սիրտը թրթռում էր, ինչպէս ճանապարհից յոգնած մէկը։ Նա երկու խիզախ քայլեր արաւ դէպի հակառակորդը, որը՝ կիսադէմ կանգնած նորա հանդէպ՝ մի բռունցքը ամուր սղմած էր, իսկ միւս ձեռքը, վահանի պէս, պահել էր կրծքի մօտ։ Հէնց այն է, որ նոքա պիտի բռնէին իրար օձիքից, մէջ տեղ ընկան մի քանի ծանօթ և անծանօթ երիտասարդներ և կռուողներին բաժանեցին միմեանցից։

Ոսկերչեանը, առանց դիմադրելու իւր ձեռքերը պահած պարոններին, բարձրաձայն գոռում էր.

—Ես պահանջում եմ, որ դուք հրապարակով ետ վերցնէք

ձեր զրպարտութիւնները, ապա թէ ոչ՝ ես ամէն տեղ պիտի գոչեմ և ասեմ. «Սևումեանը զրպարտիչ է և ստախօս!...

—Լիրբ!... որոտաց Սևումեանը, աշխատելով ազատել իրան խանգարող ձեռքերից։

—Ամօթ է, ամօթ է, պարոններ!... Մի մտածեցէք, թէ որտեղ էք սարքել այս խայտառակ տեսարանը! յանդիմանում էր Զառիկեանը, որը, Ոսկերչեանի ձայնը լսելուն պէս, շտապել էր կռուողների մօտ և գիրկն առել իւր բարեկամին։

Նոցա հեռացրին. Սևումեանին քաշեցին մի կողմ, իսկ Ոսկերչեանին Գարեգինը տարաւ Աշխէնի և Ազատեանի մօտ։

Ազատեանը ուրախ խնդում էր։ Մ՚յ լաւ առիթ Սևումեանի վրայ ծիծաղելու մանր լուրերի մէջ! Մինչև այդ օրը Ազատեանը շարունակ խուլ կռիւ էր մղում Սևումեանի դէմ. անունը չէր յիշում, բայց նորա ակնարկութիւնները թափանցիկ էին։ Կռիւը, այսպէս ասած, պարտիզանական էր. այսուհետև նա կը կատարի արձակ տեղում, երես առ երես։

Այս սկանդալը մեծ նշանակութիւն ունեցաւ Սևումեանի համար։ Նա ինքը խոստովանեց, որ յարել է «ժամանակին»։ Նորա անունը շուտով խօսակցութեան և ծաղրի առարկայ դարձաւ երիտասարդների շրջանում։ Նորան պախարակում էին փոփոխամտութեան համար։ Ասում էին, թէ նա իւր սկզբունքներին դաւաճանեց, ուրացաւ բարեկամներին, թողեց իւր բանակը և անցաւ թշնամիների կողմը։ Օգուտ քաղելով նորա բարոյական թուլութիւնից, չար լեզուները զանազան անեկդոտներ հնարեցին նորա մասին և տարածեցին ամէն տեղ։ Նորա անունը օժտեցին հազար ու. մէկ անպատուաբեր ածականներով և էպիթէտներով։ Նորան վերագրեցին և այնպիսի արատներ, որոնցից նա ազատ էր։ Նորանից կամեցան խլել և այն արժանաւորութիւնները, որ նա ունէր։ Նորա խօսքերը, գործերը, անհատական կեանքը ծաղրի և սրախօսութիւնների առարկայ շինեցին նաև այն տեսակ անձինք, որոնք անհամեմատ ստոր էին կանգնած Սևումեանից թէ իրանց խելքով, թէ զարգացողութեամբ, թէ ընդունակութիւններով։

Սևումեանը վճռել էր միաւժամանակ incognito մաքառել իւր թշնամիների դէմ։ Բայց ներկայ դէպքը քակտեց նորա վճիռը։ Էլ

ինչ միտք ունէր ծպտի թշնամանքը։ Սևումեանը այժմ տեսաւ, որ ինքը իւր ձեռքով կրակ է տուել իւր եաև բոլոր նաւերը, և նահանջել անկարելի է։ Նորան մնում էր ընտրել երկուսից մէկը՝ կամ, ընկճուելով հասարակաց կարծիքի ծանրութեան տակ, վայր դնել գրիչը և հեռանալ լրագրական ասպարիզից, կամ, հաւաքելով ոյժերը, թոթափել այդ բեռը, ամուր դիրք բռնել և դէմ յանդիման կանգնել իւր նախկին ծանօթների, ընկերների և բարեկամների առաջ։

Սևումեանը, իբրև փառասէր, անհանգիստ և տոկուն բնաւորութիւն, անյայտութեան մէջ թմրելուց նախապատիւ համարեց կեանքի փոթորիկը և, առանց վարանելու, առաւ գրիչը, իւր միակ զէնքը, թաթախեց նորան թոյնի և մաղձի մէջ, և այսպէս զինուած՝ հրապարակ ելաւ և կռիւ յայտարարեց այն ամենքին, որոնք իւր անունը ծաղր ու ծանակ էին կամենում դարձնել հասարակութեան առաջ։

## IX

Սևումեանի ոտը կտրուեց Զառիկեանների դրան շեմքից։ Բայց նորա տեղ Ազատեանը դարձաւ նոցա տան մշտական յաճախորդը։ Դորա պատճառը մասամբ Աշխէնն էր։ Նա սիրում էր գաղափարական երիտասարդների շրջան։ Երբ նա կորցրեց իւր հաւատը դէպի Սևումեանը, նորա համակրութիւնը դէպի Ազատեանը մի առանձին ջերմութիւն ստացաւ։

Ազատեանն էլ զարմանալի հոտառութեամբ կարողանում էր հասկանալ մարդկանց հոգու կրած փոփոխութիւնները։ Եւ ահա, օգուտ քաղելով օրիորդի նոր տրամադրութիւնից, գործ դրեց իւր բոլոր ճարպիկութիւնը՝ նորա աչքում աստիճանաբար բարձրանալու նպատակով։

Նայած, թէ ինչ էր պահանջում բոպէն, նա համապատասխան դիրք ու կերպարանք էր ընդունում։ Մերթ ներկայացնում էր իրան մեծահոգի և փակում էր այն լպիրշ մարդկանց անդուռն բերանները, որոնք թոյլ էին տալիս իրանց անվայել ակնարկներ անել Սևումեանի վերաբերմամբ և շատ հեռու գնալ իրանց բամբասանքներով, մերթ, ազնիւ զայրոյթով լցուած, երիտասարդների փոփոխամտութիւնն էր դատափետում. մերթ համեստ էր ձևանում,

ասելով. «մենք, թոյլ մահկանացուներս», «մենք մեր թոյլ գրչով կ'աշխատենք հերքել». մերթ, իրան զարգացած ցոյց տալու համար, բերում էր վկայութիւններ մեծ մարդկանց ասածներից և երբեմն թոյլ տալիս իրան չհամաձայնել նոցա հետ, մերթ պարզ ու միամիտ ձևանալով, իւր կեանքից զանազան դէպքեր էր պատմում, բայց այնպէս, որ լսողը մոռանէր ինքն իրան. «այ քեզ քաջութիւն, այ քեզ ազնուութիւն, այ քեզ սրամտութիւն». մերթ անխնայ քննադատում էր իւր սեփական թերութիւնները և վատասովորութիւնները։ Մի խօսքով, մի կատարեալ simulator ac dissimulator.

Ազատեանը արտաքին տեսքով աւելի գրաւիչ էր Սևումեանից։ Երկայն ու փափուկ մազերը, կողքից սանրուած, աւելի ևս սիրուն էին դարձնում նորա կլոր գլուխը և կամարաձև գծով բաժանում էին գլուխը լայն և մաքուր ճակատից։ Նուրբ յօնքերի տակ, կանոնաւոր քթի երկու կողմերում, հանդարտ շարժւում էին սպիտակուցի հետ շագանակագոյն բիբերը։ Ցստակ և քիչ կարմրին տուող այտերը բոլորովին ազատ էին մազերից, և կոկ մօրուքը, խառնելով իւր մէջ բարակ ընչացքը, առանց սուր ծայրի, հաղիւ ծածկում էր փողպատի վերի մասը։ Նա հագնում էր ճաշակով և այդ լրացնում էր նորա համաչափ և վայելուչ կազմուածքի գեղեցկութիւնը։

Մինչդեռ Սևումեանի կերպարանքը Ազատեանի կատարեալ հակապատկերն էր։ Որքան մեղմ ու քնքոյշ էին առաջինի դիմագծերը, այնքան աւելի կորուկ և ազդու էին երկրորդինը։ Նորա կոշտ ու կուպրի պէս սև մազերը դէպի վեր ցցուած, կարճ, բայց թաւամազ յօնքերը, որոնք բաժանւում էին իրարից կարծես լարուած աղեղով, խոր ընկած աչքերը, իրանց սև, արագաշարժ փայլուն բիբերով, արծաւին սրածայր քիթը և սրածայր նիզակաձև մօրուքը—բոլորը արտայայտում էր անհանգիստ, կորուկ բնաւորութիւն և անծայրածիր վճռողականութիւն։

Այս պատերազմիկ և առնական պատկերից հիասթափելով, օր. Աշխէնը այլուր սկսեց որոնել իւր իդէալը և կարծեց, թէ գտաւ իւր ցանկացածը։ Եւ իսկապէս. Ազատեանը դարձաւ նորա համար մի տեսակ կատարելատիպ։ Նա հրապուրեց այնչափ, որ քիչ էր

ՏՈՒՄ ԵՐԴՒԷՐ ՆՈՐԱ ԱՆՈՒՆՈՎ։ ԵՒ ՈՐՔԱՆ ԸՆԿՆՈՒՄ ԷՐ ՍԼՈՒՄԵԱՆԸ, ԱՅՆՔԱՆ ԱՒԵԼԻ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԷՐ ՆՈՐԱ ԱՉՔՈՒՄ ԱԶԱՏԵԱՆԸ։

ԳՈՒՑԷ ԱՅՍ ԳՈՐԾՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱՒ ԵՒ ՄԻ ՈՒՐԻՇ ՀԱՆԳԱՄԱՆՔ։ ԲԱՆԸ ԱՅՆ Է, ՈՐ ԱԶԱՏԵԱՆԸ «ՃԱՌԱԳԱՅԹԻ» ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱՐՈՒՄ, ՆԿԱՐԱԳՐԵԼՈՎ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵԳԱՐՁԸ ԵՒ ՀԱՆԴԷՍԸ, ՀՐԱՊԱՐԱԿՈՎ ԴՐՒԱՏԵԼ ԷՐ ՕՐ. ԱՇԽԷՆ ԶԱՌԻԿԵԱՆԻՆ, ՈՐԻ ԱՆՁՈՎ ԻԲՐԹԷ ԿԱՐՈՂ Է ՊԱՐԾԵՆԱԼ ԱՅՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՆԱ ԾԱՌԱՅՈՒՄ Է, ԵՒ ՈՐԻ ՕՐԻՆԱԿԻՆ ՀԵՏԵԼԵԼՈՒ ՀՐԱՒԷՐ ԷՐ ԿԱՐԴՈՒՄ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ։

ԲԱՅՑ ԱՀԱ ՏԱՔ ԲԱՆԱԿՌԻՒ ԲԱՑՒԵՑ ԵՐԿՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ։

ՄԱՐՏՆՉՈՒՄ ԷԻՆ ԵՐԿՈՒ ՀԵՐՈՍՆԵՐ՝ ՄԻ ԲԱՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԱՏԵԱՆՆ ԷՐ, ԻՍԿ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԻՑ—ՍԼՈՒՄԵԱՆԸ։

ՕՐ. ԱՇԽԷՆԸ ՈՒՇԻ ՈՒՇՈՎ ՀԵՏԵՒՈՒՄ ԷՐ ԱՅԴ ՊՈԼԵՄԻԿԱՅԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՒ «ՃԱՌԱԳԱՅԹԻ» ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՄԱՐԸ, ՕՐԻՈՐԴԻ ԱՍԵԼՈՎ, ՄԻ ՆՈՐ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ԷՐ ԲԵՐՈՒՄ ԱԶԱՏԵԱՆԻ ՀԱՄԱՐ, ԻՍԿ «ԺԱՄԱՆԱԿԻ» ԱՄԵՆ ՄԻ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՆՈՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ—ՍԼՈՒՄԵԱՆԻ ՀԱՄԱՐ։

ԱՐԺԷ ԾԱՆՕԹԱՆԱԼ ԱՅՍ ԲԱՆԱԿՈՒԻՆ։

ՈՍԿԵՐՉԵԱՆԻ ԵՒ ՍԼՈՒՄԵԱՆԻ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԻ ՀՈՒՄՈՐԻՍՏԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԵԱՑ «ՃԱՌԱԳԱՅԹԻ» ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐԻ ԲԱԺՆՈՒՄ։ ՆՈՅՆ ԱՅԴ ՀԱՄԱՐՈՒՄ ԶԵՏԵՂԱԾ ԷՐ ՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՀԵՏԵՒԵԱԼ ՎԵՐՆԱԳՐՈՎ. «ՓՈՓԽԱՄՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԷՋ»։ ՑՈՂՈՒԱԾԸ ԳՐՒԱԾ ԷՐ ԽԻՍՏ ԿԾՈՒ ՈՃՈՎ։ ՍԼՈՒՄԵԱՆԻ ԱՆՈՒՆԸ ՉԷՐ ՅԻՇՒԱԾ ԱՅՆՏԵՂ. ԲԱՅՑ ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՐԶ ԷՐ, ՈՐ ԽՈՍՔԸ ՆՈՐԱ ՄԱՍԻՆ Է։

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ ՍԿՍԵԼ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ՄԵՐ ՄԷՋ ՓՈՓԽԱՄԻՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՅԼԱՆԴԱԿ ՏԻՊԸ։ ԱՅԴՊԻՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՍՐՏՈՎ ՉԵՆ ԿՊՉՈՒՄ ՄԻ ՈՐ ԵՒ Է ԴԱՒԱՆԱՆՔԻ ԵՒ, ԻՐԱՆՑ ՁԵՒԱՑՆԵԼՈՎ ՀԱՍՏԱՏ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՏԷՐ, ԳՈՐԾՈՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ ԵՆ, ՈՐ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԶՈՒՐԿ ԵՆ ԱՅԴ ԲԱՆԻՑ։ ԱՅՍՕՐԱՅ ՔԱՐՈԶԱԾԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՎԱՂԸ ՈՒՐԱՆԱԼ, ԱՅՍՕՐԱՅ ԿՈՒՌՔԸ, ՈՐԻՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ԷԻՆ ՏԱԼԻՍ, ՎԱՂԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԽՈՐՏԱԿԵԼ ԵՒ ԾՈՒՆԸ ԴՆԵԼ ԱՅՆ ԿՈՒՌՔԻ ԱՌԱՋ, ՈՐԻՆ ՀԱՅՀՈՅՈՒՄ ԷԻՆ։ ԴՈՔԱ ԿԱՄՔԻՑ ԶՈՒՐԿ ԷԳՕԻՍՏՆԵՐ ԵՆ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ԼՍՈՒՄ ԵՆ ՈՉ ԹԷ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՁԱՅՆԻՆ, ԱՅԼ ԻՐԱՆՑ ԿՐՔԵՐԻ ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆ։ ԴՈՔԱ ՄԻԵՆՈՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՎԱՍՏ ՏԵՍԱԿԻ ՓԱՌԱՍԷՐՆԵՐ ԵՆ. ԵՐԲ ՄԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ, ՄԻ ՇՐՋԱՆ ՅԱԳՈՒՐԴ ՉԷ ՏԱԼԻՍ ՆՈՅԱ

փառասիրական տենչանքին, նոքա, առանց խղճի խայթոցի, թողնում են նախկին դաւանանքը, նախկին շրջանը, դաւաճանում են բարեկամներին և անամօթ կերպով անցնում ոխերիմ թշնամիների բանակը։ Դոքա մոքի ռենեգատներ են։

Միևնոյնն է թէ շիկնած երկաթով դաղէիր Սևումեանի սիրտը. այդչափ սաստիկ էր յօդուածի ազդեցութիւնը նորա վրայ։ Նորա մռայլած դէմքին և չարութեամբ լցած աչքերին նայողը իսկոյն պիտի մտածէր, որ այդ մարդը մի ոխ է սնուցանում իւր մէջ։ Նա վիրաւորուած գազանի էր նման։ Փողոցներով անցնում էր արագ, շարժումները ջղային և հայեացքը յանդուգն ու կասկածոտ։

Մի քանի օրւայ լռութիւնից յետոյ, նա, կարծես սթափելով շշմած դրութիւնից, կրծքի տակ հաւաքած բոլոր մաղձն ու թոյնը թափեց մի պասկուիլի մէջ, որը տպւեց «Ժամանակի» մէջ և բռնեց Ֆելիէտոնի ամբողջ բաժինը, և դորանով խօսակցութեան նիւթ տւեց ընթերցողներից շատերին։

Իւր պարսաւագրութեան մէջ Սևումեանը ծաղրի էր մատնել «Ճառագայթի» ամբողջ խմբագրութիւնը՝ սկսած հրատարակչից մինչև ետին աշխատակիցը. չէր մոռացել անցողաբար դիպչել և այդ թերթի համակրողներից ոմանց։ Թէև ներկայացրած անձերից ամեն մէկը մի ծաղրանկար էր, բայց ընթերցողի համար շատ դիւրին բան էր գտնել իւրաքանչիւրի օրիգինալը։ Ամենքի դէմքերը, շորերի տարազը, առանձնայատկութիւնները—բոլորը դուրս էր բերուած այնտեղ։ Պասկուիլեանցը իւր հերոսներին օժտել էր անվայել ածականներով։ Այդ բաւական չէ։ Նա հարկաւոր էր համարել իւրաքանչիւրի անցեալը քրքրել և այդ անցեալից հրապարակ հանել զանազան անեկդոտային դէպքեր, որոնք, անաւանարկութեան համար, հեշտութեամբ կարող էին իրր զէնք ծառայել բանսարկու և բամբասասէր մարդկանց ձեռքին։ Այդ լկտիութեան չափ ու աստիճանը հասկանալու համար, բաւական է ասել, որ հեղինակը ծաղրաբանութեան նիւթ էր շինել իւր հին բարեկամներից մի քանիսի նոյն իսկ ֆիզիկական պակասութիւնները. այնպէս որ այդ բարեկամներից մէկը նորա գրչի տակ դարձել էր «քօռ բու», միւսը՝ «ծուռ քթանի», երրորդը՝ «կաղ դև»։ Բայց կեղտի ամենամեծ քանակութիւնը Ազատեանի գլխին էր թափւած։ Նորա վերաբերմամբ,

ի միջի այլոց, գրած էր հետևեալը. «ամեն առաւօտ նա պարտաւոր էր տարածուել յատակի վրայ, իւր լեզուով մաքրել իւր տիրոջ կօշիկների երեսը և լիզելով փայլեցնել նորա կօշիկները»։ Գրածքը վերջանում էր հետևեալ տողերով. «ազնիւ մարդը չէ կարող մնալ այդ մթնոլորտի մէջ, որովհետև նա վարակուած է շողոքորթութեան, ստորաքարշութեան և անձնազովութեան բացիլներով։ Ով կամենում է մնալ այդ մթնոլորտի մէջ, նա ստիպուած է դէն դնել իւր արժանապատուութիւնը, ամօթը և բարոյական մաքրութիւնը»։

Այս պասկուիլի առիթով ոչ մի խօսք չասաց «ձառագայթը»։ Նա, երևի, կամ անարժան էր համարել ուշադրութիւն դարձնել մի այնքան սանձարձակ շարայարութեան վրայ կամ լռել էր դիտմամբ, որպէս զի չմտածէին, թէ «ձառագայթը» իւր վրայ է առել այդ պարսաւագրութիւնը։

Բայց նորա փոխարէն Ազատեանի ստորագրութեամբ երևաց այնտեղ մի յօդուած «Թէ ո՞վ է Սեւումեանը»։ Եւ դա եղաւ ազդանշան երկու հերոսների կռուի բռնելու։

Իւր գրածքի մէջ Ազատեանը աշխատում է պարզել Սեւումեանի իսկական պատկերը և ցոյց տալ, թէ ինչ է նշանակում *քարոյական մաքրութիւն*, երբ այդ խօսքերը արտասանում է Սեւումեանի նման մէկը։ Այդ դիտաւորութեամբ նա կենսագրութեան ձևով ներկայացնում է Սեւումեանի անցեալը՝ սկսած իւր ծանօթութիւնից մինչև վերջին օրերը։ Երևան է հանում նորա բոլոր ֆիլիպպիկաները, որ նա ասել և գրել է «ժամանակի» դէմ, նորա դրատուները «ձառագայթի» ուղղութեան, նորա դերը կուսակցական պայքարների մէջ, նորա գրած նամակները այն անձանց մասին, որոնց հետ այժմ նա դարձել է «մի հոգի»։

Ինչ որ արել էր Սեւումեանը, արել էր բացարձակ, այսպէս ասած, օրը ցերեկով։ Եթէ դա ամօթ է և անպատուութիւն, նա յանձն է առնում այդ ամօթը և անպատուութիւնը. այնպէս որ Ազատեանի գրութիւնը մի առանձին նշանակութիւն ունեցող նորութիւն չէր պարունակում իւր մէջ, որ յայտնի չլինէր ընթերցողներին Սեւումեանի նկատմամբ։

Բայց արդէն մի կատարեալ նորութիւն, մի սկանդալ էր Ազատեանի վերաբերմամբ այն ամենը, ինչ որ գրեց Սեւումեանը նորա

մասին իւր պատասխանի մէջ, որի վերնագիրը նորա յօդուածի վերնագրի ընդօրինակումն էր—«Թէ ո՞վ է Ազատեանը»։

Այս վերջինս իւր գրուածքի մէջ պարծենալով յայտնել էր, թէ «Ճառագայթի» քարոզած սկզբունքները իւր համար սուրբ դաւանանքի նշանակութիւն է ունեցել, թէ «Ճառագայթի» գծած ճանապարհից նա երբէք չէ շեղուել, թէ նա, հետևելով «Ճառագայթի» սովորութեան, խարազանը ձեռքին մորակել է հասարակութեան այլանդակ թերութիւնները և միշտ լաւին լաւ է ասել, վատին—վատ։

Սևումեանը իւր պատասխանի մէջ աշխատում է փորփորել այն, ինչով պարծենում էր հակառակորդը, և այդ կէտի վրայ է գնում ողը իւր մերկացումների բոլոր ծանրութեամբ։

Ի հաստատութիւն իւր ասածների, նա բերում է քաղուածքներ նորա նամակներից և մատնացոյց անում զանազան վկաների վրայ։

Եւ ինչ է դուրս գալիս բանից?

Բանից դուրս է գալիս այն, որ Ազատեանը, տարիներ առաջ, «Ճառագայթին» մօտ աշխատակից լինելու անյաջող փորձեր անելուց յետոյ, սկսել է ամեն տեղ դժգոհութիւն յայտնել այդ թերթից, որ նա այլ ևս չէ գոհացնում, որ նա գնալով անհետաքրքրական և ձանձրալի է դառնում, որ, շնորհիւ նորա ղեկավարի բռնակալ բնաւորութեան և մի քանի ուրիշ վատ յատկութիւնների, լռութեան և անգործութեան են մատնուել շատերը, որոնց եռանդը զուր տեղը կորչում է և ոյժերը անօգուտ սպառւում. մի քանի անձանց ներկայութեամբ յայտնել է կարծիք, թէ լաւ կը լինէր ունենալ մի աւելի լաւ օրգան, որպէս զի նա կարողանար լինել լաւագոյն ձգտումների թարգման, լաւագոյն իղձերի արտայայտիչ և առաջդիմութեան ղեկավար. այդ նպատակով նա նոյն իսկ փորձեր է արել ջլատելու նորա ոյժերը և վերջնականապէս տապալելու այդ օրգանը։

Այս բոլոր մերկացումները անելուց յետոյ, Սևումեանը բացականչում է. «Դէ այժմ թող տեսնէ հասարակութիւնը այդ մարդու բոլոր կեղծիքը!» Այս բոլորը, ի հարկէ, համեմուած էր ամենաընտիր յիշոցներով։

Ազատեանը շտապեց պատասխանել «ճառագայթի» հետևեալ համարում։ Նա ճիգ է թափում՝ մի կերպ դուրս գալ այս մեղադրանքների ծանրութեան տակից. և այդ անում է զանազան միջոցներով՝ կամ ուղղակի ուրանում է շատ բան, կամ իւր ժամանակներում գրածներին ուրիշ մեկնութիւններ է տալիս, կամ յայտնում է, թէ Սևումեանը աղաւաղել է իւր ասածը և գրածը, կամ հաւատացնում է, որ նա հնարել է շատ բաներ։ Դորանից յետոյ նա դնում է մատենադարանի խնդիրը և հարցնում «ինչ եղան այն պարտքերը, որ նա անում էր իւր ձեռնարկութեան համար?»

Այս հարցը առաջարկելով, Ազատեանը, անշուշտ կարծել է, թէ շատ նեղը պիտի գցէր Սևումեանին։

Բայց շուտով երևաց և դորա պատասխանը։ Սևումեանը յայտնում է, թէ փողը ամբողջապէս իւր ձեռքին է, և Ազատեանը թող այդ մասին շատ հոգս չանի, որովհետև հէնց նոյն օրը, երբ կը թողնէ իւր դիտաւորութիւնը, կը շտապէ և պարտքերը վերադարձնել։ Եւ ապա ինքը իւր կողմից մի քանի հարցեր է անում Ազատեանին. օրինակ. ինչ եղան այն փողերը, որ նա հաւաքել էր բաժանորդագրութեամբ իւր մի շարադրութիւնը տպելու համար, որը սակայն երբէք չտպուեց, չնայած, որ չորս տարի է անցել, և չի էլ տպուելու երբէք?

Մօտ մի ամիս տևեց Սևումեանի և Ազատեանի միմեանց դէմ արած նեռաձգութիւնը։

Ասածուն է միայն յայտնի, թէ ով և որչափ արդար էր իւր ամբաստանութիւնների և ինքնապաշտպանութեան մէջ։

Նոքա անխնայ կերպով իրար մարակում էին, մերկացնում իրար թերութիւնները և դնում հրապարակի վրայ հասարակութեան ծաղր ու ծանակի համար։

Այս բանակռիւը այն նշանակութիւնը ունեցաւ երկուսի համար, որ նոքա հռչակուեցին, իբրև ժամանակակից հերոսներ, և նոցա անունը և համբաւը հասաւ մինչև այն բոլոր անկիւնները, որտեղ կարդում էին «ժամանակը» և «ճառագայթը»։

Հասարակութիւնը հաճութեամբ կարդում էր այս բոլոր խրճբրճանքը։ Այն անձինք, որոնք սիրում են ըմբշամարտի նման տեսարաններ, հրճւում, հիանում էին և ծափ զարնում հերոսներին.

իսկ Նորա, որոնք պաշտում են տպագրական խոսքի սրբութիւնը, բեխերը սրելով, մտախոհ մրմռում էին քթի տակ.

—Հը՛, ուրեմն բանը այսպէս է, հա?

## X

Ոսկերչեանի հոգու մէջ յեղափոխութիւն էր կատարւում։ Նորա կենսուրախ հայեացքը տեղի էր տալիս մռայլ աշխարհայեցողութեան։ Նախկին սանգուինիկը դառնում էր մելամաղձոտ։ Նա դեռ նոր-նոր սկսում էր տեսնել այն անդունդը, որ ընկած էր իրականութեան և իդէալների միջև։ Մարդիկ բոլորովին այն չեն ինչ որ նա կարծում էր։ Մարդու ներսը աւելի մութ է, քան այդ երևում է արտաքուստ։ Հաւատը թուլանում էր, կասկածամտութիւնը արագութեամբ զարգանում էր Նորա մէջ։

Այս բոլորը դեռ սկիզբն էր։ Ախուր և անյոյս յոռետեսութեան։ Յոյսը դեռ իսպառ մարած չէր Նորա սրտումը։ Կարօտալից աչքերով նա դեռ նայում էր հեռու և ապագայի մառախուղի մէջ նշմարում փառքի դափնին, սիրոյ պսակը և իր միտումների վերջնական յաղթութիւնը։ Նորա հոգին յիշեցնում էր այն օրը, երբ երկինքը պատած է ամպերով, բայց տեղ-տեղ բաց է մնացել կապուտակը, և ամպերի ճեղքերից շողում են ճառագայթներ, օրհաց մռայլութիւնը մեղմացնելու համար։

Նորա յարաբերութիւնները խմբի հետ գնալով աւելի և աւելի լարւում էին. դրեթէ մի փորձ չէր անցնում, որ մի անբաւականութիւն տեղի չունենար։ Այդ պատահում էր կամ դերերը բաժանելիս, երբ Ոսկերչեանին այնպիսի դեր էին առաջարկում, որ դուրս էր Նորա ամպլուայից, կամ այն դէպքերում, երբ ռեժիսորը կամ Զամբաղեանը կամ մի ուրիշը ընկերներից մէջ էին ընկնում իրանց շատ անգամ անտեղի նկատողութիւններով և բծախնդրութեամբ—մի բան, որ կրկնւում էր յաճախ։ Խումբը կարծես նպատակ էր դրել իւր համար կոտրել այդ մեծամիտ երիտասարդի հպարտութիւնը, դարձնել Նորա և մի քանիսի խոնարհ պրոտեժէն և կամակատարը։ Քանի պինդ էր պահում Ոսկերչեանը իւր անհատական անկախութիւնը, այնքան աւելի սաստկանում էր շրջապատողների ճնշումը և հալածանքը։

Ոսկերչեանի հետ ունեցած ընդհարումից յետոյ, Սևումեանը հանգիստ չէր տալիս Նորան իւր ուեցենդիաների մէջ. քայլ առ քայլ հետևում էր Նորա խաղին, լու�թեան էր մատնում այն, ինչ Նորան յաջողւում էր, պակասութիւնները չափազանցնում էր և ներկայացնում միանգամայն ծիծաղաշարժ։

Ոչ մի բանից նա այնքան չէր վհատում, որքան լրագրական յարձակումներից։ Բանը հասաւ այնտեղ, որ նա ինքն էլ սկսեց կասկածել իւր ունեցած ընդունակութիւնների մասին։ Ինքնավստահութիւնը կորցնելով, նա չէր կարողանում իւր ցանկացած տպաւորութիւնը գործել հանդիսականների վրայ։

Այժմ նա իրան նուիրել էր Համլէտի և Օթէլլոյի ուսումնասիրութեանը։ Բայց մի ներքին ձայն կարծես ասում լինէր Նորան. «Է՛հ, սիրելիս, բաւական է. թող այդ պատրանքը և ինքնախաբէութիւնը. Համլէտ և Օթէլլո քո բանը չէ!» Բայց ամեն անգամ նա լռեցնում էր այդ ձայնը և գործը շարունակում։ Թող դա պատրանք լինի—ոչինչ։ Որն է աւելի գեղեցիկ. պատրանքը թէ իրական աշխարհը?

Նա զգում էր, որ նախկին թռիչքների կորովը թուլացել է, առաջուայ ոգևորութիւնը այլևս չկայ։ Զգացումները սառչում էին կամաց-կամաց, դորա հետ միասին ձայնն էլ կորցնում էր իւր զգայնութիւնը և ոյժը։

Առաջ, երբ նա արտասանում էր Օթէլլոյի «մնաս բարովը», ձայնը դողում էր, զգացմունքների յորդութիւնից արտասուքով հեղեղւում էին աչքերը։ Նա լալիս և հեկեկում էր, և ինչքան քաղցր էր ոգևորութեան արտասուքը!

Այժմ նա ի զուր էր աղաղակում՝ փակւած սենեկի մէջ, իզուր էր ցաւեցնում աչքերը, բեխերը ոլորելով և մի կէտի վրայ ամուր գամելով։ Ձայնը զուրկ էր զգացմունքից, հայեացքը զուրկ էր բոցից։ Եւ, Աստուած, ինչ ոյժ էր գործ դնում, մինչև որ կարողանում էր մի կաթիլ արտասուք երևցնել աչքին!

Ոսկերչեանը նման էր ժայռի խուռչում մեծացած արծւի ձագի, որը, մեծերի օրինակին հետևելով, կամեցաւ թևատարած սաւառնել երկնքում, բայց թռիչքը վաղաժամ էր. նա վայր ընկաւ գետին և թևերը կոտրեց։

Սակայն չէ կարելի ասել, որ ոգևորութեան հրեշտակը ընդ միշտ երեսը դարձրած լինէր նորանից։ Թէև ոչ այնքան յաճախ, ինչպէս առաջ էր, նա վայելում էր երբեմն ամենաբարձր երանութեան պտուղներից։

Ոսկերչեանը ունէր մի տեսակ, որտեղ նա արտագրում էր իւր ոտանաւորները մի ընդհանուր վերնագրի տակ («Գուսան»)։

Ոտանաւորների մեծ մասը նուէրներ էին օր. Վարթուհեանին, ինչպէս այդ երևում է, օրինակ, հետևեալ վերնագիրներից. «Սիրոյ աստուածուհուն», «Հանդիպումն», «Ցուսատու հայեացք», «Սիրոյ ներկրանքը», «Հրաժեշտ», «Տեսութիւն», «Ոգեւորութեան աղբիւր», և այլն։

Այս բանաստեղծութիւնները Ոսկերչեանի առաջին և մաքուր սիրոյ պատմութիւնն էին պարունակում։ Նոցա միջոցով ցանկացողը կարող էր օրէցօր հետևել նորա սիրոյ զարգանալուն։

Ճիշտ է, այդ նիւթից դուրս էլ նա գրում էր ոտանաւորներ, նուիրուած, օրինակ, բարեկամութեան, իդեալների, հասարակական գործունէութեան, բայց նոցա թիւը սակաւ էր։

Սկսած այն օրից, երբ նորա մէջ կասկած ընկաւ օր. Վարթուհեանի և Գարեգինի փոխադարձ համակրութեան վերաբերմամբ, նորա մուսայի ժպիտը անհետացաւ և նա դարձաւ աւելի մռայլ։ Այդ տրամադրութեան տակ նա գրեց իւր յաջողուած բանաստեղծութիւններից մէկը («Կասկած»)։

Երբ տպւեց նորա անդրանիկ գործը («Լերան ծաղիկը»), և նա խրախոյս ստացաւ ծանօթների կողմից, գրականական փառքի ախորժակը բացւեց։ Մի օր նա վերցրեց իւր տետրը, տարաւ և յանձնեց «Մանկական թերթի» խմբագրութեան, որպէս զի տպեն։ Բայց խմբագիրը մի կողմից, աշխատակիցները միւս կողմից սկսեցին յորդորել նորան, որ նա գրի մանկական հասակի համար ոտանաւորներ, որովհետև սիրոյ բանաստեղծութիւնները, որքան էլ յաջող լինին, անյարմար են մանուկների ընթերցանութեան համար։

Ոսկերչեանը, զիջանելով այդ առաջարկութեան, խոստացաւ մանկական ոտանաւորներ մատակարարել «Մանկական թերթին»։

Եւ իրաւ, նա կատարեց իւր խոստումը։ Վերջին երկու համարներում արդէն լոյս էին տեսել նորա հետևեալ բանաստեղծու-

թիւնները. «Որը մանուկը», «Աղքատի զատիկը» և «Նոր տարի»։ Մի կիրակի օր առաւօտեան Ոսկերչեանը նստած էր սեղանի առաջ և եղունգները կրծելով դէմ էր առել մի յանգի, որ ոչ մի կերպ դուրս չէր գալիս։

Այդ րոպէին եկաւ Գարեգինը և, բարևելով իւր բարեկամին, նստեց նորա մօտ և, կարծես անգիտակցաբար, հարցրեց.

—Այդ ինչ ես անում?

Արտաշէսը բաւարարութիւն տւեց այս հարցին և յետոյ սկսեց գանգատւել իրանից, որ մանկական ոտանաւորները իրան շատ էլ չեն յաջողւում։

Երբ նա խօսում էր, Գարեգինը նորա աչքերին չէր նայում։ Նա անուշադիր էր երևում։ Նա ցրւած էր. անհանգիստ շարժումներ էր անում։ Պապիրոսը ծծում էր ագահութեամբ, մոխրամանի վրայ դնում և էլ իսկոյն վերցնում։ Վեր կենալով, սկսում էր անցուդարձ անել, քաշքշելով մօրուքը և շփելով ճակատը։

Նա լուրջ էր և մտախոհ։

Ոսկերչեանը առաջին անգամն էր տեսնում իւր բարեկամին այսչափ տարօրինակ տրամադրութեան մէջ։ Նա զարմացած հարցրեց։

—Գարեգին, ինչու ես այդպէս?...

—Ինչպէս եմ?

—Չեմ հասկանում! Մի ուրիշ տեսակ ես։ Հօ բան չէ պատահել?

Ոսկերչեանին թւաց, որ Գարեգինը ինչ որ մի լուր է ուզում հաղորդել, բայց չէ վստահանում։ Նա մինչև անգամ վախեցաւ, չլինի նա մի վատ բան է լսել իւր հօր մասին և դժւարանում է իրան յայտնել։ Նա վրդովւած կրկնեց իւր հարցը.

—Ասուած սիրես, Գարեգին, ասա, ինչ է պատահել?

Գարեգինը ժպտաց և, վերցնելով գլխարկը, ասաց.

—Հանգիստ կաց, խնդրում եմ. առանձին մի բան չէ պատահել։

Քանի օր է քեզ չէի տեսել, եկայ առողջութիւնիդ տեղեկանալու։ Ու նա հեռացաւ, միանգամայն շւարած թողնելով իւր բարեկամին։

Երեկոյեան Զաուիկեանների ծառան յանձնեց Ոսկերչեանին հե-

տեսեալ դրութիւնը. «Սիրելի Արտաշէս! Խնդրում եմ վաղը երեկոյեան ժամը 7-ին Վարթումեանների տանը լինես. ես նշանուում եմ Մարիամի հետ, և այդ առիթով այնտեղ մի փոքրիկ հացկերոյթ պիտի լինի։ Լիայոյս եմ, որ դու չես մերժիլ խնդիրքս և կը գաս մասնակցելու բարեկամիդ ուրախութեան։ Քո Գարեգին»։

Ոսկերչեանը, այդ դրութիւնը կարդալուց յետոյ, ժպտաց ապուշի պէս և սկզբումը ոչ մի ցաւ չզգաց։

Միայն մի խոր հոգոց դուրս եկաւ սրտից, և այն հոգոցի հետ դուրս թռաւ ամենափայլուն յոյսերից մէկը։

(Շարունակելի)

# ՏՐՏՈՒՆՋ

## ԱՐՇԱԿ ԱԹԱՑԵԱՆԻ

Դու հեռուում ես հասարակութեան անմիտ կարծիքին,
Եւ, աւաղ, քոյր իմ, քո անյայտ ուղին նրանով է հարթուած
Դու այն ես, ինչ որ տենչում է անյաղ իմ մենակ հոգին,
Դու այն չես, ինչ որ կարող է փոխել կեանքս թառամած։

Մեր սրտերի մէջ իրար գիմադրող արիւն է եռում,
Մեր մտքերն ուրիշ, մեր կեանքն օտար, և սէրն անմման.
Ես տանջւել գիտեմ, ես կարող եմ լալ սրտիս խորքերում,
Իսկ դու ծանօթ չես թունոտ արցունքին, հոգու տառապման։

Իմ վառ ուղեղի ծալքերում ազատ ծփանքներ տալով՝
Վխտում, խաղում են անսկիզբ, անվերջ բիւրաւոր մտքեր,
Եւ կատարելու յոյսերն են գրկում ջերմ զգացմունքով,
Նրանցով է միայն միայնակ սիրտս կանգնում անվեհեր։

Ա՛խ, եթէ հասնի անկման սև բոպէն մի գառըն ժամում,
Եւ խուլ կասկածներն անյաղ բերանով լափեն անխնայ
Այն, ինչ որ այսքան երկար պաշտում եմ սրտիս խորքերում...
Ա՛հ, թունաւոր ժամ!... Ես սարսափում եմ... թող չըհասնի նա։

Բայց քեզ, քեզ ինչ փոյթ... եթէ դու և ես ոչ ունենայիր
Այն, ինչ որ երկար պահում եմ մէջս վառ փայփայանքով՝
Հոգուդ, մտքիդ մէջ բոլորն ամփոփել կարողանայիր,
Այն բոլորն, ինչով ապրում ես հիմայ՝ յեղաշրջելով,

Օ՛, այն ժամանակ ես անկումն անկում չէի համարիլ
Եւ չէի լինիլ խաչի կորստից ես սարսափահար—
Անգին կորուսար կը թւար միայն մի չնչին կաթիլ
Մտքի լայն ծովում. բայց... ինչու, ինչու խորթ եմ քեզ համար...

16 հոկտեմբ. 1897 թ. Բագու։

# ԳԻՒՂԱԿԱՆ ՅԱՒԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՋԱ-ԷՅՆԱԹԵԱՆՑԻ

(Շարունակութիւն [1])

1886 թուին հացահատիկների սաստիկ առատութիւն էր Երևանայ և նրան շրջապատող նահանգներում, այնպէս որ ցորենի տէրը փութը 26 կոպէկով առաջարկում էր խնդրելով, իսկ առնողը դարձեալ նազ էր անում. գիւղացին՝ դարին իր անասուններին բարձած՝ տեղափոխում էր 40—50 վերստ և ուրախ էր լինում, երբ լաջողւում էր նրան փութը 18 կ. ծախել։

Ամեն տեղ, թէ հասարակական և թէ մասնաւոր անձանց չտեմարաններում որդեր էին գոյացել և անխնամ դրութիւնից հացահատիկները սարսափելի կերպով փչանում էին։

80—81 թուերի սովը մեծ հարուած էր մեր ժողովրդի համար. բայց նախորդ տարիների առատ բերքերի շնորհիւ մեր երկրում մեծ քանակութեամբ հացահատիկներ կային վաճառականների և կալուածատէրերի չտեմարաններում. պատերազմից էլ անմիջապէս ետքը լինելով՝ ժողովրդի մօտ դրամական մեծ կարողութիւն կար, և, թէպէտ ալիւրի փութը բարձրացաւ մինչև հինգ ռուբլի, որը մի դժոխալին գին էր, դարձեալ ժողովուրդը կարողացաւ դիմանալ—գտնել սերմացու և ուտելու հաց։

Այդ սովը եղաւ մի դաս. և ապագայ սովերի առաջն առնելու նպատակով կառավարութիւնը հրաման արձակեց, որ բոլոր գիւղերի հասարակութիւնները ունենան իրենց չտեմարանները, որոնք եթէ իրօք բարեխղճաբար կառավարուէին՝ մեծ բարերարութիւն կը լինէր թշուառ գիւղացիների համար։

Կառավարութեան կարգադրութեամբ իւրաքանչիւր գերդաստան պարտաւոր է տարեկան այնքան փութ [2]) հացահատիկ յանձնել չտեմարա-

---

[1]) Տես Մուրճ № 7—8։

[2]) Փութ=40 ֆունտ=16 կիլոգրամ։

նին, որքան անդամ պարունակում էր իր մէջ։ Ժողոված հացահատիկները պէտք է գործ ածէին գիւղացիները, երբ իսկապէս մեծ կարիք զգացէր։

Շտեմարանները կառավարելու համար գիւղացիների կողմից ընտրուեցին հաւատարմատարներ, որոնք կառավարութիւնից ստացան հաշուեմատեաններ կանոնաւոր հաշուապահութեան համար։ Հաւատարմատարներ ընտրուեցին գլխաւորապէս այնպիսի անձինք, որոնք ոչ թէ ժողովրդի կարիքը և բարիքը ի նկատի ունէին, այլ իրենց շահը. բոլոր ընտրուածները, քիչ բացառութեամբ, գիւղացիների պարտապաններ և վաշխառուական արհեստին ծառայողներ էին։ Նրանք մեծ ճարպիկութեամբ գիւղացիներից ժողոված հացահատիկները ծառայեցնում էին իրենց առևտրական ձեռնարկութիւններին, «տակով էին անում», ինչպէս ասում է ժողովուրդը։ Եթէ մի փոքր մաս էլ թողնում էին շտեմարանում ժողովրդի աչքերին թոզ փչելու համար, այն էլ, անխնամ պահելուց, որդերի կերակուր էր դառնում։

Շտեմարանի կառավարիչները նախ ամեն կերպ աշխատում էին մաքուր ցորեն ժողովել, որը ոչ թէ հասարակական շտեմարանն էր գնում, այլ իրենց անձնական շտեմարանը, որտեղ ցորենը մաղելով՝ ամենալաւ և մաքուր մասը ծախում էին իրենց օգտին համեմատաբար թանգ գնով, իսկ տականքը պահում էին հասարակութեան համար իբր նեղ օրերին օգնութիւն հասցնելու։ Շտեմարանի կառավարիչները իրենց պարտքի և վաշխի փոխարէն ժողոված ցորենը նոյնպէս մաղելով՝ տականքը խառնում էին հասարակութեան բաժնին, որից յետոյ իրենց օգտուածի մի մասն էլ առնում էին ամենաստոր տեսակի ցորեն աժան գնով և հասարակութեան շտեմարանից իրենց վերառածի պակասն էին լրացնում. վերջապէս չէին խղճահարւում պակաս մասը լրացնել յարդով, հողով, որպիսի նիւթերի չնորհիւ հացահատիկները աւելի շուտ էին փճանում։

Թէպէտ շտեմարանների վրայ հսկողութիւնը շատ թոյլ էր, բայց պատասխանատուութիւնից ազատ մնալու համար հետևեալ ճարպիկ միջոցներն էին գործ դնում. շտեմարանի համար կառավարիչները գիտմամբ այնպիսի շինութիւն էին վարձում, որտեղ անասունների յարդն էլ մարդ չի պահի,—յատակը խոնաւ, առաստաղը բլբլած, որի ծակերով գարնանային անձրևները անարգել ներս էին թափւում և թացացնում էին կեղտախառն հացահատիկները։ Երբ սկսւում էին գարնանային տաքութիւնները, ցորենը սկսում էր տաքանալ, որից մեծ քանակութեամբ ցորնակեր որդեր էին առաջանում։ Հէնց այդ էլ պէտք էր խորամանկ կառավարիչներին. նրանք հասարակութեան առաջ լալիս էին, ողեխարշ արտասուքներ էին թափում, որ հասարակութեան հացահատիկները փճանում են. և մի քիչ որդ կերած՝ բայց ուրիշ աղբերից մաքուր՝ ցորեն դուրս էին բերում հրապարակները, ցոյց էին տալիս գիւղացիներին հաւատացնելով, թէ բոլոր

ցորենը այդպէս մաքուր է, բայց տաքութիւնից և չինութեան ի բնէ խոնաւութիւնից այդպէս որդ է ընկել և մի կարգադրութիւն անելու իրաւունք էին խնդրում գիւղացիներից։ Դեռ հասարակութեանն էլ մեղադրում էին, որ նա չատ փող չի տալիս լաւ չինութիւն վարձելու համար։

Շտեմարանների դադափարը նոր լինելով, որի օգուտն ու վնասը դեռ չէին տեսել գիւղացիները, և իրենց պարտքն ու իրաւունքը չհասկանալով՝ առաջարկում էին կառավարիչներին վարել այնպէս, ինչպէս իրենք բարւոք կը համարեն։ Կառավարիչներն էլ իսկոյն ստորագրել էին տալիս ժողովրդական վճիռը, իրենց կաշիները ապահովելու համար, իբր թէ հասարակութիւնը իրաւունք է տալիս կառավարիչներին՝ բաժանել հացահատիկները ժողովրդին կամ վաճառել ըստ բարեհաջողութեան հաւատարմատարների։

Բարեհոգի հաւատարմատարները մի կերպ մաքրելով հացահատիկները, մի փոքր մասը բաժանում էին գիւղի ամենաչետին չքաւորներին, մի մասն էլ ծախում էին, որի դումարը ոչ մի տեղ չէր արձանագրւում, իսկ մնացածով ամենաառատ կերպով կերակրում էին իրենց թռչուններին և այլն։ Իսկ հասարակութեանը, հաշուետուութեան համար, իբրև արդարացուցիչ փաստ, միշտ պատրաստ էին ունենում ներկայացնելու համար կեղծ և չստացող մուրհակներ իրենց ստրուկ պարտատէրերի, խնամիների և քաւորների անունով։

Այդպիսով օդը ցնդեցին գիւղացիների արիւն քրտինքով աշխատած հացահատիկների շտեմարանները։

Մեծ թիւ են կազմում այնպիսի գիւղացիներ, որոնք հինգ տարուան ընթացքում շտեմարանին պահ էին տուել 60—100 փութ հացահատիկ, բայց ոչ մէկ հատ էլ լետ չստացան։

Չարագործ հաւատարմատարները, որ իրենց այդ լանցանքի համար ամենայն իրաւամբ արժանի էին կախաղան բարձրանալու, որպիսի տեսարանին չատ հանգիստ սրտով կարելի էր ականատես լինել՝ անպատիժ մնացին և իրենց ապահովեցին նիւթականապէս։

Հասարակական ինքնօգնութեան փորձերից այդ առաջինը՝ հենց իր առաջին շրջանում չորացաւ և անհետանք մնաց, իսկ գիւղացին նեղութեան օրերում մնաց տանջւելով։

Իր ժամանակին լրագրութեան մէջ բողոքեցինք շտեմարաններում կատարւող չարագործութիւնների դէմ և պաշտպանեցինք շտեմարանների ապահովելու անհրաժեշտութիւնը, որպէս ամենաօգտակար միջոց գիւղացուն թշւառ օրերում օգնութիւն հասցնելու համար, հրաւիրելով՝ ում անկ է՝ ուշադրութիւնը. սակայն ցաւելով պէտք է ասենք, որ մեր արծարծած մտքերը մնացին ձայն բարբառոյ չանապատի և անմիջապէս զգացուց անփոխարինելի կորուստը։

Կառավարութիւնն էլ տեսնելով չտեմարանների անմխիթար դրութիւնը, աւելի լաւ ասած՝ գոյութիւն չունենալը, կարգադրեց հացահատիկների փոխարէն իւրաքանչիւր տնից 51 կոպէկ փող ժողովել ամեն տարի և դանձարանում պահել։

Ցանկտրծ փոխուեց գիւղացիների բախտի անիւը։ Նախկին առատ տարիներից գումարուած ցորենը նոյն իսկ Սուրմալուի գաւառից [1]) արտահանուեց մինչև Ցունաստան. շատ քաղաքատնտեսներ ճգնում էին ապացուցանել [2]), թէ այդ արտահանութիւնը մեծ բախտ է մեր երկրի առաջադիմութեան համար. վերջապէս մեր երկրի ցորենը դատարկուեց, իսկ բնութիւնն էլ դադարեց տեղացի երկրագործների երեսին ժպալ։

---

1887—88 թուերին լեռնային տեղերում չատնուեցին մի տեսակ մանր կարմիր որդեր (հաղիւ տեսանելի), որոնք ուտում էին ցորենի միջուկը, հասկը իր ամբողջ դիրքի մէջ թողնելով։ Խեղճ գիւղացիները մեծ եռանդով քաղում էին ցորենը և տեղափոխում էին կալերը՝ կալսելու համար. դատարկ ցորենը կալսելիս տրորուում և չարդին խառնելով քամու բաժին էր լինում ի մեծ ցաւ գիւղացու սրտին։

Որդի վնասը չլրացած՝ երկինքը մեր գիւղացիների արտերին չորջորդ երկու տարիներում (89—90), մեծ առատութեամբ կարկուտ չնորհեց, որով ոչ միայն հացահատիկների արտերը վնասուեցին, այլ և խաղողի այգիները չորացան. գիւղացիները ահագին ծախքեր անելով նորոգեցին այգիները և մի քանի տարի արդիւնք չստանալուց յետոյ հաղիւ կանոնաւոր այգու տէր եղան։

91 թ-ին լեռնային տեղերում նորից ցորնակեր որդերը չատնուեցին, իսկ դաշտային տեղերում անժամանակ առատ անձրևներից փտեցին հացահատիկների հասկերը. առաջացաւ նաև ժանգը։

---

[1]) Սուրմալուի գաւառը Երևանեան նահանգի արևմտեան մասումն է. նրա կենդրոնն է Իգդիր աւանը։

[2]) Այդ տարիներում առաջին անգամն էր, որ Կովկասից ցորեն արտահանուեց արտասահման և առաջին անգամն էր, որ Կովկասի գիւղացին իմացաւ ցորենի գինը համաշխարհային շուկայում։ Ամենամեծ օգուտը հենց այն էր որ ցորենը Կովկասում գին ստացաւ. և չնայած որ արտահանութիւնը չչարունակուեց, բայց ցորենի գինը այլևս երբէք չիջաւ այն ստորին աստիճանը (փութը 20—25—34—40 կոպէկ), որի վրայ նա առաջ կանգնած էր՝ և բարձրացած գնելից պէտք է գիւղացիք օգտուած լինեն նաև այն տարիները, երբ այլևս ցորեն չարտահանուեց։ Դորանով երկրագործութիւնը դառաւ առաջանից աւելի արդիւնաւէտ,—ահա այն տեսողական օգուտը, որ առաջ բերաւ չօգտագործուած չիչած արտահանումը 1885-86 թուականներին։

Ցան. Խմբ.

Փտած, հիւանդացած ցորենից պատրաստուած հացը քայքայեց գիւղացու առողջութիւնը։ Հացի երկու երեսը սպիտակ՝ իսկ մէջը սև էր լինում։ Անճար գիւղացիները խժռում էին վատ հացը և զարմանում էին, թէ ինչու անզգալի կերպով հալւում, մաշւում էին և երկար հիւանդութիւնից յետոյ մեռնում։ Հիւանդութեան պատճառը շատ լաւ էր հասկացել բժ. Գէօրգիզոնը, բայց նրա խրատները, վատ հաց չուտելու մասին, անկարող էր կատարել թշւառ գիւղացին, ուրիշ հաց առնելու կարողութիւն չունենալով։

Ալիղամարլու գիւղ եկեղեցին, որ շատ նեղ էր ժողովրդին իր մէջ տեղաւորելու, այդ տարին բաւականին ընդարձակւեց առանց տարափոխիկ հիւանդութեան մեռնողների պատճառով։ Ինչպէս վկայում էր նոյն գիւղի քահանան, մի ձմրան ընթացքում թաղել էր 148 տղամարդ, կին և երեխաներ. այդպէս էլ մեռան միւս գիւղերում, որի մասին իր բոլոր պատճառներով մենք դարձեալ դժբախտութիւն ունեցանք արձանագրելու նոյն թւի լրագրներում, որը կարդացւեց և մոռացւեց սովորական կարգով։

Դաշտաբնակ գիւղացիները ցորենին պատահած դժբախտութիւններից զզուած՝ սկսեցին աւելի բամբակ, քնջիթ և ուրիշ այս տեսակ սերմեր ցանել, որով բնականաբար պակասում էր երկրից հացաբոյսը. լեռնային տեղերումն էլ երկու-երեք տարի միմեանց յաջորդեցին երաշտութիւն, որով միանդամայն քայքայւեց թշւառ գիւղացու նիւթականը։ Հետևանքը եղաւ ապա 93 թւի ձմրան սովի հասած թանգութիւնը մեր երկրի շատ կողմերում։ Այդ ժամանակ մեր ինտելիգենտները լիշեցին իրենց պարտականութիւնը և կոպէկանոց նէբներով օգնել մտածեցին իրենց թշւառ դրացիներին, իրենց մնուցանող-կերակրող գիւղացիներին։

Վերոլիշեալ թշւառութիւններին մենք ականատես ենք եղել գլխաւորապէս Սուրմալու գաւառում, բայց եթէ թերթենք նոյն թւականների լրագրութիւնը, կը համոզւենք, որ ամեն տեղ նոյն թշւառութիւնները տեղի են ունեցել։

Անշուշտ շատերը լիշում են 93 թւի ձմրան սաստիկ թանգութիւնը մեր երկրում և հողագործների վտանգած դրութիւնը։ Ամեն տեղ ստորագրութիւն բացւեց, և օգնեցին փողով, ցորենով, ձրի ճաշարաններով և այլն, և մի կերպ թշւառ գիւղացու օրերը երկարացրին մինչև ցանքի ժողովելը։

Հացահատիկների թանգութիւնը բաւականին նեղութիւն պատճառեց նաև ոչ հողագործներին—քաղաքացիներին, որովհետև վերջինները ստիպւեցին մի ժամանակ փութը 26 կոպ. արժեցող ցորենին 2 ր. վճարել։ Տարբերութիւնը ահագին էր։

96 թւի ցանքերի փոքր ինչ լաջող դրութիւնը, որ նախկին 81—86 թւերի առատութիւնը չունէր, այլ հաղիւ բաւարար կարող էր համարւել։

դարձեալ ամեն բան մոռացութեան տուեց։ Բայց միթէ չեն կարող նորից կրկնուել բնութեան չարիքները և նորից թանգութիւն ու սով առաջացնել, որով գիւղացու դրութիւնը դարձեալ անտանելի կը դառնայ։

---

Բայց ինչ անել, դուցէ հարցնեն շատերը։ Միթէ չարունակել ժողովարարութիւն լոգուտ գիւղացիների, պահանջել ձրի ճաշարաններ։ Չէ՞ որ այժմ նրանց ցանքերը լաջող են և այլ ևս ուրիշի օգնութեանը կարօտ չեն նրանք։

Այդ բոլորը ճշմարիտ է։ այժմ նրա ցանքերը փոքր ինչ լաջող են և դուցէ առաջիկայ մի քանի տարիներն էլ լաջող անցնեն [1]), բայց տակաւին այդ չէ նշանակում, թէ գիւղացին ապագայ դժբաղդ օրերում ապահոված է։ Նա չգիտէ կանոնաւոր տնտեսութիւն, նա չունի կազմակերպութիւն. նրա մէջ զարգացած չէ ինքնօգնութեան գաղափարը։ Եթէ նա այսօր ունենայ 10 00 փութ ցորեն, լաջորդ տարին մի հատիկ էլ լետ գցած-պահած չի ունենայ, այնպէս որ նա միշտ ենթակայ է ամեն տեսակ վտանգի նախապատրաստութիւն չունենալու պատճառով։

Նա չունի կանխիկ փող, կողմնակի աղբիւր, ուստի իր բոլոր առօրեայ պիտոյքները հալթալթում է հողից արդիւնաբերած պտուղների, մանաւանդ հացաբոյսի փոխարինութեամբ.—ճոթ ծախողը, մանրավաճառը մսավաճառը, նախրապանը, գիշերապահը, վարսաւէրը, դաշտապահը, ջրաբաժանը, քահանան, ժամկոչը, գզիրը, մուրացկանը, աշուղը,—սրանք բոլորն էլ իրենց պահանջները ստանում են գլխաւորապէս հացահատիկներով. ուստի զարմանալի չէ եթէ 1000 փ. հացահատիկ ունեցողը լաջորդ տարուան հաւար աւելորդ պահած մի հատիկ էլ չի ունենայ։ Աւելի սարսափելին այն ժամանակ է լինում, երբ հացահատիկների գները սաստիկ ընկած են լինում։ Վերոյիշեալ հանգամանքը ի նկատի ունենալով՝ շատ օգտակար կը լինի, եթէ գիւղացուն ստիպմամբ սովորցնի տնտեսութիւն անել, այն է՝ վերանորոգել հացահատիկների չտեմարանները և և խիստ կանոնների ու հսկողութեան տակ դնել։

Նայած մեր երկրի բնութեանը, մի քանի տարի հացահատիկների սակաւաբերութեանը լաջորդում է սաստիկ առատութիւն։ Սակաւաբերութեան տարիները վերջացան արդէն և անա առատութեան տարիների նշանները երևում են. ուստի պէտք չէ քնել, այլ ամեն ջանք պէտք է գործ դնել լաջող տարիներից օգուտ հանելու համար։ Մօտ 13 տարի է, որ

---

[1]) Յօդուածագիրը, այս տողերը գրելիս, բնականաբար ի նկատի չունէր ներկայ տարուայ գարնանացանի բերքը, որ գոնէ Ալէքսանդրապոլի գաւառում և մի քանի այլ տեղեր—անայող է։

Ծան. Խմբ.

իւրաքանչիւր տնից 51 կոպէկ ժողովելով պահում է դանձարանում. հէնց որ հացահատիկները սկսեցին էժանանալ, իսկոյն պէտք է գանձարանից դուրս բերել այդ ժողոված փողերը՝ և ցորեն առնելով պահել հասարակական չտեմարաններում։

Պէտք է վերջ տալ իւրաքանչիւր տնից 51 կոպ. ժողովելուն, այլ՝ նախկին օրէնքների համաձայն, ժողովել ամեն տարի մի-մի փութ հացահատիկ իւրաքանչիւր անդամից։

Հացահատիկներ չլինելիս փողն էլ մի բան չի շինում. ենթադրենք, որ առատութեան հինգ տարիների ժամանակ տասն անդամից բաղկացած տունը չտեմարանին լանձնած կը լինէր 50 փ. ցորեն, որը թանգութեան ժամանակ բաւականութիւն կը տար. իսկ հինգ տարիներում փող ժողովելով՝ նոյն տունը գանձարանում պահած կունենայ 2 ռ. 55 կ. որով անցեալ 93 թւի գներով հազիւ կարելի կը լինի մէկ և քառորդ փութ հացահատիկ առնել, իսկ մէկ և քառորդ փութը որքան չնչին բան է լիսուն փթի հետ համեմատած։

---

Հացահատիկները ժողովելուց յետոյ գլխաւոր հարցը գալիս է նրան պահպանելու և չահեցնելու մասին, որի համար հարկաւոր են խիստ օրէնքներ և խիստ հսկողութիւն, որպէս զի նախորդ տարիների թշուառ վիճակին չենթարկուեն այդ օգտակար հիմնարկութիւնները։

Դաշտային գիւղերում իսկապէս մեծ զգուշութիւն է պէտք հացահատիկներ պահպանելու համար, որովհետև սաստիկ տաքութիւնից զանազան միջատներ են առաջանում և ուտում են՝ ցորենի միջուկը. հետևապէս անհրաժեշտ է քար ու կրով կառուցած շինութիւններում պահել, որտեղ համ հով կը լինի, համ էլ մկներից ազատ կը մնան, որոնք նոյնպէս մեծ վնաս են տալիս հացահատիկներին։

Քար ու կրով շինութիւնը մեծ ծախք կը վերցնի եթէ կանխիկ փողով չինուի, բայց տնտեսաբար վարելով կարելի է շատ քիչ փողով վերջացնել։ Նախ ամեն գիւղում առանձին շինութիւն ունենալը բոլորովին աւելորդ է և աննպատակայարմար, որովհետև կան այնպիսի գիւղեր, որ 15—30 տնից են բաղկացած, որոնց համար իսկապէս դժուար է մեծ ծախք անել կանոնաւոր շինութիւն՝ ունենալու համար։ Մի քանի այդպիսի գիւղեր, 5—700 տուն, մի հասարակութիւն են կազմում, որոնք ունին առանձին տանուտէր, դատաւորներ և գրագիր։ Կենդրոնական գիւղերից մէկում շինուած է հասարակութեան դատարան, որտեղ ամեն օր ներկայ են լինում հասարակութեան տանուտէրը և գրագիրը, իսկ մէկ կամ երկու անդամ շաբաթուայ մէջ ժողովւում են դատաւորները զանազան վճիռներ կայացնելու համար. այդտեղ լինում է միշտ դատարանի ծառան։ Ամենա-

յարմարն է հէնց այդ դատարաններին կից շինել նաև չտեմարանների շինութիւնները և ժողովել այնտեղ հասարակութեան բոլոր գիւղերի չտեմարանական հացահատիկները։

Եթէ ամեն մի տուն պարտաւորւի իր սալով կրել $^1/_5$ սաժէն քար և տալ $^1/_{10}$ սաժէն կիր և մէկ հատ էլ ծածկի փայտ, ուրեմն 500 տնից բաղկացած հասարակութիւնը կունենայ 100 սաժ. քար, 50 սաժ. կիր և 500 փայտ։ Այդքան նիւթերով կարելի է մի փառաւոր շինութիւն շինել չտեմարանի համար։ Բանւորի նոյնպէս փող չի տայ հասարակութիւնը, որովհետև գիւղացին ինչպէս մշակ մարդ կարող է ինքը բանել. եթէ իւրաքանչիւր տունը երկու բանւոր տայ, կը գոյանայ 1000 բանւոր, որը բաւական է շինութիւնը վերջացնելու համար։

Լեռնային գիւղերում փայտ չկայ, այլ մեծ քանակութեամբ կրի հանքեր կան, որից զուրկ են դաշտային գիւղացիները, ուստի հեշտ է այդ երկուսը փոխարինել։ Դաշտեցին կը տայ լեռնցուն չոր փայտ, իսկ վերջինը կը տայ՝ փայտի փոխարէն՝ եփած կիր, որով երկուսի գործն էլ կը հեշտանայ։

Այնուհետև կը մնայ վարպետների վարձը փողով վճարելը. եթէ իւրաքանչիւր տուն վճարէ 1 ռ. 50 կ., կը գոյանայ 750 ռ., որը բաւական է որմնադրին, հիւսնին վարձ տալու։ Եթէ լինին կանոնաւոր շինութիւններ և հոգատարութիւն, այն ժամանակ որքան էլ եղանակը ջերմ լինի, այնուամենայնիւ կարելի է մեր երկրում 3—4 տարի հացահատիկներ պահել անվնաս կերպով։—Շինութիւնը պէտք է չորս մասից բաղկանայ, այնպէս որ ամեն տարուայ ժողովածը կարելի լինի առանձին բաժանմունքում պահել։ Հինգերորդ տարին կարելի է ծախել կամ նորելու պայմանով ժողովրդին բաժանել առաջին տարուան ժողոված հացահատիկները և նրա տեղ լցնել հինգերորդ տարուան ժողոված հացահատիկները. վեցերորդ տարին կարելի է ծախել կամ բաժանել երկրորդ տարուան ժողովածը և նրա տեղ լցնել վեցերորդ տարուան ժողովածը։ Այսպէս շրջանառութիւն կազմելով՝ միշտ կարելի է ունենալ չտեմարանում նոր, անվնաս և լիքը հացահատիկներ։

Հազար հոգուց բաղկացած գիւղը կը յանձնի չտեմարանին տարեկան 1000 փ. ցորեն. եթէ մի քանի տարի կարօտութիւն չունենայ գործ ածելու՝ կը տնտեսի մի նշանաւոր քանակութիւն, որը երկար ժամանակ չգործածելով՝ նոյնպէս կունենայ իր վատ հետևանքը չարունակ ցորեն պահելով։ 1000 անդամից բաղկացած գիւղը տասն տարում կը տնտեսի 10,000 փ. ցորեն ($333^1/_3$ խալւար). այդ գումարի մի մասը, որքան անհրաժեշտ կը համարւի, կարելի է պահել դժբախտ դէպքերում օգտուելու համար, իսկ միւս մասը՝ մի քանի հասարակութիւններ կարող են միացնել և յարաբերութեան մէջ մտնելով քաղաքացի վաճառականների կամ

զօրքի հետ՝ կը վաճառեն լոգուստ հասարակութեան և փողի մի չչափելի գումար կազմելով՝ միջոց կունենան գիւղական բանկեր բանալու, որով սանձահարած կը լինեն նաև վաշխառուներին, որոնց մասին կը խօսենք իւր տեղում։

Շտեմարանները կառավարելու համար դարձեալ պէտք է ընտրեն հաւատարմատարներ։ Առաջ ընտրում էին իւրաքանչիւր գիւղի համար երեքական հաւատարմատարներ. այժմ մի քանի գիւղերի շտեմարաններ միացած լինելով՝ բաւական կը լինի իւրաքանչիւր գիւղից մի մի հաւատարմատար ընտրել, որով դիցուք տասն գիւղից բաղկացած հասարակութեան շտեմարանը կառավարելու համար ժողովրդից ընտրուած տասն հաւատարմատար կը լինի։ Լաւ կը լինի, եթէ այդ կառավարիչների գործունէութեանը անպատճառ մասնակցեն նաև գիւղական քահանաները, մոլլաները, իսկ ուսումնարան եղած գիւղերում մասնակցեն նաև ուսուցիչները, իբրև աւելի զարգացած և ինտելիգենտ անձինք, որոնց գործունէութեանը կարող կը լինեն հսկել գործակալները, զաղիները, իսկ գաւառական վարչութիւնը երբեմն քննութիւն կ՚անի։

Այսպիսով կը կազմի 20—25 հոգուց բաղկացած մի վարչութիւն, իսկ այդքան մարդկանց մէջ հեշտ չէ այնպիսի զեղծումներ կատարել, որպէս անում էին նախկին շտեմարանների կառավարիչները՝ երեք հոգի միանալով։

Ամեն մի հասարակութիւն իր դատարանի համար ունի կանոնատր գրել կարդալ գիտցող գրագիր, որոնք բաւարար ռոճիկ են ստանում, այն է 4—600 ռ. բայց պարապում են շաբաթուան մէջ երկու օր միայն, ուստի անխղճութիւն չի լինի, եթէ նրանց լանձնի նաև շտեմարանների հաշապահութիւնը և քարտուղարութեան պաշտօնը։

Այսպիսով շատ կը հեշտանայ գաւառական վարչութեան գործը։ Եթէ անցեալ տարիներում գիւղական շտեմարանները լաջողութիւն չունեցան, պատճառն այն էր, որ հսկողութիւնը բացառապէս լանձնուած էր գաւառական ոստիկանութեանը, որը չափից դուրս զբաղած լինելով ուրիշ պաշտօնական գործերով՝ անկարող էր լինում բարեխղճութեամբ կառավարել և հսկել շտեմարանների հաւատարմատարների գործունէութեանը։

Ի՞նչ պարտաւորութիւն և մասնակցութիւն պէտք է ունենան ոչ հողագործ ինտելիգենտ անձինք։

Մենք տեսանք, թէ ինչպէս իրենց գոյութեան պայմաններում այդ երկու դասակարգերը սերտ կապած են իրար հետ, իսկ քաղաքացիները, իրանց գոյութեան բնական պայմանների շնորհիւ, պարտական են բացառապէս գիւղացիներին։

1893 թուականին ամեն տեղ ինտելիգենտ դասակարգի մէջ ժողովարարութիւն էր լինում գիւղացուն սերմացու և անունդ հայթայթելու

համար. գիւղացիներին օգնութեան ձեռք կարկառելը բացի մարդասիրական տեսակէտից ունէր նաև ուրիշ պատճառ, այն է՝ սեփական շահը։ — Եթէ գիւղացին չաջորդ տարուան համար չունենար սերմացու, նա չպէտք է կարողանար ցանել իր բոլոր արտերը, կը չարունակէր սովը, որպիսի դէպքերում հաւասար կերպով կ'ենթարկուեն սովի նաև ինտելիգենտները, քաղաքացի ոչ հողագործները. կամ գիւղացին իր քիչ ցանածից ստացածով հաղիւ իրեն կը բաւականացնէր, չէր կարող արտահանել վաճառելու և այդ դէպքում կը վնասէր բացառապէս քաղաքացին և ինտելիգենտը։

Գիւղացին չտեմարան ունենալով՝ անյաջող դէպքերում երբէք կարիք չի ունենայ ուրիշի օգնութեան դիմելու, որի մասին հոգալուց ազատ կը լինին ինտելիգենտները։ Ինտելիգենտ անձինք իրենց զարգացումով աւելի կարող են ուսումնասիրել այդպիսի հարցեր և արծարծել ժողովներում, լրագրերում և կանոնաւոր մշակելուց յետոյ՝ առաջարկել կառավարութեանը ի հաստատութիւն։ Կառավարութիւնը մեծ ուրախութեամբ կընդունի այդպիսի օգտակար առաջարկութիւններ, որովհետև ժողովրդի թշւառութիւնը մեծ հոգս է պատճառում կառավարութեանը, որը այդ հոգսերից ազատ մնալու համար ամեն կերպ աշխատում է բարեկարգ դրութեան մէջ տեսնել իր հպատակ հողագործներին։

Սրանով վերջացնելով մերՀասելիքը գիւղական չտեմարանների մասին, աւելորդ չենք համարում պնդել, որ մեր ասածները դժուար իրագործելի տեսութիւններ չեն. այդ բոլորը շատ հեշտութեամբ կ'իրագործուի, եթէ իւրաքանչիւր հասարակութիւն մի զարգացած և բարեխիղճ տանուտէր ունենայ։

(Շարունակելի)

# ՀԱՅԵՐ ԲՈՇԱՆԵՐԻՑ

*(Ցարութիւն վարդ. Ալամիարեան, Քերոբէ Պատկանեան.— Բոշա Հանէս Օղլի)։*

---

Գ. ՎԱՆՑԵԱՆԻ

---

Աշխարհիս երեսին առանց լեզուի և առանց հայրենիքի երկու ազգութիւն կան, որոնք հսկայական տոկունութեամբ շարունակում են պահպանել իրանց գոյութիւնը ցանուցիր բոլոր ազգերի և կրոնների մէջ, առանց սեփական անկախութեան, զուրկ թուական և քաղաքական առաւելութիւններից, ենթակայ ամեն տեսակ հալածանքների... Դոքա հրէաներն ու գնչուներն են։ Ո՛չ ասիական բռնութիւնը, ո՛չ միջնադարեան սոսկալի հալածանքը և ո՛չ ժամանակիս մարդասէր կուլտուրան չեն կարողացել լուծել այդ երկու հանելուկ ազգութիւնների խնդիրը, աշխատելով ձուլել նոցա այն ազգութիւնների հետ, որի մէջ ապրում են, ջանալով խեղդել մինի շահախնդիր նիւթասիրութիւնը, միւսի անսանձ անսահման թափառականութիւնը։—Ամեն տեղ, Ասիայում թէ Եւրոպայում, հին թէ նոր աշխարհում, գնչուն մնում է գնչու, հրէան—հրէա։

Բայց հրէան չի խուսափում քաղաքակրթութիւնից. նա իւր գոյութեան հիմնաւոր սիւներից մինը տեսնում է ո՛չ միայն իւր ազգային կրօնի, այլ և տնտեսական ապահովութեան մէջ, որի անմիջական պտուղն է և կուլտուրան.—նա իւր հմուտ և ճարպիկ տնտեսագիտութեամբ այսօր իւր ձեռին ունի աշխարհի բազդի բանալիներից մեծագոյնը—կապիտալի սոսկալի ոյժը։

Այլ է գնչուն. նա Սիոնի բարձունքից պատգամներ չունի ստացած. նա զուրկ է Եհովայի հզօր հովանաւորութիւնից, նա չունի

այն աւանդական հայրենիքը ուր «մեղր և կաթ է բղխում», ոչ Մովսէս, և ոչ Դաւիթ ու Սողոմոն... Նա չունի նաև մամոնայի և մամուլի հսկայական ոյժը, որով հրէան իշխում է իւր տիրապետների վերայ... Նա զուրկ է ամէն բանից. նա մի հաստատուն բնակարան անգամ չունի։ Բայց նա ապրում է ամենուրեք ինքնուրոյն, անկորուստ. աւելի տարօրինակ և զարմանալի է այս ազգութիւնը քան հրէան. և ամբողջ աշխարհում միմիայն գնչուն է, որ առանց ազգային ամենաէական պայմանների, որպիսիք են լեզուն, պատմական անցեալը, գրականութիւնը, կրօնը, թւական առաւելութիւնը, տնտեսական ապահովութիւնը, կարողանում է յարատևել իբրև ջոկ ազգութիւն... Զարմանալի է այս երկու ազգերի զուգակշիռը. նոքա հալածւած են բոլորից. նոցա անունը ծաղրի և արհամարհանքի առարկայ է ամենուրեք, և գնչու կամ հրէա հաւասար է ժլատ և գձուձ անուններին։ Հէնց իրանք երկուսն էլ ամօթ են համարում իրանց ազգութեան անունը տալ, համարելով դա մի անվայել և անախորժ արտայայտութիւն։ Նոցա երկուսի էլ յատկանիշ կողմերից միմն է տիրող ազգութեան անունը կրել, առանց սակայն հաւանութիւն ունենալու այդ ազգութեանը պատկանելու։ Գնչուն երբեմն աւելի հեռու է գնում քան հրէան, նա հետևում է նաև տիրող ազգութեան կրօնին, թոյլ է տալիս իրան մկրտելու կամ թլփատելու. յաճախ մէկն էլ միւսն էլ, կիսատ-պռատ խօսում են տիրողի լեզուով. բայց դարձեալ մնում են անկորուստ։

Օրէնսդիրների, քաղաքագէտների և կառավարիչների բոլոր ջանքը զուր է անցել նոցա դէթ նստաբնակ դարձնելու. Ունգարիայում գնչուների համար շինել են բնակարաններ, տուել են գործիք ու սարք երկրագործութեամբ պարապելու. բայց ի զուր, ծիծեռնակը դալուն պէս, նոքա թողել են տուն, տեղ ու բնակարանը և պատսպարւել իրանց ցնցոտի վրաններում։

Բայց ինչ որ չի աջողւել ամբողջ աշխարհին հրէաների և գնչուների վերաբերմամբ, աջողւել է հայերին։ Ես այս չեմ ասում դրդւած նեղ ու թթու ազգասիրութիւնից, այլ հիմնւած բուն պատմական և իրական փաստերի վերայ։ Մի ազգի անհատական տոկունութիւնը երկու ամենամեծ մոմենտներ ունի. մինը՝ չկլանուել աւելի զօրեղից, միւսը՝ ձուլել և կլանել հաւասարներին կամ աւելի

թոյլերին։ Եւրոպական կուլտուրային ազգերից անգլիացին յայտնի է որպէս առաջին մոմենտի ամենամեծ ներկայացուցչ.—նա անկլանելի է։ Ֆրանսիացին չունենալով այդ յատկութիւնը անգլիացու չափ, ունի մի աւելի մեծ մոմենտ, ուրիշներին կլանելու ընդունակութիւնը։—Այդ յատկութիւնն է պատճառ, որ Ֆրանսերէնը դարձնում է համաշխարհային լեզու, Պարիզը համաշխարհային մայրաքաղաք, Ֆրանսիական արուեստը, դիտութիւնը, մոդան, բարք ու վարքը և ամեն ինչ դառնում են համաշխարհային ընդունելութիւն։ Ֆրանսիան աշխարհի սիրտն է առհասարակ, իսկ Պարիզը նորա զարկերակը. այդպէս է եղել գոնէ մինչև օրս և այդպէս էլ կը շարունակի հաւանօրէն, եթէ Ֆրանսիական ազգի ճակատագրական նուազումը նորա փառքն ու անունը չփոշիացնէ։

Որոնելով այդ մոմենտները հայոց կեանքում, պէտք է ասած, մենք բաւական մխիթարական փաստեր ենք գտնում. առաջին՝ հայի տոկունութիւնը եթէ ոչ հեռաւոր դաղթավայրերում, գէթ Հայաստանում և նորա հարևան երկիրներում ոչ մի տարակոյսի առիթ չի կարող տալ. մեր ամբողջ պատմութիւնը հայի տոկունութեան պատմութիւնն է, նա միայն կրել է, տարել է, համբերել է և ապրել է։—Բացի մի քանի բացառիկ և այն էլ կարճատև դէպքերից, նա շարունակ կորչելու, կլանելու վտանգի մէջ է եղել. նորա դիրքը մեծ մասամբ պաշտպանողական է եղել. և նա չէ կլանել։ Այդ ընդունում են բոլոր այն անձինք, որոնք հայի վիճակով հետաքրքրել և նորա պատմութեանը ծանօթ են։—Նա տոկուն, դիմացկուն է, ի հարկէ իւր հարևան ներկայ և պատմական ազգերի համեմատութեամբ։ Դորան մի քիչ հակասում է մեր գաղթականութեան պատմութիւնը, ինչպէս օրինակ Լեհաստանի և Հնդկաստանի, որոնք համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում կորստի են մատնուել։ Դոցա կորստեան պատճառները մեծ մասամբ որոնում են կրօնափոխութեան մէջ, մոռացութեան տալով աւելի մեծ և բնական պայմանները, որպիսին է օրինակ՝ կլիման։ Հայի երկրորդ կամ երրորդ սերունդը Հնդկաստանում չի կարող գոյութիւն ունենալ լոկ կլիմայական պատճառներով. Լեհաստանն էլ, թէև այնքան մեծ տարբերութիւն չունի կլիմայի կողմից որպէս Հնդկաստանը, բայց և այնպէս, նա բաւական հիւսիս է. ինչու օրինակ. ապրում

են Ղրիմի, Ռումինիայի, նոյն իսկ Ունգարիայի, չեմ ասում այլ ևս Բալկանի և Փոքր-Ասիայի հայերը, բայց կորան Լեհաստանինը. չպէտք է միւս կողմից մոռանալ, որ գաղթականները մեծ մասամբ ապրել են վաճառականութեամբ, (երկրագործներ և արհեստաւորներ համեմատաբար քիչ են եղել), որի հետևանքը զեղխութիւն, ցոփութիւն և սիրահարութիւնն է. այն ազգը որ մարմնով չի աշխատում, նա իւր գոյութեան հիմքն է փորում... Կարծ, մենք գաղթականութեան պատմութիւն չունինք, գիտութեան ներկայ բազմակողմանի և խորիմաստ լուսաբանութիւնով. կրօնական հայեցակէտը այդ երևոյթները հասկանալու և պարզաբանելու համար շատ նեղ և երկրորդական նշանակութիւն կարող է ունենալ։ Հայի տոկունութիւնը Հայաստանում և նման կլիմայական ու կուլտուրական պայմաններում, իմ մանաւոր կարծիքով, ոչ մի տարակոյսի առիթ չի կարող տալ։ Այդ առաջին մոմենտը։ Գալով հայի յատկութեանը իբրև ձուլող տարրի, պէտք է նկատել, որ այդ ասպարիզումն էլ նա զարմանալի ընդունակութիւն է ցոյց տուել կլանելու իրանից թոյլ ազգերին՝ թէ անցեալում և թէ ներկայում, այն էլ բուն կուլտուրական ճանապարհով։

Այդ յատկութիւնը առաւել ծանրակշիռ է այն նկատմամբ, որ ինչպէս վերևն ասացի, իբրև պատմական ազգ, հայը միշտ աւելի կրաւորական-պաշտպանողական դեր է կատարել, քան ներգործական-յարձակողական և այդ պայմաններում նա կարողացել է կլանել Աղուանից ազգը, ուտիացոց, պարթևական և բոլգարական գաղթականութիւնները։

Իսկ այնպիսի մի հսկայական տոկունութեան տէր ազգ, որպիսին է Եհովայի ժողովուրդը, որից մի ժամանակ մեծ մասամբ բաղկացած է եղել մեր քաղաքային բնակութիւնը, այսօր իւր գաղթականութեան հետքն անգամ չի թողել Հայաստանում։— Դա մի պատմական փաստ է։

Այդ պատճառով էլ հայի վաճառական և քաղաքացի դասի մի քանի անհամակրելի գծերը, որ օտարները չարամտութեամբ կամ անգիտութեամբ ամբողջ ազգին են վերագրում, հետևանք պէտք է համարել այն հրէական արիւնին, որ հոսում է այդ դասի երակներում։ Եւ բատիս հայի տոկունութեան պատճառներից մինն

էլ, որքան էլ նա երկրորդական լինի, այդ խառնարիւնութիւնը պէտք է համարել, որի շնորհիւ հէնց ներկայումս միատեսակ պայմաններում հրկան չի դիմանում հայի մրցութեանը։ Հայի ազդեցիկ ոյժի աստիճանը շատ լաւ է երևում մանաւանդ Փոքր-Ասիայի (Կեսարիա և այլուրեք) յոյների վերայ, հին աշխարհի այդ Ֆրանսիացին, որ լեզուն կորցրած՝ հայերէն է խօսում։—Ծալկայումն էլ եօթը դիւղ յոյներ կան, որոնք նոյնպէս հայերէն են խօսում, ինչպէս նաև Ալէքսանդրապոլի յոյները։ Սակայն, հայը յոյնին չէ կարողացել կլանել. նա միայն ենթարկել է այդ զօրեղ ազգի անդամներին իւր ազդեցութեանը. աւելի ոչինչ։

Բայց հայի ձուլիչ, մանաւանդ քաղաքակրթիչ կողմը շատ լաւ է երևում բոշաների վրայ, որը կատարւում է հէնց այսօր, մեր աչքի առաջ, որը մենք դիտել, հաստատել կարող ենք առանց պատմական շատ անդամ տարակուսելի աղբիւրներին դիմելու։ Ո՛չ մի տեղ և ոչ մի ազգութեան չի աջողել գնչու ցեղերի վատ յատկութիւնները սանձել, նոցա նստաբնակ դարձնել և աշխատանքի ընտելացնել. դեռ չեմ ասում ձուլել, կլանել նոցա։ Հեռաւոր Անգլիայից մինչև Հնդկաստան, Ամերիկայից մինչև Աւստրալիա գնչուն դատարկապորա, թափառաշրջիկ և ձրիակեր մի ժողովուրդ է...

Բայց այդ գնչուների հարազատ ցեղերից մինը, որ կոչւում է Բոշա, ոչ միայն բարձր է կանգնած իւր եւրոպացի և ասիացի եղբայրներից բարոյապէս, այլև շատ տեղերում նա դարձել է հաստատաբնակ և սկսել է իւր ճակատի քրտինքով իւր պարէնը հայթայթել, մի բան, որ գոյութիւն չունի ամբողջ աշխարհի գնչուների մէջ։ Զնայելով իւր ցեղի առասպելական տոկունութեանը, հայ բոշաների մի ստւար մասը արդէն անդառնալի կերպով ձուլւել է հայերի հետ. Երևանի, Շամախու, Գանձակի, Թիֆլիսի և այլ տեղերի հայ-բոշաները, որոնց գոյութեան մասին մենք մի յիսուն տարի առաջ պատմական փաստեր ունինք, այսօր այլևս գոյութիւն չունին իբրև բոշա, այլ կուլ են գնացել հայերի մէջ, շատերը մինչև օրս պահպանելով իրանց ազգի անունը լոկ իբրև հեռաւոր յիշողութիւն։

Զնայելով իւր բնական բոլոր ատելութեանը դէպի ֆիզիկա-

կան աշխատութիւնն ու երակգործութիւնը, հայ բոշաների մի ստուար մասը այսօր երկրագործ է։ Ղարսի դաւառի Զայիմ գիւղը, Ծալկայի Տամալա գիւղը, բաղկացած են միմիայն երկրագործ հայ-բոշաներից, որոնք թէև բոլորովին ձեռք չեն վերցրել բոշայութիւնից, բայց արդէն հիմնովին հաստատաբնակ և անշարժ սեփականութեան տէր են, որ հաւասար է բոշայութեան մերձիմահ լինելուն։ Քաղաքներում ապրող բոշաներից շատերը արդէն սկսել են արհեստներով պարապել. Թիֆլիզի հայացած բոշաները այսօր վաճառականութեամբ են պարապում, նոցա կոչում են «բոշի տղերք». հայացած բոշան արդէն կուլտուրայի հոսանքի մէջ բոլոր մնացեալ հայերին հաւասար է։ Հէնց մնացեալ, իրանց աւանդական պարապմունքին հաւատարիմ, բոշաներն էլ այսօր այնպիսի տնտեսական պայմանների մէջ են դրուած և հայի հարևանութիւնը նոցա վրայ այնքան ազդել է, որ դժուար է այլևս շարունակել իրանց աստանդական կեանքը և նոքա մի քանի տասնեակ տարիներից յետոյ հետևելու են իրանց աւելի առաջադէմ եղբայրներին, կրթելով և կուլ դնելով հայերի մէջ։—Այդ անխուսափելի երևոյթը կիսովին իրացել է արդէն, իսկ շարունակութիւնն էլ երկար տևելու չէ։ Ախալքալաքի բոշաները, չնայելով որ իրանց աւանդական պարապմունքից ձեռ չենվերցրել, այսօր արդէն քաղաքային ընտրութիւններին են մասնակցում—և նոցանից մինը արդէն քաղաքային իրաւասու է ընտրուել. հեռատես բանասէրի համար այդ երևոյթը վերին աստիճանի կարևոր և միևնոյն ժամանակ զարմանալի է, քանի որ միևնոյն երկրում, Կովկասում, բոշաներին ցեղակից մրթրբբը, չինգեանէն, զարաչին մնում են կիսավայրենի, ցիգանը մնում է Եւրոպայում անընկճելի քաղաքակրթութեան առաջ, բայց բոշան քաղաքակրթւում և ձուլւում է։ Ո՞ր կողմից էլ այդ հարցը քննես՝ կըգաս միևնոյն եզրակացութեան. դորա պատճառը եզակի և միակն է. ոչ մի ազգութեան չի աջողւել կրթել դնչուին, բացի հայից։—Իմ խօսքս ի հարկէ վերաբերում է մասսային ձուլման և քաղաքակրթութեան և ոչ անհատական. որովհետև եւրոպական դնչուների մէջ էլ շատ անհատապէս կրթած և նոյն իսկ տաղանդաւոր անձնաւորութիւն-

ներ կան [1]), բայց այնտեղ մասսան մնում է առանց առաջադիմութեան, մինչ ընդհակառակը հայ բոշաները իբրև առանձին անհատ չեն ունեցել զուտարիւն բոշա նշանաւոր ներկայացուներ, այլ քաղաքակրթւում են խմբովին։

Անցնենք յօդուածիս բուն նպատակին։

Գնչուները ընդունակ ժողովուրդ են. զորան ապացոյց շատ կայ. եւրոպական գնչուները չնայելով իրանց թափառական կացութեանը ունել են հռչակաւոր քարոզիչներ, նկարիչներ և հեղինակներ... Մանաւանդ նոքա փայլել են և դեռ փայլում են նւագածութեան մէջ։ Նւագածութիւնը նոցա ընդունակութիւնների պսակն է. դա գնչուների ազգային արուեստն է. արևելեան բոցով լի, վառուած և կրքոտ։ Նոյն ընդունակութիւնները տեսնում ենք և մեր բոշաների մէջ. թէ որքան սիրելի և սովորական է նոցա համար նւագածութիւնը երևում է այն հանգամանքից, որ բոշա աշուղները առաջին՝ համեմատաբար շատ շատ են և երկրորդ՝ նոքա նւագել են սովորում առանց աշակերտելու, նւագը նոցա տրւում է կարծես բնածին։ Ես տեսել եմ բոշա աշուղներ, որոնք եթէ եւրոպական կրթութիւն ունենային, առաջնակարգ նւագողների հրուշակ կարող էին վայելել։ Սակայն, հայի կուլտուրական ասպիճանը դեռ այն բարձրութեանը չէ հասել, որ այդպիսի բնածին ընդունակութիւններին միջոց տար ըստ արժանւոյն զարգանալու և գնահատւելու, ուստի բոշաներից յայտնի դարձած անհատները արտայայտւել են այն ասպարէզներում, ուր աւելի պարարտ հող կար նոցա համար. զրական, բանաստեղծական և գիտնական։— Նոցանից առաջինն է Յարութիւն վարդապետ Ալամդարեանը, իւր ժամանակին յայտնի գիտնական, իսկ մեզ էլ աւելի յայտնի իւր սրատաւուշ և զողտրիկ բանաստեղծութիւններով. նա բոշա Յովսէփի թոռն է, որ դրոշակիր էր պարսից մի խանի մօտ, որից Յարութիւն վարդապետի ազգանունը—Ալամդարեան, որ նշանակում է Դրոշակիրեան։ Սորա համառօտ կենսագրութիւնը ընթերցողը կը գտնի «Փնար-Հայկական»-ում, որից և քաղում ենք այս տեղեկութիւն-

---

[1]) Այդ մասին տես օրինակ՝ Կոլոչչի—Գնչուներ. «Մուրճ» № 10, 1890. Նաև Գինա Իսայեվիչ—«Մուրճ» № 3, 1893.

ները, իսկ բանաստեղծութիւնների ժողովածուն լոյս է տեսել Ֆերոբէ Պատկանեանի հրատարակութեամբ առանձին գրքոյկով։ Սորա պատկերի մէջ բաւական լաւ կերպով պահպանուած են բոշաների տիպային գծերը. (Փարոս Հայաստանի)։

Ալամդալեանի քրոջ զաւակն է, մօր կողմից՝ ուրեմն բոշա, հանգուցեալ Ֆերոբէ Պատկանեանը, որ իւր լուրջ գիտական ուսումնասիրութիւններով եւրոպական հռչակ է վայելում։ Պատկանեանին յայտնի է եղել իւր բոշա ծագում ունենալը. և գուցէ այդ է առիթ տուել նորան առանձնապէս բոշաներով և նոցա լեզուով հետաքրքրուելու, որոնց անունն ու լեղուն գիտական աշխարհին առաջին ծանօթացնողներից մինն է եղել։

Ներկայումս մեր վիպագրութեան մէջ գործողներից մէկի տատի մայրը, իսկ միւսի մայրը զուտարիւն բոշաներ են։

Մեր դրականութիւնը աղքատ է նշանաւոր հայերի կենսագրութիւնով, որոնք փայլել են կեանքի զանազան ասպարէզներում իրանց տաղանդով։ Ո՞վ գիտէ, գուցէ նոցա մէջ կան ուրիշ անձեր էլ, որոնք բոշաներից են սերած, ապագան այդ կ՚որոշէ, եթէ մանաւանդ այդ անձերը ամօթ չհամարեն ծածկելու իրանց իսկական ծագումը, որպէս այդ սովորական է բոշաների մէջ։

Այսքանն էլ սակայն, բաւական է համոզելու, որ մեր բոշաները նոյնքան ընդունակ և տաղանդաւոր են և մեզ տուել են նոյնպէս ականաւոր անձեր, որպէս նոցա ցեղակից գնչուները Եւրոպայում։ Բաւական է, որ բոշան թողնէ իւր պապենական սովորութիւնը և ձեռք առնէ կուլտուրական ճանապարհով իւր հացը ճարել, որպէս արիական ցեղի մի հարազատ անդամ նա ընդունակութիւն և խելք ունի անվերջ առաջադիմելու։

Բուն բոշաներից այստեղ հարկ էր յիշել նաև Հանէս-օղլուն, որ նշանաւոր աշրղի հռչակ է վայելում. մանաւանդ նա համարեա եզակի է, որ իւր աղքատիկ մայրենի լեզուով ոչ միայն ոտանաւոր հիւսել, այլ և իրօք բանաստեղծել է կարողանում։ Նա Փամբակու Ղարաքիլիսա գիւղից է. մեռել է 1889 թ. 95 տարեկան. նորա ծննդեան անունը Պօղոս է եղել։

Հանէս-օղլու բանաստեղծութիւններից մինը լոյս տեսաւ տարիներ առաջ «Մուրճ»-ում. (1892 թ. № 10). այստեղ դնում եմ

նորա մի այլ աւելի ընտիր և աւելի ամբողջ պահպանուած բանաստեղծութիւնը, որ նաև մեծ լեզուաբանական արժէք ունի։ Այս բանաստեղծութիւնը ես գրել եմ տարիներ առաջ Հանէս-օղլու եղբօր որդու բերանից Էխտիլա գիւղում։

Հանէս օղլին փանեց վէլիդ քընընէ.
Հանէս-օղլի ասաց խօսող քննէ
Աքիդ ուքլէ, սամէլ լէքէ,
այդ բաց լաւ նայէ
Մանուսաւին սընանէ.
մարդուն ճանաչէ
Օխտը տլարն օր ուբրան է,
հօթը անունն որ վերան է
Անիկ է լեր մէրաւիս.
տուել ինձ
Փառք իմ ստեղծող Լէւալիս,
Աստծուս
Նա նասոյցուց մէրաւիս.
չը կորցրեց ինձ
Նա եմ պարեր, նա եմ լէքեր,
չեմ ընկել չեմ տեսել
Նակայթան նըկլեց սիսիս.
յանկարծ հանեց գլխիս
Նրկլեմ կախլու-եմ խլաւիդ
ելնեմ վախեցնեմ խելքդ (գլխուդ, քեզ)
Ակ մ'ալ նա կալես պաւիս (պաւաւիս?)
մէկ էլ չ' քաշես ոտս
Կէ կարեմ դունչին ռօզին
ինչ անեմ աշխարհի մալը
Անլէզն ըլլի թէնաւիս.
դրախտը լինի տեղս

Այս ոտանաւորը, որպէս երևում է, Հանէս-օղլին գրել է ի յանդիմանութիւն մի անձի կամ մի մրցակից աշուղի, որ ժողովրդի ազատ երգչին—աշուղին—նորան վայել արժանիքով չի ընդունել կամ երևի անպատուել է նորան և երգիչը վրդովուած և յուզած նախատինք է կարդում նորա գլխին բոշայերէն։ «Հանէս-օղլին

ասում է. խօսքդ լաւ ճանաչիր, աչքերդ բաց, նայիր ոնմ հետ ես խօսում, ժողովրդի ազատ երգչի հետ, եօթնանունի (Ս. Կարապետ) շնորհատու երգչի հետ»։ Ապա նա պատմում է իւր շնորհ ստանալը. «Փառք իմ Արարչին, որ ինձ չկորցրաւ. ուխտ չեմ գնացել (Ս. Կարապետ), բայց յանկարծ նա ինձ շնորհ տուաւ» (աշխղութիւն)։

Ապա նա սպառնալիք է կարդում հակառակորդին, որ երևի ընչասիրութեան համար մեղադրել էր երգչին, որ աւելացնում է. «ինձ հարկաւոր չէ աշխարհային ինչքը—հարստութիւնը.—իմ ցանկութիւնն է միայն դրախտումը տեղ ունենալ»։

Հեղինակի զգացումը բորբոք է և վառ. հպարտ իւր եսական արժանիքով, հպարտ իւր ի վերուստ ստացած շնորհի գիտակցութիւնով... և այդ հանգամանքն է, որ նորան ոյժ ու թռիչք է տալիս աղքատիկ մայրենի լեզուի կաշկանդիչ կապերը լուծելով իւր զգացումը զեղել մի զարմանալի աջողութեամբ։

---

# ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

## ՔՆՆՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԻ

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԻՑ

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

*հետեւողութեամբ ՀԱՅՆՐԻԽ ՀԵՐԿՆԷՐԻՆ* [1])

*Անցեալ դարի լուսաւոր գլուխները* [2]) *կատարելապէս համոզած*

---

[1]) Dr. Heinrich Herkner, ord. prof. der Volkswirthschaftslehre an d. Technischen Hochschule in Karlsruhe.—Die Arbeiterfrage. Eine Einführung. Zweite, völlig umgearbeitete und stark vermehrte Auflage. Berlin. I. Guttentag. 1897. (608 էջ).

[2]) Անցեալ, այն է 18-րդ դարը կոչւում է լուսաւորութեան կամ, աւելի լաւ, մտքի արթնանալու դար, չնորհիւ այն բանի, որ այդ դարում, գլխաւորապէս Ֆրանսիայում, հիմնւում է ամեն բանի սկիզբը և պատճառը որոնող ֆիլոսոֆայական շկոլան (ռացիոնալիզմ) որ առաջացրեց մի երկար շարք փայլուն մտածողներ, որպէս Դիդերո, դ'Ալամբէր, Հոլբախ, Լըմէտր, Վոլտէր, Ռուսո, Մոնտեսքիէօ, որոնք նոր ոգին մտցրին գիտութիւնների, ֆիլոսոֆայութեան, քաղաքականութեան, կրօնի մէջ և այլն, որ և արտայայտուեց 1789 թուականի մեծ յեղափոխութեան մէջ։ Անգլիան այդ դարում տուաւ մի ֆիզիկոս Նիւտոն, պատմաբան Իւմ, ֆիլոսոֆա Լոքէ, աստղաբաշխ Հերշէլ և այլն. Գերմանիան ծնեց Լեսինգ, Շիլլեր, Գէօթէ, ֆիլոսոֆա Քանտ, հրապարակախօս և գրականագէտ Հերդեր և ուրիշներ.

ւած էին, թէ մի ամենաբարձր էակ ստեղծել է աշխարհքը, որ մարդկութիւնը աշխարհային բարիքներով բաղդաւորեցնի։ Մարդիկ և նոցա ձգտումները ի բնէ լաւ են, որովհետև նոցա ստեղծողը Աստուած է, որը միայն կարող է բարին ցանկանալ։ Եթէ իրական հանգամանքները ցոյց են տալիս այնքան դժբախտութիւններ, չարութիւն, այլանդակութիւն և անկրթութիւն,—այդ ամենը նրանից է. որ մարդիկ իրենց չարաբերութիւնները չեն թողնում որ զարգանան Աստուածանից տրուած բնական օրէնքների համաձայն։ Ամբողջ արուեստական կարգը, որը ժամանակների ընթացքում այն օրէնքներին հակառակ դոյացել է, այդ իսկ պատճառով պիտի վերանայ։ Նորա տեղը պիտի բռնի բնական ազատութեան դրութիւնը։ Այն ժամանակ Աստծու կամեցած կեանքի կարգը, ներդաշնակութիւնը և գեղեցկութիւնը ամեն տեղ և լիուլի կերպով կը ծաղկեն։ Երբ ամեն մարդ իւր շահը,—որը դէհ արդէն նա ինքը ամենքից լաւ է հասկանում,—կարողանայ այնքան պաշտպանել և նորան հետևել, որքան թոյլ է տալիս այլ մարդու նոյն իրաւունքը,—այն ժամանակ ինքնըստինքեան կը ստեղծուի ընդհանուրի բաղդաւորութիւնը, որը կայանում է ամենաշատ մեծամասնութեան ամենամեծ բաղդաւորութեան մէջ։ Պետութիւնը պէտք է միայն հոգայ, որ սեփականութիւնը պաշտպանուած և ազատ կամքով կապուած դաշնը [1]) յարգուած լինի։ Այդ դէպքում ամեն մարդ իւր գլխի տէրն է, տէրը իւր վիճակի, դարբնողը իւր բաղդաւորութեան։ Ազատ լինելով ամեն տեսակ արուեստաւորէն զոյացած անհաւասարութիւնից՝ մարդուս ընդունակութիւնները մրցութեան մէջ ամենակատարեալ զարգացման կը հասնեն։

Եթէ ամեն մէկը պիտի իւր գործունէութեան տեղը ինքը

---

[1]) Դաշն (կոնտրակտ) լինում է ամեն անգամ, երբ մէկը առաջարկում է որոշ պայմանով և միւսը ընդունում է. իրաւագիտութեան և տընտեսագիտութեան մէջ դաշն խօսքը գործ է ածւում նաև ամենասովորական գործերի համար, երբ նաև հարկ չկայ պայմանագրել. օրինակ, երբ մէկը խանութում մի կտոր մահուդ է առնում և տասը ռուբլի վճարում, անշուշտ այդտեղ գնողի և ծախողի մէջ բերանացի դաշն է կապւում։ Նոյնպէս եթէ մէկը բանւոր է վարձում՝ երկու կողմի համաձայնութիւնը դաշն է, լինի այդ գրաւոր թէ բերանացի։

ընտրի, ապա եղած ոյժերը ամենանպատակայարմար կերպով կը բաշխուեն ամեն մի արդիւնաբերական ճիւղի վրայ։ Ուր պակասում են աշխատաւոր ոյժերը, պահանջի [1]) շատութեան պատճառով կը բարձրանայ վարձատրութիւնը, որի համար և բանւորները դէպի այդ ճիւղը կ'երթան։ Նոյնպէս և վարձը որ և է ճիւղում իջնելու դէպքում՝ բանւորները դուրս կ'երթան այդտեղից դէպի աւելի նպաստաւոր տեղեր։ Եթէ մի ապրանքի արդիւնաբերութիւն բարձրանալու լինի և դորանով դեռ բաւարարութիւն տուած չլինի մեծ պահանջին, ապա այդ արդիւնաբերութիւնը աւելի ևս կ'աճի մինչև պահանջին բաւարարութիւն տալու աստիճանը։ Երբ մի ապրանքի դները ընկնեն և պահանջն էլ նուազի, վաստակը կը պակսի, և դա կը դրդի արդիւնաբերական ոյժերը աւելի նպատակայարմար կերպով գործածել։ Մի բանւոր, որը իւր աշխատանքի համեմատ վարձ է ստանում և որին իւր եկամուտի վայելումը ապահովուած է,— կ'աշխատի իւր իսկ օգտի համար լաւ արդիւնք տալ։ Ազատ մրցման մէջ միայն այն ձեռնարկողը կը դիմանայ, որը ամենից շատ բաւարարութիւն կը տայ հասարակութեան պահանջներին։ Ազատ կերպով աշխատելը և ազատ կերպով ապրանք փոխադրելը, մի խօսքով՝ հաղորդակցութեան ազատութիւնը առաջ կը բերի արդար դներ և աշխատանքի արդար վարձատրութիւն, հողից և կապիտալից օգտուելու համար արդար հատուցում։ Այսպիսով տնտեսական ոյժերի ազատ խաղի մէջ ամեն մէկը իւր իսկ օգտի համար այն կ'անի, ինչ ընդհանուրի բարօրութեան համար ամենից պատշաճն է։ Ամեն բանում ամենաքիչ զոհաբերութիւնով ամենաշատ արդիւնքը ձեռք կը բերուի։ Մարդկութեան նիւթական դրութեան անընդհատ բարւոքումը բնական ազատութեան անհրաժեշտ հետևանքն է։

---

[1]) Այս յօդուածում ընթերցողը յաճախ կը հանդիպի պահանջ և առաջարկ խօսքերին, որ շատ սովորական է տնտեսագիտութեան մէջ. ապրանք ծախողը առաջարկում է ապրանքը, հասարակութիւնը պահանջում է ապրանքը. պահանջ չկայ—նշանակում է գնող չկայ. նոյնպէս գործարանատէրը պահանջ ունի բանւորների. իսկ բանւորները առաջարկում են իրենց ծառայութիւնը։

Վերը առաջ բերած դատողութիւնը այն է, որ հիմնաւորեցին եւրոպական լիբերալիզմի կարապետները, մեծ լիբերալ տնտեսագէտները՝ Քենէ (Quesney, ֆրասիացի, † 1774), Տիւրգո (Turgot, ֆրանս., † 1781), Ադամ Սմիթ (Adam Smith, շոտլ., † 1790), Ռիկարդո (Ricardo, անգլիացի, † 1823), Մալթուս (Malthus, անգլիացի, † 1834) և Ժան-Բատիստ Սէ (Say, ֆրանսիացի, † 1832)։ Այդ տնտեսական և սոցիալական հայեցողութիւնը կազմեց *լիբերալիզմի ծրագիրը*, որ և իրագործուեց Եւրոպայում, սկսած անցեալ դարի վերջերից մինչև մեր դարի կէսը։ Գիւղական հողերը, որ առաջ հոգևորականութեան և աղնուականութեան սեփականութիւն էին և անկարելի էր ծախել,—դառան առուծախի առարկայ (իսկ Ֆրանսիայում մեծ յեղափոխութիւնը հողը նոյն իսկ խլեց այդ արտօնեալ դասակարգերի ձեռքից և բաժանեց նոցա վրայ հաստատուած գիւղացիների մէջ, և մնացեալը ծախեց). գիւղացիները դրեթէ ճխլած էին կալուածատէրերին վճարելիք հարկերից և ձրի աշխատանքներից (ճորտութիւն [1]),—այդ վերացաւ. արհեստները կաշկանդուած էին համքարական միջնադարեան կանոնադրութիւններով, որոնք քաղաքներում արհեստների և առուտուրի մէջ ամեն յառաջդիմութիւն և նախաձեռնութիւն ճնշում էին,—և այդ խոչնդոտները հեռացուեցին. պետութեան հպատակները ձեռք բերին անձնական ազատութիւն, գիտութիւնը և նորա աւանդումը ազատ հռչակուեցին, ժողովուրդը կրթութիւն և գիտութիւն սովորեց և քաղաքացին մասնակից եղաւ պետութիւնը կառավարելու գործին. այդ ամենից յառաջ եկաւ արդիւնաբերութեան մի ծաղկում, որ մինչ այն ժամանակ տեսնուած չէր։

---

[1]) Ճորտութիւնը անձնական անազատութեան մի ցարաբերութիւն է, որով գիւղացիք ժառանգաբար պարտաւոր էին հողատիրոջը հարկեր տալ և նորա համար ձրի աշխատել. ճորտը չէր կարող իւր կամքով թողնել իւր բնակատեղին, չէր կարող նաև, առանց թոյլտուութեան իւր ժառանգական տիրոջ (կալուածատէր), ամուսնանալ, ենթակայ էր մարմնական պատիժների, և այլն։ Միջին դարերում ստեղծուած այդ կարգը, որ Ֆրանսիայում արդէն թուլացած էր յետագայում, իսպառ վերացաւ 1789-ի յեղափոխութիւնով. Գերմանիայում ճորտերի ազատութիւնը սկսուեց 18-դ դարի վերջերքը և իսպառ վերացաւ 1832 թ-ին, Աւստրիայում 1848-ին, Ռուսիայում 1861-ին։

Ահա՝ եթէ լիբերալիզմի կարապետները այդ էին ապասում, ապա, ինչպէս իրերի ընթացքը մեր դարում ցոյց է տալիս, նոքա բնաւ չսխալուեցին։ Ժամանակակից արհեստը (տեխնիկա) արդիւնաբերութեան և հաղորդակցութեան մէջ մի այնպիսի ծաւալ է ստացել, որ առանց օրինակի է մարդկութեան պատմութեան մէջ։

Համեմատութեան համար առաջ բերենք մի շարք աչքի ընկնող իրողութիւններ։ Անցեալ դարում, մեզնից հարիւր տարի առաջ, ձեռքով թել մանողը գործ էր ածում 11 ժամ մի կաժ դերձան պատրաստելու համար. այժմ սերֆակտորով, այսինքն շոգիով բանող մանելու մեքենայով, մի մանող, երկու օգնական տղերանցով, 1000 կաժ է պատրաստում մի ժամում։ Մի ձեռագործ գործում էր մի օրում $5^1/_3$ մետր (մօտ $7^1/_2$ արշին). այժմ մի գործող, որը մեքենայով մի քանի ջուլհակ միասին է բանեցնում, մի օրում պատրաստում է 166 մետր (233 արշին)։ Որպէս զի 5 թոն (թոնը մօտ 64 փութ) հում երկաթ (երկաթի ջոհար) դարբնելու մաքուր երկաթի փոխուի, պահանջւում էր այն ժամանակւայ քուրաներով $1^1/_2$ շաբաթ, յետոյւայ աւելի կատարելագործւած եղանակով $1^1/_2$ օր, այժմ Բեսեմերի եղանակով 20 րոպէ։ Անցեալ դարի վերջում ճակնդեղից (ռուսերէն՝ սւեկլաւիցա) շաքար պատրաստելու համար մի հատ գործարան կար միայն Շլեզիայում. այժմ Գերմանիայում 10 միլիոն թոնից աւելի ճակնդեղ է գործածւում շաքարի գործարաններում։ Այն, ինչ միայն աղօտ կերպով գուշակում էին բոյսերի սնելու և կենդանաբուծութեան մասին, այժմ, մի քանի տասնեակ տարիներում, արդէն պարզ հասկացողութիւն է դառել, և այժմ քիմիան լրջութեամբ զբաղւում է ցելլիւլոզից օսլայ ստանալու խնդրով, որ ասել է թէ անտառային փայտը, խոտը, նոյն իսկ յարդը (դարման), փոճոկը՝ մարդկային սնունդի անսպառ աղբիւր դարձնելու խնդրով։

Դարիս սկզբում երկաթուղիները, շոգենաւերը, էլէքտրօմագնիսութիւնը, հեռագիրը և հեռախօսը անծանօթ բաներ էին։ Մինչդեռ մինչ երեք տարի, 20-երրորդ դարի շէմքը մտնելիս՝ երկրագնդիս բոլոր երկաթուղային գծերը մի տարածութիւն են ունենալու, որը երկու անգամ երկար է քան լուսնի հեռաւորութիւնը երկրից։ 1820 թւականին Օէրստէդտ գտաւ Կոպէնհանդէնում որ

էլէքտրական հոսանքները ներգործութիւն ունին մագնիսի ասեղի վրայ։ Մեր օրերում էլէքտրական արհեստին արդէն յաջողուել է նեկար գետի ջրի ոյժը, որ նա ունի Լաուֆենի մօտ, փոխադրել Ֆրանկֆուրտ՝ 175 կիլոմէտր (163 վերստ) հեռաւորութեան վրայ։ Հեռախօսութեան յառաջդիմութիւնը կարելի է դարձրել Պարիզեցու ձայնը Լոնդոնում լսել, Բերլինից Վիեննա խօսել։ Իսկ ինժենեռական արհեստի հրաշալիքները, Սէն-Գոթարդի երկաթուղին, Եւրոպայի և Ամերիկայի կամուրջների համարձակ շինութիւնները, կամուրջները Միսիսիպի՝ի, Դուէրօ՝ի, Նիագարայի վրայով, կամուրջը Նիւ-Իորկից Բրուկլին!

Այս բոլոր յեղաշրջումները ամեն մէկիս գիտակցութեանն է բերում դպրոցական կրթութեան, լուրերի հաղորդակցութեան և մամուլի բարելաւումով։ Հէնց միայն գերմանական պոստը տարեկան փոխադրում է աւելի քան 900 միլիոն լրագրական համարներ։

Եւրոպայի աղգաբնակութիւնը այս դարի սկզբից աւելի քան կրկնապատկուել է։ Զնայած դորան նիւթական հարստութիւնը շատ աւելի պատիկ բարձրացել է։ Քաղաքակրթութեան բարիքներին այժմ մասնակից են ժողովրդի աւելի մեծ շրջաններ։ Ամենուրեք աւելացել է կարօտը, իղձը դէպի անձնական առանձնայատկութիւնների աւելի ազատ և լիակատար զարգացումը։

---

Զարմանալի չէ, եթէ այդքան փայլից աչքը շլացած՝ մարդիկ կան որ չեն կարողանում նաև խսկոյն մեր կուլտուրական շրջանի վտանգները և չարիքները տեսնել։

Բայց որքան հեշտութեամբ, մանաւանդ վերին շրջաններում աննկատ են անցնում մեր կուլտուրայի խորը սուերները և ծանր պակասութիւնները, այնքան էլ անհրաժեշտ է դառնում նոցա վրայ շեշտելով պնդելը։

Եթէ մեր կուլտուրան բարձրացնել ենք ուզում, ապա առաջին հարկի պահանջ է այդ կուլտուրան քննել խստութեամբ, առանց շեղուելու մեր դարի յառաջդիմութիւնից, բայց քննել ոչ միայն երեսից այլ և հակառակ կողմից։

Եւ ահա այդտեղ է որ երևում է, թէ լիբերալիզմի այն իդէաները, որոնցով սնուած էին նորա ազնուագոյն և վեհամիտ հետեւողները,—ազատութեան, արդարութեան և ընդհանուր բարեկե-

ցութեան իդէալները միայն շատ սահմանափակ չափով իրագործուեցին։ Այժմ, երբ կատարեալ զարգացումը բեղմնաւոր ասպարէզ է ներկայացնում հեռազօտութեան համար, և երբ լիբերալիզմի ամենանշանաւոր մտածողները ամենաեռանդուն կերպով ջանացել են լիբերալիզմի սխալմունքները ցոյց տալ, այժմ այլ ևս դժուար չէ հասկանալ թէ ինչու սկզբնական լիբերալիզմի լաւագոյն, վարդագոյն երազները մի մեծ մասով հէնց այնպէս էլ երազներ մնացին։

Երբ աշխատանքի ազատութիւնը յայտարարուեց, և բանւորը, գործատիրոջը հաւասար պայմանագրող ճանաչուեց, բանւորականութիւնը (այսինքն բանւոր դասակարգը) իւր առաջխաղաց շարժման մէջ անկասկած կարևոր քայլ արաւ։ Հեթանոսական հնադարում բանւորը միայն ստրուկ էր, անկամք առարկայ։ Քրիստոնէութիւնը բանւորի մէջ գոնէ այնչափով անձնաւորութիւն ճանաչեց, որ ոչ-ազատը և ճորտը (միջին դարերում), բացի պարտականութիւններից՝ նաև որոշ իրաւունքների տէր եղաւ։ Աւելի էլ լաւ դառաւ քաղաքների արհեստաւորների դիրքը համքարական սահմանադրութեան մէջ։ Բայց և այնպէս միշտ կար ծառայական յարաբերութիւն գործատուի և բանւորի մէջ, և ոչ պարզ պայմանագրութիւն, դաշն։ Եւ ահա լիբերալիզմը խորտակեց բոլոր դասակարգային իրաւունքները և ժողովրդի բոլոր անդամներին, տնտեսական նկատմամբ, ընդհանրապէս առած հաւասար իրաւունքների տէր ճանաչեց։ Ի հարկէ, բանւորը իրաւապէս հաւասար լինելով գործատուի հետ դաշն կապելու համար, միևնոյն ժամանակ չստացաւ նոյն տնտեսական ոյժը, իրական այն ազատութիւնը, ինչ ունէր գործատէրը։ Իսկական ազատութիւնը այն ժամանակ կը լինի, երբ դաշն կապողներից ամեն մէկը միւսի առաջարկները կարող լինի մերժել, առանց զգալի վնասներ կրելու. բայց լիբերալ տնտեսական դրութեան մէջ իսկական ազատ պայմանագրութիւն գործատուի և գործառուի (գործատիրոջ և բանւորի) մէջ խօսք չի կարող լինել։ Ի՞նչ պէտք է անի օրւայ հացի կարօտ բանւորը, եթէ չընդունի գործատիրոջ նոյնիսկ ծանր պայմանները։ Զուտնւոր բանւորը կարող է իւր աշխատելու ոյժը միայն այն ժամանակ գործադրել, երբ նա գտնում է մի գործատու, որը արդիւնաբերութեան միջոցներ է դնում բանւորի կարգադրութեանը։ Եւ երբ աշխա-

տանքի դաշնադրութիւնը գլուխ չի գալիս, ապա բանւորը առհասարակ անկարող է լինում իւր սեփական ուժով ապրուստ հայթայթել։ Նա դառնում է բեռ աղքատների խնամատարութեան, պատուազրկութեան բոլոր հետևանքներով։ Մինչդեռ գործատէրը, եթէ աշխատանքի պայմանադրութիւնը չի յաջողւում գլուխ բերել, կարող է իւր կարողութիւնով կամ նորա ռենտով (փոդի տոկոսներով, հողի և շինութիւնների վարձագնով) ապրել և կամ նոյնիսկ առանց օգնական ձեռքերի աշխատել։ Թէկուզ այդ դէպքում սա ՁԵասներ էլ կրելու լինի, բայց ինչ համեմատութիւն սորա և պայմանին չհամաձայնող բաւորի մէջ։ Իրաւ են ասել, որ բանւորը գտնւում է միշտ սնանկի (կոտոր ընկնողի) դրութեան մէջ, որը ինչ գնով էլ լինի, պիտի ունեցածը ծախի. և գիտենք թէ սնանկը ինչ գներով կարող է ունեցածը ծախել!

Բանւորի դրութեան աննպաստ լինելը ուժեղանում է նաև մի շարք այլ հանգամանքներով։ Խօ ասւեց որ, լիբերալիզմի վարդապետութեան համաձայն, որև յաղթանակեց մեր դարում, բանւորի աշխատանքը հաւասարցւեց ապրանքի հետ. աշխատանքը մի ապրանք է, որ առաջարկւում է ցանկացողին որևէ գնով, ինչպէս ամեն ուրիշ ապրանք։ Բայց բացի այն, որ բանւորը, ինչպէս վերը տեսանք, իւր չունևորութեան պատճառով, ստիպւած է զիջել գործատուի պայմաններին, կայ և մի մեծ տարբերութիւն աշխատանքի և այլ ապրանքների մէջ։ Մինչդեռ այլ ապրանքները ծախողի անձնաւորութիւնից անկախ մարդկային գործունէութեան արդիւնք են, աշխատանքը ընդհակառակը հէնց մարդկային գործունէութիւնը ինքն է և մարդուց անբաժանելի է։ Ով կապիտալ է տոկոսով տալիս, հող է կապալով տալիս, բնակարաններ է վարձու տալիս, կամ ապրանք է ծախում,—նա դորանով իւր տնտեսութիւնն է միայն շօշափում, բայց իւր անձնաւորութիւնը կատարելապէս ազատ է մնում։ Այլ բան է բանւորը, որը միայն իւր աշխատանքն է վաճառում։ Գործատէրը, որը պայմանով (դաշնով) մէկի աշխատելու ոյժի վրայ իրաւունք է ձեռք բերել, միշտ մի որոշ չափով իրաւունք է ձեռք բերում նաև բանւորի անձնաւորութեան վրայ. նա գնում է բանւորին որոշ հանգամանքների մէջ՝ օդի ջերմութեան և յատկութեան նկատմամբ, դժբաղդ դէպ-

քերի վտանգաւորութեան նկատմամբ, այլ և նա է որոշում թէ ում հետ բանւորը պիտի աշխատի։ Եւ որքան աննպաստ է դաշնը՝ այնքան աւելի քիչ կարող է բանւորը իւր շահերը պաշտպանել այդ բոլոր հանգամանքների նկատմամբ։

Բայց կայ և ուրիշ կարևոր զանազանութիւն աշխատանքի և այլ ապրանքների միջև։ Այլ ապրանքները արտադրւում են նոցա դնողների պահանջի համեմատ. երբ պահանջը սակաւում է, սակաւում է նաև արդիւնաբերութիւնը։ Այդպէս չէ աշխատանքը, որը արտադրւում է մարդու հետ միասին. իսկ մարդիկ ծնւում աշխարհք են գալիս անկախ այն բանից թէ աւելի բանւորի պէտք կայ թէ ոչ։ Երբ մի ապրանքի գինը ընկնում է, շատ արտադրած լինելու պատճառով, ապա համեմատապէս հեշտ է այլ ևս քիչ արտադրելով նոյն ապրանքի գինը բարձրացնել. մինչդեռ ինչ պէտք է անի բանւորը, եթէ նորա աշխատանքի համար պակասի պահանջը, հետևապէս և նորա աշխատանքի գինը (օրավարձը) ընկնելու լինի։ Հատ-հատ բանւորներ, եթէ առողջութիւնը և ոյժը ներում են, կարող են իրենց նախկին վարձը ստանալ աւելի բանելով, քան առաջ էին բանում։ Բայց չէ՞ որ դորանով նոքա աւելի էլ աւելորդ կը դարձնեն միւս բանւորներին։ Եթէ, դիցուք, առաջ 100 բանւոր կային, որոնք օրական 12 ժամ էին աշխատում, հիմա եթէ 80 հոգի 14 ժամ աշխատելու լինեն առաջւայ օրավարձը ստանալու համար, մնացած 20-ը կատարելապէս աւելորդ կը դառնան, գէթ մի առ ժամանակ, մինչև որ պահանջ կը լինի աւելի արդիւնաբերելու, մինչև որ նոր բանւորների աշխատանքի պահանջ կ'ստեղծւի։ Իսկ օրական աշխատանքի ժամերը աւելացնելով՝ բանւորի ոյժը կ'կոտրւի, բանւորը իրր աշխատաւոր կ'փչանայ. նա կը դառնայ անպէտք։ Այսպէս անգութ կերպով թերևս բանւորների թիւը քչանայ և նորից յառաջանայ ճիշտ յարաբերութիւն պահանջի և առաջարկի միջև բանւորական աշխատանքի նկատմամբ!

Գերմանական կայսերութեան մէջ 1895 թւին երկու անդամ վիճակագրութիւն եղաւ գործից զուրկ բանւորների, և երևաց որ յիշեալ տարւայ յունիսի 14-ին դոցա թիւն էր (երկու սեռից) 299.352 հոգի, դեկտեմբերի 2-ին անգործ բանւորների թիւն էր (երկու սեռից) 771.005 հոգի!

Մեր ժամանակում իրաւունքը և բարոյագիտութիւնը բանւորին ընդունում են որպէս մարդ, որ ինքը իւր համար նպատակ է, մինչդեռ տիրող տնտեսական կարգը բանւորի վիճակը կախման մէջ է դնում այն բանից թէ կը կամենայ գործատէրը նորան աշխատեցնել, թէ՞ ոչ։ Բայց ոչ մի երաշխաւորութիւն չկայ թէ գործատէրը միշտ այնքան կարօտ կը լինի աշխատաւոր ձեռքերի, որքան կան բանւորներ և կամ թէ վարձատրութիւնը միշտ այնքան կը լինի որքան հարկաւոր է բանւորին՝ իւր ապրուստը հայթայթելու համար։ Ցաւալի է պատահել որ տեխնիկական գիւտերը, տնտեսական կրիզիսները, փոքր և միջակ արհեստանոցների ու գործարանների խափանումը մեծ գործարանների պատճառով գալիս ու մեծ թւով բանւորներ աւելորդ են դարձնում և նոցա ամենագառն չքաւորութեան ու սովի տիրին մատնում։ Ներկայիս աղքատախնամատարութիւնը սխալ է ենթադրում, թէ աշխատելու ընդունակ ամեն բանւոր իբր թէ գործ է գտնում։ Եւ ահա գործից զուրկ բանւորը, աւաղ, շատ հեշտութեամբ դիմում է յանցանքի, անբարոյականութեան և ծանր հիւանդոտութեան։ Եւ դոցա դրութիւնը ծանր է ազդում նոյնիսկ գործ ունեցող բանւորների վրայ։

Դժւարութիւնը աւելանում է նորանով որ բանւորը ամենևին չի կարող այնպէս հեշտութեամբ իւր աշխատանքի համար շուկայ գտնել, որքան այդ կարելի է այլ ապրանքների համար։ Ապրանքը մի տեղ որ չի ծախւում, կարելի է համեմատապէս հեշտութեամբ մի ուրիշ տեղ փոխադրել և գնողներ գտնել։ Բայց մի մարդ, որ ընտանիքի հայր է, չի կարող հեշտութեամբ մի այլ տեղ փոխադրըւել, որովհետև դորա համար դրամական միջոց պիտի ունենալ։ Եւ նա չի էլ կարող մի այլ տեղ իւր աշխատանքի նմուշը (պրոբ) ուղարկել, որ դորանով առաջուց տեղ ճարի։ Եւ չկայ աշխատանքի շուկայի կազմակերպութիւն, կուրսացոյց, որը օր օրի վրայ նշանակէր աշխատանքի (բանւորների) պահանջն ու առաջարկը տնտեսական աշխարհի կարևորագոյն հրապարակներում, և այդ կուրսացոյցները ուղարկէին ամեն տեղ ի դիտութիւն ընդհանուրի, ինչպէս այդ կատարւում է բոլոր այլ ապրանքների համար։

---

Սկզբնական լիբերալիզմը սխալուեց նաև — երբ նա սպասում էր թէ, տնտեսական ոյժերի կատարելապէս ազատ խաղի դէպքում, հարստի ու աղքատի մէջ աստիճանական կերպով տարբերութիւնը կը նուազի։ Ժողովրդական հարստութեան բաշխումը, ներկայ տնտեսական հանգամանքներում, բաւականին որոշ կարելի է իմանալ եկամտային հարկերից։

Մանաւանդ այդ նպատակին կարող է ծառայել Սաքսոնիայի եկամտային հարկի վիճակագրութիւնը։ Սաքսոնիան գործարանապէս բարձր զարգացած է, հետևապէս ժամանակակից տնտեսական կեանքի մի տիպարական երկիր է և, 1879 թուականից դէս, ունի մի բաւականին ճշգրիտ եկամտային վիճակագրութիւն [1])։ Այդ վիճակագրութիւնը ցոյց կ'տայ թէ որքան հոգի ստանում էին տարեկան 300 մարկից (մօտ 140 ռուբլուց) պակաս, ապա 300-ից մինչև 800 մարկ, 800-ից մինչև 950, 950-ից մինչև 1.100 մարկ և այլն այսպէս շարունակ մինչև 100,000, ապա մինչև մի միլիոն մարկ 1879-ին և 1894 թուականին։

Այդ վերին աստիճանի հետաքրքրական թուերին կ'անցնենք զալ անգամ։

(Շարունակելի)

---

[1]) Կարևոր է իմանալ, որ եթէ ամեն պետութիւն ունի հարկեր, բայց միայն շատ քչերը ունին եկամտային հարկ. որ այդպէս կոչւում է այն հարկը որ վերցւում է անհատից՝ համեմատ նորա ամբողջ կարողութեան։ Դորա համար ուրեմն հաշւում են թէ ամեն մարդ տարեկան մօտաւորապէս որքան եկամուտ է ստանում իւր ամեն կարգի գործերից և կալուածներից։ Մինչդեռ, օրինակ, մեզնում Ռուսիայում հարկ վերցնում են տներից առանձին, վաճառականութիւնից և գործարաններից առանձին, (գիլդիա, պատենտ, աքցիզ), փողի տոկոսներից առանձին (գերբովոյ սբոր) և այլն, ուրեմն հարկ-վճարում է առանձին-առանձին եկամուտներից, որով չի իմացւում թէ ամեն մարդ տարեկան որքան եկամուտ ունի իւր ամբողջ շարժական և անշարժ կալքերից ու իւր բոլոր գործերից։ Իսկ ուր կայ եկամտային հարկ՝ այնտեղ հաշւում են ամեն անհատի ամբողջ եկամուտը։ Եկամտային հարկը գոյութիւն ունի Գերմանիայի մի քանի երկիրներում և տեղ-տեղ նաև ուրիշ երկիրներում։ Այդ հարկը Ֆրանսիայում մտցնելու համար մեծապէս աշխատեց Բուրժուայի արմատական մինիստրութիւնը, մօտ երկու տարի առաջ, բայց մերժուեց։

# ԱԻԱՁԱԿՈՒԹԻՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

## ՖՐԷՆԿԷԼ'Ի

Եթէ այն ռեժիմը (կառավարելու եղանակը), որի ներքոյ ապրում էին կովկասցիք, վրացիք, Թուրքեր, մասամբ լեռնցիք, Թուշեր, պշաուներ, խեւսուրներ, օսեր և այլն, համեմատուԹեան դնենք այն ռեժիմի հետ, որ իշխեց Կովկասում, Ռուսիայի հետ նորան միացնելուց դէս, ապա, ի հարկէ, չի կարելի նոցա մէջ չտեսնել մեծ զանազանուԹիւն։ Կովկասում կառավարուԹիւնը հնուց բռնակալական էր։ Ժողովուրդը, Թէև կամայական և վայրենի, բայց այնուամենայնիւ ստիպւած էր առանց հակաճառելու հպատակուել իշխանուԹեան, իմանալով, որ ամենափոքր անհնազանդուԹեան հետեւանքը պիտի լինի անգութ վարմունքը մեղաւորի հետ։

Կանգ առնելով վրաց Թագաւորների հրովարտակների և կարգադրուԹիւնների վրայ, մենք տեսնում ենք, որ իշխանուԹեան պահանջները չկատարելը և ամենաԹեթև դժկամակուԹիւնը—օգնուԹեան չհասնելը Թշնամու դէմ կամ աւազակներին հալածելու համար—հետևցնում էր չհնազանդողների կործանումը։ ԱւազակուԹիւնը, որքան հնարաւոր էր, խստօրէն հալածւում էր Վրաստանում և մի քանի Թրքական խանուԹիւններում։ Եւ Թէև աւազակուԹիւնը հալածւում էր մեծ մասամբ մասնաւոր գանգատի հիման վրայ (въ порядкѣ частнаго обвиненія), բայց ոչ առանց օժանդակուԹեան իշխանուԹեան կողմից. և որպէս բռնակալական էր իշխանուԹիւնը՝ նոյնպէս և կարճ էր կորւում դատաստանը աւազակների համար։

Ինչ վերաբերում է կառավարուԹեան՝ Թրքական նախկին խանուԹիւններում, այնտեղ խանի կամքը օրէնք էր. անհնազանդներին անխնայ ծեծում էին, կորում էին նոցա ականջները, գլուխները—

առանց երկար ու բարակ հարց ու փորձերի և քննութիւնների։ Խանների կամայականութեանը սահման չկար։ Հպատակների հետ անդութ վարուելը բնորոշ դիծն էր այդ կառավարութեան նոյն իսկ Դաղստանում։ Դեռ 50-ական թուականներին, Կազիկումուխի մէջ, խանի լոկ կապրիզի համար՝ նորա հպատակները ենթարկուում էին սարսափելի տանջանքների. նոցա տանջում էին շիկացրած երկաթով, կրծքի վրայ կրակ էին չաղացնում, երբեմն մեղաւորի ածիլած գլխի վրայ խմորից ման էին շինում և մէջը եփեկող իւղ էին ածում։

Անդրկովկասի թրքական նախկին խանութիւններում կամայականութիւնը և ոչնչով չսանձուած կրքերը կազմում էին անդրկովկասեան խանների բնագիծը։ Խանը միակ անձն էր, որի ձեռքում կենդրոնանում էին բոլոր օրէնքները և իրաւունքները բոլոր բնակիչների, որոնք ոչ այլ ինչ էին, բայց եթէ կառավարութեան սարուկներ, որոնց վրայ խանը ունէր մահու և կեանքի լիակատար իրաւունք։ Խանի մի միակ նշանով դուրս էին պրծնում ֆառաշները (խանի բարկութեան կատարողները—դահիճներ), և մի ակնթարթում մեղապարտը պառկեցրած էր մէջքի վրայ, ոտները, կռացրած ֆալախկայի վրայ, դէպի վեր բարձրացրած, և ոտներին խփում էին ժասմինի ճիպոտներով։ Մի այդպիսի նշան ևս խանի կողմից—և կտրում էին մեղապարտի ձեռքը, ոտը, մի կամ երկու ականջը, լեզուն, հանում էին մի կամ երկու աչքը։

Բայց յետոյ իշխանութիւնը նուազեց Վրաստանում և թրքական խանութիւններում, անընդհատ ներքին կռիւների պատճառով, և երբ ռուսաց իշխանութիւնը երևաց՝ Կովկասի բնակիչները բոլորովին անբարոյացած էին և անհնազանդութեան սովորած։

Ռուս իշխանութիւնը երևաց իւր մարդասիրական հայեացքներով և ֆակտերը քննելու զգոյշ ձևերով Ահա ինչ է ասում Կովկասը ճանաչող իշխ. Միխայիլ Սեմէոնովիչ Վորոնցով (նախկին փոխարքայ) իւր յիշատակագրի մէջ՝ թէ ինչ դրութեան մէջ էր Վրաստանը ռուսաց հպատակութիւն ընդունելու ժամանակ։ «Վրացիք, ասում է նա, այնպէս էին սովոր իրենց թագաւորների անդութ արտայայտութեանը, որ ռուսաց իշխանաւորների սովորական դէպքերում հեզ և օրինասահման իշխանութիւնը նոցա թուում է

զարմանալի, և աւելի թուլութիւնից, քան մեծահոգութիւնից յառաջացած։ Նոցա իշխաններից և բարձր ազնուականներից շատերը ասում են, թէ Վրաստանը չի կարող այլ կերպ կառավարուել, բայց եթէ արագ և անխնայ պատժով բոլոր դէպքերում։ Գործը դանդաղեցնող տեղեկութիւններ հաւաքելը և օրէնքի վրայ հիմնուած վճիռները նոցա թուում են անհասկանալի և անտանելի, և կը պատահի որ մէկը աւելի շուտ կը ցանկայ, որ իսկոյն իւր ականջը կտրեն ու բաց թողնեն, քան մի քանի ամիս չափաւոր պատիժ կրել տան։ Իշխանները և ազնուականները հասկանում են կարգ ու արդարութիւնը ոչ աւելի քան հասարակ ժողովուրդը»։ Իշխան Ցիցիանովին (Վրաստանի կառավարչապետ դարուս սկզբում) հարկաւորուեց մի անգամ դատաստում մի ազնուականի ձերբակալել, բայց որովհետև այնտեղ զինուորական պահակներ չկային, ուստի մի քանի հարևանների խնդրեց՝ չեն համաձայնիլ արդեօք այդ ազնուականին դարաւուլի տակ վերցնել։ Նոքա պատասխանեցին թէ նորան ձերբակալել չեն կարող, բայց եթէ իշխանը կը հրամայի՝ հրացանով կը սպանեն... Ոչ մի վրացի չի դալ դատարան, բացի եթէ զօրով քաշեն բերեն. և. տանը հանդիստ նստած, նա չի հասկանում թէ ինչպէս կարելի է նեղութիւն քաշել և գնալ, ուր որ իրա սիրտը չի քաշում, և միմիայն «պաւեստկայի» (հրաւիրագրի) հրաւէրքով!... Ժողովուրդը լնտելացել է արագ, բերանացի թէև անգութ դատաստանների։ Այդպիսի դատաստան վրացիք պահանջում էին իրենց թագաւորից և մդիւան-բէգերից (դատաւորներից)։

Բայց ռուսաց կառավարութիւնը չէր կարող վրաց թագաւորների և թուրք բռնակալ խաների մոքերին հետևել. նա դլուխներ չէր կտրում, անհնազանդներին ու աւազակներին սրածայր սեպերի վրայ չէր նստացնում, աչքեր չէր այրում, ձեռք ու ականջներ չէր կտրում... Նա վարում էր մարդասիրաբար։ Այսպիսով ռուսաց իշխանութիւնը, կովկասցիների հասկացողութեամբ, շատ թոյլ էր, իսկ դանդաղ կանոնաւորական դրագրութիւնը, կասկածամտութիւնը, ձևամոլութիւնը—այդ ամենը հակառակ էին կովկասեան ազգերի առժամանակեայ սովորոյթներին, նոցա հայեացքներին արդարադատութեան, իշխանութեան ոյժի և պարտաւորութեան մասին։ Դորա հետևանքը այն եղաւ, որ ռուսաց կովկասեան իշխա-

նութիւնը չկարողացաւ երկրի մէջ կարգ մտցնել, բարքերի թուլութիւնը աւելի ու աւելի սաստկացաւ և, հանդստութեան արտաքին կեղևի տակ, պատրաստւում էր այն, ինչ յետոյ շուտով երևաց— գողութիւն, աւազակութիւն, կողոպուտներ, բռնութիւններ և այլ ամեն կարգի յանցանքներ սեփականութեան դէմ սովորական երեւոյթ դարձան Կովկասում։ Բայց գլխաւոր չարիքը, որ Կովկասի այն ժամանակւայ կառավարութեան թուլութեան անհրաժեշտ հետևանքն էր—դա այն էր, որ իւր ժամանակին միջոցների չդիմեցին կովկասցիների ընդհանուր զինուածութեան դէմ։ Այն անցողական ժամանակը, որ հասաւ Կովկասի համար, երբ նա միացւեց Ռուսիայի հետ, անհրաժեշտ էր, ամենից առաջ, զինաթափ անել կովկասցիներին, որպէս զի կարելիին չափ քիչ զէնք լինէր հասարակ ժողովրդի մօտ, որը հակւած է այն գործածել ամեն դէպքերում։ Ապա պէտք էր հոգալ ժողովրդի կրթութեան մասին, գրագիտութիւն տարածել ամբոխների մէջ. բայց այդ ամենը չկատարւեց, և ժամանակը ձեռքից բաց թողնւեց։ Մինչդեռ աւազակութիւնները, բռնութիւնները, կողոպուտները քաղաքացիութիւն ստացան Կովկասում։ Տեսնենք, ուրեմն, ինչ արին ռուսաց իշխանութիւնները յանցանքների այդ կոպիտ տեսակները արմատախիլ անելու և կամ դէթ նուազցնելու համար։

Ռուսաց կառավարութեան ձեռնարկած միջոցները, աւազակութեան դէմ կռւելու համար, կարելի է բաժանել երկուսի. ա) ընդհանուր միջոցների, որոնք հրատարակւած են ամբողջ Ռուսիայի համար, և բ) բացառիկ միջոցների՝ յատուկ Կովկասի համար։ Առաջիններին պատկանում են քրէական պատիժները, որ սահմանւած են թէ կանոնադրութիւն պատիժների մասին աւազակութեան և կողոպուտների համար (уложеніе о наказаніяхъ за разбои и грабежи) և թէ, մասնաւոր դէպքերում, զինւորական կանոնադրքի XXII-րդ գրքի մէջ։ Այստեղ պիտի յիշել նաև բոլոր միջոցները, որ որոշւած են աւազակներին եւ կողոպտողներին որոնելու համար՝ ա) քաղաքացիական օրէնսգրքի II հատորում (учрѣжд. губ. и уѣздн. уст.), բ) XIV հատորում (уставъ о преданіи и преслѣд. преступниковъ), և գ) XVI հատորում (уст. уголовн. суд.), այնէ՝ յայտարարութիւններ տալը,

հետամուտ լինելը, ձերբակալումը առանձին կոմանդներով և այլն։

Երկրորդ կարգին պատկանում են այն յատուկ միջոցները, որոնք գործադրւում են միմիայն Կովկասում. ա) աւազակներին պատսպարելու դէմ, բ) աւազակութիւնը դադարեցնելու և աւազակներին բռնելու համար։

Այն միջոցներին, որոնք, իշխանութեան կարծիքով, պէտք է ընդդիմադրէին աւազակների պատսպարութեան, վերաբերում են.

Ա) մեղաւորներին կամ կասկածուողներին պատժելը, որ կատարւում է հետեւեալ եղանակներով. 1) վարչութեան ձեռքով աքսորելը նոցա, որոնք կասկածւում են աւազակութեան և կամ աւազակներին պատսպարելու համար. 2) աքսոր ի Սիբիր գիւղական հասարակութիւնների վճռով. 3) արգելք քաղաքներում ապրելու այն գիւղացիներին, որոնք կասկածի տակ են թէ նոքա ապաստանում են աւազակներին, վաճառում են կողոպտածը և այլն. և 4) նշանաւոր աւազակներին խաղաղութեան ժամանակ զինուորական դատարանին յանձնելը.

Բ) պատիժներ, որոնք դիպչում են ուրիշ անձերի իրաւունքներին, որոնք յաճախ աւազակութեան մասնակից չեն. դոքա են 1) փախստական յանցաւորների ընտանիքների կալանաւորումը. 2) գիւղի պատուաւոր բնակիչների կալանաւորումը, ուր երևացել են աւազակներ, որոնք չեն գտնուած և չեն մատնուած իշխանութեան. 3) էկզեկուցիա (այսինքն՝ գիւղի հաշւով որոշ թւով զօրք պահելը գիւղի մէջ). 4) փոխադարձ երաշխաւորութիւն (այսինքն որ գիւղական հասարակութիւնը վճարի կողոպտած իրերի արժէքը, եթէ աւազակները չեն գտնուած). 5) գիւղի տանուտէր ընտրելու իրաւունքի կորուստը և տանուտէրի նշանակումը կառավարութեան կողմից. 6) զէնք կրելու իրաւունքի կորուստը գիւղական հասարակութեան համար և 7) Կովկասեան երկրի կառավարութեան կանոնագրքի 27-րդ յօդուածի գործադրութիւնը կասկածուած տեղի նկատմամբ։

Վերջապէս պիտի յիշել անմիջական միջոցները՝ աւազակութեան դէմ և աւազակներին որոնելու համար. դոքա են. 1) ոստիկանական կազմի ուժեղացումը. 2) որոնումը գիւղական պահակների միջոցով (сельская стража). 3) բնակիչների տուած մարդկանց օգնութեամբ աւազակներին բռնելը. 4) ազնուականների մասնաժողովի

ցուցմունքները թէ ովքեր են կասկածւում աւազակութեան մէջ և այլն (Բութաչիսի նահանգում). 5) աւազակներին հալածելը զօրքի և կազակների միջոցով. 6) առանձին պաշտօնեաներ և սպաներ ուղարկելը և 7) հոգևորականութեան յորդորները։

Բացի այդ, Կովկասեան իշխանութիւնները մշակած են եղել մի քանի ծրագիրներ. ա) ընդարձակելու ոստիկանութեան իշխանութիւնը նախնական քննութիւն (предварит. слѣдствіе) կատարելու համար, մտցնելով դատարանական կամ հետախոյզ (судебная или сыскная полиція) ոստիկանութիւնը. բ) քրէական դատավարութիւնը փոփոխելու՝ նորա կազմի մէջ ընդունելով դատաւորներ ժողովրդից ընտրուածներին. և գ) այլ ծրագիրներ, որոնց մասին ներքև խօսք է լինելելու։

Աւազակութիւնները և կողոպուտները պատժող օրէնքները Կովկասում նոյնն են, ինչ եւրոպական Ռուսիայում. այդ օրէնքներով ուրիշի գոյք կողոպտելը ընդունւում է իբր աւազակութիւն, գողութիւն կամ «մաշենենիկութիւն». ուրիշի գոյքերը կողոպտելու այդ բոլոր տեսակներից ամենից խիստ պատժւում է այն, որ կատարւում է կազմակերպւած խմբերով (շայկաներով)։ Այդ պատիժները սոքա են. անձնական բոլոր իրաւունքներից զրկելը և Սիբիր ուղարկելը այնտեղ ապրելու համար (на поселеніе). իսկ այն ծայրայեղ դեպքերում, երբ մեղադրւողները յանձնւում են զինուորական նահանգական դատարանին, նոքա ենթարկւում են մահւան պատժի (XXII книга свода военныхъ постановленій, ст. 279). մահւան պատժի տեսակներից ընտրւում է աւելի անպատիւը—կախումը։

Մեր ընդհանուր քրէական օրէնքները բաւականին խիստ են աւազակութեան համար. նոքա դործադրւում են միշտ դործի հանդամանքների ու մեղադրւողների յանցանքի համեմատ. այդ պատճառով, ինչ էլ հոռետեսները ասեն, բայց մենք կարծում ենք, որ ներկայումս ձեռնարկւող միջոցներից, աւազակութեան դէմ կռւելու համար, ամենից կարևորը դատարանի ազդեցութիւնն է ժողովրդի վրայ. և ինչքան էլ մեղադրւողները աշխատում են սուտ վկաներով դատարանից խոյս տալ, բայց երբ դատաստանը կատարւում է, ամեն կողոպտող, ամեն աւազակ յարգում է դատարանը, որովհետև նա լաւ գիտէ, որ դատարանի վճիռը երեսպաշտ չէ, կարելիին չափ արդար է, և որ գլխաւորն է—միշտ հիմնւած է որոշ և դրական օրէնքի վրայ։

(Շարունակելի)

# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՆՈՐ-ՓՈՐՁ», գրականական և հասարակական հանդէս։ Տետրակ № 1։ Խմբագրեց Յովհաննէս Շահնազարեան, հրատարակեց բժիշկ Սիմէօն Շահ Նազարեանց։ 1897. Մոսկուա, տպարան Ֆ. Բարխուդարեանի. 128 էջ, գինն է 75 կոպէկ։

Հայի հնուց մշակած ծաղրալեզ անհատականութիւնը մի նոր արտադրութիւն է լոյս աշխարհ բերել գրականութեան մէջ. և այժմ նա «Նոր-Փորձ» է կոչւում, երբէս նա երբէկ կարող էր «Խօսք» և «Գործ» կոչուել, ինչպէս որ կային այնպիսիներ, որոնք «Գրականական հանդէս», «Թատրոն», «Հորիզոն» էին կոչւում։ Եւ դեռ բոլորը չեն լիչածներս, և ոչ գիտենք թէ մօտաւոր ապագային քանի նորերն են վերապահւած։

Այս նոր հանդէսի գոյութեան իրաւունքը նորան խմբագրողը հիմնում է կրիտիկական բաժնի վրայ։ հանդէսը պիտի զարգացնի քննադատական ճիւղը,—ահա «Յառաջադրանի փոխարէն» խորագրով գրուած ծանուցման իմաստը։ Բայց մի պայմանով—մինչև այժմ եղածը չեղած համարել!

«Կրիտիկական լօգուածներ», «քննադատութիւններ» երբեմն առաջ եկել են մեզ մօտ, ճիշտ է, բայց մի մասը «լօգուածներ» չեն, այլ հասարակ գրախօսականին մօտեցող նկատողութիւններ. միւս մասն էլ՝ թէպէտ և լօգուածներ են, բայց զուրկ չկոչալից և գրած են առանց որ և է նախապատրաստութեան...

Ուրեմն, ըստ պ. Շահնազարեանի, մեզնում ցարդ եղել են կրիտիկական լօգուածներ, բայց նոքա հաշի չպիտի առնւեն, որովհետև դոքա շկոչալից զուրկ են և գրած են առանց նախապատրաստութեան. իսկ մնացեալները գրախօսականին մօտեցող նկատողութիւններ են միայն։

Միանգամայն դուրս է ամեն կասկածից, որ այդ տողերը ամենից առաջ վերաբերում են «Մուրճ»-ին։ Եւ մենք խիստ ընդդէմ ենք պ. Շահնազարեանի այդ տողերին, թէ գրածի տոնի, թէ մտքի և թէ նորա տեն-

գենցիալի նկատմամբ, բացի եթէ Նոր-Փորձ'ի հրատարակողը նեղութիւն քաշած լինէր բացատրել մեզ, թէ այդ ինչ առանձին միտք է յայտնում «առանց նախապատրաստութեան» խօսքը, որ մեզ համար մի օտարոտի տերմին է։

Ցիշեալ տողերում մենք նախ և առաջ գտնում ենք ուրացում այն մեծ նշանակութեան, որ ամեն գրականութեան մէջ ունի մի զուտ գրական, զերծ ամեն անմաքուր միտումներից գրախօսութիւնը, այնպէս, ինչպէս Մուրճ'ն է հասկացել և կատարել այս մօտ լինը տարում, վարելով այդ գործում ամենայն շրջանկատութեամբ, որպէս զի մի զուցէ անմաքուր ձեռքերով չդան ու անձնական հաշիւներ չմաքրեն այլ և այլ ապիկար գրչակներ, քննադատութիւնը չդարձնեն բարեկամների խաթրի և չարակամների վրիժառութեան ասպարէզ։ Մենք պնդում ենք, որ Մուրճ'ից առաջ չկար այսպէս հասկացուած քննադատական մի բաժին մեր պարբերական հայ մամուլի մէջ. պնդում ենք, որ Մուրճ'ի այդ բաժինը, չնորհիւ իւր սիստեմականութեան և անշեղ ուղղութեան՝ արդէն իսկ իւր բարերար ազդեցութիւնը արել է հայ գրականութեան վրայ և նոյն իսկ դրդել է մեր բոլոր միւս թերթերին բարենախանձ մրցակցութեան Մուրճ'ի հետ, թողնելով հասարակութեանը դատել թէ որքան այդ մրցութիւնը յաջողւում է։

Միթէ մոռացած է լրագրերի նախկին ստէօրոտիպ խօսքը թէ «Շնորհակալութեամբ ստացանք (այս ինչ) գիրքը. տիպը մաքուր է...» և այլն։

Արդ, մենք կարծել ենք, և նոյնն ենք կարծում այսօր էլ, որ գրախօսական բաժնի լաւ վարումը պարբերական մամուլի մէջ մի աստիճան է վերանալու համար դէպի աւելի բարձր գրական քննադատութիւնը։ Ուր, մի ազգի մէջ ու որոշ ժամանակում, բայակալում են կարող ոչ-ժեր զուտ բայց մաքուր և կորովի գրախօսականի համար, — այնտեղ զուր կը լինէր սպասել լայն ծրագրով գրական քննադատութեան զարգացնալուն։ Դեռ պէտք էր մի սերունդ վարժեցնել ուղղամիտ վերաբերմունքի դէպի գրական արտադրութիւնները։ Եւ այդ ջանքերը շատ աւելի մեծ արժէք ունին քան որ և է մէկի խրոխտութիւնը այն բանի վրայ, թէ առաջ եղել են «գրախօսականին մօտեցող նկատողութիւններ», որոնցով հարկաւ ակնարկւում են գլխաւորապէս Մուրճի այն քննադատականները, ուր գրախօսութեան բաժնից դուրս՝ աւելի ընդարձակ ձևով այլ և այլ հեղինակներ և հեղինակութիւններ են քննադատւում, լօղւածներ, որոնց մէջ իւր փոքրիկ մասն է ունեցել նաև այժմեան «Նոր-Փորձ»ի խմբագրող պ. Շահնազարեան-Գնունին, որը իւր մասը այժմ միայն փոխադրել է այս ամսագրից դէպի իւր նոր հրատարակութիւնը, որպէս զի սին և անմեղ հաճոյք ունենայ իւր այդ փոքրիկ հրատարակութեանը ամսագիր-ժողովածուի պատիւները տալ, մի անուն, որ նա ամենայն իրաւունքով կարող է իւր հնարածը համարել բայց ոչ այդ անունով մկրտել

նաև այն, ինչ միայն պարզ ամսագիր է [1]։

Բայց գալով քննադատութեան ճիւղին մեր մէջ, պ. Շահնազարեանի ուրացողութիւնը դեռ աւելի հեռուն է գնում. դեռ մի կողմը թողնենք այն ընդհանուր տեսութիւնները, որ կատարեցին այստեղ հայկական օրգանների մասին (տես Մուրճ 1889 № 1 և № 4), խօ չատ էլ հեռու չէ այն անցեալը, երբ այժմ դժբախտաբար հիւանդ պ. Եղիշէ Մաղաթեան, նոյն այս ամսագրում, տպեց իւր ամենքից նկատած քննադատական ուսումնասիրութիւնները հայ գրականութեան մասին, սկսելով Շահազիզից, շարունակելով Գամառ-Բաթիպալով, որ ապա անցնէր այլ գրողներին։ Զուտ գրական քննադատութիւն, գրած բարեխիղճ կերպով, և ի վերայ այդ բոլորի՝ գրած որոշ մեթոդով, ուր գիտցողը չէր կարող չնկատել Տէնի չկոլան, այն Տէնի, որի մասին նոյն այդ հեղինակը ապա մի ընդարձակ ուսումնասիրութիւն տրաւ «Արարատ» ամսագրում։ Հարկաւոր էր ձեզ մի գրող, նեղուած քննադատութեան գործին հայ գրականութեան մէջ—ահա նա!

Եւ միթէ զուտ քննադատական վերլուծութիւնով ու սինթեզով չէր զբաղուած մեր երիտասարդ գրող պ. Աղբալեան Մուրճ'ի հէնց այս վերջին համարներում?

Այս բոլոր ուրացողութիւնները նպաստաւոր կերպով չեն լանձնարարում Նոր-Փորձ'ի խմբագրողին։ Եւ սակայն այդ դեռ բոլորը չէ, ինչով փայլում է նորա «լառաջաբանը», որ նա, Աստուած միայն գիտէ թէ ինչու, խորագրել է «Յառաջաբանի տեղ» խօսքերով։ Տեսէք միայն թէ ինչ կարգի գրողների բերան է ուզում հանդիսանալ Նոր-Փորձը.

> «Մենք չունինք այնպիսի թերթեր և կամ ժողովածուներ, որոնք հեռու ամեն տեսակ լրագրական կուսակցութիւններից՝ զբաղուեն միմիայն և միմիայն գրականութեամբ։ Այնպէս որ մի քանի երիտասարդներ, նորաւարտ նախապատրաստուած երիտասարդներ, իրաւ է, գրիչ ունեն իրանց ձեռքին, բայց չեն աշխատակցում և ոչ մէկին մեր թերթերից և ժողովածուներից, որպէս զի, ինչպէս իրանք են ասում, «չընկնեն մեր կուսակցական փշթոչի մէջ»։

Երեխայամտութեան մի ովկիանոս են այդ տողերը։ Էլ ինչ էք ուզում, ով երիտասարդ նախապատրաստուած պարոններ? զուք, որպէս վկայում է Նոր-Փորձ'ի խմբագրողը, դեռ ես ոչ ոքին չապացուցած ձեր գրական կարողութիւնը, դեռ ոչ մի տեղ

---

[1]) Ակնարկելով և չլիշելով «Մուրճ»ը, պ. Շահնազարեան-Գնունին էջ 36 գրում է. «Մեր ամսագիր-ժողովածուներից մէկի մէջ ես մի անգամ արդէն խօսել եմ հայ կնոջ գրութեան մասին, և եթէ...» և այլն։ Եւ սակայն, ո՞ր հեղինակը կը կամենայ սքօղել այն աղբիւրը, ուր ընթերցողը կարող լինի կարդալ ակնարկած ցօդուածը։ Ահա ձեզ մի նեղ հայեցողութիւն, որով մէկը «կուսակցական փրթոչի» մէջ ընկնել է կարծում արդէն միայն նրանով, որ կը չիշի թէ ինքը մի այլ թերթում գրել է...

չաշխատակցած, դեռ չենթարկուած որ և է ընթերցող հասարակութեան դատաստանին, արդէն մի խմբագրողից ստանում էք գրական հասունութեան վկայագիր. և եթէ դուք չէք գրում ոչ մի տեղ, այդ միայն էնդուր է, որ դուք չէք կամենում ընկնել «մեր կուսակցական փրթոչի մէջ»! Դոնէ «Նոր-Փորձի» էջերում էլ է մի կարդալինք ու իմանալինք թէ ովքեր էք դուք, այդ «նորաւարտ նախապատրաստուածներդ, որ իրաւ, գրիչ ունիք, բայց... բայց թագցնում էք, միամիտների աչքում աւելի ևս կարևոր երևալու համար! Իսկ մինչև այդ, մենք միայն կարող ենք վկայել, որ Նոր Փորձ'ի այս առաջին տետրակում ինչ կայ ինքնուրոյն—միայն երկու հոգու է պատկանում. մէկը մի գրող է (Ադէլեան), որը լաւ յայտնի է Մուրճ'ի և միմիայն Մուրճ'ի ընթերցողներին, հետևապէս, ըստ «Նոր-Փորձ»-ի, փրթոչից է. բայց որը, ամեն հիմք ունինք հաստատ պնդելու, այդ փրթոչի վրայ բոլորովին այլ հայեացք ունի, քան նա, որին կամեցել է իւր մի գրուածքով օգնել. միւսը՝ «Նոր-Փորձ»-ի խմբագրողը ինքն է, որը, որքան մեզ յայտնի է, իւր ցայժմեան գրական փորձերը նոյն փրթոչումն է թաթխել, բայց միմիայն թաթխել, առանց եվման աստիճանին սպասելու...

Ընթերցողը ակներև տեսնում է, որ պ. Շահնազարեան-Գնունին ինքը անիմաց միայն իրեն է հարուածում, և իւր ունեցած հայեացքներով ներկայիս հայ քննադատութեան և միւս կողմից՝ ներկայիս հայ գրողների մասին—նա ինքը իւր ձեռքով թաղում է իւր «յառաջաբանի տեղ» գրած առաջնորդողը։

Բայց կայ և մի վնասակար տենդենցիա այս խօսքի մէջ թէ «մեզանում չկան այնպիսի թերթեր, որոնք զբաղուեն միայն և միմիայն գրականութիւնով, հեռու ամեն տեսակ լրագրական կուսակցութիւններից»։ Մի թերթի կենդանի վերաբերմունքը դէպի կեանքը, նորա մէջ գործող ամեն կարգի գործակորները, դէպի կեանքով յառաջացրած խնդիրները, դէպի գոյութիւն ունեցող ուղղութիւնները, դէպի գործող անձերը կեանքի և գրականութեան մէջ—այդ ամենը, եթէ միայն զեկավար սկզբունքների վրայ է հիմնուած, յառաջ կը բերի մի ուղղութիւն, որին դուք «կուսակցութիւն» անունը կը տաք. բայց երևակայեցէք այժմ, որ այդ նոյն ուղղութիւնը համակրողներ է գտնում ամեն կարգի գրողների—և հրապարակախօսների, և բելլետրիստների և տնտեսագէտների ու սոցիալական գործիչների և գրողների մէջ. միթէ ուղղութիւնով այդպէս յառաջացրած կեանքի ու գրագէտների խմբումը անհուն կերպով աւելի ծանրակշիռ գործ չէ, քան «կեանքի աղմուկներից հեռու» այն գրագէտների խումբը, որը վերջ ի վերջոյ իրան պիտի անձնատուր անի «զուտ գեղարուեստի» պաշտամունքին?

---

Նոր-Փորձի հրատարակողի զեկավար հայեացքները գրականութեան ներկայիս դրութեան մասին ոչ մի կրիտիկայի չեն դիմանում։ Այդ կարևոր է այն կողմից, որ ցոյց է տալիս պ. Շահնազարեանի, այսպէս ա-

ատած, հասունութիւնը, զարգացումը՝ կեանքն ու գրականութիւնը ըմռռնելու նկատմամբ. մի բան, որ արտահայտւում է նաև նորա կրիտիկական յօդուածներում, որոնք են՝—Անմեղ զոհեր (Գ. Զուբարի վէպերի ու պատկերների առիթով), «Ինչ է կտակել իր ազգին Ս. Պուշկինը» և «Մարդ թէ Անասուն» (Մարսէլ Պրէւո'ի առիթով)։

Նկատեցէք, որ այս երեք յօդուածներից երկուսը գրուած են ոչ հայ հեղինակների առիթով, որոնց գրքերի ուածքները միմիայն անուշան մասով թարգմանուած կան հայերէն։ Պուշկինը զոնէ լաւ ծանօթ է բոլոր նոցա, որոնք առնուազն միջնակարգ դպրոց են անցել Ռուսիայում, որ ասել է թէ հազարաւոր հայերի։ Բայց դեռ հարց է, թէ որ աստիճանի նպատակայարմար է հայերէն լեզուով, հայերի համար գրած քննադատութիւններ տալ այնպիսի գրքերի առիթով, որոնք հայ հասարակութեանը ծանօթ չեն։ Եթէ դուք գրում էք մի քննադատական յօդուած հայերին անծանօթ գրքերի առիթով, դուք չէք ունենալ ընթերցող հասարակութիւն, որը կրիտիկաբար վերաբերուի դէպի ձեր կրիտիկան. իսկ ուր այդպիսի հասարակութիւն չկայ—յօդուածը կը կորցնի իւր արժէքը. նա աննպատակ է, որպէս յայտնի մարդու «ձայն բառբառոյ յանապատի»։ Դուք կարող էք հարիւր յօդուած տալ այդ ձեւի, կռուել այս ու այն հեղինակների դէմ, պաշտպանել մէկին ընդդէմ միւսի—և դորանից ոչինչ չի դուրս գալ, եթէ այն գրուածքները, որոնց հիման վրայ գրուած կը լինեն այդ ձեր յօդուածները, անլսելի են այն հասարակութեան, որին դուք գիտում էք։ Այլապէս դուք պէտք է գրքերի բովանդակութիւնը մեծ հաւատարմութեամբ հաղորդէք ձեր ընթերցողներին։ Մարսէլ Պրէւոյի մասին գրուածը հէնց այդ պատճառով զուրկ է օգտակարութիւնից.

Կարող է քննադատութիւնը դուրս գալ եղած գրականութեան սահմաններից, թէ ոչ։ Դա հիմնական հարց է։ Մենք պատասխանում ենք «ոչ». քննադատութիւնը պէտք է բղխի եղած գրականութիւնից։ Ահա թէ ինչու հայկական քննադատութիւնը և նորա ինչ լինելը կախուած է հայկական գրականութիւնից, վերջինիս զարգացման աստիճանից։

Մի այլ մտքով աննպատակ յօդուած է նաև Պուշկինի մասին գրածը. Այդ յօդուածը իւր թէ պէտք է «բացանի մեր հասարակութեան աչքերը, այն նպատակով. նա այնքան էլ չը յափշտակի Պուշկինի գրուածքներով» (տես էջ 93)։ Սակայն ով կարող է վկայել թէ մեզնում տիրում լինի մի «յափշտակութիւն» Պուշկինով. մենք, ընդհակառակը, կարող ենք վկայել որ առանձին կերպով Պուշկինից յափշտակող հասարակութիւն բնաւ չկայ մեզնում, հետևապէս պ. Շահնազարեանի կռիւը չեղած երևոյթի դէմ միանգամայն ծիծաղելի է։

Ընդհակառակը. հայ գրականութիւնը դեռ միայն նոր-նոր սկսում է ծանօթանալ Պուշկինի հետ։ Եւ Պուշկինը առնուազը այնքան արժէք ունի, որ նորա հետ ծանօթանալը հայ հասարակութեան համար միարդամայն անհրաժեշտ է։ Պուշկինի

ռէալիստական բանաստեղծութեան հմայքի դէմ կատարելապէս անզօր են պ. Գնունու առաջ բերած այն ցիտատները, որոնցով Պուշկինը իւր թեթև վերաբերմունքն է ցոյց տուել դէպի կեանքը, պոէզիան, ամբոխը։ Այդ ցիտատներով դուք երբէք աւելորդ չէք դարձնիլ Պուշկինի ընթերցումը։ Մեր կարծիքով աւելի շնորհապարտ թեմա կը լիներ գրել այն մասին, թէ ինչու Պուշկինը, չնայած իւր բոլոր պակասաւոր հայեացքներին, այնուամենայնիւ կարդացուում է և դեռ շատ տարիներ կարդացուելու է, քան անհանգստութեան մէջ ընկած՝ չտապել և Պուշկինի դէմն առնելու հոգսը քաշել, քանի որ Պուշկինը մեզնում բնաւ լափշտակութեան առարկայ չէ։ Իսկ նկատել այդ լափշտակութիւնը այն բանում, որ մեր բանաստեղծները ևս չեն արհամարում երբեմն երբեմն դիմել «անտառին», «լուսնին» և այլն, դա աւելի քան միամտութիւն է։

Կրիտիկան կարող է զարգանալ, երբ նա կը զբաղվի այն կեանքով, ինչ կեանք որ ներկայացնում է այդ գրականութիւնը։ Մենք բնաւ համամիտ չենք այն մարդոց, որոնք կարծում են թէ գրական կրիտիկան կոչուած է ամեն ինչ ամփոփելու իւր մէջ—և հրապարակախօսութիւն, և՛ սոցիոլոգիա, և՛ փիլոսոփայութիւն և քաղաքատնտեսութիւն, և քրէական հոգեբանութիւն և այլն։ Ռուսիայում, մասամբ լայնի քաղաքական հանգամանքների չնորհիւ, գրական-գեղարուեստական կրիտիկոսները իրենց կոչուած են տեսել գրական կրիտիկան հասկանալ ամենաընդարձակ մտքով, և գրական կրիտիկան միջոց դարձնել քարոզելու այնպիսի մըտքեր, որոնք կարօտ են գիտական խիստ ուսումնասիրութեան։ Եւ որ դժխաւորն է, ընթերցող հասարակութիւնը գիտութիւնների վերջին խօսքը սպասում էր գրական կրիտիկոսներից, մինչդեռ դոքա միմիայն գիլետանտներ էին գիտութիւնների մէջ. և եթէ նոքա կարողացել են այդպիսի դիրք ստեղծել, այդ պէտք է վերագրել նոցա փայլուն տաղանդին մի կողմից, և քաղաքական ներքին հանգամանքներին ու գիտութիւնների ստոր դրութեանը Ռուսիայում—միւս կողմից։ Արևմտեան Եւրոպայում, ուր գիտութիւնները ազատ են, որպէս ազատ է նաև ներքին քաղաքական կեանքը,—մենք տեսնում ենք որ գրական կրիտիկոսները—նոյն իսկ ամենահանճարեղները նոցանից—բնաւ այն դերը չեն կատարում աճող սերնդի և ժամանակակից կեանքի համար առհասարակ, ինչ կատարել են Ռուսիայում մի Բելինսկի, մի Դոբրոլիւբով, մի Պիսարև, որոնք ժամանակի մտաւոր հոսանքի խօսքասարներն են եղած (portes-parole)։ Եւ այն ժամանակ, երբ աճող սերունդը Արևմտեան Եւրոպայում սպասում էր նոր հրատարակութիւնների Ս՛ընան՝ից, մի պատմաբան Միշլէից, մի բնագէտ Դարվինից, մի քաղաքատնտես Մարքսից, մի փիլոսոփա Ջոն Ստիւարտ Միլլից, մի սոցիոլոգ Սպենսէրից, և այլն և այլն—այդ նոյն ժամանակ ռուսաց աճող սերունդները անհամբեր սպասում էին մի լօգուածի Դոբրոլիւբովից, Պիսարևից և այլն։

ինչ համեմատութիւն այդ երկու տարբեր մտաւոր ոգեկան մթնոլորտների մէջ!

Գրական կրիտիկայի ռուսաց հին չկոլալի աշակերտ կարող է համարել պ. Շահնազարեան, որը դորանով արդէն մի քայլ ետ է գնում կրիտիկական գրականութեան այն բնական զարգացման շաւղից, որի վրայ մենք կանգնած ենք կարծում Մուրճը։ Դատողութիւններ դէսից-դէնից, առարկայի հետ անմիջական կապ չունեցող և իրար հետ զօրով կապած մտքեր, անվերջ ցիտատներ,— այդ ամենը իբր թէ անհրաժեշտ պարագաներն են բուն կրիտիկայի,—մինչդեռ դա աւելի ֆելիէտոն են լիշեցնում, քան լուրջ կրիտիկա։

Ո՞վ կը կարծէր թէ Գ. Զուբարի վէպիկների առիթով մի կրիտիկոս նոյն իսկ այդ սկսնակ վիպասանին կ'ենթարկէր քննութեան՝ մարդու «իրաւունքի և պարտականութեան» տեսակէտից, «անձնական ազատութեան» թէօրիայի տեսակէտից, այդ առիթով նաև վէճի մէջ մտնելով հնացած Պիսարեւի հետ, և դեռ ուրիշ բաներ էլ։ և այդ բոլորը էնդուր համար, թէ ինչու պ. Զուբարը աւելի չէ գրում վէպիկներ, քան նա մինչև այժմ գրել է! Եւ այդքան անպէտք դատողութիւններ լսելուց լեռնչ միայն, դուք հասնում էք յօդուածի II գլուխը, ուր վերջապէս սկսւում է Զուբարի վէպիկների քննութիւնը։ Եւ զարմանալի էլ չէ, որ, դեռ միմիայն այդ երկրորդ գլուխը քսան երես երկարցնելուց յետոյ, յօդուածը այնուամենայնիւ մնում է... չարունակելի։

Զենք կարող չնկատել նաև Նորֆորձ'ի խմբագրողի «օրիժինալութիւնները» նաև այլ կողմերից։ Երեւակայեցէք, որ պ. Շահնազարեան-Գնունին տէր է մի մեծ գաղտնիքի, այն է թէ ինչ է սէրը։ Նորա ասելով այդ հարցով զբաղուել են և շտապել են պատասխանելու թէ պոէտները և թէ բելլետրիստները, թէ բնագէտը և թէ բնազանց ֆիլոսոֆան։ Բայց ինքը պ. Շահնազարեան «մտադիր չէ» զբաղուել այդ «հետաքրքիր» հարցի «վիակտար լուծումով», որովհետև, ասում է նա, «իմ թեթեւ նկատողութեան մէջ այդ մեծ գործը անտեղի է» (տես էջ 96)։ Դեռ լաւ է որ խոստովանում է. բայց դորա փոխարէն՝ նա խոստանում է այդ անել մի այլ անգամ։ Այսպէս՝ք։

---

Մի վերջին նկատողութիւն ևս, և այս անգամ լեզուի մասին։

Մեր լեզուն դեռ ևս այնքան կարօտ է զարգացման, որ ոչ ոք չպիտի զարմանայ, եթէ մեզնում ամեն գրող իրեն կոչած է տեսնում լեզուի մշակութեան վրայ աշխատելու, նոյն իսկ նոր բառեր «թիսելու»։ Ինչ զարմանալու բան է, օրինակ, որ մենք, տեսնելով որ характерный, caractéristique բառի համար գործ էին ածում նշանակիչ, յատկորոշ, բնորոշիչ և էլ չգիտեմ ինչ բառեր, որոնցից ոչ մէկը չէր յարմարւում, մենք «թիսեցինք» մի նոր բառ—բնաորոշ, բնաորոշել և ապա, սղելով, չինեցինք բնորոշ, բնորոշել, որ և այսօր տեսնում ենք բոլոր ռուսահայերի կողմից արդէն վերջնականապէս ընդունուած։ Եւ կամ աւելնելով որ մատենագիր

սութիւն խօսքը հին դրոշմ է կրում, մենք այն փոխարինեցինք դրախօսութիւն բառով, որ և այժմ արդէն ընդհանրացած է։ Եւ կամ տեսնելով որ մեր հայերը, իրողութիւն և ապացոյց խօսքերի մէջ խարութիւն չդնելով, երկուսի համար էլ գործ են ածում փաստ բառը, մենք չկամեցանք հաշտուել մտքերի այդպիսի չիմաստութեան հետ, և փաստ-ի հետ դրինք նոյնպէս եւրոպական և ոչ աղաւաղուած ֆակտ բառը, փաստ-ը գործածելով ապացոյց-ի մտքով, ֆակտ-ը իրողութիւն բառի մտքով։ Եւ կամ մեղք չենք գործել «թիւելով» պատմուածք բառը, որը այնքան ընդհանրացած է այժմ։ Եւ այլն, և այլն։

Իսկ մեր լեզուի քաղաքական դրութեան մէջ գտնուող քերականական բաղմաթիւ ձևերը այժմ արդէն իրենց վրայ են դարձրել ընդհանուրի ուշադրութիւնը, և ցաւին դարման դրտնելը միմիայն խղճամիտ ուսումնասիրութեանն է վերապահուած և ոչ կամայականութեան և քմահաճոյքին։

Այդպէս չէ հասկանում խնդիրը պ. Շահնազարեան-Գնունի-Արտաշէս-Մելիքը։ Նա գիտէ թէ ինչպէս միաձայնութեամբ մամուլը աշխատում է դուրս վանել դիմորոշի անտեղի գործածութիւնը. բայց գիտենալով այդ՝ նա քիչ է մնում ամեն բառի քթին մի-մի կպցնի. կրիտիկոսներն, ընթերցողներն, նրա կամքն, և այլն և այլն։ Եւ կամ կը տեսնէք «օրիժինալութիւններ» այս ձևի. գեղարուեստ բառը գործածուած գեղարուեստագէտի մտքով! «որքան ուժեղ է գեղարուեստի խելքն, որքան աւելի կենարոնացած նրա կամքն...» (էջ 80 և ուրիշ տեղեր)։ Եւ կամ խօ ամենքս գիտենք թէ ինչ է արդարութիւն խօսքը. բայց Նոր-Փորձ՝ը կ՝ասի՝ «դա արդէն ծամծրմած արդարութիւն է» (ուզում է ասել՝ ճշմարտութիւն է. տես էջ 1 35, 53 և ուրիշ տեղեր)։ Անչափաս խօսքը նրան դիւր չի գալիս. նա կ՝ասի չչափաս (էջ 35)։ Մենք կ՝ասենք տարէցտարի, նա կ՝ասի՝ տարիս ըստ տարի (էջ 40)։ Մեր՝ք կ՝ասէինք՝ «այն զգացմունքը, որ մենք սէր ենք կոչում», նա թէ՝ «այն զգացմունքը, որ մենք սէր ենք կանչում» (էջ 95)։ Բայց որ մէկն՝ասենք. օրիժինալութիւններ ամեն քայլափոխում։

Օրիժինալութիւն չէ, օտար բառերը, որոնք առանց այն էլ մեծամասնութեան անհասկանալի են, աշխատել դեռ աւելի ևս անհասկանալի դարձնել գրելով օտար տառերով, ինչպէս այդ Վիեննայի Մխիթարեանները են անում. չէ՞ որ սոքա, բողոքելով հանդերձ օտար բառերի գործածութեան դէմ, իրենց բողոքը վերջացրին նրանով, որ սովորութիւն չինեցին օտար բառեր գործածել՝ գրելով այդ ամենը օտար տառերով, որ հազարից մէկը չկարողանայ ոչ միայն հասկանալ, այլ նոյն իսկ կարդալ...

---

Անչուշտ մենք կանգ առանք «Նոր-Փորձ՝ի այս առաջին տետրի միայն պակասաւոր կողմերի վրայ. բայց պատճառը այն է, որ երբ մի գործի պակասութիւնները մի որոշ սահմանից անցնում են, ամբողջ գործի արժէքը խախտւում է։ «Նոր-Փորձ»-ը, այս չենք կարող ուրանալ, թարմու-

թիւն ունի. Նորա բոլոր լուծածները ընթեռնելի գրածքներ են. բայց լուծածներից խակութիւն է բուրում, մի խակութիւն, որ ամբողջ ձեռնարկութիւնից խլում է այն լրջութիւնը, որ անհրաժեշտ է գործը ամուր հիմքերի վրայ դնելու համար, եթէ միայն այդ գործը հայկական քննադատական ճիւղի զարգացնելն է։ Եղիշէ Մաղաթեանից յետոյ, պ. Շահնազարեանը երկրորդն է մեզնում, որը լայնապէս գրականութեան կրիտիկական ճիւղին է նուիրում իրեն, եթէ հաշուի առնելու լինենք նաև նորա սկզբի փորձերը «Մուրճ»-ում. բայց, տարաբախտաբար, չենք կարող վկայել թէ պ. Շահնազարեանը իւր մինչ այժմ լոյս տեսած լուծածներով Եղիշէ Մաղաթեանից մի քայլ առաջ նշանակած լինի մեր քննադատական գրականութեան մէջ։ Ընդհակառակը!

Յանկանում ենք «Նոր-Փորձ»-ին մի շարունակութիւն, որին կարող լինէինք չնորհաւորել լուսաջղիմութեան համար։

Ա. Ա.

---

ՍՄԲԱՏԵԱՆՑ, Մեսրովբ արքեպիսկ.—Նկարագիր Շամախոյ թեմի։ Տփխիս, 1897 թ., էջ 589։ (Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանուց Սաղիանի և միւս վանօրէից և ուխտատեղեաց ևս և քաղաքացն և գիւղօրէից, որք 'ի Շամախուոյ թեմի։ (Սկսեալ 'ի 1887 ամէ ց-1895 ամն)։

---

Մեր բազմաթիւ վանքերը որոշ դեր են խաղացել ազգի պատմական կեանքի մէջ։ Ուստի ազգի ընդհանուր պատմութիւնը մշակելու համար անհրաժեշտ է ի նկատի ունենալ մասնաւորապէս վանքերի, մանաւանդ նոցա աւելի կարևորների պատմութիւնը։ Վերոյիշեալ գրքի մէջ հեղինակը աշխատել է կազմել Շամախու թեմում եղած վանքերի նկարագիրը և իրաւացի կերպով իւր գլխաւոր ուշադրութիւնը դարձրել է Սաղիանի ու Մէյսարիի վանքերի վրայ, որովհետև սոքա շատ հին են և անշուշտ դեր են խաղացել հայկական քաղաքակրթութիւնը Աղուանեան աշխարհում տարածելու գործի մէջ։ Սրբազանը մանրամասն տեղեկութիւններ է տալիս այդ երկու վանքերի անցեալի ու ներկայ դրութեան մասին, ցուցակագրում է սոցա եկեղեցական կահ-կարասիքը, վանական կալուածները և այլն։ Նոյնպէս հեղինակը ըստ կարելոյն տեղեկութիւններ է տալիս միւս վանքերի և ուխտատեղիների մասին։ Ի միջի այլոց նա հաւաքել է իւր գրքի մէջ վանական պատերից և գերեզմանաքարերից վերցրած արձանագրութիւններ, որոնք որքան էլ միատեսակ և անբովանդակ լինեն (այդ ի հարկէ սրբազանի

մեղը չէ), այնուամենայնիւ ամենի լաւ նիւթեր չեղած դէպքում թափանցիկ պատմագիրը կարող է նոցա մէջ էլ հարկաւոր նիւթեր գտնել։ Ուրեմն սրբազանը վատ չէ արել, որ այդ արձանագրութիւնները փրկել է իսպառ անյետանալուց, որովհետև պատերը կը փլուեն ու քարերը կը մաշուեն, իսկ տպագրական խօսքը կը մնայ։

Մեսրովբ սրբազանը մատուցել է իւր գրքով գարձեալ մի ուրիշ օգտակար ծառայութիւն. նա ժողովել է իւր գրքի մէջ Աղուանից աշխարհին վերաբերեալ մի շարք նկատողութիւններ, քաղելով զանազան հին ու նոր մատենագիրներից ու ճանապարհորդներից։ Հեղինակը սոցա վերայ քննական հայեացք չէ գցել, ընտրութեան առանձին ուշ չէ դարձրել և առհասարակ նոցա վերայ մի մտաւոր աշխատանք գործ չէ դրել։ Բայց և այնպէս լոկ մեքենաբար ի մի հաւաքելն էլ գովելի աշխատանք է, որովհետև ապագայ պատմագիրների գործը հեշտացնում է

Ահա սոքա են միակ մխիթարական տպաւորութիւնները, որ մենք ստանում ենք սրբազանի ահագին գրքից։ Եթէ հեղինակը փոքր ինչ խնայողութեամբ վերաբերուէր դէպի գրականութիւնը, և մի փոքր մտաւոր աշխատանք գործ դնէր, նա կը տար հայոց գրականութեան մի փոքրիկ, բայց որոշ արժանաւորութիւններ ունեցող գրքոյկ։ Բայց նա այդպէս չէ արել, որովհետև ունեցել է մի շարք կողմնակի նպատակներ, որոնցից մի քանիսը նոյնիսկ անհամակրելի են...

1. Գրքի վերջում հեղինակը զետեղել է իւր «Յուցակ ծառայութեանցը»։ Զբաղականալով սորանով նա ամբողջ գրութեան ընթացքում անդադար առիթ է որոնում իւր մասին խօսելու, այնպէս որ երբեմն լուրջ կերպով հարց է ծագում, թէ արդեօք նկարագրութեան առարկան թեմն է, թէ թեմակալը։ Բայց այդ էլ կարելի էր թողել, եթէ միայն հեղինակը իւր գործունէութեանց մասին լուրջ տեղեկութիւններ տար։ Բայց նա այդպէս չէ անում

«Բացի տաճարի շինութեան լրացնելն—ասում է հեղինակը իւր թէ Սաղիանի վանքի մասին խօսելով—իմ հաշուովը (հետաքրքիր է իմանալ այդ հաշուի հաշիւը) վարպետաց բացել տուեցի հարաւային պատից մի դուռն..., որոյ վերայ ծախս է եղած հարիւր մանէթից աւելի։ Եւ այս իրաւամբ նոր դրանս ճակատին փորագրել տուեցի հետեւեալ արձանագրութիւնը՝ «Առաջնորդ Հայոց թեմին Շամախւոյ Մեսրովբ (Արք) եպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի Լօռ զտաճարս՝ ի կիր բանալոյ զհարաւային նոր դուռս 'ի միշատակ ծնողացն.. »։ Ուրեմն սրբազանը հարիւր ռուբլի ծախսելով լաւերժացրել է թէ իւր և թէ իւր ծնողաց միշատակը և ոչ միայն լաւերժացրել է անշունչ քարերի վերայ, այլ և այժմ իւր լաւերժացման պատմութիւնն է լաւերժացնում ի գիտութիւն ապագայ սերունդների։ Այդ բոլորը կատարում է հարիւր ռուբլով, իսկ ամբոխը... Թող սորա աչ ձեռը չ'իմանայ, թէ ինչ է գործում ձախը։

Շամախումն մեր հնագէտ-հեղինակը չի կարողացել «ձեռք բերել հնութիւնք, ձեռագիր, մատեանք (?), դրամք (Շամախուն ոչ է դրամ տուել) և ոչ կաթուղիկոսաց կոնդակներ պատմութեան նպաստող», ուստի— ասում է հեղինակը—և իմ՝ Շամախուոյ թեմին առաջնորդ նշանակելու կոնդակը արտագրեցի այստեղ։ Ուրեմն հեղինակի կարծիքով միայն իրան վերաբերեալ կոնդակն է «պատմութեան նպաստող»։

Բայց Մեսրովբ արքեպիսկոպոսը չէ բաւականանում իւր անձին վերաբերեալ արձանագրութիւններով և կոնդակներով, այլ անհրաժեշտ է համարում հայոց պատմութեան համար և իւր մօտաւորների, օրինակ հարազատ եղբօր դամբանականը։ Շամախու հին գերեզմանատան մասին խօսելով սրբազանը նկատում է. «Այս հին գերեզմանատանը 1892 թուին համաճարակ ախտի ժամանակ թողեցինք մենք ևս մի գերեզման Հայրապետ եղբօր համար, որոյ տապանագիրն է հետևեալն»... Տապանագրի մէջ հետաքրքիր է միայն մի շարք. «Եղբայր էր սա առաջնորդին՝ Մեծին արհուն Մեսրոպայ»։

Ինչ վերաբերում է ծառայութեանց ցուցակին, այդ արդէն մի ծիծաղաշարժ կատակերգութիւն է։ Ցուցակի մէջ համարներով լիշուած են հեղինակի ծառայութիւնները։ Առաջին ծառայութիւնը այն է, որ հեղինակը այս ինչ թուին ծնուել է և անուանուել Գրիգոր։ Երկրորդ ծառայութիւնը. «ուսեալ իմ զնախապատրաստական դիտելիս ի հօրէս, այն է զայբուբենն, զընթերցումն գրոց, ժամագիրք»... Ի՞նչ ասել կուզէ, որ սոքա մեծ ծառայութիւններ են։ Սակայն ցուցակով չբաւականանալով հեղինակը գրքի վերջերում աւելացնում է, որ ինքը «նա և հրաւիրանօք բարեկամաց» մկրտել է «եօթ երեխայ» և պսակել է «վեց զոյգ ամուսնացողաց՝ Երևան, Նախիջևան, և Բագու քաղաքներումն»։ Այստեղ պիտի զետեղուած լինէին ամուսնացածների կենսագրութիւնները և մկրտուածների լուսանկարները։ Եւ դարձեալ ցուցակի մէջ մոռացած է նախկին առաջնորդի մի կարևոր գործունէութիւնը, որի մասին սակայն նա պատմում է գրքի 114 և 125 երեսներում։ Առաջնորդը Բաքու է գնացած եղել, ինչպէս ինքն հաւատացնում է, ծխաբաժանութեան, թեմական դպրանոցի և սոցա նման կարևոր խնդիրներ լուծելու համար։ Եւ այդ կարևոր խնդիրների շարքում դրած է «Անձնական տկարութեանս փարատման» խնդիրը։ Այստեղ թողնենք իրան խօսելու։ «Մի մեծ խնդիրն էլ տկարութեանս փարատիլն էր, որ Շամախի գալուց յետ ընկերացել էր ինձ։ Այս ներքին քարեղէն տկարութեանս (քարեղէն տկարութիւնը միշտ ներքին է լինում) քաջապէս օգնեց Բաքուոյ լարգոյ բժշկաց խորհուրդը... «խորհուրդ տալով հանքային ջրեր խմել»... Բայց մենք ինչ ջուր էլ որ խմում ենք, դարձեալ չենք կարողանում հասկանալ, թէ ինչ կապ ունի սրբազանի քարեղէն հիւանդութիւնը Աղանից աչխարհի պատմութեան հետ։

2. Բայց սրբազանը ոչ միայն իւր անձնով է զբաղում, այլ և շա-

բունակ առիթ է որոնում գովելու, գովաբանելու թէ մասնաւոր անհատներին, թէ ամբողջ տոհմեր և թէ ամբողջ դասակարգեր։ Այդ դէպքում նա բոլորովին ծանրակշիռ չէ անում իւր նկատողութիւնները, այլ աչ ու ձախ գեղեցիկ խօսքեր է շռայլում։ «Մեր վիճակային ատենի, ատենադպիր լարդոյ . . . . . բէկն —ասում է հեղինակը—օգնեց բարի խորհրդով, այն է Շամախւոյ եկեղեցւոյ կաթուղիկէն չինող վարպետին գտաւ...»։ Իբր թէ այս ինչ որմնադրին գտնելը արձանագրելու արժանի ծառայութիւն է։

Այս ու այն հարուստ անհատների պատկերները զետեղում է գրքի մէջ, ամբողջ ուղերձներ է նուիրում թէ արձակ և թէ նոյն իսկ ոտանաւորով։ Այդ գրուածքների մէջ այնպիսի տիտղոսներ են մատուցանում, այնպիսի բարեմասնութիւններ են վերագրւում, չնչին գումարներ զոհելու պատճառով, ՝որ մարդ ակամայ մտաբերում է լարախաղացի ներքեւում վազվզող «կեղծ փահլեւանին», որը իւրաքանչիւր կոպէկ վճարողին մարգարէների շարքն է դասում։ Այդ բաւական չէ. սրբազանը բոլորովին «անմեղ» անհատներ և տոհմեր «ամբողջ ազգի փառք ու պարծանք» է հռչակում։ Այդ էլ բաւական չէ... ամբողջ ցուցակներ է հրատարակում անմահացնելով չատ անգամ այնպիսի մարդկանց անուններ, որոնց առաւելութիւնը կայանում է միայն նրա մէջ, որ ոտաբոբիկ Բագու են գնացել և թէ կոյր բախտի բերմամբ, թէ ամբողջովին մամոնային նուիրւելով միլիոնների տէր են դարձել...

Մարդ տարակուսում է, թէ արդեօք հեղինակի նմանօրինակ չափազանցութիւնները չեն չառաջանում որ և է նեղ միտումներից...

3. Ուշադրութեան արժանի է նոյնպէս Մեսրովբ արքեպիսկոպոսի վերաբերմունքը դէպի հայ բողոքականները։ Մենք բոլորովին համակրում ենք օտարամուտ դաւանութիւնների դէմ մաքառելու մտքին։ Սակայն այդ մաքառումը պիտի լինի դրական ուղղութեամբ, խելացի՝ կերպով, գիտակցաբար։ Անտեղի մեղադրանքներով և անհամ զրպարտութիւններով հասարակական հիւանդութիւնները չեն բժշկւում։ Անմիտ և միանգամայն վնասակար է այն բժիշկը, որը թոքերի բորբոքումը հասարակ ջերմ է համարում։ Մեր մէջ յայտնւող օտարամուտ դաւանութիւնները, կամ աղանդները չեն չառաջանում լոկ չահասիրական, քաղաքական և սոցա նման նպատակներից. սոքա միայն երկրորդական դեր են խաղում։ Այլ նոքա նախ և առաջ և գլխաւորապէս հոգեբանական աղաւաղումների և մասաւոր մոլորութիւնների արդասիք են։ Մարդիկ չփոթւում են վազելով իրանց համար իրաք անհասկանալի, բայց երևակայութեանը գրգիռ պատճառող տեսութիւնների ետևից։ Այդպիսի մոլորումների առաջը կարող է առնել միայն և միայն մտքի լոյսը, որի ճառագայթներից կը չոգիանան ամենաթանձր ձիւնակոյտերը։ Իսկ կողմնակի բամբասանքները, որոնց նմանում են և Մեսրովբ սրբազանի արած նկատողութիւնները, չեն կարող մաքառել աղանդների դէմ ար-

դիւնաւոր կերպով։

«Բոլոր ազգերը միասին ու միմեանց հետ վարուում են սիրով (?) —ասում է սրբազանը խօսելով չամախեցիների մասին—բացի բողոքականաց, որք իրենց սուրբ համարելով ուրիշների հետ յարաբերութիւն չունեն... ու զարմանք չէ, որ չամախեցիք այդպէս են, ըստ որում Աղւանից ազգի մնացորդներն են (սրբազանը ինքն էլ գիտէ, որ այդ սուտ է, որովհետև գրքի մէջ քանիցս լիշում է, որ աղւանների մնացորդները այն մի քանի գիւղերի բնակիչներն են, որոնք այժմ էլ թաթերէն են խօսում, օր. Մատրասայ, Քիլւար...), և մեծ բան է, որ այս Շամախու բողոքականները քրիստոնեայ են մնացել, չեն թուրքացել...» «Հարկ չհամարեցի» (շատ ի զուր) «միւս չամախաքնակ ազգերի թիւն ու հաշիւը գրել, միայն անշնորհք հայ նեստորականաց թէ բողոքականաց տան թիւն իմացայ։» Երբ ուրեմն խնդիրը չոր ու ցամաք թուերին է վերաբերում, դարձեալ սրբազանը աւելորդ չէ համարում չպրտել բողոքականների հաստէին մի քանի անհամ ու անբովանդակ ածականներ։ Բայց սորանից աւելի հետաքրքիր յարձակումներ ունի սրբազանը։ «Ըստ որում, ինչպէս քանիցս անգամ ասել եմ—շարունակում է հրապարակախօս հեղինակը—մեր ժողովուրդը կարծես մի տեսակ թմրութեան, անտարբերութեան և խարբալման մէջ է ըստ կրօնականին». (խօսքը ոչ թէ չամախեցիներին է վերաբերում, այլ ամբողջապէս և մանաւանդ ամբողջ հայ-երիտասարդութեան)։ Այդ բողոքը քանիցս լսել է և ուրիշների կողմից, բայց Մեսրովբ սրբազանը աւելացնում է, որ այդ տեղի է ունենում «ի հարկէ չնորհիւ սուտ եղբարց»։ Այդ արդէն անհամ զրպարտութիւն է։ Անտարբերութիւնը ըստ կրօնականի, այն մտքով որ հասկանում է սրբազանը, մեր ժամանակի յատկանիշն է որ յառաջացել է բնական գիտութիւնների զարգացման և դրական փիլիսոփայութեան ազդեցութեան տակ, ուստի և տարածւել է ամբողջ արևմտեան Եւրոպայում և շարունակում է տարածւել ամեն տեղ, ուր եւրոպական քաղաքակրթութիւնը ոտք է կոխում։ Մեսրովբ սրբազանը կարող է այդ երևոյթը տխրալի համարել, իսկ մի ուրիշ մարդ կարող է նորա մէջ վիթխարական կէտեր գտնել, բայց խնդիրը սրանում չէ։ Մեսրովբ սրբազանը վերոյիշեալ երեւոյթի պատճառը համարում է «հայ աղանդաւորներին», որոնց կարելի է միայն մեղադրել կրօնամոլութեան և նախապաշարմունքների մէջ, իսկ սրբազանը Բէկոնի, Դարւինի, Ռենանի և Շտրաուսի գործը վերագրում է այդ ողորմելիներին։ Միևնոյն է թէ մէկը սոցիալական սկզբունքների Եւրոպայում տարածւելը վերագրէր Մեսրովբ սրբազանին և նորա նմաններին։

4. Վերջապէս ինչ վերաբերում է տեղագրական (վանքերը չհաշուած) նկարագրութեանը, այդ էլ թոյլ, աննպատակ և խառնափնթոր է, այնպէս որ աւելի լաւ կլինէր, որ բոլորովին բացակայէր։ Գիւղերի և գիւղացիների մասին հեղինակը չի կա-

մենում խօսել, «Զալալեանցի գրածից և... Շահնազարեանցի գրածից մի մեծ տարբերութիւն չտեսնելով, այն է մի նորութիւն կամ առաւելութիւն»... Իսկ մենք կասենք, որ ոչ միշեալ հեղինակները և ոչ Մեսրովբ սրբազանը գիւղերի ու գիւղացիների իսկական նկարագրութիւնը ոչ տուել են և ոչ էլ բաւականաչափ պարզ ըմբռնում են նորա նշանակութիւնը, գոնեայ վերջին հեղինակը։ Իսկ Շամախուոյ թեմի չորս քաղաքները՝ Բաքու, Շամախի, Ղուբայ և Դարբանդ» սրբազանը կարօտ է համարել «լատկապէս ստորագրել» (այդ էլ մեծ բան կը լինէր, եթէ իսկապէս կատարած լինէր, գոնեայ փոքր ինչ խնամքով), որովհետև «այդ քաղաքները բաւական փոփոխութիւն են ստացել առաջւանից, մանաւանդ.... Բաքուն։ Եւ ահա Բաքուի մասին հեղինակը տեղեկացնում է, որ նա գտնւում է Կասպից ծովի ափին, թէ այնտեղ նաւթագործարաններ կան, թէ այնտեղ կան հաւեր ու թուրքեր և այլն... թէ այսինչ թվին Մակար կաթուղիկոսը Բաքու եկաւ, թէ Նորան այսպէս ու այնպէս ընդունեցին... Մի չարք ամենքին վաղուց լայտնի և այլևս ոչ մի հետաքրքրութիւն չներկայացնող տեղեկութիւններ։ Այդ բանը ինքը հեղինակը հասկանում է, ուստի և եզրափակում է իւր նկատողութիւնները հետեւեալ կերպով. «որովհետև Բաքում մի նշանաւոր հնութիւն կամ նորութիւն չկարացինք գտնել..... ուստի կարեոր համարեցի այն անդրանիկ կոնդակի (Կաթողիկոսի օրհնութեան) պատճէնը դնել գրքիս մէջ և համարել զարդ ու փառք Բաքուին»։ Նախ զարմացնում է մեզ, որ հեղինակը Բաքում ոչ մի նորութիւն չէ գտել։ Մինչդեռ վերևում պնդում էր թէ Բաքուն մանաւանդ բաւական փոփոխութիւն է ստացել, որովհետև, որտեղ փոփոխութիւն կայ, այնտեղ և նորութիւն կը լինի, քանի որ փոփոխութիւնը հէնց նորութեան մէջն է կայանում, Երկրորդ մեզ համար կատարելապէս անհասկանալի է մնում թէ ինչու պիտի յատկապէս Բաքին զարդ ու փառք համարւի Պ. Եհափառի անդրանիկ կոնդակը, որը կարդացել է հայոց աշխարհի բոլոր անկիւններում։ Իսկ Շամախուոյ մասին տուած տեղեկութիւնները աւելի էլ անբովանդակ կամ անճիշտ են։ Շամախուս բարբառի մասին ծանօթութիւն տալու նպատակով բերած է մի խօսակցութիւն, որը աւելի հեշտութեամբ զարբաղցին կը հասկանայ, քան շամախեցին։ Օրինակ «լամսա, չմար, վրայ, անէծք, թափում, ասում ա թա, հինչաս, չմարաս»... պիտի լինեն լէմսա, հինչի, վէրա անիծք, թափըմ, ասըմաքի, հինչիես»։ Շամախու նիւթական բերքերի մասին լայտնում է, որ նա բերք ու պտուղ չունի ու մի քանի կրցկտուր տեղեկութիւններ է տալիս։ Ապա ըսկսում է թուել Շամախու բարոյական բերքերը, որոնք են ռուսաց եկեղեցին, հայոց թատրոնը (?) և այլն։ Նախ որ եթէ առհասարակ այսպէս բարոյական բերքերի մասին խօսք կարող է լինել, ապա Շամախու բերքերն են աւելի մահմեդականաց մզկիթները (քանի որ դարերի ըն-

թացքում գոյութիւն ունին, տեղական են), եւ լեռոյ՝ այդ ինչ հայոց թատրոնի մասին է խօսքը։ Թիֆլիսը իւր ամբողջ ինտելիգենցիայով և բաքուն իւր միլիոններով տակաւին չկարողացան հայոց թատրոն ունենալ, իսկ Շամախին ունի... այն Շամախին, որտեղից դուրս են քչում պատահմամբ լայտնուած շարմանկաածողները, որպէս զի հասարակաց քունը չխանգարուի։ Սրբազանին սխալացրած կը լինեն թերևս դեկորացիայի քանի մի հնամաշ կտորներ, որ նա նկատած կը լինի գուցէ քարուքանդ եղած սեմինարիայի սրահ աւերակ սրահում։ Բարոյական բերքերի շարքում բերուած է մի ցուցակ, որի մէջ լիշուած են մարդիկ, որոնցից ոմանք վաղուց ճանապարհուել են միւս աշխարհ, իսկ այս աշխարհումն էլ մի առանձին նշանակութիւն չեն ունեցած. և դարձեալ մարդիք, որոնք նոյնիսկ նիւթապէս էլ մի ոյժ չեն կազմում։

Ցանկալի է որ սրբազանը աւելի խնամքով վերաբերուէ դէպի իւր ապագայում հրատարակելիք աշխատութիւնները։

Ս. Թառայեանց

---

# Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌՔԵՒ

---

*Հայոց Հրատարակչական ընկերութիւնը, լանձին նորա վարչութեան մի անդամի, Մշակ'ի էջերում պաշտպանում է այն քննադատութեան դէմ, որին ենթարկուեց նորա հրատարակած «հանրամատչելի գիտական» մի գրքոյկը՝ Լունկեվիչի «Երկրի և Երկնքի մասին»։ Քննադատելով վերջինս, մենք գտել էինք աններելի կոպիտ սխալներ և այն էլ ոչ թէ մանրամասնութիւնների մէջ, այլ գրքի ամենաէական մասերում, սխալներ ու պակասութիւններ, որոնք դարձնում են գրքոյկը ուղղակի անպէտք և նոյն իսկ վնասակար։ Մենք մեր ասածները հաստատել էինք ցիտատներով և գրքի էջերը ցոյց տալով։ Դորա դէմ Մշակ'ի էջերում (№ 122) պատասխանում են այն ձևով, որը մեզ իսպառ աղատում է նորան ուշադրութեան առնելու պարտաւորութիւնից։ Մենք բաւականանում ենք այդ գրածքը ընթերցող հասարակութեան զգւանքին մատնելով։ Զբաղուել այդ ձևի պատասխանով կը նշանակի կամենալ ցեխոտել Մուրճ'ի էջերը։ Այդ գրածքից միակ խօսքը, որ կարող էր գին ունենալ, եթէ ճշմարիտ լինէր, այս է. «Այդ քննադատութիւնը լի է աղաւաղումներով»։ Սակայն աղաւաղելը այնպիսի բան է, որ կարելի է ապացուցել։ Այդպիսի մի բան դեռ ոչ ոք չի յաջողուել ոչ ոքին Մուրճ'ի նկատմամբ։ Այդ պատճառով, եթէ Հայոց Հրատ. ընկերութիւնը ունի որ և է հասկացողութիւն գրական պատշաճութեան մասին, պարտական է կամ ցոյց տալ թէ ինչումն են կայանում այդ «աղաւաղումները» և կամ հրապարակաւ հրաժարուելու համերաշխութիւնից, ակնարկած գրութեան անամօթ հեղինակի հետ։*

---

*Թի ինչ արժէք ունի Լունկեվիչը «հանրամատչելի» գիտական գրականութեան մէջ, այդ արդէն մենք ցոյց տուինք անցեալ անգամ. սակայն դէպքից օգտուում ենք մեր ընթերցողների առջև դնելու մի քաղուածք ռուսաց* Русская Мысль *ամսագրից, որի գրախօսը, գրեթէ միաժամանակ Մուրճ'ի հետ, քննադատում է Լունկեվիչի նոյնպէս նոր լոյս տեսած բայց ռուսերէն մի «հանրամատչելի» գիրքը։*

Քաղուածք Русская Мысль *ամսագրի* 1897 *թ. օգոստոսի գրքից, էջ* 357—359։

*Популярная біолоія.* Составилъ *В. В. Лункевичъ* Съ 208 рис.

въ текстѣ и одною хромо-литографіей. СПБ. 1897 г. Стр. VIII+449. Цѣна 2 рубля.

...Широта программы и важность разбираемыхъ вопросовъ заставляютъ быть строгимъ къ автору, и невольно задаешься вопросомъ: достаточно ли былъ авторъ подготовленъ къ столь трудной темѣ и не явилась ли книга плодомъ излишней самоувѣренности?... Внимательно ознакомившись съ произведеніемъ г. Лункевича, приходишь къ несомнѣнному заключенію, что авторъ вовсе неосновательно знакомъ съ зоологіей, ботаникой и геологіей, а лишь коечто читалъ по этимъ предметамъ и потому не только не въ состояніи критически отнестись къ степени достовѣрности той или иной теоріи, но даже постоянно впадаетъ въ фактическія ошибки и неточности, что особенно опасно для популяризатора, читатели котораго, по большей части, совершенно не въ состояніи отличить вѣрное отъ не вѣрнаго, вслѣдствіе своей неподготовленности.... Укажемъ теперь на нѣкоторыя мѣста текста, свидѣтельствующія о поверхностности знаній составителя книги... Вѣдь нельзя же разсчитывать на то, что читатели еще меньше знакомы съ зоологіей, чѣмъ авторъ, и подъ видомъ „популяризаціи науки“ сообщать нелѣпости!.... Приведенные примѣры выбраны наудачу, ихъ можно бы указать цѣлыми десятками. Конечно, тамъ, гдѣ составитель дѣлаетъ выписки изъ Дарвина, Леббока, Спенсера, Эспинаса, онъ не дѣлаетъ промаховъ, но вѣдь умѣнья дѣлать выписки недостаточно, чтобы быть популяризаторомъ.

*Թարգմանութիւն։*

*Հանրամատչելի կենսաբանութիւն։ Կազմեց Վ. Վ. Լունկևիչ. 208 նկարներով բնագրի մէջ և մի խրոմո-վիմագրութիւնով։ Ս. Պետերբուրգ, 1897, VIII+449 էջ. գինն է 2 ռուբլի։*

*«Ծրագրի ընդարձակութիւնը և չչափուած խնդիրների կարևորութիւնը հարկադրում են մեզ խիստ վերաբերել դէպի հեղինակը. և ակամայ հարց է ծագում՝ հեղինակը բաւականաչափ նախապատրաստուած է եղել արդեօք մի այդքան դժուարին առարկայի համար և թէ նորա գիրքը չափազանց ինքնավստահութեան պտուղ չէ արդեօք..... Ուշադրութեամբ ծանօթանալով Լունկևիչի հեղինակութեան հետ, գալիս էք այն անկասկածելի եզրակացութեան, որ հեղինակը բոլորովին անհիմնաւորապէս է ծանօթ կենդանաբանութեան, բուսաբանութեան հետ, այլ միայն բան ու ման կարդացել է այս առարկաների մասին, և այդ պատճառով ոչ միայն անկարող է քննադատաբար վերաբերուել ուրիշների այս ու այն հայեացքին և գնահատել այս և այն թէորիայի ճշդութեան աստիճանը, այլ և շարունակ*

ընկնում է ֆակտուլին սխալների և անճշդութիւնների մէջ, որ մանաւանդ վտանգաւոր է ժողովրդականացնողի (պոպուլարիզատորի) համար, որի ընթերցողները մեծ մասամբ անկարող են ուղիղը սխալից ջոկել, իրենց անպատրաստականութեան պատճառով..... Այժմ ցոյց տանք գրքի մի քանի տեղերը, որոնք վկայում են նորա կազմողի գիտութեան ծանծաղութիւնը։ (Այստեղ բերւած են մի շարք օրինակներ).... Խօ չի կարելի լոլսը դնել այն բանի վրայ, որ ընթերցողները հեղինակից դեռ աւելի էլ պակաս են ծանօթ կենդանաբանութեան հետ, և գիտութիւն «ժողովրդականացնողի» դիմակի տակ հաղորդել անհեղեղութիւններ» (ժողովրդական խօսքով՝ տխմարութիւններ, լիմարութիւններ, անսազութիւններ)։ «...Առաջ բերւած օրինակները ընտրւած են պատահաբար բայց կարելի էր ցոյց տալ ամբողջ տասնեակներ։ Իհարկէ այնտեղ, ուր կազմողը քաղւածներ է անում Դարվինից, Լեբբոկից, Սպենսէրից, Էսպինասից, նա սխալներ չի անում. բայց քաղւածներ անել կարողանալը դեռ բաւական չէ պոպուլարիզատոր լինելու համար։

---

Աւելցնենք մեր կողմից, որ ռուսաց ամսագրի այդ գրախօսականի մէջ, որ մենք քաղւածօրէն առաջ բերինք, չկայ մի հատ խօսք գրքի արժանաւորութիւնների մասին, այն աստիճան ամբողջ գիրքը անպէտք է թւացել նորա աչքում և այն աստիճան նա, մեզ նման, ապշած է եղել որ մի Լունկևիչ իւր տգիտութիւնով կարող էր ասպարէզ դուրս գալ և քննադատներին առաջարկել իւր այդքան անպէտք գիրքը!...

Երբ մենք Մուրճ'ի № 9-ում քննադատում էինք Լունկևիչի «Երկրի և Երկնքի մասին» գրքոյկը, որ նա գրել էր Հայոց Հրատարակչ. Ընկերութեան համար, մենք բնաւ տեղեկութիւն չունէինք այն դատաստանի մասին, որ կտրել է Русская Мысль ռուսաց նշանաւոր ամսագիրը նոյն հեղինակի նոյնպէս նոր լոյս տեսած բայց ռուսերէն գրքի մասին։

Բայց Մուրճ'ի և Русская Мысль-ի քննադատութիւնները Լունկևիչի գրքերի մասին այն տեսակներից են, որոնք արդէն դատաստան են անում ոչ միայն լիշած գրքերի, այլ և հեղինակի անձնաւորութեան։ Այդ քննադատութիւնները ցոյց են տալիս թէ որքան լանդուգն պիտի լինի մի մարդ, որը, անընդունակ լինելով երկու էջ գրելու առանց ամենակոպիտ գիտական սխալների, միաժամանակ երկու (հայկական և ռուսական) շուկաներ է ուզում ապահովեցնել իւր անպէտք կեղծ-գիտական արտադրութիւնների համար։ Եւ ոմ է նորա թեերից բռնած հայկական շուկայում, ում հետ է այդ մարդը դաշնակից?—Մշակ'ի խմբագրութեան հետ, ըստ ասածին թէ՝ նմանն դնմանն սիրէ.....

Ա. Ա.

# ԿՈՎԿԱՍԵԱՆ Վ-Դ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ

## ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

Ո՞ւմ յայտնի չէ, որ գեղարուեստների ծագումն ու զարգացումը մեծ կապ ունին ընդհանուր կեանքի պայմանների հետ։ Այն երկրում, ուր մարդկանց վրայ միայն ֆիզիկական ոյժն ու նիւթական բռնութիւնն են ներգործում, երբէք չի կարող զարգանալ և ոչ մի գեղարուեստ։

Պահանջի և առաջարկութեան օրէնքն անողոք է. նա տիրում է ոչ միայն տնտեսական աշխարհում, այլ ամենուրեք։ Եթէ ֆլորենտացիները ընդունակ չլինէին այնքան ջերմ հետաքրքրուել Պերսէոսի արձանով և այնքան չուզել, երբ Բենվենուտտո Չելլինի'ն ձուլում էր այդ արձանը բրոնզից, երբէք չէին ունենալ գեղարուեստի այն հրաչալիքները, որոնցով մինչև այժմ էլ հիանում է աշխարհը։ Եթէ իտալական ժողովուրդը Միքէլ Անջելոյին չ'աստուածացնէր, պապ Լեոն X-դի պէս մի հզօր պետ այնքան չէր վչտանալ, երբ անմահ նկարիչ-քանդակագործը մերժեց չինել նրա շիրիմի վրայ արձան, և Իտալիան չէր լինիլ գեղարուեստների ծննդավայրը։

Ռուսաց տաղանդաւոր անդրիադործ Անտոկոլսկին այս տեսակ փաստեր խորին դառնութեամբ է լիշում, աչքի առջև ունենալով ռուս հասարակութեան համեմատական անտարբերութիւնը դէպի գեղարուեստները։

Երբեմն աշխարհի զօրաւորները ընդունակ են մի զարկով անչափ նպաստել գեղարուեստների առաջադիմութեան։ Լուդովիկոս XIV-դը ստեղծեց ֆրանսիական ստիլը, Վատիկանի գեղարուեստական հարստութիւնը իտալացիները հռոմայական պապերին են պարտական։ Եկատերինա Մեծը, հիմնելով Պետերբուրգի հռչակաւոր Էրմիտաժը, ռուս հասարակութեան մէջ զարթեցրեց գեղարուեստի պահանջ։

Բայց այսպիսի անհատներ պրոզաիկ աշխարհում հազուադիւտ են։ Գեղարուեստների առաջադիմութեան միակ հաստատուն հիմքը դարձեալ ազգի հոգին ու սիրտն է։ Մինչև գերմանական նորագոյն երաժշտական դպրոցի երևան գալը, գրեթէ միայն իտալական երաժշտութիւնն էր տիրում քաղաքակիրթ մարդկութեան զգացումներին, որովհետև միայն իտա-

լական ազգն էր այնքան ջերմ վերաբերում դէպի իւր երաժիշտները և երաժշտագէտները։ Միայն նա գիտէր ծայրայեղ խրախուսել, ինչպէս և ծայրայեղ պարսաւել։ Լաւ է լօրինում վարպետը, նրա ուղին զարդարում են վարդերով, նրա տունը շրջապատում են և անվերջ ցոյցեր անում, նրան անմահացնում են։ Վատ է լօրինում,—արձակում են նրա վրայ, շաղցնում են, մտնում են մինչև անգամ նրա տունը, խլում են սեղանն ու գրիչը ձեռից։

---

Ի՞նչ գեղարուեստներ կարող էին զարգանալ Կովկասի նման մի երկրում, որ դեռ մի դար չկայ ազատուել է անքաղաքակիրթ մահմեդականների կոպիտ լծից։ Ի՞նչ գեղեցկի ու նուրբի պահանջ կարող է ունենալ մի ժողովուրդ, որի զգացումները տակաւին գռեհիկ են ու կոպիտ։ Գուցէ առանձին անհատները կարողանային մեր երկրին պատուաստել այս կամ այն գեղարուեստը, բայց ո՞ւր են այս տեսակ անհատներ։ Մի լայտնի ասութեանի ճիշտ է այն միտքը, թէ գեղարուեստին էական նպաստ ցոյց տալու համար ազգը կամ միջավայրը պիտի նիւթապէս ապահով լինի։ Արդարև, կան գեղարուեստներ, օրինակ, հէնց նկարչութիւնը և քանդակագործութիւնը, որ մի տեսակ շռայլութիւն են։ Ի՞նչպէս կարող է շռայլութեան դիմել նա, որի ստամոքսը դատարկ է։ Մարդիկ նախ մտածում են նիւթականի, ապա հոգեկանի մասին։ Իսկ ո՞վ չգիտէ, որ մեզանում փողը գրեթէ բացառապէս ագիտութեան և անճաշակութեան է պատկանում։

Մեր երկրում բոլոր գեղարուեստների մէջ ամենից արհամարհուածն է նկարչութիւնը։ Թիֆլիսը, որ Կովկասի, այսպէս ասած, գլուխն ու սիրտն է, դեռ երաժշտութիւն սիրում է ու լսում, թէև այս սէրը մեծ մասամբ ինքնաբուղխ չէ։ Իսկ նկարչութեան մասին նա տակաւին ոչ մի գաղափար չունի։ Թիֆլիսում կան մի քանի ձիրքով նկարիչներ, բայց շատերի տանը կը գտնէք, արդեօք, նրանց գործերից։ Եթէ մի քանի հարուստների տներում կը տեսնէք Բաշինջաղեանի «Արարատ»ը կամ «Սեանը», այս է բոլորը, բայց, ի հարկէ, գեղարուեստի հետ կապ չունեցող օլիոգրաֆիաներից։ Գուցէ այս կամ այն պլուտոկրատի տանը հանդիպէք ընտանիքի մի որ և է սիրեցեալ անդամի իւղաներկ պատկերը, բայց կը սխալուէք, եթէ կարծէք, որ գեղարուեստի պահանջն է բերել պատին քաշ արել այդ խծբծանքը։ Ոչ, դա ազգտ ունափառութեան մի նոր արդիւնք է...

Սրանից 10—12 տարի առաջ Թիֆլիսի կեղտոտ փողոցներից մէկում ոմն Միրզայեան բաց էր արել մի փոքրիկ սալոն։ Փոքրիկ էր այն, բայց ուշադրութեան արժանի իւր բովանդակութեամբ ոչ միայն Թիֆլիսի պէս մի լեռ ընկած քաղաքի, այլ և դուցէ մի մայրաքաղաքի համար։ Այնտեղ հանդէս էին դրուած 30—40 մեծադիր նկարներ, մասամբ ինքնագիր, մա-

տամբ տաղանդաւոր ձեռքի պատճէններ իտալական և ֆլամանդական հռչակաւոր նկարներից։ Յիշում եմ անգամ մի նկար, որի տակ գրուած էր Տինտորետտոյի անունը [1]։ Տինտորետտո և Թիֆլիս—կարծես, հէնց միայն այսքանը բաւական էր, որպէս զի սալոնը գրաւէր հասարակութեան գոնէ կրթուած դասի ուշադրութիւնը։ Բայց ինչ. մտնելով այդ պատկերահանդէսը, դուք այնտեղ կը տեսնէիք միայն մի մարդ։ Դա ինքը սալոնի տէրն էր—մի պատկառելի ծերունի, սպիտակ միրուքով ու մազերով։ Մեն մենակ նա թափառում էր ոսկէզօծ շրջանակների մէջ գրուած հին չիլալի նկարների առջև և հրճւում։ Այդ մի ամբողջ գեղարուեստական աշխարհ էր, որ սակայն ոչ ոքի ուշադրութիւնը չգրաւեց։ Նոյն իսկ մամուլը, որքան յիշում եմ, չխօսեց նրա մասին։

Սալոնը փակուեց անտրտունջ։ Մի քանի տարուց յետոյ մեռաւ նրա տէրը։ Եւ այժմ, ինչպէս լսւում է, այդ նկարները փիթում են ինչ-որ նկուղում։

Ահա ձեզ այն Թիֆլիսը, որ երբեմն սիրում է գեղարուեստների մասին խօսել ու դատել...

---

Միրզայեանի սալոնը, եթէ չեմ սխալւում, առաջին պատկերահանդէսն էր Թիֆլիսում։ Այնուհետև պ. Բաշինջաղեան բաց արաւ իւր նկարների առաջին հանդէսը, ուր օրաւ ընթացքում հազիւ կարելի էր տեսնել քանի մի տասնեակ այցելուներ։ Սակայն հայ նկարչի փորձն անհետևանք չմնաց։ Մի քանի ժամանակից յետոյ կազմուեց նկարիչների մի փոքրիկ խումբ, որ բաց արաւ առաջին Կովկասեան պատկերահանդէսը, որին հետևեց երկրորդը, երրորդը։

Այժմեան պատկերահանդէսը թւով հինգերորդն է. մի թիւ, որ, ինչպէս, պատկառելի է Թիֆլիսի պէս գեղարուեստներից դուրկ մի քաղաքի համար։

Հաղորդենք այժմ մեր անձնական տպաւորութիւնները այս վերջին հանդիսի մասին, հարկաւ, իբրև մի հասարակ դիլետանտ։

Սխալ է այն կարծիքը, թէ այժմեան հանդէսը հարստութեան և բովանդակութեան կողմից ստոր է նախկիններից։ Մարդկային երևակայութեան լատկանիշն է—միշտ անցեալը ներկայից գերադասել։ Ուշադիր դիտողը չի կարող անցեալների և այժմեան հանդիսի մէջ չտեսնել ահագին տարբերութիւն վերջինի օգտին։ Նախկին աշակերտներն այժմ հասունացել են, անփորձների վրձինը մշակուել է, առաջադիմութեան ընդու-

---

[1]) Այս նկարի պատճէնը, արտագրուած պ. Ցակովլեանի ձեռքով, դրուած է այժմեան պատկերահանդէսում։

նակները առաջադիմել են, իսկ մի քանիսն ասպարէզ են գալիս արդէն իրանց կարապի երգով։

Աչնուամենայնիւ, չպիտի թագցնել այն տխուր հանգամանքը, որ վերջին հանդէսը ընդհանրապէս վերցրած թոյլ տպաւորութիւն է թողնում գեղարուեստի տեսակէտից։ Ասպարէզ է հանած մօտ 440 գործ, որ պատկանում են 35 հոգու, հաշուելով սիրողներին և Պետերբուրգի նկարիչներ պ.պ. Պախոմովին և Էյսներին [1]։

Ենթարկելով մի ընդհանուր տեսութեան այդ բոլոր գործերը, դիտողի տպաւորութիւնը կանգ է առնում հազիւ նրանց 10%-ի վրայ։ այնքան քիչ է այստեղ ստեղծագործութիւնը և այնքան շատ արհեստն ու աշակերտական խծբծանքները։ Դուք տեսնում էք այստեղ և՛ մեծագիր նկարներ, և՛ փոքրիկ էտիւդներ, և՛ պէյզաժ, և՛ ժանր, և՛ պորտրետներ, ջրաներկ նկար (aquarelle), և՛ ծովանկար։ Տեսնում էք նոյն իսկ որոշ նկարչական դպրոցների ազդեցութիւններ, սկսած վերանորոգման (renaissance) դպրոցից մինչև, օհ, զարմանք, էմպրեսիոնիստների ոչ-դպրոցը։ Պակասում են միայն պրերաֆաէլիստները, միստիկները, վիբրիստները և այլն... Եւ այս խառնիխուռն հաւաքածուի մէջ տեսնում էք ստեղծագործութեան թոյլ նշաններ կամ ազնիւ փորձեր ստեղծագործելու։ Ճշմարիտ է, մի քանի փորձեր աջողել են, բայց հարիւրաւոր երկունքների մէջ նրանք աչքի են ընկնում իբրև տաղանդի հազւագիւտ ծնունդներ...

---

Պորտրետիստ-ժանրիստների մէջ առաջին տեղը պիտի տալ պ. Նշանեանին։ Նա է ամենից բեղմնաւորը և նա է աւելի աչքի ընկնում իւր աւարտած գործերով։ Միւսները ներկայացրել են մեծ մասամբ թերի գործեր կամ հասարակ էսքիզներ։

Պ. Նշանեանը, անկասկած, ձիրքով նկարիչ է։ Բայց նրա ձիրքը ստեղծագործութեան տեսակէտից բաւական մակերեսութեական է։ Ընդհանուր տպաւորութիւնը նրա գործերից վերին աստիճանի նպաստաւոր է, բայց ոչ խորը։ Նրա վրձինի հոգեբանութիւնը թոյլ է, գծերը թէև մանրակրկիտ, բայց սառն ու չոր։ Սակայն լուրջ վրձին է։ Մարդ հէնց առաջին հայեացքից զգում է, որ նկարիչը նախ անցել է լաւ դպրոց, երկրորդ՝ մտածող է, երրորդ — և այս պ. Նշանեանի ամենագլխաւոր արժանաւորութիւնն է—ունի բաւական զարգացած տեխնիկա։ Նա զուրկ չէ նաև իւր գործերը իդէալով տոգորելու ընդունակութիւնից, մի բան, առանց որի գեղարուեստը մանկական պաճուճապատանք պիտի համարել։

---

[1]) Այս 440 թիւը բաժանւում է այսպէս. 155 Պետերբուրգից եկած նկարիչների վրձինին է պատկանում, 70 սիրողների գործեր են, 52 զանազան քանդակագործութիւններ են, իսկ մնացեալը 16 պրոֆեսիոնալ նկարիչների գործեր։

Հարկաւոր եմ համարում նախազգուշացնել ընթերցողներին, որ իդէա բառի տակ ես տենդենցիա առած բանը աչքի առջև չունիմ։ Տենդենցիան բանաքննական նախադրեալ մի միտք է, որին նկարիչը կամ բանաստեղծը ծառայեցնում է և նոյն իսկ ստրկացնում իւր ձիրքը—ստեղծագործական հոգին։ Իդէան ծագում է արտիստի հոգուց ու զգացումներից. իդէան նկարուած կամ նկարագրած երևոյթների, տեսարանների կամ խմբերի ռելիեֆ բնորոշումն է, այն, ինչ-որ կազմում է իրերի էականը, ծուծը և ոչ կեղևը։ Պարզենք մեր միտքը ուրիշ խօսքերով։ Վերցնենք մի ժանրային նկար։ Եթէ նկարիչը այդ նկարի մէջ տիպերը տեղաւորել է անբնական կերպով, անպատճառ մի որոշ միտք արտայայտելու համար, և նկարի կոմպոզիցիան (կազմը) ձեզ հէնց առաջին հայեացքից թւում է բանաքննական—դուք, եթէ ճաշակով դիտող էք, երես էք դարձնում նկարից, ասելով. «գիտեմ նկարիչը ինչ է ուզում ասել»։ Դա տենդենցիա է։ Իսկ եթէ արտիստը կեանքի մի շարք համանման երևոյթների մէջ իւր ստեղծագործական բնազդումով կարողացել է ընտրել և վերաստեղծել այնպիսին, որ աւելի բնորոշ է բոլոր համանման երևոյթների համար և պատկերացնում է կեանքի մէջ յարատևը, էականը—դուք հիանում էք։ Դա գործի իդէան է։

Պր. Նշանեանը ունի իւր գործերի մէջ այս տեսակ իդէա մտցնելու ընդունակութիւն, թէև, կրկնում ենք, մակերևոյթական կերպով։ Վերցրէք նրա ամենաընտիր գործերը, որ, մեր կարծիքով, հետևեալներն են։ «Հալի գլուխը» (№ 30), «Նամակ կարդալը» (№ 72), մանաւանդ «Շէմքի մօտ» (№ 91)։ Այստեղ դուք տեսնում էք միևնոյն իդէան—կեանքի տառապանքներից հալածուած խեղճութիւնը։ Այստեղ դուք տեսնում էք մի որոշ միտք և զգացում, որոնցով անխուսափելի ղեկավարել է նկարիչը իւր գործերը ստեղծելիս և ղեկավարել է գուցէ առանց գիտակցութեան, ինքնաբերաբար։ Գլխաւոր թերութիւնն այստեղ ստեղծագործութեան մակերևոյթականութիւնն է, այն, որ «Հալի գլուխը» արտայայտում է ոչ հանրամարդկային խեղճութիւն, այլ բուն հալի խեղճութիւն, որ «Նամակ կարդալը» նկարի իդէան ներշնչած է ժամանակակից անցողիկ երևոյթներից և մի փոքր մօտենում է տենդենցիային։ Աւելի խորն է «Շէմքի մօտ» նկարի իդէան, որովհետև ով չգիտէ, որ աղքատութիւնն աւելի յարատև մարդկային տալանք է, քան գաղթականութիւնը և տաճկահալի տանջանքը։ Բայց այստեղ նկարիչը չաբլոնի հրապուրին է ենթարկուել։ Ակամայ հարցնում ես,—միթէ խեղճութիւնը միայն մուրացկանութեան մէջ է կայանում, միթէ չկան աւելի խեղճեր, քան մուրացկանները, միթէ պ. Նշանեանը աւելի հանրամարդկային տանջանքներ չի տեսնում, քան հալինը. կամ միթէ չի կարելի նոյն իսկ հալի տալանքը այնպէս արտայայտել, որ նա լինի, միևնոյն ժամանակ, և՛ առհասարակ մարդու տալանք։

Կրկնում եմ, պ. Նշանեանի վրձինը բանաստեղծական խորութիւն և

հոդերանական ճկունութիւն չունի։ Նա աւելի մանրակրկիտ աշխատաւորի—թէև մտածող և զգայուն աշխատաւորի—տպաւորութիւն է անում, քան խորը ստեղծագործողի։

Ներկերի ընտրութեան մէջ պ. Նշանեանը միատեսակ է։ Նրա բոլոր նկարների մէջ աչքի են ընկնում մուգ-կարմրագոյնը և կապոյտը։ Բացի դրանից, նրա բոլոր նկարները ոգեղեն են մի տեսակ վարդա-մանիշակագոյն թափանցիկ շղարշով։ Այս պատճառով նրա դէմքերն էլ, փոներն էլ հիւանդոտ տեսք ունին։ Վերցրէք նրա «Հմայող արաբուհին»։ Այդ ինչ մանիշակագոյն պատեր են։ Վերցրէք մանաւանդ նրա № 117-ը, որ ներկայացնում է մի ինչ-որ կնոջ գլուխ։ Դա կենդանի մարդու գոյն չէ, այլ աւելի խեղդուածի դէմքի գոյն։

Իբրև պորտրէտիստ պ. Նշանեանը նոյնպէս բաւական յաջողակ նկարիչ է։ Նրա № 66-ը նման է իսկականին, բայց հարց. արդեօք իւր տաղանդը լարդող արտիստը մի այդպիսի գործ ստանալիս պիտի հանէ՞։ Առօրեայ դէմքերը չեն կարող հանդիսի այցելուներին հետաքրքրել, միայն նրանց մէջ կը զարթեցնեն նկարչի վերաբերմամբ անհպատ զգացումներ...

Վերջացնելով մեր խօսքը պ. Նշանեանի մասին, կը ցանկանայինք, որ նա անի գոնէ այն, ինչ որ կարող է. փափկացնի վրձինի շեշտերը, շատ էլ չընկնի կապոյտ և կարմրակապոյտ գոյների ետևից, աղատի իւր գործերը մանիշակավարդագոյն հիւանդոտ շղարշից։ Ամենախոշոր նկարիչները, ի հարկէ, երբեմն ի չարն են գործ դնում այս կամ այն գոյնը, ինչպէս, օրինակ, Դելարոշը, որի նկարների մէջ տիրում է կապոյտն ու մոխրագոյնը։ Բայց հասարակութիւնը միայն մեծ տաղանդներին է ներում մեծ սխալներ...

---

Անցնենք պ. Գարաեւին։ Կան այդ նկարչին անչափ գովողներ, կան նաև անչափ պախարակողներ. մի հանգամանք, որ ցոյց է տալիս, թէ նկարիչը հետաքրքրութիւն է շարժում։ Իսկ հետաքրքրութիւն շարժելը, ասել է ֆլոբերը, աջողութեան կէտն է։ Անձամբ ինձ վրայ պ. Գարաեւի գործերը տարօրինակ տպաւորութիւն են գործում։ Ճշմարիտ է, նրա վրձինը աւելի հիւթալի է, քան պ. Նշանեանինը և գծերը աւելի համարձակ, բայց այդ ինչ հիւթ է. մասնաւոր, թէ՞ արիւն, որ տարածուած է նրա բոլոր գործերի վրայ։ Նրա ամենաաջող գործերը. № 33, 34, 36, 37, 38 և 39 էտիւդներն են, որ ներկայացնում են սարթերի, պարսկի և բուխարացու տիպեր։ Բայց նրա պարսիկը բոլորովին չի փչեցնում իսկական պարսկի տիպ։ Իսկական պարսկական տիպի բնորոշ գծերն են՝ նիհարութիւն, մելամաղձութիւն, ներս ընկած աչքեր, երկայնաձև ծնօտ, կոկորդի դուրս ցցուած

ոսկոր և ջղեր, խորը թաղուած արտայայտիչ աչքեր և այլն։ Իսկ պ. Գաբաեւի պարսիկը կարմրերես է, խոժոռադէմ, կնճռած ունքերով և աչքերը ցած գցած։ Առ հասարակ կարմրութիւնը նրա բոլոր տիպերի յատկանիշն է. բոլորը գէր են, մսալի, ճարպոտ։ Բացի դրանից, բոլորի վրայով, կարծես, անցել են ինչ-որ սուր մագիլներ և բզիկ-բզիկ արել երեսներն էլ, հագուստներն էլ. այս պատճառով դէմքերը ծածկուած են ինչ-որ վերքերով։ Այնուհետև, նկարիչը, երևի, բժշկական նպատակով, նրանց վրայ տարածել է ալիւրի փոշի։ Դուցէ այդ փոշին է, որ չի թողնում տիպերին իրանց աչքերը բանալ և նայել դիտողին։ Արդարև, այդ ինչ սէր է—մարդկանց աչքերը կուչ բերել և սեղմել կնճռոտ ունքերի տակ։ Եթէ ճիշտ է, որ աչքերը հոգու հայելին են, ապա պ. Գաբաեւի տիպերի հոգին զուր կաշխատէիք կարդալ աչքերի մէջ...։

Այսուամենայնիւ, պ. Գաբաեւը ձիրքով նկարիչ է։ Նրա վրձինից բուրում է կեանք, միայն այդ կեանքը տակաւին արտայայտուում է անորոշ։ Նրա ամենամեծ նկարը «Սամարղանդի բազարը» ամենից աւելի է ծածկուած ալիւրափոշիով։ Ինչպէս երևում է, նկարիչը այդ գործի վրայ մեծ աշխատանք է դրել։ Եւ, իրաւ, կարողացել է բաւական կենդանի վերաստեղծել արեւելեան բազարի կեանքը, թէև մի քիչ թատրոնական դիրք տալով մարդկանց խմբերին։ Միայն այդ ինչ ճարտարապետական կամ, ճիշտն ասած, մաթեմատիկական բծախնդրութիւն է—նկարել մեչեթը ամբողջ ֆասադով, այնպէս որ ճարտարապետութիւնը ձգտում է ամբողջովին կլանել բազարի կեանքը։ Բացի դրանից, այդ ինչ մեռեալ ֆոն է. ինչ դաջի պատ, որին, կարծես, սոսինձուել ու կպել են մզկիթն էլ, բազարն էլ, մարդիկն էլ։ Պ. Գաբաեւի համար խոշոր թերութիւն է, որ չգիտէ իւր նկարների ֆոնը առ հասարակ կենդանացնել, իսկ ֆոնը ներկայումս նոյն իսկ պորտրետների համար կարևոր է համարուում, ուր մնաց ժանրային նկարների համար։ Նրա միւս նկարների մասին չարժէ խօսել, իսկ «Լացարարները» ուղղակի նկարչութեան պաւոդի է (parodie), որ ոչ մի պատասխան արտիստ ասպարէզ չէր հանիլ...։

---

Ընդհանուր առմամբ լաւ տպաւորութիւն է թողնում երիտասարդ նկարիչ Յակոբեանի վրձինը։ Նրա պատկերների մէջ աչքի են ընկնում «Թամարիկը», «Մտածողութիւնը», «Ակադեմիական Նատուրշչիկը» (№№ 80, 132, և 100)։ «Թամարիկը», որ մի մատաղ աղջկայ դեղեցիկ գլուխ է, նկարուած է renaissance-ի ոճով։ Ֆոնի մուգութիւնը աղջկայ երեսին տալիս է դունատութիւն, բայց այդ երեսի գոյնը անհամեմատ աւելի բնական է, քան պ. Գաբաեւի արիւնանների դէմքերը։ Աւելի արտայայտիչ է «Ակադեմիական նատուրշչիկը», որ մի ծերունու գլուխ է, վերին աստի-

ճանի քնորոշ։ Ափսոս միայն, որ նկարիչը իւր տիպարին տուել է մի քիչ թատրոնական տեսք, ձգելով նրա ուսերին կարմիր քղամիդ։ Այստեղ արդէն զգացւում է էմպրէսիոնիզմի հոտ։ Վերին աստիճանի չտապ գործեր թւացին մեզ պ. Յակովբեանի ժանրային նկարները, մանաւանդ նրա «Բազարը Թիֆլիսում», ուր առաջին գծի վրայ մեծ դեր է խաղում այծը։ Իսկ նրա քառասուն էտիւդների և էսքիզների մէջ կան շնորքով գործեր, օրինակ նրա «Փուրդի դլուխը» և «Վրացի մանուկը»։ Կարճ ասած, մեր երիտասարդ նկարիչը ունի դիտելու ընդունակութիւն, բայց տեխնիկան անկատար է։ Վրձինը փափուկ է, հիւթալի և աւելի համակրելի քան պ. Նշանեանինը։ Պ. Յակովբեան ապագայ է խոստանում, միայն շատ պիտի աշխատի։

Նոյնը դժբաղդաբար չեմ կարող ասել մեր միւս երիտասարդ նկարիչ Փիրաղեանի մասին։ Դա արդէն աշակերտ է և, ինչպէս երևում է, անուղղելի աշակերտ։ Միակ քիչ թէ շատ աջողուած գործը պիտի համարել «Մշեցի հայը» (№ 5), բայց հանդիսում կան այնքան մշեցի հայեր աւելի լաւ, որ Փիրաղեանի այդ աջող գործն էլ նսեմանում է նրանց մօտ։

Շմերլինգի նկարները նոյնպէս կրում են աշակերտական բնաւորութիւն, բայց, ըստ երևոյթին, շատ բեղմնաւոր և շնորքով աշակերտ է։ Նրա ժանրային նկարների ֆոնները անհամեմատ կենդանի են, քան թէ Գաբաեւինը։ Բովանդակութեան կողմից նկարները բազմակողմանի են։ Բայց բոլոր գործերը զուրկ են ռելիեֆութիւնից։ Շատ թոյլ է մանաւանդ գոյների դասաւորութիւնը, և բոլոր նկարները սքօղած են բարակ մշուշով։

Թիֆլիսի հին ծանօթ պ. Լոնդոն այս անգամ հանդէս է եկել, բացի իւղաներկ նկարներից, նաև ջրաներկ նկարներով, որոնցից այնքի է ընկնում «Մշակը» (№ 10)։ Իւղաներկ գործերի մէջ № 126-րդ «Տիպը» բուն վարպետի գործ է և հիանալի գործ։ Շատ սիրուն է նաև «Թէյ ծախողը» (№ 6)։ Սակայն ամենուրեք երևում են նկարչի վրձինի լոգնածութիւնը և արհեստականութիւնը։

Միւս ժանրիստների և պորտրետիստների մասին բարոք եմ համարում լռել։ Շույցի «Դէպի օտարութիւնը» (№ 29) նկարի կոմպոզիցիան լաւ է, իսկ «Սկսնակը» (№ 135) կրիտիկալի չի դիմանում։

---

Անցնելով պեյզաժիստներին, պիտի նախ մի տեսակ կամուրջ համարել պ. Շամշինեանին։ Մինչև այժմ մենք այդ նկարչին ճանաչում էինք իբրև ժանրիստ, բայց այս անգամ նա երևան է դալիս աւելի բազմակողմանի։ Երբէք նա այդպիսի աջող գործեր ասպարէզ չի հանել, որքան այս անգամ։ Մի կողմ թողնելով նրա «Դէպի Մանդլիս ճանապարհը» (№ 6-ը) աքւարելը և «Պարսիկը մզկիթի դռների մօտ» (№ 16) փայտի վրայ կրա-

կով փորած օրիժինալ նկարը, որոնք նկարչի քմքի ծնունդ են, թէև բաւական աջող և հաճելի ծնունդ, մասնացուց կանենք նրա երկու աւելի քան աջող գործերը. «Բեդուինները անապատում» (№ 78) և «Լուսաբացը Կասպեան ծովի վրայ» (№ 97)։ Առաջին նկարը ուղղակի արտալատում է անհերքելի ձիրք, մանաւանդ բեդուինների պատկերների և զեղեցիկ կանգնուածքի մէջ, իսկ երկրորդը մի հիանալի ծովանկար է, որ աչքի է ընկնում իւր օրիժինալ գոյներով։ Մարդ նայելով «Լուսաբացին», զգում է ինչոր թարմութիւն և հոգեկան անդորրութիւն։ Այսպէս թէ այնպէս, պէյզաժների մէջ «Լուսաբացը» առաջին տեղերից մէկն է բռնում... Պարզ է, որ պ. Շամշինեան, վերջապէս, սկսել է դուրս գալ սառն ուսուցչի պաշտօնից և ընդունել արտիստի դեր։

---

Ստախովսկին, պ. Բաշինջաղեանից զատ, մեր նկարիչների մէջ ամենաբեղմնաւորն է։ Այս անգամ նա հանդէս է բերել 21 կտաւ, որոնցից շատերը բաւական մեծադիր են։ Զորութիւնը պ. Ստախովսկու վրձինի անխուսափելի պակասութիւնն է։ Տասը տարի է մենք տեսնում ենք այդ մարդու պէյզաժները և չենք լիշում մէկը, որ որ և է տպաւորութիւն գործած լինէր մեզ վրայ։ Կայ մի զարմանալի պաղութիւն, որ չի գրաւում դիտողի հայեացքը։ Այդ պաղութիւնը դուք կամայ ակամայ վերագրում էք նկարչի հոգուն և հայեացքի անգունութեանը։ Որքան դիտողի հայեացքը չի կլանում նկարով, նոյնքան պարզ է, որ նկարչի հայեացքը չի թափանցում սիւժէի խորութիւնը։ Թող պ. Ստախովսկու տեխնիկան զարգացած լինի որքան կամենայ, բայց միթէ տեխնիկայով է արտիստը ազդում դիտողի վրայ։ Ռէդենաուէրը երևելի տեխնիկա ունի, բայց լսողի վրայ աւելի ազդում է Զաուէրի նուագումը։ Տեխնիկան նկարչի կամ երաժշտի համար նոյնն է, ինչ որ ոճը գրողի համար։ Նա մեծ նշանակութիւն ունի։ Բայց միթէ ընթերցողի վրայ ամենաքանչելի ոճը կարող է ազդել, եթէ գրուածքի մէջ չկայ զգացում, հոգի, գաղափար, դիտողութիւն և հոգեբանութիւն։

Պր. Ստախովսկին բնութեանը չի հագցնում թատրոնական զգեստ, չի գեղեցկացնում, այսպէս ասած, չի ողորկում, բայց ինձ ինչ օգուտ նրա ցուրտ և անհոգի ռէալականութիւնից, երբ նա չի ազդում ինձ վրայ։ Նա էֆէկտների եռից չի ընկնում և երկրի ու երկնքի շքեղութեան հետ տալիս է և կեղտն ու անդոյնը, բայց որ հոգի չի ներշնչում իւր գործին, ես ինչ էսթետիկական հաճոյք կարող եմ զգալ նրա վրձինից։ Ի՞նչ է պէյզաժի նպատակը, եթէ ոչ—ներգործել դիտողի վրայ, զարթեցնել սէր դէպի բնութիւնը, անջատել զէթ ժամանակաւորապէս նրա հոգին առօրեայ հոգսերից և վերացնել դէպի գեղեցիկն ու բարձրը։ Ի՞նչ օգուտ

այն պէյզաժիստից, որի մասին շատ շատ կարող ես ասել. «այո, բաւական նման է արտադրում»։ Դեռ հարց է, ամեն մի նմանութիւն ռէալականութիւն է։ Ռէալականը էականի, ծուծի, հոգու մէջ պէտք է որոնել և ոչ կեղևի։ Բնութիւնը մի տեսակ perpetuum mobile—է, միշտ կենդանի, միշտ շարժուն։ Մի իմաստասէր ասում է. «մենք երբէք միևնոյն գետը նոյն դրութեան մէջ երկու անգամ չենք տեսնում»։ Այդ ասել է, որ բնութիւնը նոյնպէս փոփոխական է, ինչպէս մարդը։ Եւ երբ նկարիչը ուզում է բնութեան այս կամ այն տեսարանը կամ երեւոյթը վերարտադրել կտաւի վրայ, պէտք է որոնի և գտնի այն, ինչ որ յարատև է և աւելի բնորոշ։ Այվազովսկին ասում է. «ես երբէք իսկոյն չեմ նկարում այն, ինչ-որ տեսնում եմ։ Սև ծովի վրայ տեսած մի փոթորիկ շատ անգամ մի քանի տարուց յետոյ տանում եմ Միջերկրականի վրայ և այնպէս նկարում...»

Իսկական ստեղծագործողը գեղարուեստի բոլոր ասպարիզում նոյնն է անում, ինչ որ Այվազովսկին։ Իրերը տեղափոխելով, նոյն իսկ միմեանց խառնելով, գտնում է իրականը։

Իմ համեստ կարծիքով, պ. Ստախովսկին ստեղծագործող չէ—ահա միակ պատճառը այն բանի, որ նրա նկարները չեն ազդում մարդու վրայ...

Չեն ազդում կամ ազդում են շատ վատ նաև պ. Զախարովի նկարները։ Պր. Ստախովսկին դեռ նկարիչ է, իսկ ով է այդ Զախարովը, որ տատնուներք կանանչ կարմրագոյն սփռոցներ է դուրս բերել հանդէս։ Այդ ինչ ներկերի չռայլութիւն է։ Կարծես, նկարչի համար բացի կանանչից, կարմրից ու դեղնից, ուրիշ գոյներ չկան։ Եւ, վերջապէս, վրձինի այդ ինչ անփութ և անգոյն գծեր են։ Չըլինի՞ թէ պ. Զախարովը ուզում է դառնալ մի տեսակ բնածին էմպրեսիոնիստ... Ի դէպ, մի քանի խօսք էմպրեսիոնիստների մասին։

Ինձ թւում է, որ մեզանում շատ քիչ կամ բոլորովին գաղափար չունին էմպրեսիոնիստների մասին։ Այս շատ հասկանալի է. գեղարուեստներ չունինք, իսկ տեսականապէս էլ նրանց նորագոյն ուղղութիւնների մասին հասկացողութիւն կազմել չենք ուզում։

Ուշադրութեան արժանի է, որ գեղարուեստների ուղղութեան փոփոխութիւնը գրեթէ միշտ գրականական ուղղութեան փոփոխութեան հետ զուգընթացաբար է կատարւում։ Գոնէ երաժշտութեան և նկարչութեան վերաբերմամբ այս զուգընթացութիւնը պարզ է եղել միշտ։ Իտալական մուզիկան այն ժամանակից սկսեց տաղտկալի թւալ, երբ եւրոպական գրականութեան մեջ ռոմանտիկ ուղղութիւնը տեղի տուեց ռէալականին։

Էմպրեսիոնիստները նկարչութեան մէջ յատնուել են գրեթէ գրականական դեկադենտների և սիմվոլիստների հետ միասին։ Նրանք միևնոյն

դեկադենտներն են նկարչութեան մէջ, նրանց գոյութիւնը նոյն պատճառներից է առաջացել։ Իսկ այս պատճառներից առաջինն այս է։ Մի խումբ երիտասարդներ, տոգորուած գրականական փառք վաստակելու փափագով, չեն կարողանում մուտք գործել Պարիզի ամսագրերի կամ լրագրերի խմբագրատները։ Վշտացած այս արհամարհանքից, նրանք կազմում են մի տեսակ շրջան և պարբերապէս ժողովներ ունենում Պարիզի կաֆէներից մէկում։ Կամենալով անպատճառ իրանց վրայ ուշադրութիւն դարձնել, փառամոլները հրատարակում են գրականական նոր ուղղութիւն։ Նրանք ասում են, թէ բանաստեղծութեան համար կարևոր չէ ոչ իդէան, ոչ զգացումը, ոչ բովանդակութիւնը։ Ամեն ինչ ամփոփուած է բառերի, նոյն իսկ տառերի մէջ։ Այս կամ այն ձայնաւոր տառը ընթերցողի մէջ լղացնում է այս կամ այն զոյնի մտապատկերը, իսկ որոշ բառերի կրկնութիւնը որոշ ձևով՝ առաջ է բերում ամբողջ դաղափար։ Ասում են ու կատարում։ Գտնում են իրանց նման մի հրատարակիչ, լոյս են ընծայում գրքոյկներ «նոր ուղղութեամբ»։ Իսկ Պարիզում ամեն մի տարօրինակութիւն աղմուկ է հանում։ Հասարակութիւնը ուշադրութիւն է դարձնում, հետաքրքրւում է։ «Նոր ուղղութիւնը» երևս է առնում, հրատարակում է իրան գրականական դպրոց, գտնում է նաև մի շատ տաղանդաւոր պարագլուխ—Պոլ Վերլեն'ին, մի մարդու, որի մուսան բոլորովին կապ էլ չի ունեցել դեկադենտների երեւակայական մուսայի հետ։ Հասարակութիւնը նախ սկսում է ծաղրել, ապա լուրջ ուշադրութիւն դարձնել։ Ասենք, ծաղրը այսօր էլ շարունակւում է, բայց դեկադենտներն այնքան երևս են առել, որ գրականութիւնը ստիպուած է նրանց հետ հաշի նստել։ Նրանց համարձակութեանը նպաստում է և՛ այն հանդամանքը, որ Զոլայի նատուրալիզմը արդէն ձանձրացրել է նորաժոլ ֆրանսիացիներին, որոնք այժմ ծարաւ են գրականական մի նոր հոսանքի...

---

Գրեթէ նոյնպէս է ծագել նկարչութեան մէջ և՛ էմպրեսիոնիստների շկոլան։ Պարիզում կան ներկայումս, Անտոկոլսկիի ասելով, մօտ 30,000 նկարիչ։ Կար մի հատիկ սալոն, ուր տաղանդները կարողանում էին իրանց փայլը ասպարէզ հանել։ Այդ սալոնը տարեկան ընդունում է 4000 նկար։ Կարիք կար երկրորդ սալոնի. բաց արին, բայց այդ էլ քիչ էր, և շատ երիտասարդ անչայտ նկարիչներ մնում էին դռներից դուրս։ Ահա այս դրսում մնացածներն էին, որ կազմեցին դեկադենտների պէս մի շրջան և հրատարակեցին նոր ուղղութիւն նկարչութեան մէջ։ Տարբերութիւնն այն է, որ էմպրեսիոնիստները աւելի խելացի են և իրանց նոր ուղղութիւնը բացատրում են աւելի հասկանալի խօսքերով։ Նրանք ասում են, թէ նկարիչը չպիտի ընկնի դեսայների ետևից, այլ պիտի աշխատի տալ միայն առաջին տպաւորութիւնը (première impression)։ Ահա հէնց այս impres-

sion բառից է ծագել էմպրեսիոնիստ (տպաւորական) անունը։ Բացի դրանից, նրանք ասում են, որ նկարիչները պէտքաժը նկարում են տանը նստած։ Այս պատճառով նրանց երանգները կորցնում են իրանց բնականութիւնը, որովհետև նկարիչը տանը այնպէս ճիշտ չի կարող երևակայել պէտքաժի երանգները, ինչպէս իսկական բնութեան մէջ կան։ Վիբրիստները աւելի հեռու են գնում։ Նրանք ասում են, թէ պէտքաժը պիտի նկարել շարժուն դրութեան մէջ, այսինքն երևակայում են նկարչութեան մէջ ստեղծել մի տեսակ սինեմատոգրաֆ (շարժուն ֆոտոգրաֆիա)։

Տարբերութիւնն այն է, որ էմպրեսիոնիստները նկարում են խոշոր գծերով (штрихъ), իբրև թէ կամենալով տալ առարկայի միայն ընդհանուր տպաւորութիւնը, իսկ վիբրիստները մանր հատ հատ կէտերով, իբրև թէ կամենալով ցոյց տալ հողմի շարժումը, ջրի ընթացքը, տերևների սոսափիւնը և այլն և այլն։

Պ. Զախարովը, ըստ երևոյթին, մի որ և է տեղ տեսել է էմպրեսիոնիստների թանձր կանանչ գոյնով ներկուած նկարները, և ահա կամեցել է մեզ կովկասցիներիս զարմացնել իւր օրիժինալութեամբ։ Բայց ինչ ևս կամենալ անել, նրա 13 նկարներից և ոչ մինը ճաշակով դիտողի վրայ տպաւորութիւն չի անում։ Նրա տեխնիկան մեզ լիշեցնում է այն գրողներին, որոնք իրանց ոճը իբր թէ գեղեցկացնելու համար տեղի անտեղի դիմում են բազմաչարչար «Եւ»-ի, օգնութեան (Եւ նա եկաւ։ Եւ նա կերաւ։ Եւ նա նստեց...), կարծելով թէ մի շատ խորհրդաւոր բան ասացին և մեծ տպաւորութիւն գործեցին ընթերցողի վրայ։

---

Նոյնը չի կարելի ասել պ. Զանկովսկու վրձինի մասին։ Գերութիւնը, ճշմարիտ է, իւր անողոք դրոշմը դրել է պատկառելի և տաղանդաւոր նկարչի գործերի վրայ, և նա սկսել է, ինչպէս ասում են, կրկնուել, բայց այսուամենայնիւ նրա վրձինը ունի ստեղծագործական ուժ։ Մեզ վրայ առանձին տպաւորութիւն թողեց նրա «Էլբրուսը» (№ 114), մանաւանդ «Արարատը» (№ 19)։ Շատ լաւ է նաև նրա № 21 փոքրադիր նկարը «Գլխաւոր լեռնաշղթայից»։ Ընդհանուր տպաւորութիւնը պ. Զանկովսկու նկարներից այնքան մեղմ չէ, որքան ազդեցիկ։ Նա գիտէ Կովկասեան սարերին, ձորերին և ժայռերին ներշնչել իրանց բնական վսեմութիւնը։ Բայց նկարելով միշտ մուգ կապմիր կամ բոսորագոյն լուսով, տալիս է իւր գործերին միատեսակութիւն։ Սակայն նրա այժմեան «Արարատը» տարբերւում է իւր մշուշագոյն ներկերով միւս բոլոր գործերից։ Դա նկարչի ամենալաւ «Արարատն» է, եթէ չասենք ամենաընտիր գործը։ Բայց պ. Զանկովսկին երգում է իւր կարապի երգը...

---

Մեր ամենաբեղմնաւոր պէյզաժիչտ պ. Բաշինջաղեանը այս անգամ հանդէս է հանել 23 միջադիր և մեծադիր կտաւներ։ Նրա վրձինի բեղմնաւորութիւնը զարմանալի է, բայց ոչ այնքան էլ ուրախալի։ Նկատենք նախ և առաջ, որ մենք Բաշինջաղեանի տաղանդը համակրողներից ենք, իբրև գեղեցկի երկրպագու. ուստի այն, ինչ-որ պիտի ասենք, բղխում է մեր անկեղծ ցանկութիւնից։ Անհերքելի է, որ Բաշինջաղեանը յառաջադիմութեան ընդունակ է, աշխատասէր է և միշտ ուսումնասիրող բնութեան։ Ճշմարիտ է, նրա վրձինը միշտ ձգտում է բնութեան մէջ ուսումնասիրել այն, ինչ-որ անդորր է, նուրբ և գեղատեսիլ. բայց սխալ է կարծել, թէ այս միատեսակ ձգտումը ձանձրալի է դարձնում նրա գործերը։ Անմտութիւն և դեւեկութիւն է արտիստից պահանջել արտադրել այն, ինչ-որ նա չի սիրում կամ չի կարող արտադրել։ Պր. Բաշինջաղեան տալիս է մեզ բնութիւնը իւր խաղաղ, մելամաղձիկ և պօէտիկական տեսարաններով, և մենք իրաւունք չունինք պահանջելու, որ նա, իւր վրձինի բնաւորութեանը դաւաճանելով, տայ մեզ ուժեղ տեսարաններ, բնութեան, ասպէս ասած, դրամատիկական դրութիւններ—փոթորիկ, մրրիկ, բուք և այլն։ Նա ջուրը նկարում է անդորր դրութեան ժամանակ, օդը—խաղաղ, ամպերը—քնքուշ, գիշերը—գրեթէ բացառապէս լուսնեակի լուսով։ Այստեղ արդէն նա կատարեալ վարպետ է և բանաստեղծ վարպետ։

Եթէ պ. Բաշինջաղեան չի կարողանում ցերեկաւ լուսով այնքան աչող դուրս բերել բնութեան տեսարանները, որքան գիշերուայ լուսով—պատճառը նրա վրձինի բնաւորութիւնն է։ Այդ վրձինի ոգին թախծալի է և հանգիստ։ Իսկ ով չգիտէ, որ գիշերուայ մէջ աւելի թախիծ կայ, քան ցերեկուայ։

Ներկայ հանդիսում դրած նկարների մէջ ամենաաջողները հէնց գիշերային տեսարաններն են. «Գիշերը Կոջորում», «Լուսնի դուրս գալը ծովի վրայ», «Կէս գիշերը վրաց գիւղում» և «Մանթաշեանի իւղի գործարանը» (№№ 109, 107, 124 և 101)։ Վերջին նկարը ես համարում եմ պ. Բաշինջաղեանի 23 նկարների մէջ գլուխ գործոց։ Որքան քնքուշ ու թափանցիկ ամպեր, ինչ սիրուն լոյս և լուսոյ անդրադարձում ծովի անդորր մակերևոյթի վրայ։ Էլէքտրական լապտերների լոյսը վերարտադրած է զարմանալի վարպետութեամբ և այնքան կենդանի, որ դուք ոչ միայն տեսնում էք, այլ և, կարծես, զգում նրա անզօր մրցումը բնութեան լուսոյ հետ։ Այդ գեղեցիկ նկարի դժբաղդութիւնը նրա անաջող խորագիրն է. բայց մթթէ ճաշակ ունեցող դիտողը, միայն խորագիրը կարդալով, երես կը դարձնի այդպիսի գիշերից։ Նոյնչափ և գուցէ աւելի աջող գործ կը լինէր և՛ «Գիշերը Կոջորում» (109), եթէ երկու ծառերի ստուերները այնպէս մթին արտայայտած չլինէին։ Դրանք ստուերներ չեն, այլ, կարծես, ծառերի բունների չարունակութիւնը։ Ձեր առջև բացւում է

մի սքանչելի գիշերային տեսարան, ողողված լուսնի մելամաղձիկ լուսով, մանաւանդ ազդեցիկ, որ դուք չէք տեսնում լուսինը, այլ միայն նրա լոյսը, և չանկարծ այդ տեսարանը դրեթէ միջից կիսւում է երկու մութ գծերով։ Կամայ ակամայ բարկանում էք նկարչի դէմ, որ այս գծերովն է գրաւում դիտողի առաջին ուշադրութիւնը։

Ցերեկայ տեսարանների մէջ ամենաաջողն է «Ձմեռը լեռներում» (№ 26)։ Այս նկարը զարմեցուցիչ տպաւորութիւն է գործում։ «Ծիածանը» (№ 74) աչք է ծակում իւր վառ գոյներով, մանաւանդ—խիստ կապոյտ ներկի թանձրութեամբ։ «Անտառների» չարքում աջող է միայն № 32-ը, միւսները տպաւորութիւն չեն գործում։ Լաւ է նաև «Հայ գիւղը անձրևից յետոյ» (№ 128)։ Բայց այս ինչ բնութեան, այսպէս ասած, ազգայնական բաժանումներ են. «Հայ գիւղ», «Վրացի գիւղ» և այլն։ Բնութեան համար միթէ ազգերի խտրութիւն կայ։ Ուրիշ բան կը լինէր, եթէ պ. Բաշինջաղեան լինէր ժանրիստ կամ գոնէ իւր պէյզաժները կենդանացնէր կեանքի պարագաներով։ Բայց նա ոչ այս է, ոչ էլ դրեթէ այն է անում. նա տալիս է բնութեան տեսարաններ։

Պր. Բաշինջաղեան արհեստաւոր չէ, ինչպէս պ. պ. Ստախովսկին և մանաւանդ Զախարովը, այլ արուեստագէտ և բանաստեղծ։ Նրա վրձինի վարպետութեանը և ճկունութեանը օդ և ջուր նկարելում կարող էին նախանձել աւելի բարձր նկարիչներ, քան Կովկասինը։

Կան մարդիկ, որ ասում են, թէ պ. Բաշինջաղեանը էֆէկտների ետեւից է ընկնում։ Մեր կարծիքով, այս չէ նկարչի վրձինի թերութիւնը։ Առհասարակ պէտք է շատ զգոյշ լինել էֆէկտ բառը գործածելիս թէ նկարչի, թէ երաժշտագէտի և թէ բանաստեղծի գործերը քննելիս։ Շատ անգամ մեզ էֆէկտաւոր է թւում ստեղծագործողի նկարը, երաժշտական գործը կամ երկը լոկ այն պատճառով, որ նա ռելիեֆ է արտադրած, որ դիտողը, լսողը կամ ընթերցողը իսկոյն որոշում է գործի բնաւորութիւնը և անմիջապէս ազդւում. Ոչ մի խելացի քննադատ Շէքսպիրին կամ Շիլլէրին չի մեղադրիլ այն բանի համար, որ նրանց երկերը բոլորն էլ էֆէկտաւոր բովանդակութիւն ունին։

Բոլոր գաղտնիքը արտայայտելու եղանակի մէջ է։ Ի՞նչ կ՚ասէին պ. Բաշինջաղեանին էֆէկտի համար մեղադրողները, եթէ տեսնէին Կուինջիի «Գիշերը Դնեպրի վրայ» կամ «Լուսնկայ գիշերը Ուկրայնում», որոնց մէջ լոյսը և ստուերը, այսպէս ասած, իրանց ամենաթանձր էֆէկտով են արտադրուած։ Այն ինչ՝ այս նկարներն են համարւում ռուս նշանաւոր պէյզաժիստի ամենաաջող գործերը։ Միթէ Բեպինի «Յոան Գրոզնին և իւր որդին» էֆէկտաւոր նկար չէ—այն մոմենտը, երբ սոսկալի բռնակալը սպանել է որդուն և յետոյ գրկել նրա ջախջախուած և արիւնոտ գլուխը։ Միթէ էֆէկտաւոր նկար չէ՞ Վերեշչագինի «Պատերազմի ապօթէոզը»—այդ դանդերի ահագին

կիտուածը, որ բռնազբօսիկ և տենդենցիօզ կերպով բարձրանում է բուրգի նման, որպէս պատերազմի սոսկալի արձան։ Այստեղ էֆէկտը չի ոգևորել նկարչին, այլ երևոյթի ներքին իմաստը։

Բայց որովհետև պ. Բաշինջաղեանը "Վերեշչագին չէ և ոչ Բեպին, ուստի հէնց որ նա մի ազդեցիկ գործ է արտադրում, պէտք է գռաալ՝—նկարիչը էֆէկտների ետևից է ընկած! Դա էլ մի տեսակ մոդա է, թութակի պէս անգիր արուած մի դարձուած, որի բովանդակութիւնը չգիտեն իրանք արտասանողները...

Կրկնում եմ, էֆէկտների ետևից ընկնելը չէ պ. Բաշինջաղեանի վրձինի թերութիւնը, այլ բոլորովին ուրիշ բաներ։ Նա կարող է ընտրել ինչ էֆէկտային տեսարաններ ևս կամենայ—այդ իւր գործն է։ Բայց միայն պիտի իրական և ճիշտ նկարի ընտրածը—ահա գլխաւորը։ Իսկ այստեղ պ. Բաշինջաղեան երբեմն մեղանչում է գեղարուեստի դէմ։ Նա իւր ընտրած առանց այն ևս մաքուր, խաղաղ, անդորր և գեղեցիկ տեսարանները, արհեստական կերպով աւելի է մաքրում։ Վերցնենք ներկայ հանդիսում նկարչի հէնց «Մանթաշևանի իւղի գործարանը», որ, կրկնում եմ, նրա ամենաընտիր գործն է։ Ինչ կարիք կար այդ գործարանի շրջակայքը այնպէս հարթել, մաքրել, ողորկել, ինչպէս մի պարկէտ։ Չէ՞ որ դա Բաղուի այն նաւթալին իւղի գործարաններից մէկն է, որոնց չուրջը միշտ կեղտոտ է, երբեմն նաև նաւթալին լճակներով ծածկուած։ Բացի դրանից, ինչու այդ ցցուած խողովակներից ծուխ չի դուրս գալիս։

Բայց դանք պ. Բաշինջաղեանի գլխաւոր թերութեանը, որ սպառնում է նրա արուեստագէտի վրձինը դարձնել արհեստաւորի վրձին։ Դա նրա բեղմնաւորութիւնն է։ Հարկաւ, երևոյթիւն կը լինէր արտիստին կամ հեղինակին մեղադրել, թէ ինչու է նա շատ նկարում կամ գրում։ Բայց մենք իրաւունք ունենք պահանջելու, որ նա շտապ չը նկարի կամ գրի։ Հէյնէն ասում է. «Շտապ գրած գրքերը իմ մէջ նախապաշարմունք են դարթեցնում։ Օրինաւոր կինը հարսանիքից ինը ամիս անցնելուց առաջ չի ծնում»։

Նոյնը կարելի է ասել և բոլոր գեղարուեստական գործերի մասին։ Ամենաշատ գեղարուեստական գործերը հեղինակների դառն տանջանքների արդիւնք են։ Կարդացէք Գունոի կենսագրութիւնը և տեսէք որքան է աշխատել իւր «Ֆաուստի» վրայ։ Նոյնն է և՛ գրականական երկերի վերաբերմամբ։ Գոգոլը 14 անգամ ուղղում ու արտագրում էր իւր երկերը, իսկ Տուրգենևը 10 անգամ. և դարձեալ դժգոհ էին, որ ժամանակ չունէին երկու անգամ աւելի ուղղել և արտագրել։ Իսկ Բրիւլլովի, Իւանովի հսկայական նկարները միթէ օրերի և շաբաթների արտադրութիւն են։ Եթէ պ. Բաշինջաղեանին խրախուսում է Այվազովսկու օրինակը—զուր։ Հռչակաւոր մարինիստը ահա տասնուհինգ տարի է թխում է և ոչ ստեղծագոր-

ծում։ Վաղուց է նա չի արտադրում «Քաոսի», «Ինեերորդ Կոհակի» և «Ջրհեղեղի» պէս հանճարեղ գործեր։

Պարոն Բաշինջաղեանի 23 կտաւներից ամենաքիչը տասի տակ գրուած է 1897 թ.։ Այդ արդէն չափազանցութիւն է, ահա ինչու նրա գործերի մեծ մասը թիսած է, ինչպէս օրինակ «Կուրը գիշեր ժամանակ, Օրթաճալի կողմից», «Բեռ օղլին», «Արարատը միգապատ», «Կէսօրը», մանաւանդ «Օրաւ չորս միջոցները» (№№ 65, 96, 102, 134 և 161)։

Ցաւում ենք անկեղծ, որ պ. Բաշինջաղեանը այդպէս ի չարն է գործ դնում իւր տաղանդը. իսկ նա, մեր խորին համոզմունքով, գոնէ տեղական նկարիչների չրջանում ամենատաղանդաւորն է։

Պէյզաժը, որ վերջին ժամանակ սկսել էր Եւրոպայում անուշադիր մնալ, այժմ նորից դրաւել է նկարիչների սէրը։ Անգլիական պրերաֆաէլիստների երևակայական դպրոցը քայքայւում է և տեղի տալիս բուն ժողովրդական ուղղութեան, նաև պէյզաժին։ Այժմ մի քանի քննադատներ Անգլիայից են սպասում պէյզաժի համար նոր և թարմ ուղղութիւն։ Սակայն տակաւին Պարիզն է համարւում նկարչութեան, ինչպէս և առհասարակ բոլոր գեղարուեստների, գլխաւոր ժամանակակից ծննդավայրը։ Պ. Բաշինջաղեանի համար անհրաժեշտ ենք համարում մի եւրոպական ճանապարհորդութիւն...

---

Պետերբուրգից եկած պորտրետիստ—ժանրիստ Էյսների և պէյզաժիստ Պախոմովի մասին ասելիք չունենք։ Մենք սպասում էինք տեսնել, եթէ ոչ տաղանդաւոր նկարիչների, գոնէ հմուտ վարպետների գործեր, և հիասթափուեցինք։ Այդ բաժնում դրուած 155 գործերից ոչ մէկը տպաւորութիւն չի թողնում։ Նոյն իսկ Էյսների «Լուսաբացը» (№ 66), որ նրա ամենալաւ գործն է համարւում, մանկական խծբծանք է։ Դեռ մէջիթը և աղօթող մոլլան լաւ են. բայց այդ ինչ արիւնոտ, կանանչ և դեղին բծեր են, որ իբր թէ արեգակի լոյս են արտալուսում։

Այդ տեսակ անփորձ նկարիչներից մեր տեղական նկարիչները ոչ մրայն ոչինչ սովորել չեն կարող, այլև սրանք շատ բաներում կարող էին դաս տալ նրանց։ Ահա ինչու մեզ ապշեցրեց պ. Պախոմովի և Էյսների փքուն ոճով գրուած մի հրաւէրը Կովկասեան նկարիչներին՝ չփուել մայրաքաղաքի նկարիչների հետ։ Պախոմովները և Էյսներները իրանք կարող են աշակերտութեան։ Իսկ մեր նկարիչների համար խրատական կը լինէր չփուել ռուսական ընտիր վարպետների հետ...

---

Հանդէսում դրուած են 52 զանազան քանդակագործական իրեր, որ պատկանում են Խոդորովիչին, Նացունսկուն և մի հատիկ էլ (Շոթա Ռուստաելիի արձանը) Նիկոլաձէին։ Խոդարովիչի գործերը ընդհանրապէս գե-

ղեցիկ են, մանաւանդ նրա խմբային գործերը, որ գեղարուեստին հմուտ վարպետի ոգի են արտայայտում։ Եացունսկու գործերն էլ բաւական տպաւորութիւն թողնում են։ Իսկ պատանի Նիկոլաձէն ապագայ է խոստանում։

Դժբաղդաբար, քանդակագործութիւնը այժմ գեղարուեստների մէջ սկսում է կատարել արհեստի դեր, ինչպէս ճարտարապետութիւնը։ Երկիւղ կայ, որ մի օր այդ գեղարուեստն էլ կը կորցնի իւր նշանակութիւնը այնպէս, ինչպէս կորցրեց կաքաւագրութիւնը (хореографія), որ մի ժամանակ համարւում էր կենդանի անդրիագործութիւն (живая скульптура)։ Սակայն աշխատողներ կան ոչ միայն անդրիագործութիւնը բարձրացնել, այլ և, եթէ հնար է, կաքաւագրութիւնը հասցնել իւր նախկին դրութեանը... Իսկ այժմ փակոն այս է, որ քանդակագործութիւնը նոյն իսկ Իտալիայում և Պարիզում փայլուն դրութեան մէջ չէ...

Վերջացնելով մեր խօսքը պատկերահանդիսի մասին, կը ցանկալինք, որ մեր յարգելի նկարիչները չըվհատէին հասարակութեան համեմատական անտարբերութիւնից և աւելի զարգացնէին իրանց ձիրքը, մանաւանդ ճաշակը...

---

# ԿՌԻՒ ԱՒԱԶԱԿՆԵՐԻ ԴԷՄ

*Պրիստաւ Մոնաստիրսկու սպանուիլը*

---

1896 թ. Հոկտեմբ. 20, Երևան։

Լրագրական բազմաթիւ թղթակցութիւններից և հեռագրերից արդէն լաւնի է, թէ որպիսի պաշարման դրութեան մէջ էր Անդրկովկասը վերջին ժամանակներս աւազակութիւնների պատճառով, աւազակութիւններ, որոնց նմանը, ինչպէս պատմում են, չէր պատահել Շատ լանդուգն աւազակութիւնների մասին էինք լսել և կարդացել, բայց վերջին տարիներումս Անդրկովկասում պատահածներից ամենալանդուգնը ներկայ հոկտեմբերին պատահած քրդական աւազակային արշաւանքն էր, որին զոհ գնաց Էջմիածնի մասի պրիստաւ Մոնաստիրսկին։

Հանդուցեալը մի երկու ամիս էր որ նշանակւած էր մեր կողմերը. մեր երկրի պայմաններին բոլորովին անծանօթ, իւր պաշտօնավարութեան հէնց առաջին օրերից պատահում է մի կաղմակերպւած, մեր երկրին լատուկ, արշաւանքի, որին և զոհ է դառնում իւր անփորձութեան պատճառով։

Արշաւանքը կատարւել է, ինչպէս բոլոր պատմածներից երևում է, նախամտածւած, որոշ ծրագրով։ Ասում են, որ արշաւողները եղել են Զալալի քրդերից, որոնց ինչ ժամանակ սահմանն անցնելը լաւնի չէ։ Ոմանք Երևանի հիւսիս-արևելեան մի քանի գիւղերում պատահած աւազակութիւնները վերագրում են դարձեալ այդ քրդերին։ Բայց դրանց մեծ աւարը եղաւ Միսիանա գիւղի տաւարը։ Ցիշեալ գիւղը գտնւում է Արալի լերան հիւսիս-արևելեան կողմերում, Դարաչիչագի ձմեռում։

Հոկտեմբերի [redacted]-ին, երեկոյեան, գիւղի նախիրի վերադառնալու ժամանակ, քրդերը՝ թւով քառասուն ձիաւոր և հետևակ՝ գիւղացոց կողմից թեթև ընդդիմադրութիւն ունենալով, առաջ են անում գիւղի ամբողջ տաւարը մօտ 160 գլուխ և ճանապարհ ընկնում։ Ինչպէս երևում է, դոքա ունենում են իրենց հետ հմուտ ուղեցոյց, որովհետև աւարը տանելու համար ընտրում են ամենակարճ և ամենաքիչ բանող մի ճանապարհ, որը անցնում է Արալի լերան հարաւային փեշերով, Բաշ-Աբարանի տակով և Արագածի արևելեան լանջերով իջնում է Թալիշի վրայ և ապա շարունակում մինչև սահմանը։ Այդ իսկ ճանապարհով են քրդերը քշում տաւարը։

Հետեւեալ օրը հանդուցեալ պրիստաւը գնալիս է լինում Էջմիածնի մօտակայ գիւղերից մէկը, երբ նրան լսում են քրդերի աւարի մասին և ցոյց են տալիս ուղղութիւնը, որով տարած են լինում տաւարը։ Առանց յապաղելու, պրիստաւը վերցնում է իւր հետ որքան կարողանում է ձիաւորներ և գնում նրանց յետեւից։ Քրդերը այդ ժամանակ անցած են լինում իրենց ճանապարհի բաւական մասը. հասած են լինում Թաւիշ գիւղի մօտ գտնւած ձորը, ուր հանգստացնելիս են լինում տաւարը, որ գիշերով քշեն անցկենան սահմանը։ Պրիստաւը կասկածում է այդ ձորի վրայ. իջնում է ձիուց, ձին լանձնում է ձիաւորներին և ինքը ոտով, իւր հետ չունենալով մինչև անգամ հրացան, մի փոքր ատրճանակով գնում է քարերով փախստականների վրայ։ Այդ րոպէին նկատում են նրան քրդերը և գնդակահարում երկու տեղից։ Զբաւականանալով դրանով՝ մօտենում են, մի քանի անգամ երեսին խենջարի հարւածներ տալիս, աչքը հանում, ամբողջովին կողոպտում և մերկ մարմինը մի հին փալասի մէջ փաթաթած թողնում են այնտեղ, իսկ իրենք տաւարը քշում, անցկացնում Արաքսը՝ Իգդիրի մօտերում։ Մօտ քառասուն տաւար լոգնածութիւնից յետ են մնում։ Զորում հրացանաձգութիւնների ժամանակ վիրաւորւում է նաև դրագիրը։

Մի քանի մանրամասնութիւններից երեւում է, որ պրիստաւը զոհ է գնացել իւր անփորձութեան և հետի ձիաւորների վատութեան։ Վերջիններս փոխանակ օգնելու նրան, հրացանի ձայն լսելուն պէս՝ փախչում են. Մինչև անգամ մէկը այն աստիճան անսրտութիւն է ցոյց տալիս, որ վիրաւորւած դրագրի աղաչանքներին ոչ մի ուշք չդարձնելով, հեծնում է նրա ձին և փախչում։ Պարզ է, թէ ինչ լանդուզն արշաւանք էր սա։ Երկու օրւայ ճանապարհ տաւար քշել և անվնաս անցկացնել սահմանը...

Միջոցներ են ձեռք առնւած տաւարը վերադարձնելու և մեղաւորներին բռնելու համար, որ և յաջողել է ռուսաց ոստիկանութեան, գտնելով նոցա տաճկական Բայազէդի մօտերքում։

ՄԱՐ. ՅԱՐ.

# ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃ'Ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ։ *Մուրճ'ը դալ տարի մտնում է իւր տասներորդ տարեշրջանը։ Բաժանորդութիւնը* 1898 *թուականի համար բացւում է ներկայ համարով, որի հետ ուղարկւում են տպած ծրարներ և բլանկներ։ Խնդրում ենք, որ մեր բաժանորդները աւելորդ ուղարկած ծրարները և բլանկները բարեհաճեն տալ իրենց այն ծանօթներին, որոնք կը կամենան բաժանորդ գրւել* 1898*-ի համար։*

*Մեծապէս ցանկալի է, որ ցանկացողները վերանորոգեն իրենց բաժանորդութիւնը կարելիին չափ վաղօրօք։*

*Բաժանորդ գրւելու համար կարելի է դիմել նաև այն անձերին, որոնք յիշւած են ամսագրի ծածկի վրայ, որպէս նաև առհասարակ ում մօտ կան Մուրճ'ի անդորրագրեր։*

ԱԻԱԶԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ և «ՆՈՐԵԿ» ՎԷՊԸ։—«Աւազակութիւնը Անդրկովկասում» խորագրով Մուրճ'ի ներկայ №-ից տպւում է այն զեկուցումը, որ հոկտ. 25-ին արաւ նահանգական դատարանի քրէական ատեանի դահլիճում, իլաւաբանական ընկերութեան մէջ, սորա քարտուղար երդւեալ հաւատարմատար Ա. Ս. Ֆրէնկել։ Զեկուցումը կարդալուց յետոյ տեղի ունեցած վիճաբանութիւններից կարևորագոյնների հետ մենք կը ծանօթացնենք առանձին. միայն թէ այժմեանից անօգուտ չենք համարում նկատել, որ այն վառ պատկերը, որ վերին աստիճանի պլաստիկական ձևով ներկայացրուց հակաճառողներից մէկը՝ զինւորական դատարանի անդամ պ. Իւանենկով, մեզ յիշեցրեց Մուրճ'ում տպւած մեր աշխատակից պ. Բաբկինցի «Նորեկ» վէպի նկարագիրը, գաւառական թուրք բէգի նկատմամբ, որը գիտէ իւր հպատակութեան տակ պահել թուրք ազգա-

բնակութիւնը, ազդեցութիւն ձեռք բերել գաւառապետի և նահանգապետի մօտ և դուրս վռնտել իրեն անհաճոյ մի գաղափարական պրիստաւի, որը ժողովրդի շահերին է նվիրուած։ Խորհուրդ ենք տալիս հեղինակին այդ կենսալից վէպի ռուսերէն թարգմանութեան մասին հոգալ։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ, մեր աշխատակից պ. Հ. Սեհեանի, ուշ ստացած լինելու համար, յետաձգեցինք գալ անդամի։

---

ՊԱՏՐԻԱՐՔ ՕՐՄԱՆԵԱՆ։ «Բերլինէր Տագեբլատ» թերթի Կ. Պոլսի թղթակիցը լուր յայտնեց թէ Կ. Պոլսի Հայոց պատրիարքը կամենում է հրաժարական տալ։ Այդ առիթով գերմանական թերթի թղթակիցը այս դիտողութիւններն է անում թէ՝ մի կողմից հայերի տանջանքները և անընդհատ գործունէութիւնը, միւս կողմից Բ. Դրան անվիտ յամառութիւնը, յոգնեցրին պատրիարք Օրմանեանին։ Նա լաւ գիտնական է, բայց ոչ իշխան, դիպլոմատ։ Նորան պահարակում են ոչ թէ արածի, այլ չկատարածի համար։ Դուռը պահանջում է որ նա յեղափոխական գաղափարները արմատախիլ անի, իսկ Հայերը յոյս ունէին թէ նա Դրան առաջ եռանդով կը պաշտպանի հայոց շահերը։ Նա չկարողացաւ Դրնից ստանալ այն նպաստը, որ սովորաբար տալիս էր կառավարութիւնը հայոց դպրոցների և այլ հասարակական հիմնարկութիւնների համար, որի պատճառով այդ հիմնարկութիւններում ռոճիկներ չեն բաժանուած ներկայ տարուայ սկզբից և պատրիարքը միայն այժմ է սուլթանին դիմում արել այդ մասին։ Նա թոյլ վերաբերուեց, երբ Հայաստան և Անատոլիայի այլ նահանգները, անցեալ տարուայ խառնակութիւնների ժամանակ վնասուած հայ համայնքների կրած վնասները որոշելու համար, դելեգատներ ուղարկեցին. դելեգացիայի անդամներ միայն այժմ են ընտրուած—կէսը հայերից, կէսը թիւրքերից, որոնք չուտով ճանապարհ պիտի ընկնեն. և դորա արդիւնքներից կախուած կը լինի Օրմանեանի մնալ կամ չմնալը իւր պաշտօնում։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ։

Գերմանացիք։ Բացի այն ընկերութիւնից, որի ոգին դ-ր Լեպսիուսն է, և որի գործունէութեան մասին թէ խօսել ենք անցեալում և թէ դեռ ևս պիտի խօսելու առիթներ ունենանք, Գերմանիայում հայերին օգնելու համար հիմնուած է մի ընկերութիւն, որի վարչութիւնը Ֆրանկֆուրտումն է Մայնի վրայ, և որի գլխավորն է պաստոր Լախման։ Ընկերութեան կողմից կոմսուհի ֆոն Գրէբէն հաստատուեց Սկիւտարիում, ուր ապաստան բացարաւ 40 որբերի հա-

մար, ապա մի ապաստան ևս հիմնեց Բէրէկ'ում, Բոսֆորի գերմանական ափի վրայ, ուր 100 որբ ընդունեցին։ Կոմսուհի Ֆոն Գրէբէնից յետոյ, որը Գերմանիա վերադարձաւ, որբանոցի ղեկավարութիւնը ստանձնեց պաստոր Բրոկէս։ Ընկերութիւնը նոյն նպատակով բարեգործական հիմնարկութիւն է հիմնել Մարաշում, ուր կառավարիչներն են բժ. Գերլէ, ուսուցիչ Էնման և դիւղատնտես Ցիմմէր։ Կէս տարուայ մէջ նոքա Փոքր Ասիայի զանազան տեղերում ապաստարաններ են շինել որբերի համար։

Երեխաներին ուսում են տալիս և կրօնագիտութիւնը հայոց քահանաների ձեռքով է մատակարարւում, և այդ պատճառով պատրիարք Օրմանեան աջակցութիւն է ցոյց տալիս պաստոր Բրոկէսին։

Ռուսիայ։ Դրիգոր Ջանչիեւի խմբագրութեամբ հրատարակւած ռուսերէն «Եղբայրական օգնութիւն» գրքի վաճառումից առաջիմ դոյացած 4.860 ռուբլին (13.000 ֆրանկ) ուղարկւած է Կ. Պոլիս, ռուսաց դեսպանին, որը գրեթէ ամբողջ գումարը յանձնել է Կ. Պոլսի հայոց պատրիարքին՝ տառապեալ հայերին բաշխելու համար։

## ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ։

Հայրենիք վերադարձողների յաճախակի դէպքեր եղան Անդրկովկասից՝ Բաթումի վրայով։ Անդրկովկասեան երկաթուղին՝ վերադառնալ ցանկացողների համար՝ վերապահել է 500 ձրի տոմսակ մինչև Բաթում։

Թիֆլիսում ներկայումս մեր յատուկ տեղեկութեան համաձայն կան առնւազն 550 հայ փախստականներ, որոնցից մինչ 300 հոգի ապրում են մեծ խմբերով, իսկ միւսները՝ ցրւած զանազան տներում, մեծ մասամբ Մողնու եկեղեցու շրջակայքում։ Հասցրած օգնութիւններից արձանագրենք։

Վաճառական Միլեանց եղբայրներ 200 փախստականների հոգատարաժանեցին ոտնամաններ և դուլպաներ։—Աղեքսանեան և ընկ. կաշեգործարանը նվիրեց դաղթականներին մեծ քանակով ոտնամաններ, վերմակներ, թաղիքներ։—Նոյեմբերի 7-ին քաղաքային վարչութիւնը յանձնեց հայ դաղթականներին խնամող յանձնաժողովին (նախագահ՝ Ռէյտեր) ճերմակեղէններ 260 կտոր և 70 կտոր այլ առարկաներ՝ բաժակներ, թասեր, լապտերներ և այլն։—Նոյեմբերի սկզբներին Թիֆլիսի հահանգապետի ամուսինը, տիկին Ծովիանեանի և այլ տիկինների հետ այցելութեամբ եղաւ փախստականների մօտ, կազմակերպած լինելով կանանց կոմիտէ փախստականներին օգնելու համար։

Աւելորդ չենք համարում նկատել, որ փախստականներին օգնելու գործը Թիֆլիսում գրեթէ կատարելապէս քնած դրութեան մէջ էր մինչև սեպտեմբերի վերջերը։ Պատիւ է բերում երեք երի-

տասարդներին՝ մեր աշխատակից Ն. Աղբալեանին, Վ. Փափազեանին և Ս. Զուրաբեանին, որոնք Թիֆլիսում ապաստանած տաճկա-հայ փախստականների դրութիւնը իրենց հետախուզութիւնների առարկայ դարձնելով և իրենց տեսածը լրագրութեան միջոցով հրապարակ բերելով՝ ընդհանուրի ուշքը գրաւեցին մեզնում ապաստանած մեր խեղճ արիւնակիցների թշուառ կեցութեան վրայ։ Եթէ նոցա նպատակը հասարակութիւնը անտարբերութիւնից սթափեցնելն էր —նոքա կատարեալ հասան իրենց նպատակին։

Իգդիր շարունակում են գալ փախստականներ սահմանակից տաճկական Արճէշի և Ալջաւազի աւերակ դարձրած գիւղերից. ամեն շաբաթ 5—6 ընտանիք են գալիս։

Գանձակ'ում հոկտ. սկզբին հաշուում էին նոր եկած 100 փախստական։

Իգդիրի դորդ կոչուած գաւառակը (Գանձակի գաւառ) հիւրընկալեց մի խումբ փախստականներ, որոնք եկան Էջմիածնից և անցան Գանձակ քաղաքով։

Կարս'ում ապաստանած փախստականների մի ստուար մասը Էրզրումից և նորա գիւղերից են, մեծամասնաբար արհեստաւորներ՝ որմնադիրներ, հիւսներ և այլն։ Մի լրագրի թղթակից վկայում է, որ դոքա՝ Էրզրումից եկածները, վատ վարքի տէր են, չափազանց արբեցողներ են. ամբողջ շաբաթը աշխատում են, բայց կիրակի և տօն օրերը հարբում, գինետները լցուում, փողոցներում կամ կառքերում հայհոյանքներ տալով թրև գալիս, գերազանցելով Ալեքսանդրապոլի չայանի «չափխուններից» (կինտօներ, լոթիներ)։

Նեու-Յորկ (Հիւս. Ամերիկա) սեպտ. 13-ին հասան 170 փախստական։—Այս առթիւ Նեու-Յորկում ընկերութիւն կազմեց տեղական հայերից՝ նորեկներին գործ գտնելու համար։

Կիպրոս կղզում, մեր թղթակցի վկայութեամբ, հոկտեմբերին հաշուում էին 6-700 հայ փախստական. դոցանից 4-ը նորերս ընդունելին մահմեդականութիւն՝ մահմեդականներից օգնութիւն ստանալու համար։

ՆՈՎՈՑԵ ՎՐԵՄԻԱՑԻ ԿԵՂԾԱՒՈՐ ՈՂԲԸ։ Ով միայն ծանօթ է փիշեալ թերթի կատարեալ թաթարական ոգով գրած չօդուածներին ընդդէմ հայերին առհասարակ և Տաճկահայ շարժումներին մասնաւորապէս, մի թերթ, որը, սա անկասկած է, կատարեալ համակրութեամբ էր վերաբերուում դէպի թիւրքերը՝ հայկական կոտորածների ժամանակ և թէ դորանից դէս,—նա երբէք չի կարող թոյլ տալ, որ այդ թերթը կարող է զուտ մարդասիրական զգացմունքով նոյն իսկ հացի կարօտ հային որ և է կերպ օգնելու քարոզ կարդալ։ Եւ վայ այն մարդկանց

խմբին, որին մի հայի կտոր կ'հանի Նովոե Վրեմեայ'ի օգնութեամբ։ Եւ սակայն այդ թերթը հոկտեմբերի 10-ին մի առաջնորդող տպեց «Երկու մոխրակոյտ» վերնագրով, ուր լուզիչ խօսքերով ռուս հասարակութեան գութին է դիմում անում Թեսալիայի լոյներին և տաճկա-Հայաստանի հայերին ողորմութեամբ օգնելու համար։ Բայց Նովոե Վրեմիան ի զուր չէր տարիներ շարունակ աշխատել՝ ռուս հասարակութեան սիրտը իւր քաղաքականութեան սիստէմին ենթարկելու համար։ Այդ թերթը ինքը չի հաւատում իւր սեփական գրչին, իւր պատրաստած հասարակութիւնն էլ այդ լաւ գիտէ. և ոչինչ չկայ զարմանալու, եթէ նորա ուշացած քարոզը կեղծիք ընդունի։ Եւ իրօք, այդ քարոզը, չնայած որ մի ամիս է ինչ տպել է, Ռուսիայում արձագանք չգտաւ։

ԳԼՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ-ում, համաձայն տեսչի կարդացած հաշուի, 1896-97 դպրոցական տարում ուսել են 173 աշակերտ, որոնցից 31-ը երեք լսարաններում (դոցանից 9 հոգի աւարտեցին), 141 ը դպրոցական չորս վերին դասարաններում. բացի դոցանից, ճեմարան են փոխադրուել Ս. Գայանէի վանքում եղած 69 տաճկաստանցի որբ հայ երեխաներ։ Ցեսուէը լայտնեց այս ճիշտ միտքը, որ այդ որբերին հարկաւոր է արհեստ և ոչ ճեմարանական ուսում։ Սակայն ուր մնաց տարիներ առաջ յայտնած մտադրութիւնը՝ վանքի ագարակում գիւղատնտեսութիւն սովրեցնելու ճեմարանի աշակերտներին։ Եւ ոչ միայն այդ չարուեց, այլ դեռ հրաւիրուած վանական գիւղատնտեսին էլ ճանապարհ դրին այն ձևով, որ նա իրան համարեց խաբուած...

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԸ։ Ամերիկայի Միացեալ Նահանգներում հայերը արդէն այնքան շատ են, որ 18 քաղաքներում արդէն իսկ կազմակերպուած հոգաբարձութիւններ ունին. այդ քաղաքներն են՝ Ուստր, Պրովիդէնս, Բոստոն, Նեռ-Իորկ, Վոշնսուէթ, Պուտատէթ, Ֆիլադելֆիա, Ուայթինսվիլ, Լորէնս, Լովէլ, Հէրիլ, Նէշուէ, Զբրզի, Բրայտրն, Մոլդրն, Զբլսի, Լին, Սէյլիմ։ Միացեալ Նահանգների լուսաւորչական հայերին հովում են վեց քահանայ և վարդապետ, թէև միայն Ուստր'ում կայ հայոց եկեղեցի Ս. Փրկիչ անունով, որի քարոզիչ՝ Մաշտոց վարդապետ Փափազեանց՝ ընդհանուր հովիւ է Միացեալ Նահանգների հայոց։ Նեռ Իորկում գոյութիւն ունի «Հայ երիտասարդաց թանգարանի Միութիւն» անունով ընկերութիւնը, որը կազմուած է 1890 թ-ին, և, որպէս մեր թղթակիցն է գրում, հիմնուած էր Աղբակում նահատակուած Մկրտ. Աւետիսեանի հրահանգով, այն ժամանակուայ կոմիտէների (օթեակների) հիմնադրութեամբ և լուսեայն ղեկավարութեամբ։ Թէև այդ օթեակները այժմ կատարելապէս կազմալուծուած են, բայց մնացած փշրանքները նորից ոյժ են տա-

լիս և չարունակում են զեկավարել զուտ ազգային ուղղութեամբ։ Ընկերութեան նպատակն է՝ օտարութեան մէջ հայի սիրտը կապած պահել հայրենիքի հետ, և լեզուն անմոռաց պահել, և այլն։ Ընկերութիւնը ունի ընդհանուր ժողովը, որը ունի իւր համարառու դիւանը և մի խնամակալ-վարչութիւն, որը վարում է ընկերութեան բոլոր գործերը։ Խնամակալութիւնը բաղկացած է 5 անդամներից, որի ատենապետը թանդարանապետն է։ Ունին գրքեր, առաջիմ ցրած այլ և այլ անձերի մօտ. ընթերցարանի համար յատուկ տեղ չունի և առաջիմ միայն Մուրճ-ին են բաժանորդ։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Նոր-Նախիջեւանում իրաւասուների երկու ժողովում քաղաքագլխութեան բոլոր թեկնածուները ձայների մեծամասնութիւն չստանալով՝ համաձայն օրէնքի գաւառապետը նշանակեց քաղաքագլուխ Մ. Ե. Պալապանեանին, որ առաջ քաղաքագլուխ էր երկու քառամեակներում։

Ոչ մի կասկած չկայ, որ Թիֆլիսում, ուր ներկայ խորհրդարանի փոքրամասնութիւնը ամեն ջանք գործ դրեց ծաղրելի կացուցանել պ. Եւանգուլեանի ստացած ձայների առաւելութիւնը (38, ընդդէմ 31-ի), սուտ լուրեր տարածեց օրինապէս ընտրուած քաղաքագլխի հրաժարման մասին և չինծու բողոքներ տուաւ ընտրութեան օրինականութեան դէմ, այդ փոքրամասնութիւնը—Բարեանց-Քալանթար և ընկ.—դիտակցօրէն թէ անդիտակցօրէն աշխատում է, որ Թիֆլիսի քաղաքագլուխը ոչ թէ մեծամասնութեամբ ընտրուած լինի, այլ լինի կառավարութեան նշանակածը։

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄԻ ԽՆԴԻՐԸ։ Վլադիկաւկազի քաղաք. ինքնավարութիւնը միաք էր ազատել կառավարութիւնից խնդրել որ այդ քաղաքում բաղմարուեստեան դպրոց հիմնի. միաժամանակ նա դիմել էր Կովկասի այլ քաղաքներին որ զոքա օժանդակեն իրեն՝ դպրոցը ապահովելու համար. բայց այլ քաղաքները գրեթէ բոլորը մերժեցին, նոցա մէջ և Թիֆլիսը, որը որոշեց խնդրամատոյց լինել՝ պոլիտեխնիկումը Թիֆլիսում բանալու համար։

ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎԷՃ։ Ռուսաց կառավարութիւնը պահանջում է Պարսկաստանից 170.000 դեսեատին Մուղանի դաշտին կից, որից 30.000-ը կարելի է ոռոգել։ Այդ վէճը վաղուց քննած է յանձնաժողովների մէջ, բայց դեռ լուծում չի ստացել։

ՀՈՒՆՁԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ այս տարի չատ պակաս է սովորականից. նա մի փոքր աւելի է քան 1891 թուականինը, բայց չատ մօտ է 1880 թուականի հունձին, որը նոյնպէս ծանր տարի էր։ Միջին տարուանից այս տարուայ հունձը, որպէս հաշուում են, 69.630.000 չետւերտ աւելի պակաս է։

ԿԱՆԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ, որ, ինչպէս լայտնի է, այս տարի բացուցին Պետերբուրգում, ընդունել են 190 հոգի միայն, մինչդեռ խնդրատուների թիւը 500 էր։

ԱԶԱՏ ԿՈՒՐՍԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ։ Պետերբուրգում և Խարկովում համալսարանների պրոֆեսորները ձեռնարկել են դասախօսութիւնների, որոնց ունկնդիրներ կարող են լինել միջնակարգ դպրոցի 4-դ դասարանը աւարտածներ, որոնք, հետևապէս, չեն կարող «ուսանողներ» լինել։ Խարկովում, կրթական մինիստրի հաստատուած ծրագրի համեմատ, այդ կուրսերը բացուեցին հոկտ. 15-ին։ Կուրսերը աւանդւում են երկու սեմեստրում, այսինքն մի դպրոցական տարում և պարապմունքները լինում են երեկոները։ Դասախօսում են բնագիտական առարկաներ։

ԱԶԱՏ ՀՈՂԵՐԸ՝ ՌՈՒՍՆԵՐԻՆ։ Մինիստրութիւնների և կովկասեան կառավարչապետի մէջ համաձայնութիւն է կայացած, որով ազատ հողերը Կարսի, Արաւինի և Բաթումի շրջաններում վերապահւում են ռուս գաղթականներին։

ՌՈՒՍ ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՏՈԼՍՏՈՅ։ Կազանում կայացած ռուս միսիոնէրական ժողովում, որ եղաւ այս տարի, ի միջի այլոց վճռուել է խնդրել կառավարութիւնից, որ ռուս աղանդաւորներից խլուին նոցա որդիքը և, ուղղափառ կնքելով, նոցա տալ ուղղափառ կրօնի կրթութիւն։ Դորա դէմ Լև Տոլստոյ մի բողոք տպագրեց Պետերբուրգսկիյա Վեդոմոստի՝ի 15 հոկտ. համարում։

ԼՈՒԹԵՐԱԿԱՆ-ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ բոլոր եկեղեցական գրքերը պէտք է այսուհետև կազմեն ռուսերէն լեզուով, համաձայն կարգադրութեան ներքին գործոց մինիստրութեան այն բաժանմունքի, որ զեկավարում է օտարադաւան եկեղեցիների հոգևոր գործերը։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՀԱՇԻՒԸ։ Հրատարակած է Անդրկովկասեան երկաթուղու (Բաթում-Թիֆլիս-Բաքու և ճիւղեր՝ Փոթի, Բորժոմ) հաշիւը 1896 թ. համար, որից քաղում ենք այս թիւերը. պասաժիրներ (ճամբորդ) եղել են 1896 թւին՝ 2.179.453 հոգի (իսկ 1895 թւին կար 1.798,582 հոգի) ստացած է պասաժիրներից 1.665,773 ռուբլի 94 կոպէկ. (1895-ին եղաւ 1.591,494 ռուբլի 98 կոպէկ). ձրի պասաժիրներ եղած են 162,276 հոգի։ Ապրանք փոխադրուած է մեծ արագութեամբ 1.108,213 փութ (1895 թւին 871,697 փութ). փոքր արագութեամբ 162.163,303 փութ (1895 թւին 152,274,712 փութ)։ Ստացած է փոքր արագութեամբ ապրանքների համար 16.194,849 ռ. 63 կոպ. (1895 թւին 13.668,316 ռ. 1 կոպէկ)։

Ընդամէնը ստացած է ամեն կարգի փոխադրութիւններից 19.091,756 ռ. 3 կոպ. (1895 թւին 16.753,346 ռ. 91 կոպ.)։

Ծախք եղած է ընդամէնը 7.654,782 ռ. 11 կ. (1895 թուին 7.156,040 ռ. 88 կ.), իսկ լաւելուածական ծախքերով միասին 8.963,654 ռուբլի։

Զուտ եկամուտ ալսպիսով մնացել է 10.128,101 ռուբլի (1895 թուին 9.678.223 ռ. 31 կոպ.), չհաշուած պետական հարկը, որ եղաւ 245,778 ռ. 46 կ. (1895 թուին՝ 231,834 ռ. 28 կոպ.)։

Երկաթուղու դպրոցների վրայ մսխուած է 1896 թուին 38.188 ռ. 87 կոպ.։

Հեռագիրներ արուած են 5.614,780 հատ, որից միայն 183.000 հատ մասնաւոր անձերին պատկանող. մնացած բոլորը ծառայութեան գործերի համար։

Հաշուին չի կցուած արկածների և դժբախտ դէպքերի ցուցակ, որը 1895 թուից վերացրած է։

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻՆ ՄԱՀԱՐՁԱՆ կանգնեցնելու համար ժողուված էր 1346 ռ. 60 կոպէկ։ որը մի տարուայ տոկոսներով հոկտ. 16-ին հասել է 1410 սուբլու։

ՄՇԱԿ ՆԻ ՄՈՒՐՃ։—Առիթ բռնելով պ. Գոլմստրէմ'ի մի փոքրիկ յօդուածը, որ տպուած է „Братская помощь“ (Եղբայրական օգնութիւն) գրքի մէջ, Մշակ'ում մի պարոն, որին ոչոք դեռ ես չի համարձակուել հեղինակի պատիւներ տալ, չնայած որ աւելի քան տասնեակ տարի մամուլի մէջ գործում է,—և այդ պատիւն չի արժանանում միմիայն նորա թէ մտածելու ուժի պակասութեան և թէ նորա գրութիւնների վատ աստուանների պատճառով—այդ պարոնը, ասում ենք, ուզում է հաւատացնել ռուսաց համակրելի մի մասին, թէ Մուրճ-ը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի հետեւող Մշակ'ի մտրակողական ուղղութեան։ Մենք, սակայն, հաւատացած ենք, որ եթէ պ. Գոլմստրէմ գիտենար հայերէն և կարդար թէ Մշակ և թէ Մուրճ, նա շատ շուտով կը դար այն եզրակացութեան, որ այս մի հատ երեսոլթը արդէն ողբալի է, որ դրականապէս ոչ մի ուղղութիւն չճանաչող և հայ հասարակութիւնից հէնց իրը այդպիսին արժանապէս դատուած մի գրչակ կարող է ուղղութիւնների մասին խօսել, թէկուզ ամեն սանձ կտրած մի լրագրում։

Խոստովանում ենք՝ —Մուրճը մի շատ անշնորհք հետեւող կ'լինէր Մշակ'ի «մտրակողական» ուղղութեան, եթէ միայն նա, Մուրճ-ը, անեանարկութիւնը, զրպարտութիւնները և այլ դոցա նման «ուղղութիւնները» իւր ծրագրի հիմքում դրած լինէր։ Մուրճ-ը, թող սա լաւ իմացի, ուսումնասիրող է և, ուսումնասիրութեան սահմաններում, քննադատող։ «Մտրակողական ուղղութիւն» մենք չենք ճանաչում, այդ պատիւը մենք ամբողջապէս թողնում ենք Մշակ'ին։

ՍՏԱՍԻԼԵՒԻՉԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ։ Հոկտեմբ. 31-ին ընտանեկան ձևով տօնեց Вѣстникъ Европы (Եւրոպայի համբաւաբեր) ռուսաց նշանաւոր ամսագրի խմբագիր Ստասիւլևիչի 50-ամեայ գրական և հասարակական գործունէութեան յոբելեանը։

ՄՈՊԱՍԱՆԻՆ ԱՐՁԱՆ կանգնեցուեց Պարիզի Մոնսօ զբօսավայրում։ Խօսեց ի միջի այլոց Էմիլ Զոլա, սրտառուչ խօսքերով Մուրճ'ի ներկայ համարում զետեղում ենք նշանաւոր ռոմանիստի պատմածքներից մէկը՝ Խարդաւանանք։

ԱՒՍՏՐԻԱՅՈՒՄ, ուր Բադենի'ի մինիստրութիւնը կամենում է չեխերին բաւարարութիւն տալ չեխերէնը Բոհեմիայում գերմաներէնին հաւասար լեզու ճանաչելով, դրդել է աւստրիական գերմանացիներին ծայրայեղ ընդդիմութեան, որ և արտայայտւում է աւստրիական պարլամէնտում և դուրսը, տեղիք տալով ամենափոթորկալի նիստերի և ժողովների, ուր գործը հասնում է մինչև իրար հետ բռունցքով կըռուելը։ Խնդրին օտար չեն մնում նաև Գերմանիայի գերմանացիք։

ՅՈՅՆ-ՏԱՃԿԱԿԱՆ հաշտութեան դաշնագիր կապելը դրեթէ հասնում է իւր վախճանին։ Մնում է միայն մի լոգուած։

ԿՐԵՏԷ։ Կրետէում ինքնավարութիւն հաստատելու համար մեծ պետութիւնները մտադիր են նախ մի ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետ նշանակել, որը կը կազմակերպի ժանդարմերիան, փոխառութիւն կ'իրագործի և ազդային ժողով կը կոչի։ Ֆրանսիան առաջարկել է այդ պաշտօնի համար Լուքսենբուրգի փոքրիկ դքսութեան գնդապետ Շեֆէր'ին։ (Լուքսեմբուրգի դքսութիւնը գտնւում է Ֆրանսիայի և Գերմանիայի սահմանների միջում). Շեֆֆէր, որպէս պնդում են, ամենից շատ շանս ունի այդ պաշտօնի համար. Նա այժմ 40 տարեկան է. մի ժամանակ եղել է անգլիական ծառայութեան մէջ Եգիպտոսում, իբրև պետ տեղական ժանդարմերիայի. ներկայումս պաշտօնը թողած՝ ապրում է Լուքսեմբուրգում։

ՈՍԿՈՒ ԵՒ ԱՐԾԱԹԻ արտադրութիւնը։ Ֆրանսիայի դրամահատութեան վարչութիւնը, որի պետն է լայտնի Ա. Ֆուվիլ (A. Foville) իւր մի զեկուցման մէջ ֆինանսների մինիստրին, ներկայացրել է ոսկու և արծաթի արտադրութեան մասին շատ հետաքրքրական տեղեկութիւններ, որ օգտակար ենք համարում առաջ բերել այստեղ։ Հաշիւը ըմբռնում է 404 տարի, սկսած Ամերիկայի գիւտից, մինչև 1895 թուականը։ Այդ 404 տարիներում ոսկու և արծաթի քանակութիւնը, որ ստացուած է բոլոր երկիրներում, հաշւում են 102 միլիարդ ֆրանկի արժողութեամբ, որից՝ 46 միլիարդ ոսկի և 56 միլիարդ արծաթ, հաշուելով մի կիլոգրամ արծաթը 222 ֆրանկ 22 սանտիմ։

Այդ քանակութիւնից 16-րդ դարի վրայ (1501-ից մինչև 1600 թուականը) ընկնում է տարեկան միջին հաշուով 115 միլիոն ֆրանկ. 18-րդ դարի վրայ տարեկան՝ 193 միլիոն. 1801-ից մինչև 1850 թ. տարեկան միջին հաշուով մօտ 227 միլիոն. 1851-ից մինչև 1875 թ. տարեկան՝ 930 միլիոն. 1876-ից մինչև 1885 թ. տարեկան՝ 1 միլիարդ 90 միլիոն ֆր. 1886-ից մինչև 1890 թ. տարեկան 1 միլիարդ 340 միլիոն. 1891-ից մինչև 1896 թ. տարեկան՝ 1 միլիարդ 975 միլիոն։

Ջոյ-ջոկ վերցրած, ոսկի ստացուեց 1891 թ. 677 միլիոն ֆրանկի, իսկ 1896 թ-ին 1 միլիարդ 89 միլիոն ֆրանկի. արծաթ 1891-ին 939 միլիոնի, 1896 թ-ին 1 միլիարդ 113 միլիոն ֆրանկի։

Այդ անագին արտադրութեան պատճառով, ոսկին առատ լինելով, արծաթի գինը ընկաւ։ Բայց արծաթի արտադրութիւնը չպակասեց, որովհետև գնի վար ընկնելու հետ միասին արդիւնաբերութեան եղանակը աւելի կատարելագործուեց։ 1894 թուին արծաթ ստացուեց 5.121,037 ունց (ունցը = $^1/_2$ կիլոգրամ), 1895-ին՝ 5.263,183 ունց, որից միայն Ամերիկան տուաւ 4.400,000 ունց (ամբողջի 83%-ը)։

Ոսկու չատանալուն չատ նպաստեց հարաւային Աֆրիկայի Տրանսվալ պետութիւնը, ուր տասը տարի է միայն ինչ կանոնաւորուել է այդ գործը. և արդէն 1896 թուին Տրանսվալը տուաւ 2.503,581 ունց ոսկի, արժողութեամբ 227.461,842 ֆրանկի։ Սկսած 1884 թուից մինչև 30 յունիսի 1897 թ. Տրանսվալը տուել է ոսկի մօտ 1 միլիարդ 300 միլիոն ֆրանկի։ Աւստրալիան, ուր ոսկու հանքերը չահագործւում են 1851 թուականից, մինչև այժմ տուել է աւելի քան 10 միլիարդ ֆրանկի ոսկի։ Ներկայումս գտել են ոսկու նոր հանքեր Հիւսիսային Ամերիկայի հիւսիս-արևմտեան մասում։

Ոսկու ու արծաթի արդիւնաբերութեան այդ անագին առատութեան պատճառով արծաթը՝ իբրև դրամ, իւր նշանակութիւնը մեծապէս կորցրուց. Անգլիան արդէն վաղուց միմիայն ոսկին էր ընդունել արտաքին ու ներքին առևտրի համար իբր վճարումների միջոց. նորան հետևեց նաև Գերմանիան, իսկ նորերս նաև Ռուսիան, Աւստրո-Ունգարիան, Իտալիան և Եապոնիան։ Ինչ վերաբերում է Ֆրանսիային, որը բաւականին արծաթ ունի, նա վճռել է եղածով բաւականանալ և իւր արծաթի պաշարը չաւելացնել։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներն են միայն, որ չեն կարողանում վճռել ոսկին իբր միակ դրամաչափ ընդունել։

† ԵՐԵՄԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԵԱՆՑ վախճանուեց Ս. Էջմիածնում նոյեմբ. 3-ին, առաւօտեան, մօտ 60 տարեկան հասակում։ Հանգու-

ցեալը դառաւ ազգին հանրածանօթ, երբ Մակար կաթողիկոսի մահուը, 1891 թ-ին, Երեմեա եպիսկ., որպէս հնագոյն անդամ (նախանդամ) սինոդի, տեղակալութեան պաշտօն վարեց մինչև վեհափառ Մկրտիչ կաթողիկոսի ընտրելը և Ս. Էջմիածին գալը։ Այդ ժամանակամիջոցը տեւեց $2^1/_2$ տարի, որի ընթացքում Երեմիա եպիսկոպոսը ցոյց տուաւ եռանդուն գործունէութիւն, ունենալով իրեն աջակից սինոդի անդամ Արիստակէս եպիսկոպոսին։ Այդ օրերում լուրեց տեղակալական խնդիր, շնորհիւ այն հանգամանքի, որ միաբանութեան մի մասը ընդդիմադրեց Երեմիա եպիսկոպոսին, ժխտելով նորա իրաւունքները այս կամ այն վարչական կարգադրութիւնների նկատմամբ, մի խնդիր, որ սպառնում էր ծանր հետեանքներ ունենալու շնորհիւ նաև այն բանի, որ միաբանութեան հակառակ մասի հետ համերաշխութիւն պահպանեց հայոց մամուլի մի մասը (Արձագանք, Նոր-Դար)։ Մուրճ'ի ընթերցողները լիուլի կարող են ծանօթանալ խնդրի բոլոր հանգամանքների հետ, թերթելով այդ տարիների համարները։—Իբր տեղակալ, նա նախաձեռնեց կաթողիկոսական ընտրութեան համազգային ժողովին ամենայն օրինաւորութեամբ։ Երեմիա եպիսկ-ը իւր տեղակալութեան օրօք ձեռնարկեց մի շարք մեծածախս շինութիւնների, նորոգեց վեհարանը, միաբաբական սեղանատունը, պարսպապատեց Ներսէսեան լճի մի կողմը, վանդակապատեց ճեմարանի բաղը, նորոգեց քանքանները, տունկեր տնկեց անտառում, շերամապահութեան համար. և այդ բոլորի պտակը եղաւ նորա կառուցած երկայրկանի միաբանական նոր շինութիւնը, կառուցած նոր ճարտարապետութեամբ, որը, ճեմարանից լետոյ, դեղեցկագոյն շինութիւնն է Էջմիածնում։ Նորա եռանդուն գործունէութիւնը տեղակալութեան օրօք այդ ամենով չի սպառւում. կուլելով վանական արմատացած հին սովորութիւնների դէմ՝ նա չանձնեց վանքի ծախսարարութիւնը աշխարհական ընտրովի անձերի, հրաւիրեց մասնագէտներ գիւղատնտես և գինեգործ՝ վանքի տնտեսութեան համար. 1892-3 թ. հացի թանգութեան ժամանակ վանքի ամբարներից օգնութեան եկաւ ժողովրդական կարիքներին։ Վեհափառ Մկրտիչ կաթողիկոսը, եթէ դատելու լինինք մի շարք իրողութիւններից, հաւանութիւն չտաւ Երեմիա եպիսկ. գործողութիւններից ոմանց, և այդ պատճառով նախկին տեղակալը ետ քաշուեց ներգործական դերից, մնալով սինոդի նախանդամ և ներկայացնելով միաբանութեան ոգին. լուսարարապետի պաշտօնն ես, որ վարում էր հանգուցեալը Գէորգ IV և Մակար կաթողիկոսների օրօք, տրուեց մի այլ եպիսկոպոսի։ Նիկողայ II-ի և կայսրուհու թագադրութեան հանդէսին, վեհափառ կաթուղիկոսից կանխօրօք արքեպիսկոպոսու-

թեան աստիճան ստանալով, հանգուցեալը, Արիստակէս արքեպիսկոպոսի հետ ի միասին, ներկայացուցիչ էր Կաթողիկոսի։ Հանգուցեալը, իւր տեղակալութեան օրօք, սինոդի վճռով նշանակուել էր մշտական վանահայր ս. Հռիփսիմէի կիսաւեր վանքի, և այդ կոչումը նա կրեց մինչև վերջ։ Նա սկսեց այդ վանքի վերաշինութեան գործը որ զգալի լառաջադիմութիւն արաւ, ծախսելով մինչև այժմ շուրջ 25 հազար ռուբլի, վանքի եկամուտներից, մասնաւոր նուէրներից և իւր անձնական գանձից։ Իւր չինարարական եռանդուն գործունէութեան համար նա արժանացել էր շնորհաւոր եպիսկոպոսի մականուան, Վ.հ. Կաթողիկոսի կողմից։ Հանգուցեալը գրեթէ իւր ամբողջ կեանքը անցկացրուց Ս. Էջմիածնում և ստացած էր հին ժառանգաւորաց ուսումնարանի ուսմանափակ կրթութիւն։ Վաղեղչակազմ և բարեձև արտաքինով նա միևնոյն ժամանակ հեզաբարոյ էր և հակւած դէպի բարին։ Հանգուցեալը թաղուեց Ս. Հռիփսիմէի վանքի գաւթում, թողնելով լուսաւոր յիշատակներ այն ամենի սրտում, որոնք սիրով կամենում են Էջմիածնի միաբանութիւնը տեսնել իւր պահող միայն լաւ աւանդութիւնների, և իւր գործող ժողովրդական բարոյութեան համար։

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

*(Ուր թւական չկայ—ներկայ 1897 տարուանն է)*

1) ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆՑ, Գաբրիէլ.—Ամուսիններ. կոմեդիա հինգ արարածով։ Երկրորդ տպագրութիւն (փոփոխած)։ Թիֆլիս, տպ. Ց. Մարտիրոսեանցի. գինն է 1 ռուբլի։

2) ԿՈՍՏԱՆԵԱՆՑ, Կ.—Տէր Պետրոս Ա. Գետադարձ։ Վաղարշապատ. տպ. Մայր Աթոռի Ս. Էջմիածնի. գինը ?

3) ՎԵՐԴԱ, Ջիովաննի.—Գիւղական ասպետութիւն (Covalleria rusticana). պատկեր Իտալիայի ժողովրդական կեանքից։ Թարգմ. Լ. Բարալեան, Շուշի, տպ. Հայոց Հոգ. Տեսչութեան. գինը 15 կոպէկ։

4) Ա. Լ.—Սոֆօ. պոէմա։ Հրատ. Ադրիւր-Տարազի։ Թիֆլիս, տպարան Ց. Մարտիրոսեանցի, գինն է 50 կոպէկ։

5) ՇԻՐՎԱՆԶԱԴԷ.—Ցաւագարը։ Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի, գինն է 50 կոպէկ։

6) ՋԱՐԲԱՆԱԼԵԱՆ, հայր Գ. Մխիթ. Ուխտէն.—Հայկական հին դպրութեան պատմութիւն. (Դ—ԺԳ դար)։ Երրորդ տպագրութիւն լաւելւածով և փոփոխութեամբ։ Վենետիկ, Մխիթ. տպ. գինը ?

7) ՏԻՐՈՅԵԱՆ, Հ. Յակոբ. Մխիթ. ուխտէն.—Համառօտ դասագիրք ընդհանուր պատմութեան։ Հատոր Ա.—Պատմութիւն արևելեան ազգաց, Յունաց և Հռովմայեցւոց։ Վենետիկ, Մխիթ. տպ. գինը ?

8) ՂԱԶԻԿԵԱՆ, Հ. Արսէն. Մխիթ. ուխտէն.—Նէր մանկանց. առաջին փունջ. աշխարհաբար ոտանաւորներ մանկական մտաց համար։ Վենետիկ. Մխիթ. տպ. գինը ?

9) ՔԱՐՄԷՆ ՍԻԼԻԱ, թարգմ. Հ. Արսէն Ղազիկեանի, Մխիթ. ուխտէն.—Հատընտիր քնարաւածք։ Վենետիկ, Մխիթ. տպ. գինը ?

10) ՀԵՂԻՆԱԿ ?— Անծրեւոտ գիշեր մը. զաւէշտ մէկ հանդէսով։ Վենետիկ, Մխիթ. տպ. գինը ?

11) ՕՐԱՑՈՑՑ և գուշակ օդոց 1898 թուականին Քրիստոսի։ Վենետիկ, Մխիթ. տպ. գինը ?

12) ԵՐԵՄԵԱՆ, Հ. Սիմէոն, Մխիթ. ուխտէն. Տարերք բնապատմութեան։ Նոր կոնդանաքանութիւն եւ մարդաբանութիւն պատմական եւ նկարագրական. զարդարեալ 450 պատկերօք։ Վենետիկ, Մխիթ. տպ. 1896. գինը ?

13) ՆՈՒՐԻՒԱՆ, Հ. Մինաս վ., Մխիթ. ուխտէն.—Պատմութիւն ժամանակակից։ Մասն Բ. (1848—1867)։ Վենետիկ, Մխիթ. տպ. գինը ?

14) ՀԵՂԻՆԱԿ ?—Վասն վանօրէից սր ի ս. քաղաքն Յերուսաղէմ, ըստ նախնեաց մերոց. գաղղիերէն թարգմանութեամբ։ Վենետիկ, 1896 թ. Մխիթ. տպ. գինն է ?

15) ՏԷՆ, Հիպպոլիտ.—Վենետիկ և Վենետիկեան նկարչութիւն։ Վենետիկ, 1896. Մխիթ. տպ., 1896. գինը ?

16) ՀԵՂԻՆԱԿ ?.—Նարք ընտիր պատմութեանց։ Ադէտալի դիպուածք Իռլանդիոյ։ Վենետիկ, Մխիթ. տպ. 1896. գինը ?

17) ՏԻՐՈՑԵԱՆ, Հ. Ա. վ.—Խաղամոլ. թատերգութիւն ի հինգ հանդէս։ Վենետիկ, Մխիթ. տպ., 1896. գինը ?

18) ԱՄԻՋԻՈ, Եդմոնդ,.—Ցուշք կամ յիշատակք Լոնդրայի. թարգմ. հայր Յովհան. Թորոսեան։ Վենետիկ. Մխիթ. տպ., 1896. գինը ?

19) ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ. Մ.—Կամենից։ Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, հաւատչեաց լաւելուածովք։ Վենետիկ, Մխիթ. տպար. 1896. գինն է ?

20) ՍԱՐԳԻՍԵԱՆ, Հ. Բարսեղ վ., Մխիթ. ուխտէն.—Քննադատութիւնք Յովհան Մանդակունւոյ և իւր երկասիրութեանց վրայ, Վենետիկ, Մխիթ. տպ., 1895. գինն է ?

21) ВЕСЕЛОВСКІЙ, Юрій. — Стихотвореные переводы: Выпускъ I. Гейне. Армянскіе поэты. Ибсенъ. Москва, тип. И. Н. Кушнарева и К°., գինն է 50 կոպէկ։

22) СУНДУКІАНЦЪ, Габріэль.—Супруги, комедія въ пяти дѣйствіяхъ. Переводъ съ армянскаго. (Изданіе автора). Тифлисъ, тип. И. А. Мартиросянца. գինն է 75 կոպէկ։

23) SARGISEAN, del P. Basilio Dr., Mechitarista.—Dei Tesori Patristici e Biblici, conservati nella litteratura armena. Nell'occasione

del IV congresso scientifico internazionale dei cattolici a Friburgo. Venezia, tip. di S, Lazzaro. գինն է ?

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ.

Նեու-Յորկ. Հայ-երիտասարդաց թանգարանի միութեան Ձեր. ղրկածից, համեմատ ձեր գրութեան, 15 ռուբլի յանձնեցինք Ազ. բիւր-Տարազ'ի խմբագրութեան.

Բոլզարիա. Մի հայկական ընթերցարանի վարչութեան. Նամակների մէջ ապոլիսի մի խօսք թէ «Լիալոյս եմք թէ ընկերութիւնս քաջալերելու ազնուութիւնը պիտի ունենաք» մեր լսելիքին չափազանց խորթ է. ինչ ազնուութեան խնդիր կարող է լինել ձեզ քաջալերելու կամ չքաջալերելու մէջ.

Վենետիկ. Մխիթարեան միաբանութիւն. Ձեր ղրկած 14 կտոր գրքերը ստացանք և ներկայ համարում ցուցակագրած կը գտնէք. Սակայն մի հարց. այդ ինչ է նշանակում, որ գրքերի ծածկերի վրայ մեծ մասամբ նշանակուած չեն գները. Գիտենք որ եւրոպական մի քանի հրատարակիչներ նոյն այդ սովորութիւնը ունին. բայց մենք երբէք չհասկացանք դորա առաւելութիւնը. Նոյնպէս մեզ օտարօտի է թուում որ գրքերի ծածկի վրայ շատ անգամ չկայ հեղինակների անուան յիշատակութիւնը, և թէ ով է հեղինակը—այդ մենք իմանում ենք միայն գրքերի յառաջաբանների տակ եղած ստորագրութիւններից. Ձեր ընդունած այդ նորաձեւութիւնները գործնական պահանջներին հակառակ են.

Բերլին. Դր. Իոհան Լեպսիուս. Ստացանք.

---

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

# ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

## Լոյս տեսաւ

# „БРАТСКАЯ ПОМОЩЬ

## ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“

*(Նղբայարական օգնութիւն Թիւրքիայում՝ մնասաւած հայերին)*

Գրական-դիտական ժողովածուն։

---

Ժողովածուի մէջ, ի միջի այլոց տպուած են ոտանաւորներ—պ. պ. Կ. Թ.-ի, Ա. Մ. Ծեմչուժնիկովի, (լիակատար ֆակսիմիլէ), Ի. Ա. Բելոուսովի, Վ. Գոլովոչվասկու, Սավելիեվի, Բալմոնտի, Ֆ. Է. Կորշի, Վ. Հէքսլէնի, Ա. Լ. Բորսիկովսկու, Ն. Կ. Ալիբեկեանցի, Ս. Ի. Զախոտինի, Կոշևվիչի, Իվան-դա-Մարիայի, Վ. Բելոուսովի, Կանսոնի, Կ. Ծատուրեանի, Ց. Թումանեանի և այլոց։ Նամակներ—Բելինսկու, Գերցէնի, Մ. Ե. Սալթիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Լ. Ն. Տոլստոյի (լիակատար ֆակսիմիլէ). զրոյցներ—Դ. Ն. Մամին Սիբիրեակի, Ն. Ս. Բարանցևվիչի, Վ. Գ. Կորոլէնկոյի, Ն. Ն. Զլատովրատսկու, Աստախովի, Ն. Դ. Տելիշովայի, Ա. Ա. Վեսելովսկու և այլոց. հետաքրքիր պրոֆեսորների յօդուածները.—Պ. Ի. Մելիկովի (Գրանովսկու դասախօսութեանց անլայտ դասընթացը) Ի. Բ. Թարխանովի, Մ. Մ. Կովալևսկու, Կ. Ա. Թիմիրազևի, Ա. Ն. Կարիշևի, Վ. Դ. Սպասովիչի, Ն. Ի. Ռտորոժենկո, Վ. Ֆ. Միլլերի, Ա. Ն. Վեսելովսկու, Գ. Խալաթեանցի, կոմսուհի Պ Ս. Ուվարովայի, Մ. Ա. Վենեվիտինովի, Մ. Վ. Նիկոլսկու, Գ. Ե. Գանանեանցի, Վ. Ս. Գոլցէվի, Բուկվայի, Դիոնէի, Պ. Ա. Բելոզոլովի, Բարոն Շտակելբերգի, կոմս Լ. Ա. Կոմարովսկու, գեներալ Պոտտոյի, Պ. Ն. Օբնինսկու, Ա. Ն. Սազանովի, Ա. Ս. Խախանովի, Զորանեանի, Վ. Ե. Երմիլովի, Լ. Զ. Մսերեանցի, Վ. Ե. Երմիլովայի, Գ. Ա. Զանշեանի, Ի. Ա. Վեսելովսկու, Մ. Բերբերեանի և այլոց։

Յաւելուածներ Ց. Կ. Այվազովսկու չորս ինքնուրոյն նկարները, Վ. Ե. Սուրենեանցի շրջանկարները, աւելի քան 100 տեսարաններ Անդրկովկասը և Տաճկան-Հայաստանի, հեղինակների ֆակսիմիլէներ, Սալտիկովի, կոմս Լորիս-Մելիքեանի, Բելոզոլովի, Վ. Ա. Արցիմովիչի, Ս. Ի. Զուրուղնայի, Կաթուղիկոս Մկրտիչ Ի.-ի, հայր Ալիշանի, Ադամեանի, գեներալ Լազարեանի, Տէր-Գուկասեանի, Շելկոմնիկեանի, Ց. Այվազովսկու, Էմինի, Պատկանեանների, Քանանեանի և այլոց պատկերները։

(Հատորի գինն է (մօտ 900 մեծադիր երեսներ) 5 ռուբլի։

Խմբագրութեան հասցէն.—Москва, Зубовскій бул. д. 6. кв. 1.

Խմբագիր—ԳՐ. ԶԱՆՇԵԱՆ։

---

# ՄՈՒՐՉ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

# ԱՄՍԱԳՐԻ

### ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՍԿՍԻԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ *տարեկան* **10** *ռուբլի, կամ* **30** *ֆռանկ։*
ԴԻՄԵԼ՝ *Թիֆլիս, Սերգիեւսկայա փողոց, տուն* № 6։ *Այլ քաղաքներից՝* Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. *Արտասահմանից՝* Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“. *և կամ հետեւեալ անձերին.*

ԲԱՔՈՒ—*պ.պ.* Ֆրիդոն Մարդանեան՝ Հ. Մելիքեանի գրասենեակ։
ԲԱԼԱԽԱՆԻ.—*պ.* Մկրտիչ Էհրամճեան։
ԲԱԹՈՒՄ—*պ.* Սարգիս Մակարեան և *պ.* Ալէքս. Խոջամիրեան։
ԵՐԵՒԱՆ—*պ.* Գէորգ Ղարաջեանց։
ԿԱՐՍ—*պ.* Աբել Ապրեսեան։
ԱԽԱԼՔԱԼԱՔ.—*պ.* Զալալ Տէր-Գրիգորեան։
ՆՈՒԽԻ—*պ.* Աբրահամ Բունիաթեան։
ՂԶԼԱՐ—*պ.* Սաեփ. Սողոմոնեան։
ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—*պ.* Յովհ. Տէր-Միրաքեան։
ՄՈՍԿՒԱ—*պ.* Ալեքսանդր Մատուրեան։
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—*պ.* Քրիստ. Բաշինջաղեան։
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—*պ.* Ալէքս. Յովսէփեան, Ռէշտ, անգլիական բանկում։